Գործնական Քրիստոնեական Կյանք

Դր. Սթիվեն Գիբսոն

shepherds
GLOBAL CLASSROOM

Copyright · 2021 Shepherds Global Classroom

Թարգմանված է անգլերենով գրված առաջին հրատարակությունից։

Բոլոր սուրբգրային մեջբերումները Աստվածաշնչի Նոր Աշխարհաբար թարգմանություններից են։

Բովանդակություն

Ցուցումներ դասավանդողներին 5

(1) Քրիստոնեական շիտակություն 7

(2) Գործնական հնազանդություն 21

(3) Աշխատանք 31

(4) Հարաբերություններ 41

(5) Աստծո առաջնորդությունը 51

(6) Ամուսնության աստվածաշնչյան հիմքը 61

(7) Ամուսնական սրբություն 71

(8) Քրիստոնեական էկոլոգիա 85

(9) Փող 93

(10) Ազնվություն 105

(11) Մարդու արժեքը 117

(12) Իշխանություններ 129

(13) Քրիստոնյայի մարմինը 137

Առաջադրված աղբյուրներ 147

Առաջադրանքների արձանագրում 149

Ցուցումներ դասավանդողներին

Յուրաքանչյուր դասի առաջադրանքների հատվածը տեքստում տպագրված է *շեղատառով (իտալիկ)*:

Քննարկման հարցից առաջ դրված է՝ ► նիշը: Դասավանդողը տալիս է հարցը և ուսանողներին ժամանակ տրամադրում՝ պատասխանի քննարկման համար: Եթե նույն ուսանողն է սովորաբար առաջինը պատասխանում կամ որոշ ուսանողներ բոլորովին չեն արտահայտվում, դասավանդողը կարող է հարցն ուղղել որևէ մեկին. «Իգո՛ր, դու ինչպե՞ս կպատասխանեիր այս հարցին»:

Դասընթացում գործածվում են **աստվածաշնչյան բազմաթիվ խոսքեր**: Ամեն անգամ, երբ ողջ դասարանը միասին որևէ հատված պետք է կարդա, դա նշված կլինի ցուցումներում: ► Օրինակ՝ *Ուսանողը խմբի համար կարդում է Հռոմեացիների 6-րդ գլուխը:* Բոլոր ուսանողները պետք է հետևեն ընթերցվող հատվածին: Այլ դեպքերում աստվածաշնչյան հղումները տեքստում տրված են փակագծերի մեջ, օրինակ՝ (Ա Կորնթացիների 12.15): Այդ հղումները հաստատում են տեքստում նշված դրույթները: Պարտադիր չէ ամեն անգամ ընթերցել փակագծերում նշված հատվածները:

Յուրաքանչյուր դասի վերջում կան **առաջադրանքներ**: Առաջադրանքները հարկավոր է կատարել դասի ավարտից հետո և ներկայացնել դասավանդողին հաջորդ դասի ընթացքում: Եթե ուսանողը չի անցել դասն ու կատարել առաջադրանքները, կարող է դրանք ավարտել ավելի ուշ: Այնուամենայնիվ, դասավանդողը պետք է ուսանողներին խրախուսի, որ հասցնեն շարժվել ըստ օրակարգի, որպեսզի դասից քաղեն ավելին: Դասընթացի վերջում տրված է աղյուսակ, որում լրացվում են ուսանողի կատարած առաջադրանքները:

Սույն դասընթացի նպատակներից մեկն ուսանողներին այնպես պատրաստելն է, որ նրանք դառնան դասավանդողներ: Դասավանդողը պետք է ուսանողներին իրենց ուսուցչական հմտությունները զարգացնելու հնարավորություններ տա: Օրինակ՝ դասավանդողը պետք է ժամանակ առ ժամանակ թույլ տա, որ ուսանողը խմբին դասավանդի դասընթացից մի կարճ հատված:

Յուրաքանչյուր դասի վերջում խմբային քննարկման հարցերի բաժին կա: Դասավանդողն ինքն է որոշում, թե որքան ժամանակ տրամադրի այդ քննարկմանը: Կան շատ դասեր, որոնցում քննարկման հարցերն առաջարկվում են դասընթացի ընթացքում:

Ամեն դասի վերջում կա նաև կարճ աղոթք՝ խնդրանք Աստծուն, որ օգնի ուսանողներին գործածել ուսուցանված ճշմարտություններն իրենց կյանքում: Դասավանդողը կարող է դիմել ուսանողներից մեկին, որ կարդա այդ աղոթքը դասարանի համար:

Դաս 1
Քրիստոնեական շիտակություն

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը կարող է.
(1) Հասկանալ, թե Աստվածաշունչն ինչ նկատի ունի, երբ խոսում է «աշխարհի» մասին
(2) Ճանաչել այն ոլորտները, որոնցում աշխարհիկ արժեքներն ազդել են իր կյանքի վրա։
(3) Նկարագրել, թե ինչպես և ինչու պետք է տարբերվեն քրիստոնյայի և մեղավորի մտածելակերպերը։
(4) Բացատրել, թե քրիստոնյայի համար ինչ է նշանակում ազնիվ ու շիտակ կյանքով ապրել։
(5) Ցույց տալ, որ քրիստոնեական ճշմարտությունները պետք է կիրառվեն կյանքի բոլոր ոլորտներում։

Շիտակության քարոզիչ Հովհաննես Ոսկեբերանը

Ջոն (Հովհաննես) Քրիսոստոմը (370-ականներ)[1] բարեպաշտ հովիվ էր, ով հայտնի դարձավ որպես «Ոսկեբերան» իր զորավոր հռետորական քարոզչության շնորհիվ։ Նա շատ սիրված էր հասարակ մարդկանց կողմից և արևելյան Հռոմեական կայսրության ամենահայտնի քարոզիչն էր։ 398 թվականին նրան «առևանգեցին» ու տարան մայրաքաղաք Կոստանտինոպոլիս (մերօրյա՝ Ստամբուլ), որպեսզի ծառայի որպես հովիվ ու հովվապետ 100 000 անդամ ունեցող ազգային եկեղեցում։

Հովհաննեսը հայտնի էր իր անզիջում բնավորությամբ։ Նա օգտագործում էր իր պաշտոնը՝ ծառայելու ամբողջ քաղաքի կարիքները հոգալուն, ոչ թե միայն հարուստներին։ Նա կերակրել է աղքատներին, կառուցել է հիվանդանոցներ և օգնել է որբևայրիներին։ Նա առերեսում էր Փոքր Ասիայի եպիսկոպոսներին՝ նրանց ապականության և ֆինանսական սխալ կառավարման հարցերով և քարոզում էր ընդդեմ նրանց ամենաթողության ու անբարոյականության։ Կոստանտինոպոլսի վերնախավին նա զգուշացնում էր, որ թատրոն հաճախելը կկործանի նրանց։ Թատրոն գնալը նա համեմատում էր մահացու վիրուսի ազդեցության հետ։ Հովհաննեսն ասում էր.

> «Եթե թատրոնում տեսնես անամոթ մի կնոջ, որ բեմի վրա սեթևեթում է համարձակ կեցվածքով ու գլուխը չծածկած, հագուստը ոսկով զարդարված՝ ցուցադրում է իր բարեմասնությունները, անբարո երգեր է երգում, պարելիս ձեռքերն ու ոտքերն այս ու այն կողմ է գցում ու անամոթ ճառեր ասում... և դու համարձակվում ես ասել, որ այդ ժամանակ մարդկայնորեն ոչինչ չի՞ պատահում քեզ հետ։ … Անգամ թատրոնի փակվելուց և բոլորի հեռանալուց շատ ժամանակ անց այդ պատկերները դեռևս լողում են քո աչքերի առաջ՝ նրանց խոսքերը, վարմունքը, հայացքները, քայլքը, կեցվածքը… նրանց անպարկեշտ վերջույթները, իսկ ինչ վերաբերում է քեզ, դու տուն ես գնում հազարավոր վերքերով պատված։ Բայց ո՛չ միայնակ. պոռնիկը գնում է

[1] Ջերալդ Սիթցեր (Gerald L. Sittser), *Ջուր խորը ջրհորից* (*Water from a Deep Well*), (Ինթերվարսիթի, 2007), 135

> քեզ հետ, թեև ո՛չ բացահայտ ու տեսանելի… այլ քո սրտում և գիտակցությանդ մեջ, և այնտեղ՝ քո ներսում նա բորբոքում է բաբելոնյան հնոցը… որում այրվելու են քո տան խաղաղությունը, քո սրտի մաքրությունը, ձեր ամուսնական երջանկությունը»:

Հարուստ քաղաքացիներին Հովհաննեսը զգուշացնում էր.

> «Հիմարություն և հանրային խելագարություն է պահարանները հագուստով լցնելն ու թույլ տալը, որ մարդիկ, ովքեր ստեղծված են Աստծո պատկերով ու մեր նմանությամբ, մերկ ու ցրտից դողալով կանգնեն այնպես, որ դժվարությամբ կարողանան իրենց ուղիղ պահել… Դուք գեր ու հաղթանդամ եք, գինարբուքների մեջ եք մինչև ուշ գիշեր և քնում եք տաք ու փափուկ անկողիններում: Իսկ չե՞ք մտածում, թե ինչպես եք հաշիվ տալու Աստծո պարգևները չարաշահելու համար… Որովհետև մեր փողը Տիրոջն է պատկանում, ինչ ձևով էլ այն կուտակած լինենք: Ահա թե ինչու է Տերը թույլ տվել ձեզ ավելին ունենալ. ոչ թե նրա համար, որ վատնեք, այլ որպեսզի բաժանեք կարիքավորներին:

Հովհաննես Ոսկեբերանը, ի վերջո, աքսորվեց Սև ծովի արևելյան ափեր, սակայն ճանապարհին մահացավ (407թ.): Նրա վերջին խոսքերն էին. «Փառք Աստծուն ամեն ինչում: Ամեն»:

Աշխարհի աստվածաշնչյան գաղափարը

Հովհաննեսի Ավետարանի 17-րդ գլխում գրված է Հիսուսի աղոթքն իր աշակերտների համար խաչելությունից կարճ ժամանակ առաջ: Այն արտահայտում է Նրա մեծ սերն ու մտահոգությունն իր աշակերտների համար: Նա աղոթում է նաև նրանց համար, ովքեր կհավատան առաքյալների պատգամին (20-րդ խոսք), ուստի այսօրվա հավատացյալներն ընդգրկված են այդ աղոթքի մեջ:

► Ուսանողը խմբի համար կարդում է Հովհաննեսի 17.14-18 հատվածը:

Ի՞նչ նկատի ուներ Հիսուսը, երբ ասաց, որ Ինքն այս աշխարհից չէ: Մենք գիտենք, որ Նա ի սկզբանե այս աշխարհից չէր. Նա Աստծո Որդին է, Ով երկիր եկավ Երկնքից: Սակայն երբ Նա հայտարարեց, որ Ինքն աշխարհից չէ, Նա չէր խոսում այն մասին, թե եկել է այս աշխարհից դուրս ինչ-որ տեղից: Նա ասաց, որ ինչպես Ինքը, այնպես էլ աշակերտներն այս աշխարհից չեն: Հիսուսը խոսում էր մարդկանց մասին, ովքեր ծնվել էին երկրի վրա, ծնվել էին մարդկային ծնողներից ու մեծացել որպես իրենց երկրի քաղաքացիներ:

Այսպիսով, ի՞նչ նկատի ուներ Հիսուսը, երբ ասաց, որ Իր աշակերտներն աշխարհից չեն: Մենք պետք է հասկանանք, թե ինչի մասին է խոսում Աստվածաշունչը, երբ խոսքը վերաբերում է աշխարհին:

► Ուսանողը խմբի համար կարդում է Եփեսացիների 2.1-3 հատվածը:

Այս խոսքերը ցույց են տալիս, որ աշխարհի պես ապրելը նույնն է, ինչ Սատանայի առաջնորդությանը հետևելը: Մենք նաև տեսնում ենք, որ աշխարհի մարդիկ հետևում են իրենց մեղսալի ցանկություններին, և նրանք կհանդիպեն Աստծո բարկությանը: Հավատացյալները նոր կյանք են ստանում և այլևս չեն ապրում աշխարհի նման:

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Հովհաննեսի 2.15-17 հատվածը:

Ա Հովհաննեսի թղթում «աշխարհ» բառն նույնականացվում է չարի գոյության հետ: Այն չպետք է սիրել, և ոչ էլ պետք է սիրել նրանում եղած բաները: Աշխարհին բնորոշ են սխալ շարժառիթներն ու իղձերը: Մեղսալի փափագները կոչվում են աշխարհի ցանկություններ:

Սատանան կոչվում է այս աշխարհի իշխան (Հովհաննեսի 16.11): Դա չի նշանակում, թե աշխարհն իրավամբ պատկանում է նրան. նա Աստծո դեմ ապստամբության առաջնորդն է, և աշխարհի մարդիկ հետևում են նրան: Նա արդեն դատապարտված է, և մարդիկ, ովքեր համառորեն հետևում են նրան, նույնպես կդատապարտվեն:

Աշխարհի հետ բարեկամություն անել՝ նշանակում է թշնամություն անել Աստծո դեմ (Հակոբոսի 4.4):

Աշխարհը կազմված է միլիոնավոր սովորական, անկյալ մարդկանցից, որոնք բաժանված են Աստծուց և միավորված՝ իրենց ընդհանրությամբ: **Նախ՝ նրանք սխալ հակումներ ու ցանկություններ ունեն:** Նրանք ավելի շատ են սիրում աշխարհիկ երևույթները, քան տիեզերքի Արարչին: Ա Հովհաննեսի 2.15-17-ում ասվում է. «Մի՛ սիրեք աշխարհը…. Որովհետև այն ամենը, ինչ աշխարհում է՝ մարմնականի ցանկությունը, աչքերի ցանկությունը և կյանքի հպարտությունը, ոչ թե Հորից է, այլ աշխարհից»:

Երկրորդ՝ նրանց սխալ հակումները հանգեցնում են սխալ վարքագծերի, այնպիսի ապրելակերպի, որը կենտրոնացած է ինքնաբավարարման վրա՝ հաճախ արդարության և ողորմածության հաշվին (Ամովսի 5.11-15, 21-24): Նրանք քայլում են իրենց ճանապարհներով, պահանջում են իրենց ուզածն ու որոշում, թե որն է ճիշտ ու սխալ իրենց համար: Թեև նրանք ունեն կրոնի բազմաթիվ ձևեր, բայց բոլոր նրանք, ովքեր աշխարհից են, իրենք իրենց (մարդկային ինտելեկտը, մարդկային իմաստությունը, մարդկային ախորժակները, մարդկային բարությունը, մարդկային ուժը) են դարձնում երկրպագության կենտրոն (Հռոմեացիների 1.25): Նրանք դժգոհում են Աստծո իշխանությունից և հետևում են կյանքի փիլիսոփայության, որն արդարացնում է իրենց որոշումները: Նրանք չեն ձգտում բացահայտել ճշմարտությունն ու հետևել դրան: Նրանք անում են այն, ինչ ուզում են, հետո ուղիներ են փնտրում՝ ապացուցելու, որ դա ճիշտ է:

Աշխարհի ոչ քրիստոնյա հոգեբաններն ու խորհրդատուները փորձում են օգնել մարդկանց՝ հաղթահարելու իրենց մեղավորության զգացումը՝ առանց ապաշխարության և Աստծո ներողամտությունն ընդունելու: Աշխարհի փիլիսոփաները փորձում են կյանքի իմաստն այնպես նկարագրել, որ դրանում Աստված չլինի: Աշխարհի գիտնականները փորձում են ամեն ինչի ծագումը բացատրել՝ ուրանալով Արարչին: Աշխարհի քաղաքական և հասարակական գործիչները փորձում են մեղքի բնական, բացասական հետևանքները կանխելու ուղիներ գտնել՝ միաժամանակ ժխտելով, որ մեղքն է իրական խնդիրը: Աշխարհի նորաձևության դիզայներներն աշխատում են ակնահաճո և ուշադրություն գրավող հագուստ արտադրելու վրա: Աշխարհի զվարճացողները կատակներ են անում մեղքի, բարոյականության և կրոնի վերաբերյալ: Աշխարհի հովիվները հավատում են մի աստծո, ով հանդուրժում է մեղքն ու գլխավորապես մտահոգված է ձեր հարստությամբ, երջանկությամբ և լավ ինքնագնահատականով:

Կողոսացիների 2.8-րդ խոսքը զգուշացնում է մեզ, որ թույլ չտանք փիլիսոփայությունը, խաբեությունն ու աշխարհի երևույթները թալանեն մեզ: Խարդախը կողոպտում է մեկին՝ վաճառելով կեղծ գաղափար: Սխալ գաղափարներով մարդկանց համոզելով՝ աշխարհը կողոպտում է նրանց՝ զրկելով Աստծո հետ հարաբերություններից, հոգևոր բարիքներից և երկնքից:

Աշխարհի փիլիսոփայական մտքերն ու «հարգելի» դրդապատճառները դրսևորվում են աշխարհին պատկանող մարդկանց ապրելակերպում: Աշխարհի խոսվածքը, վերաբերմունքը, հագուկապը, զվարճանքն ու վարքագծերը նրանց սրտի մեղսալիության արտահայտումն են:

Քրիստոնյաները չեն կարող հետևել իրենց հասարակության բարոյականությանը: Քրիստոնյաները պետք է տարբերվեն իրենց հասարակությունից:

Մշակույթները ձևավորվում են այն իրողության շնորհիվ, որին Աստվածաշունչն անվանում է՝ *աշխարհ:* Մեկ վայրում բնակվող մարդկանց սերունդները ձևավորում են մշակույթ: Նրանք ուզում են ունենալ տարբեր բարիքներ՝ անվտանգություն, բարեկեցություն ու կայուն ընտանիք, բայց այդ ամենին ձգտում են հասնել աշխարհիկ փիլիսոփայությամբ և Աստծո Խոսքին չենթարկվելու վճռականությամբ: Դա նշանակում է, որ քրիստոնյաները չեն կարող ամբողջությամբ հետևել սեփական մշակույթին: Որոշ մշակույթներ ավելի խորությամբ են կրել աստվածաշնչյան սկզբունքների ազդեցությունը, քան մյուսները, բայց ոչ մի ժողովրդի մշակույթն ամբողջովին քրիստոնեական չէ:

► Ըստ մինչ այժմ ուսումնասիրած նյութի՝ ի՞նչ են նշանակում Հիսուսի խոսքերն իր աշակերտների մասին, որ նրանք «աշխարհից» չեն:

Քրիստոնյա հավատացյալները չեն հետևում մեղսալի ցանկություններին և նկրտումներին: Ամեն ինչից առավել նրանք ուզում են հաճեցնել Աստծուն: Նրանց նախասիրությունները փոխվել և շարունակաբար վերափոխվում են (Փիլիպպեցիների 1.9-11): Աստծո օրենքը գրվել է նրանց սրտերի վրա (Երեմիայի 31.33): Աստծո պատվիրանները ծանրություն չեն քրիստոնյաների համար, այլ՝ բերկրանք (Ա Հովհաննեսի 5.1-3, Սաղմոս 19.7-11): Քրիստոնյաներն ունեն հավիտենական առաջնահերթություններ (Մատթեոսի 6.33): Նրանց վարքը ցույց է տալիս, որ կամենում են դիմակայել գայթակղությանն ու ապրել մեղքին հաղթանակած կյանք:

Աշխարհի մարդիկ կարծում են, թե քրիստոնյաները տարօրինակ են, քանի որ նրանց չեն հետաքրքրում նույն բաները (Ա Պետրոսի 4.4): Հիսուսն ասաց, որ աշխարհն ատում է հոգևորապես տարբերվող մարդուն (Հովհաննեսի 17.14): Աշխարհը թշնամաբար է տրամադրված նրանց հանդեպ, ովքեր իրենը չեն: Աշխարհի մարդիկ չեն հասկանում իրենց, վրդովվում են արդարությունից և հանդիմանվում են իրենց մեղքերի համար: Ահա՛ թե ինչու Հիսուսն ասաց. «Աշխարհում նեղություն պիտի ունենաք» (Հովհաննեսի 16.33): Պողոս առաքյալն ասել է. «Ովքեր ուզում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսի մեջ, հալածանք պիտի կրեն» (Բ Տիմոթեոսի 3.12):

► Ուսանողը խմբի համար կարդում է Բ Կորնթացիների 6.14-18 հատվածը:

Աստվածաշունչը հավատացյալներին ասում է, որ տարբերվեն աշխարհից, ինչն սկսվում է մարդու վերաբերմունքից, ինչպես սովորեցնում է Հիսուսը Լեռան քարոզում: Այստեղ Նա նկարագրում է քրիստոնյայի վերաբերմունքը՝ որպես խոնարհության, մեղքի պատճառով տրտմության, հեզության, արդարության, ողորմածության, սրտի մաքրության, խաղաղության և հալածանքին դիմանալու պատրաստակամության վերաբերմունք: Հստակ ու տարբերվող *վերաբերմունքը* կհանգեցնի տարբերվող *վարքի*: Օրինակ՝ քրիստոնյաները չեն կարող ընկերակցություններ կամ հարաբերություններ ստեղծել, որոնք պահանջում են սխալ գործողություններ: Աստված խոստանում է Հայր լինել նրա համար, ով տարբերվում է աշխարհից: Հիշե՛ք, մենք նայեցինք մի խոսք, որն ասում է, որ աշխարհի բարեկամը թշնամի է Աստծուն (Հակոբոսի 4.4):

► Ուսանողը խմբի համար կարդում է Մատթեոսի 5.13-16 հատվածը:

Աշխարհից տարբերվող և զատված լինել չի նշանակում, թե քրիստոնյաները պետք է առանձնանան հասարակությունից ու ձևավորեն իրենց սեփական համայնքները: Հիսուսը չէր աղոթում, որ Իր աշակերտները վերցվեն աշխարհից (Հովհաննեսի 17.15): Նա նաև ասաց, որ Իր աշակերտներն աղ ու լույս են աշխարհի համար, ինչը նշանակում է, որ նրանք պետք է ներկա և տեսանելի լինեն հասարակության մեջ: Քրիստոնյան պետք է մասնակցի պետության և համայնքային գործերին, բացառությամբ այն դեպքերի, երբ մասնակցությունը նրանից պահանջում է որևէ սխալ գործողություն:

Ջերալդ Սիթցերը գրում է, թե ինչպես էր դրսևորվում այդ ամենը վաղ քրիստոնեության մեջ.

> «Արիստիդեսը, աթենացի մի փիլիսոփա, ով …. ապրել է երկրորդ դարում, թվարկել է մի շարք հատկանիշներ, որոնցով քրիստոնյաներին տարբերվում էին հասարակության մնացած շերտերից: Քրիստոնյաները, նշել է նա, հավատարմության, ճշմարտացիության, զոհունակության, ծնողների հանդեպ հարգանքի, մերձավորների հանդեպ սիրո, մաքրության, հալածանքների մեջ համբերատարության և օտարների հանդեպ բարության օրինակ էին: Նրանք խնամք էին տածում որբևայրիների ու որբերի հանդեպ: Նրանք անսովոր բարությամբ էին վերաբերվում նաև ստրուկներին: «Նրանք ցանկացած ստրուկ տղամարդու կամ կնոջ համոզում են դառնալ քրիստոնյա՝ նրանց հանդեպ տածած սիրո շնորհիվ: Եթե նրանք իսկապես դառնում են քրիստոնյա, նրանք եղբայրներ են լինում՝ առանց խտրականության»[2] :

Անկեղծ հավատ

Հակոբոսի նամակում շեշտադրվում է, որ իրական քրիստոնեական հավատը դրսևորվում է կյանքում: Հակոբոսն ասում է, որ այն մարդը, ով լսում է Աստծո Խոսքը և չի կատարում այն, ինքն իրեն խաբում է (1.22): Ոմանք կարծում են, թե իրենք ավելի լավն են, քան մյուսները, քանի որ ավելի շատ քրիստոնեական ճշմարտություններ գիտեն (թեև չեն հնազանդվում դրանց), բայց դա ճիշտ չէ:

[2] նույն տեղում, 54

Հակոբոսն ասում է, որ որոշ մարդիկ կրոնավոր են, բայց նրանց կրոնն արժեք չունի: Աստծուն գոհացնում է այն մարդու կրոնը, ով հոգում է ուրիշների կարիքները և իրեն անարատ է պահում աշխարհի աղտերից (1.27):

► Ուսանողը խմբի համար կարդում է Հակոբոսի 2.14-26 հատվածը:

Կան մարդիկ, ովքեր ասում են. «Քանի որ փրկությունը հավատով է և ոչ թե՝ գործերով, ուրեմն մեր վարքը կարևոր չի»: Նրանք կարծում են, թե հնարավոր է, որ մարդը փրկող հավատ ունենա, եթե նույնիսկ նույն վարմունքն ու ապրելակերպն ունի, ինչ անհավատը: Հակոբոսի նամակի այս հատվածը խոսում է հենց նման մարդկանց մասին:

Հակոբոսն ասում է, որ *հավատալիքը* բավարար չէ. նույնիսկ դևերն ունեն ճիշտ հավատալիքներ, բայց նրանք Աստծո հետ ճիշտ հարաբերությունների մեջ չեն (19-րդ խոսք): Մարդը, ով հավատում է Աստծուն, բայց չի հնազանդվում Աստծուն, նման է նրան, ով լսում է Ավետարանը, բայց չի ապաշխարում:

21-րդ և 24-րդ խոսքերը մանրակրկիտ մեկնաբանելը կարևոր է: Դրանցում ասվում է, որ Աբրահամն արդարացավ գործերով, և որ մարդն արդարանում է գործերի և հավատի զուգակցմամբ: Կարծես թե՝ սա հակասում է այն գրվածքին, որում նշվում է, որ մարդը փրկվում է միայն շնորհով և ոչ թե գործերով[3]: *Արդարացված* եզրույթով Հակոբոսը նկատի չունի այն, որ մարդը *փրկվում է* հավատով ու գործերով, այլ այն, որ մարդը հավատով և գործերով *ցույց է տալիս իր փրկված լինելը*: Նա գործերով չի փրկվում, բայց եթե քրիստոնյայի պես չի ապրում, ապա փրկող հավատ էլ չի ունենում: Հակոբոսն ասում է, որ մարդու հավատը մեռած է, եթե նա չունի հավատին համապատասխանող կյանք (26-րդ խոսք):

Հակոբոսն ասում է, որ ինչպես անհնար է, որ ծառը երկու տեսակի պտուղ տա կամ աղբյուրը՝ երկու տեսակի ջուր, այնպես էլ մարդը չպետք է կարողանա և՛ օրհնություն, և՛ անեծք խոսել (3.9-12): Մարդու վարքը պետք է հետևողականորեն համապատասխանի նրա քրիստոնեական հավատին:

Շիտակության գաղափարը

Հռոմեացիների 2.21-24-ում Պողոսը խոսում է հրեաների հետ, ովքեր կարծում էին, թե իրենք հեթանոսներից առավել են, քանի որ ունեին Գրվածքները, թեև չէին հնազանդվում դրան: Նա հարցնում է. «Դո՛ւ, որ քարոզում ես չգողանալ, գողանո՞ւմ ես»: Այնուհետև ասում է. «Դո՛ւ, որ Օրենքով ես պարծենում, Աստծուն անարգած չե՞ս լինում՝ Օրենքը խախտելով»: Այն իրողությունը, որ նրանք, որպես կրոնասեր մարդիկ, իրենց բարձրացնում էին, բայց լավ համբավ չունեին, պատճառ էր դառնում, որ հեթանոսներն անարգեին Աստծուն և Գրվածքները:

Անգլերեն *շիտակություն* բառը ծագում է *ինտեգրել* բառից: «Ինտեգրել» նշանակում է՝ ինչ-որ բան հաստատուն պահել ամբողջ համակարգի մեջ: Օրինակ՝ ազնիվ ու շիտակ մարդն իր ամեն վարմունքի

[3] Եփեսացիների 2.8-9, Գաղատացիների 2.16, Հռոմեացիների 3.28

և խոսքի մեջ կպահի ազնվությունը: Մարդը, ով ասում է, որ շիտակ է ու ազնիվ, բայց անազնիվ բան է անում, շիտակություն չունի:

Շիտակություն եզրույթը կարել է կիրառել մարդու բնավորության համար: Որոշ լեզուներում այն օգտագործվում է նաև այլ նկարագրությունների համար, օրինակ՝ շենքի կառուցվածքի:

► Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում շենքի կառուցվածքի շիտակ լինելը:

Շենքի կանգուն մնալը կարևոր է, քանի որ այն պետք է կրի կառույցի ու ներսում կատարվող ցանկացած գործողության ծանրությունը: Եթե այն փլվի, մարդիկ և գույքը կարող են վնասվել, իսկ շենքի արժեքը կկորչի: Շենքի շիտակ լինելը ենթադրում է, որ ամբողջ կառույցը կառուցված է ամուր շինարարական նյութերով ու համապատասխան սկզբունքները:

Շենքի համար կարևոր ու լավ է նաև երկարաժամկետ կանգուն մնալը: Տուն կառուցողը հույս է տածում, որ այն կանգուն կմնա իր ամբողջ կյանքի ընթացքում: Պետական կամ խոշոր բիզնեսի համար նախատեսված շենքերը մեծ ներդրումներ են պահանջում և, թերևս, ակնկալվում է, որ դրանք կանգուն կմնան մի քանի սերունդների շահագործման համար:

Եթե շենքը սկսում է թեքվել կամ փլվել, պատճառն այն է լինում, որ այն շիտակությամբ չի կառուցվել: Երբեմն շենքը վնասվում է երկրաշարժից, ու թեև այն դեռևս կանգուն է մնում, այլևս անվտանգ չի լինում: Այն շիտակություն չի ունենում:

Կարևոր կառույցի շինարարությունն սկսելուց առաջ կազմվում է հատակագիծ՝ շենքի մանրամասնությունների գծագիրը: Ամենակարևոր դետալներն առնչվում են շենքի ամուր ու կանգուն մնալու հարցերին: Շենքի տարբեր մասերը պետք է միացված և փոխադարձաբար միմյանց պահող լինեն:

Կարևոր է, որ շինարարը կառուցելիս հետևի պլանին: Եթե նա կրճատի ծախսերը՝ բաց թողնելով կառույցի անհրաժեշտ մասերը, ապա շենքն անվտանգ չի լինի:

► Ի՞նչ է նշանակում՝ մարդը շիտակություն ունի:

Հիսուսն օգտագործեց շենքը շիտակությամբ կառուցելու օրինակը: Նա ասաց, որ այն մարդը, ով լսում և հնազանդվում է Աստծուն, նման է նրան, ով իր տունը կառուցում է ժայռի վրա: Այդ տունը կանգուն է մնում, երբ փոթորիկներ են գալիս: Աստծուն չհնազանդվող մարդը նման է նրան, ով իր տունը կառուցում է ավազի վրա: Ճշմարտությունը միայն լսելն ու իմանալը բավարար չէ:

► Ուսանողը խմբի համար կարդում է Հակոբոսի 1.22-25 հատվածը:

Հակոբոսն ասում է, որ մարդ ինքն իրեն խաբում է, եթե լսում է Աստծո Խոսքը, բայց չի կատարում այն: Նա խոսում է այն մարդու մասին, ով կարծում է, թե ինքը լավ անձնավորություն է, քանի որ գիտի աստվածաշնչյան ճշմարտությունը, չնայած որ հետևողականորեն չի ապրում դրանով: Այս մարդը շիտակություն չունի:

Հակոբոսն ասում է, որ երբ կարդում ենք Աստծո Խոսքը, մենք չպետք է նմանվենք մի մարդու, ով նայում է հայելու մեջ, բայց իրեն չի փոխում՝ տեսածի պատճառով: Աստծո ճշմարտությունը վերափոխող է: Երբ նայում ենք Աստծո Խոսքին, տեսնում ենք մեր սխալները, և պետք է թույլ տանք, որ Աստծո Հոգին փոխի մեր բնավորությունն ու վարքը, որպեսզի դրանք համապատասխանեն Աստծո ճշմարտությանը:

Շիտակությունը դրսևորվում է ապրելակերպի մեջ: Մարդը չպետք է բավարարված լինի իրենով, երբ գիտակցում է, որ իր վերաբերմունքը կամ վարքագիծը չի համապատասխանում Աստծո ճշմարտությանը:

Պտուղը քննելը

Հիսուսն ասաց, որ շատ սուտ մարգարեներ կգան: Սրանք մարդիկ են, ովքեր ցանկանում են կրոնասեր առաջնորդի կարգավիճակ ունենալ կամ ուզում են զբաղվել ծառայություններով, բայց չունեն քրիստոնեական բնավորություն: Նա ասում էր, որ կարող ենք ճանաչել նրանց իրենց պտուղներով (Մատթեոսի 7.15-18): Պտուղը չի ենթադրում հաջողություն: **Պտուղը ծառի բնույթի բնական արգասիքն է:** Մարդու պտուղը նրա փոխված էության դրսևորումն է իր ներքին ու արտաքին կյանքերում: Եթե մարդու մեջ չկան Հոգու պտուղները (Գաղատացիների 5.22-23, Ա Կորնթացիների 13) կամ *ապրում է* մեղքի կյանքով, նա մեղսալի բնույթ ունի և ճշմարիտ հոգևոր առաջնորդ չէ (Ա Կորնթացիների 6.9-10, Բ Կորնթացիների 11.13-15):

Պետրոս առաքյալն ասում էր, որ հավատացյալի վրա չպետք է իշխեն նրա նախկին ցանկությունները, այլ նա պետք է սուրբ լինի ամեն ինչում (Ա Պետրոս 1.14-15):

Լավ պտուղը չի ենթադրում, որ մարդը հասկանում է, թե ինչպես կատարելապես կիրառի քրիստոնեական բոլոր սկզբունքներն իր վարքում: Մենք բոլորս Աստծո ճշմարտությունները հասկանալու գործընթացի մեջ ենք: Այգում աշխատող երեխան կարող է պոկել ու հանել սխալ բույսերը՝ առանց դրանք ճանաչելու: Աստված մեզ չի դատում չգիտակցված սխալների համար: Այնուամենայնիվ, շնորհը չի արդարացնում այն, որ մարդը հրաժարվում է ապաշխարել մեղքերից: Հովհաննես առաքյալն ասում է մեզ, որ մարդը մաքրվում է, եթե «լույսի մեջ է քայլում»՝ ապրելով ըստ ճշմարտության (Ա Հովհաննեսի 1.7):

Շիտակություն առաջնորդության մեջ

Առաջնորդներն այնպիսի որոշումներ են կայացնում, որոնցից մյուսներն ազատված են: Առաջնորդի ունեցած պարտավորություններն ու հնարավորությունները գայթակղության բազում առիթներ են ստեղծում: Առաջնորդի որոշումները հատկապես կարևոր են նրանով, որ ազդում են մեծ թվով մարդկանց վրա:

Ծառայության առաջնորդը պետք է հիշի, որ ինքը, հետևելով Հիսուսի օրինակին, կանչված է՝ ծառայելու Աստծուն ու մարդկանց: Նրա նպատակը չպետք է լինի հայտնի աստղ դառնալը, որին գովում են ու ծառայում:

Եթե համայնքում լինում են մեծ թվով մարդիկ, ովքեր Աստծո անկեղծ երկրպագուներ չեն, նրանք փորձում են փոխել երկրպագության ծառայությունը՝ կենտրոնանալով կատարողականության վրա: Նրանք ավելի մեծ տեղ են տալիս տաղանդին, քան հոգևոր կենտրոնացմանը: Նրանք ուզում են, որ գերազանց կատարողներն առաջնորդեն պաշտամունքը, այլ ոչ թե իրական հոգևոր առաջնորդները: Նրանց գրավում է զգայական կատարումը: Նրանք պատրաստ են վարձել չապաշխարած երաժիշտների, ովքեր նույն ձևով պատրաստ են նվագել դիսկոներում և երկրպագությանը մասնակցելու որակներ չունեն: Հովիվը պետք է հետևի ու պահպանի եկեղեցու երկրպագությունն այնպես, որ այն գրավի ու ծառայի ճշմարիտ երկրպագուներին[4]:

► Եթե մեկն այցելի եկեղեցի կիրակի առավոտյան և տեսնի նույն երաժիշտներին, ում տեսել է դիսկոյում շաբաթ երեկոյան, ի՞նչ կմտածի եկեղեցու մասին:

Առաջնորդը կարող է գայթակղվել՝ իրեն համարելով բարոյականության սովորական կանոններից ազատված: Որոշ հովիվներ սխալ հարաբերություններ են ունենում իրենց համայնքի տղամարդկանց կամ կանանց հետ՝ ճիշտ իրենց մշակույթի աշխարհիկ առաջնորդների նման: Որոշ եկեղեցիներ սխալմամբ հանդուրժում են հովիվների անբարոյական վարքը նրանց կարգավիճակի պատճառով:

Հովիվը կարող է գայթակղվել՝ հավատալով, թե եկեղեցին իրենն է: Եթե նա այդպես է մտածում, ապա պաշտոնների է դնում այն մարդկանց, ովքեր հավատարիմ են իրեն, և ոչ թե այն պատճառով, որ Աստծո գործը լավ են անելու: Այս տեսակի հովիվը բարեհաճում է իր հարազատներին և ցանկանում է նաև ընտրել, թե ով է ժառանգելու եկեղեցին իրենից հետո: Նա քողարկում է եկեղեցում իրեն աջակցողների մեղքերն ու սխալները: Նա եկեղեցու գումարներին և ունեցվածքին այնպես է վերաբերում, կարծես դրանք իրեն են պատկանում:

Եկեղեցու վկայությունը

Եկեղեցին կարող է ապականվել, երբ չի պահանջում ազնվություն ու շիտակություն: Եթե համայնքը կիսում է աշխարհի ցանկությունները, ապա ընդունում է աշխարհի նման առաջնորդների: Նրանք հանդուրժում են մեղքն իրենց հոգևոր առաջնորդների կյանքում: Նույնիսկ անկեղծ քրիստոնյաները կարող են հետևել մեղսալի առաջնորդներին, քանի որ չեն հասկանում շիտակության և բարի պտուղների անհրաժեշտությունը: Երբ ադպես է լինում, աշխարհի մարդիկ վերահսկողություն են վերցնում եկեղեցու վրա, և այն կորցնում է իր վկայությունը:

Պետրոսը զգուշացրեց, որ կեղծ հոգևոր առաջնորդները եկեղեցին կվերածեն գործի (Բ Պետրոսի 2.3): Երբ եկեղեցին համբավ է ձեռք բերում հասարակության մեջ, աշխարհիկ մարդկանց սկսում է հետաքրքրել եկեղեցում կարգավիճակ ստանալու միտքը: Նրանք սովորում են պաշտամունքի և

[4] Քրիստոնեական երկրպագության լիարժեք ուսումնասիրության համար տե՛ս Shepherds Global Classroom կայքի *Introduction to Christian Worship* դասընթացը, որը հասանելի է՝ https://www.shepherdsglobal.org/courses հղմամբ:

կրոնական առաջնորդության ձևերը՝ առանց քրիստոնյա դառնալու: Եկեղեցին, որը չունի ճշմարիտ վարդապետություն, չի կարողանա ճանաչել նրանց [5]:

Հիսուսն օգտագործեց աղի օրինակը, որպեսզի բացատրի, թե ինչ է կատարվում, երբ եկեղեցին կորցնում է իր տարբերակիչ հատկանիշները (Մատթեոսի 5.13): Աղիությունը կորցրած աղը չի տարբերվում ավազից կամ մանրախճից:

Երբ եկեղեցին նմանվում է հասարակությանը, այլևս չի կարողանում փոխել հասարակությունը:

Աշխարհը ծաղրում է եկեղեցուն, երբ այն հետևում է աշխարհի օրինակին, ոչ թե աստվածաշնչյան ճշմարտությանը:

Աստծուն ներկայացնելը

Աստվածաբանությունը մեր քրիստոնեական հավատալիքների համակարգն է, որը ներառում է Աստծո, մարդկության, մեղքի, Քրիստոսի և փրկության մասին վարապետական դրույթները: Աստծո մասին մեր հավատամքը հիմնարար դեր ունի մյուս բոլոր հավատալիքների համար:

Երբ Աստված սկսեց հայտնել Իրեն, Նրա հայտնության առաջին նպատակն այն էր, որ ցույց տա, թե ինչպիսի Աստված է Ինքը: Հիմնականում Աստված Ինքն Իրեն նկարագրեց որպես *սուրբ:* Եբրայերեն «սրբություն» *(կադոշ)* բառը Հին Կտակարանում հանդիպում է ավելի քան 600 անգամ: Օրինակ՝ Եսայիան Աստծո մասին խոսելիս Նրան բազմիցս կոչում է՝ «Իսրայելի Սուրբը»: Աստծո սրբությունը երկրպագության թեման էր (Սաղմոս 99.3, 5): Աստծո ժողովուրդը Նրան երկրպագում էր ոչ միայն զորության, այլև Նրա սրբության համար:

Աստված Իրեն հայտնեց նաև որպես *սեր:* Հին Կտակարանի առավել ազդեցիկ հատվածներից մեկը, որտեղ Աստված հայտնվում է Մովսեսին և Իսրայելին, Ելից 34.6-7-ն է: Աստված Իրեն նկարագրում է որպես՝ «…Տեր Աստվածը, ողորմած ու գթացող, երկայնամիտ և բարեգթությամբ ու ճշմարտությամբ առատ, Իր ողորմածությունն է ցուցաբերում մինչև հազարավորների հանդեպ, ներում է անօրենությունը, հանցանքն ու մեղքը, սակայն մեղավորին երբեք անպարտ չի թողնում…»: Կարևոր է Աստծո սրբությունն ու սերը միասին պահելը: Աստծո էությունը նկարագրելու համար հաճախ օգտագործվող արտահայտությունը «Սուրբ սերն» է: Քանի որ Աստված սուրբ է, Նա մեզանում սրբություն է պահանջում. քանի որ Աստված սեր է, նա ճանապարհ է ստեղծել մեզ համար, որ սուրբ դառնանք, ինչպես որ Նա է սուրբ:

Աստծո սրբությունը ցույց տվեց, որ մարդիկ ի վիճակի չեն ծառայելու և երկրպագելու Աստծուն՝ առանց շնորհքի միջոցով նախապես վերափոխվելու: Եսայիա մարգարեն տեսավ, որ ինչ-որ ընդհանրություն կա իր ու այն մեղավորների միջև, որոնց նա քարոզում էր. նա անմաքուր սիրտ ուներ (Եսայիայի 6.5): «Պիղծ շուրթերը» ներկայացնում էին սխալ խոսքերն ու արարքները, որոնք բխում էին անմաքուր սրտից: Այդ անմաքրությունը թույլ չէր տալիս, որ Եսայիան Աստծո ներկայության մեջ լինի: Նա

[5] Բ Պետրոսի 2-րդ գլուխը և Հուդայի գիրքը գրված են կեղծ հոգևոր առաջնորդների թեմայով:

չփորձեց արդարացնել իր վիճակը, ո՛չ էլ Աստված դա արեց։ Աստված շնորհով պատասխանեց մարգարեի խոստովանությանը. ոչ թե հանդուրժող շնորհքով, այլ մաքրագործող ու վերափոխող շնորհքով (Եսայիայի 6.6-7)։

Իսրայելի Աստվածը տարբերվում էր կեղծ աստվածներից և պահանջում էր այլ տեսակի երկրպագություն։ Սաղմոս 24-ում Դավիթ թագավորը հարց է տալիս. «Ո՞վ է կանգնելու Նրա սրբավայրում» (3-րդ խոսք)։ Նա հարցնում էր. «Ո՞ւմ է Աստված ընդունում որպես երկրպագու»։ Այնուհետև նա պատասխանում է. «Նա, ով մաքուր ձեռքեր և անբասիր սիրտ ունի» (4-րդ խոսք)։ Ոչ բոլորն են ընդունվում որպես Աստծո երկրպագուներ։ Երկրպագողը պարզապես մեկը չէ, ով կարող է ձեռքերը բարձրացնել ու զգացումներ ունենալ։ Մեղավոր մարդը չի համապատասխանում դրան[6]։

Աստված ասաց, որ Իր սրբությունն Իր պահանջի հիմքն է, որ Իր երկրպագուները սուրբ լինեն։ «Սուրբ եղե՛ք, քանզի սուրբ եմ Ես» (Ղևտացիների 11.44-45, 19.2, 20.26, 21.8)։ Աստված այնպիսի աստված չէր, ինչպիսին հին արևելյան աստվածություններն էին կամ ավելի ուշ հանդես եկած հունական և հռոմեական դիցաբանության աստվածները։ Այդ աստվածների մասին առասպելները նրանց նկարագրում էին որպես ապականված, խաբեբա և դաժան։ Այդ աստվածներն ունեին մարդկային բնավորության բոլոր արատները։ Ինչպես պատի վրայի ստվերները, դրանք մարդու կերպարի չափազանցված աղավաղումներ էին։ Այդ աստվածները բարոյական կամ բնավորության չափանիշներ չէին պահանջում, իսկ նրանց երկրպագուները չար ու դաժան էին։

Իսրայելի Աստվածը մարդու կերպարի պրոյեկցիան չէ։ Նա երևակայական չէ, այլ Իրեն հայտնել է մարդկանց։ Նա տարբերվում է, և դրա համար էլ Նրա երկրպագուները պետք է տարբերվող լինեն։

Աստծո ընտրած չափանիշը կրկնվում է Նոր Կտակարանում. «Այլ ինչպես որ ձեզ կանչողը՝ Աստված, սուրբ է, դուք էլ սուրբ եղեք ձեր ամբողջ կյանքով, քանի որ գրված է. «Սո՛ւրբ եղեք, քանի որ սուրբ եմ Ես» (Ա Պետրոս 1.15-16)։ *Ամբողջ կյանքով* ասվածը վերաբերում է դիրքորոշումներին, վարքագծերին, վերաբերմունքին՝ կյանքի յուրաքանչյուր ոլորտին։ Աստված միայն չի ասում, որ իր երկրպագուները *ծիսականորեն* սուրբ լինեն կամ «սուրբ» *կոչվեն*, եթե նրանք իրականում այդպիսին չեն։ Նա ակնկալում է, որ Իր երկրպագուները իսկապես սուրբ կյանքով ապրեն։

Մեր դիրքորոշումն ու վերաբերմունքը ցույց են տալիս, թե ինչ ենք մտածում Աստծո և Նրա հետ ունեցած հարաբերությունների մասին։ Պողոս առաքյալն ասում էր, որ հրեաները, ովքեր հպարտանում էին Աստծո օրենքն ունենալով, անարգեցին Աստծուն՝ խախտելով այն։ Նրանց վարքի պատճառով մարդիկ վատ բաներ էին ասում նրանց և նրանց Աստծո մասին (Հռոմեացիների 2.23-24)։

---

[6] Քրիստոնեական երկրպագության լիարժեք ուսումնասիրության համար տե՛ս Shepherds Global Classroom կայքի «Քրիստոնեական երկրպագության ներածություն» դասընթացը, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.shepherdsglobal.org/courses

Ինչպիսի՞ Աստծո ես դու ներկայացնում: Ինչպիսի՞ն է քո Աստվածը մարդկանց կարծիքով: Եթե ուզում եք մարդիկ իմանան, որ Աստված սուրբ է, ինչպես նաև ներողամիտ ու ողորմած, ապա նրանք պետք է տեսնեն, որ դուք այդպիսին եք:

Եկեղեցիները կարիք ունեն, որ իրենց հովիվները հետևողական և հիմնավոր վարդապետություն ուսուցանեն: Հովիվը չպետք է անտեսի հիմնարար վարդապետությունը: Յուրաքանչյուր սերունդ և բոլոր նորադարձները պետք է լսեն դա: Նույնիսկ հասուն քրիստոնյաներին է հարկավոր հիշեցնել դա: Հովվի քարոզները չպետք է լինեն միայն զգացմունքային, դինամիկ կատարումներ՝ ոգևորություն առաջացնելու համար: Նա պետք է նկարագրի Աստծուն և բնութագրի, թե քրիստոնեական կյանքն ինչպես պետք է համապատասխանի Աստվածաշնչի Աստծո հայեցակարգին՝ իր բոլոր մանրամասնություններով:

Եկեղեցին պետք է վերափոխի հասարակությունը և մշակույթը, բայց դա տեղի կունենա միայն այն դեպքում, երբ Աստծո մասին մեր աստվածաշնչյան հայեցակարգը մանրամասնորեն կիրառվի մեր կյանքի բոլոր կողմերի վրա:

Խմբային քննարկում

► Այս դասի ո՞ր գաղափարներն էին ձեզ համար նոր: Ինչպե՞ս եք պլանավորում փոխել քրիստոնեական ապրելակերպի նկատմամբ ձեր մոտեցումները:

► Ո՞րն է այն գաղափարը, որն ըստ ձեզ, սովորաբար անտեսվում է ձեր մշակույթի եկեղեցիներում: Ինչպե՞ս կբացատրեք այդ գաղափարը ծանոթ մեկին:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Ես ուզում եմ պատվել Քեզ այնպիսի կյանքով, որը համապատասխանում է Քո էությանը: Ես ուզում եմ ներկայացնել Քեզ մի աշխարհում, որը չի հնազանդվում Քեզ:

Իմ կյանքը դարձրո՛ւ քո ճշմարտությանը համահունչ: Օգնի՛ր ինձ պատրաստակամորեն փոխելու այն ամենը, որ չպիտի լինի քրիստոնյայի կյանքում:

Շնորհակալություն Քո զորացնող Հոգու և վերափոխող շնորհքի համար:

Ամեն:

Դաս 1. Առաջադրանքներ

(1) Մեկ պարբերությամբ գրե՛ք աշխարհիկ այն արժեքի մասին, որն ազդել է ձեր մտածելակերպի կամ վարքագծի վրա ոչ վաղ անցյալում: Այնուհետև գտե՛ք կյանքի այդ կողմին վերաբերող սուրբգրային երկու խոսք և գրի առեք դրանք: Գրե՛ք մեկ պարբերություն այն մասին, թե ինչպես պետք է սկսեք ապրել՝ հնազանդվելով սուրբգրային այս խոսքերին:

(2) Ուսումնասիրե՛ք Տիտոսի 2.11-14-ը: Այս հատվածի հիման վրա պատրաստեք հակիրճ ելույթ քրիստոնեական շիտակության մասին: Օգտագործե՛ք այս հատվածը՝ բացատրելու, թե ինչու պետք է աստվածաշնչյան ճշմարտությունները մանրամասնորեն կիրառվեն կյանքի բոլոր մասերում: Ելույթով ներկայացե՛ք հաջորդ դասաժամի սկզբին:

Դաս 2
Գործնական հնազանդություն

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը կարող է.
(1) Բացահայտել քրիստոնեական սիրո և քրիստոնյայի անձնական կյանքի միջև եղած գործնական կապը։
(2) Մտածել տասը ոլորտների մասին, որոնցում հավատացյալներն իրենց կյանքը պետք է բերեն հարաճուն համապատասխանության սուրբգրային սկզբունքների հետ։
(3) Բացատրել առնվազն երկու պատճառ, թե ինչու են քրիստոնյաները տարբերվում իրենց ապրելակերպով, երբ հիմնվում են Սուրբ Գրքի ճշմարտությունների վրա։
(4) Ամփոփել ինը սկզբունքները (տրված տեքստում) ապրելակերպի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար։

Հնազանդ որդին

Աֆրիկացի մայրը տնից դուրս եկավ՝ ստուգելու իր փոքրիկ տղայի վիճակը, որ խաղում էր ծառի տակ։ Նա ցնցվեց՝ տեսնելով մեծ, թունավոր օձին, որ կախվել էր ծառից հենց որդու գլխավերևում։ Օձը կարծես պատրաստվում էր խայթել տղային։ Մայրը գիտեր, որ եթե փորձի զգուշացնել որդուն, նա վեր կնայի՝ արագ հեռանալու փոխարեն։ Բացատրելու փոխարեն, նա կանչեց որդուն. «Տղա՛ս, հենց հիմա ցած իջի՛ր գետնի վրա»։ Տղան տարակուսած էր, բայց քանի որ իրեն սովորեցրել էին հնազանդվել, այդպես էլ վարվեց։ Հետո մայրն ասաց. «Այդպես ցածր դիրքով մնա՛ ու սողալով արի՛ դեպի ինձ»։ Նա նորից հնազանդվեց և ապահովությամբ հեռացավ օձից։

Ինչո՞ւ տղան հնազանդվեց՝ չհասկանալով հրամանի իմաստը։ Նա հարգում էր մորը, որովհետև նրան արդեն սովորեցրել էին հնազանդվել, և խրատել էին, երբ չէր հնազանդվել։ Նա վստահում էր մորը՝ նաև իմանալով, որ մայրը սիրում է իրեն։ Մենք պետք է լիովին հնազանդվենք Աստծուն ոչ միայն այն պատճառով, որ վախենում ենք նրա խրատներից, այլ որովհետև գիտենք, որ Նա սիրում է մեզ։

Սիրո շարժառիթը

► Ի՞նչ տեսակի արդյունքներ կլինեին, եթե մարդն ավելի շատ սիրեր Աստծուն։ Կարող եք խորհել այդ մասին՝ ավարտելով այս միտքը. «Եթե ես ավելի շատ սիրեի Աստծուն, ես…»։

Աստծուն ավելի շատ սիրելու արդյունքը նկարագրված է Փիլիպպեցիների 1.9-11 հատվածում.

> «Իմ աղոթքն է, որ ձեր սերն ավելի աճի աստվածգիտությամբ և կատարյալ դատողությամբ, որպեսզի կարողանանք ընտրել լավը, և Քրիստոսն Իր գալստյան օրը ձեզ մաքուր ու անբասիր գտնի, ու դուք, Հիսուս Քրիստոսի միջոցով արդար գործերով հարստացած, պատճառ լինեք, որ

Աստված փառավորվի և գովաբանվի»։

Այս հատվածը խոսում է հավատացյալի կյանքում շարունակվող մի գործընթացի մասին: Նրա սերը պետք է անընդհատ աճի: Աստծո հանդեպ նրա սիրո աճին զուգընթաց՝ զանազանելու կարողությունը, թե որն է լավագույնը, մեծանում է և ընդլայնվում։ Երբ նա տարբերում է, թե որն է լավագույնը, նա հարմարեցնում է իր կյանքը՝ կենտրոնանալով լավագույնի վրա։ Սա պետք է տեղի ունենա, որպեսզի քրիստոնյան լինի մաքուր և անբասիր:

Ինչպես նորածին երեխային է առջևում սպասում սովորելու և աճելու մի ամբողջ կյանք, այնպես էլ մենք՝ դարձի գալու պահին չենք հասկանում ամբողջ ճշմարտությունը, որը պետք է ուղեկցի մեզ ողջ կյանքում: Վերոնշյալ խոսքերում Պողոսը գրել է մարդկանց, ովքեր արդեն քրիստոնյա էին։ Այնուամենայնիվ, Պողոսն աղոթում է, որ նրանք շարունակեն Աստծուն ավելի շատ սիրել, և այդ սիրով ունակ լինեն ավելի լավ հասկանալ Աստծո կամքն ու հնազանդվել Իրեն:

Մենք պետք է ակնկալենք մեր կյանքի շարունակական բարելավում, քանի որ Աստված զանազանելու շնորհ է մեզ տալիս: Նա ուզում է, որ մենք լիակատար հնազանդություն մեջ լինենք մեր կյանքի բոլոր ոլորտներում, ոչ թե միայն կրոնական ծեսեր պահողներ լինենք:

Մենք չպետք է ենթադրենք, թե արդեն գիտենք այն ամենը, ինչ հարկավոր է իմանալ կյանքն ապրելու համար: Մենք չպետք է ձևացնենք, թե կատարել ենք մեր կյանքում անհրաժեշտ բոլոր “ծրագրային կարգավորումները”:

Որոշ ոլորտներ, որոնցում հավատացյալը պետք է բարեփոխվի

(1) Զգուշություն ազդեցության առումով (Առակների 22.1, Մատթեոսի 5.14 -16)

Արդյոք կա՞ն բաներ, որ անում եք, բայց չէիք ցանկանա, որ ուրիշներն անեին դրանք: Կհիասթափվե՞ք՝ տեսնելով, որ ձեր հովիվն անում է այն, ինչ դուք եք անում:

(2) Ինքնատիրապետում (Առակների 16.32, 25.28, Գաղատացիների 5.22 - 23)

Արդյոք բավականաչափ վերահսկո՞ւմ եք ձեր զգացմունքներն ու ցանկությունները, որպեսզի անեք այն, ինչ պետք է, թե՞ երբեմն թույլ եք տալիս, որ ձեր զգացմունքները դրդեն ձեզ՝ վարվելու անհավատի պես:

(3) Առողջական խնամք (Ա Կորնթացիների 6.19, 10.31)

Դուք հոգո՞ւմ եք ձեր մարմնի մասին՝ որպես անփոխարինելի «գործիքակազմի»՝ ընծայված Աստծո համար գործելուն: Քանի որ ձեր մարմինը պատկանում է Աստծուն, այն չպետք է վնասվի: Դուք չպետք է անզգուշորեն վարվեք ձեր մարմնի ու օրգանիզմի հանդեպ:

(4) Ժամանցի ընտրություն (Կողոսացիների 3.17, Ա Կորնթացիների 6.12)

Արդյոք ձեր զվարճանքը միտվա՞ծ է ձեզ գայթակղությունների դեմ պայքարի մեջ դնելու՝ առաջ բերելով սխալ մտքեր կամ վարմունք: Զգուշացե՛ք այն ամենից, ինչը մեղքը ներկայացնում է որպես գրավիչ կամ զվարճալի երևույթ:

(5) Վարվելաձև (Հռոմեացիների 13.9, Կողոսացիների 3.19, Ա Տիմոթեոսի 2.8, Ա Պետրոսի 3.2):

Հարգանքով վերաբերվեք բոլորին, քանի որ մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով և հավիտենական ապագա ունեն: Մարդիկ քաղաքավարություն դրսևորելու սովորույթներ ունեն: Դուք պետք է սովորեք քաղաքավարի լինել այնպես, որ մարդիկ գնահատեն դա: Հարկավոր է բարություն ցուցաբերել նույնիսկ այն ժամանակ, երբ ինչ-որ մեկն արժանի չէ դրան:

(6) Աշխատանքի էթիկա (Առակների 20.23)

Դուք լիովին ազնի՞վ եք բոլոր գործերում: Արդյոք նկարագրո՞ւմ եք իրերն այնպես, ինչպես որ դրանք կան, թե՞ որևէ մեկին դրդում եք մտածել մի բան, որը ճիշտ չէ:

(7) Ճշտապահություն (Գաղատացիների 5.14)

Ժամանակը արժեքավոր ռեսուրս է, որը պետք է օգտագործենք Աստծո համար: Կարևորո՞ւմ եք ձեր և ուրիշների ժամանակը՝ հնարավորության դեպքում ճշտապահ լինելով ու ժամանակը ճիշտ տնօրինելով:

(8) Հագուստ (ա Տիմոթեոսի 2.9, Ա Պետրոսի 3.3-4)

Արդյոք ձեր հագուստը ցո՞ւյց է տալիս հետևյալ արժեքները.

- Պարկեշտություն՝ մարմինը բավականաչափ ծածկելը,
- Խոնարհություն՝ չփորձել հագուստով ավելորդ հիացմունք կամ ուշադրություն գրավել,
- Գումարի ճիշտ տնօրինում՝ չգնել ավելի թանկ հագուստ, քան անհրաժեշտ է:

(9) Խոսվածք (Կողոսացիների 4.6, Եփեսացիների 4.29)

Արդյոք ձեր խոսակցությունը մաքո՞ւր է ու հարգալից Աստծո և ուրիշների հանդեպ: Շատ խոսքեր, որոնք աշխարհն օգտագործում է որպես բացականչություններ, բխում են Աստծո հանդեպ անպարկեշտ արտահայտություններից կամ եզրույթներից:

(10) Վստահելիություն (Սաղմոս 61.8, Առակների 20.6, 28.20)

Իրականացնո՞ւմ եք ձեր հանձնառությունները: Կարո՞ղ են մարդիկ ակնկալել, որ ձեր ասածը կանեք: Միգուցե մոռանո՞ւմ եք ձեր խոստումները, եթե դրանք հարմար չեն կատարելու համար

Շատերը լուրջ չեն վերաբերում այն փաստին, որ իրենք “վերանորոգվելու” կարիք ունեն: Նրանք պատասխանատու են զգում միայն սուրբգրային պարզ պատվերների հարցում՝ չհասկանալով, որ դրանք բազմաթիվ կիրառություններ ունեն:

Մենք պետք է գիտակցենք, որ բարեփոխվելը կապված է Աստծո հանդեպ մեր սիրո աճի հետ: Մենք պետք է լրջորեն խորհենք այն խոսքերի շուրջ, որոնցով սկսել ենք այս դասը (Փիլիպպեցիների 1.9-11): Եթե մեր սերն աճում է, մեր զանազանելու կարողությունն ուբվարքագծի ճիշտ ընտրությունը պետք է բարեփոխվեն:

Խմբային քննարկում

► Ձեր կյանքում կատարած փոփոխության ի՞նչ օրինակ ունեք, երբ Աստված ցույց է տվել, որ ինչ-որ վերաբերմունքը, սովորությունը կամ արարքը լավագույն տարբերակը չէր:

► Ձեր ապրելակերպում կա՞ ինչ-որ բան, որը փոխել է պետք: Այդ քայլին կգնա՞ք:

► Դուք անո՞ւմ եք որևէ բան, որն Աստծուն միգուցե հաճելի չէ:

► Դուք պատրա՞ստ եք թույլ տալու Աստծուն, որ աղոթքով ցույց տա ամեն փոփոխություն, որը հարկավոր է կատարել ձեր կյանքում:

Եկեք որոշենք այս շաբաթ աղոթել բաց սրտով, որպեսզի Աստված կարողանա մեզ ցույց տալ Իր արժեքները և ցանկացած փոփոխություն, որը Նա ցանկանում է կատարել մեր կյանքում: Համաձա՞յն եք այդպես աղոթել: Հաջորդ շաբաթ ես ձեզ կհարցնեմ, թե արդյոք արել եք դա:

Աստվածաշնչյան սկզբունքների անձնական կիրառում

► Երբևէ նկատե՞լ եք տարբերություններ քրիստոնյաների միջև, հատկապես գործնական հարցերում, թե ինչ են անում և ինչ չեն անում: Ինչու՞ կան այս տարբերությունները, երբ նրանք կարդում են նույն Աստվածաշունչը: Քանի որ քրիստոնյաների միջև այդքան շատ տարբերություններ կան, մի՞թե իսկապես կարևոր է, թե ինչ ենք անում: Ինչո՞ւ:

Ոչ բոլոր քրիստոնյաներն են համաձայնում աստվածաշնչյան սկզբունքներով և արժեքներով ապրելու հարցերի շուրջ: Այնուամենայնիվ, քրիստոնյան պարտավոր է լրջորեն վերաբերել իր հավատալիքներին ու ապրել ըստ դրանց:

Վարքագծերը, ժամանցի ընտրությունը և հագուստը, բոլորն էլ ինչ-որ բան են ցույց տալիս սրտի ծածուկ ցանկությունների մասին:

Ահա մի քանի սկզբունքներ, որոնք յուրաքանչյուր հավատացյալ պետք է հիշի, երբ փորձում է զանազանել, թե ինչպիսի որոշում է հարկավոր կայացնել որոշակի իրավիճակներում:

Սկզբունքներ՝ կենսակերպին վերաբերող որոշումներ կայացնելու համար

(1) Մենք պետք է հնազանդվենք քրիստոնյաներին ուղղված Աստվածաշնչի բոլոր պատվերներին:

Մատթեոսի 5.19 - ում Հիսուսն ասում է.

> «Ով որ ամենափոքր պատվիրանն իսկ զանց անի և ուրիշներին էլ այդպես սովորեցնի, երկնքի արքայության մեջ նա հետինը պիտի համարվի: Իսկ ով որ գործադրի պատվիրանները և ուսուցանի դրանք, երկնքի արքայության մեջ նա մեծ պիտի լինի»:

Մենք չենք կարող պարզապես ընտրել այն կետերը, որոնք կարևորագույնն են՝ մեր կարծիքով: Սուրբգրային ոչ մի պատվեր աննպատակ չէ այնքան, որ անտեսվի:

(2) Աստծո պատվերները մեր բարօրության համար են:

Բ Օրինաց 10.12-13.

> «Եվ հիմա, ո՜վ Իսրայել, ի՞նչ է պահանջում քեզանից քո ՏԵՐ Աստվածը. միայն մի բան, որ քո ՏԵՐ Աստծուց վախենաս, Նրա բոլոր ճանապարհներով քայլես և սիրես ու ծառայես քո ՏԵՐ Աստծուն ամբողջ սրտովդ և ամբողջ հոգով. որ ՏԻՐՈՋ պատվիրանները և կանոնները պահես, որ ես այսօր, քո բարիքի համար քեզ պատվիրում եմ»:

Սաղմոս 84.11.

> «Քանի որ ՏԵՐ Աստվածն արև ու վահան է. Տերը շնորհ և փառք է տալու, ոչ մի բարություն չի խնայելու շիտակ քայլողներից»:

Աստված մեզանից չի խնայում որևէ բարիք և չի պատվիրում մի բան, որը վնասակար է մեզ: Մենք ավելի լավ վիճակում չէինք լինի առանց Նրա կողմից դրված սահմանափակումների: Մերժել Նրա ցուցումները նշանակում է՝ կասկածել Նրա իմաստությանն ու սիրուն: Մենք ապացուցում ենք, որ իսկապես հավատում ենք Աստծո բարությանն ու իմաստությանը, երբ հնազանդվում ենք Նրա Խոսքի հրահանգներին՝ մարդկային գաղափարներին հետևելու փոխարեն:

(3) Քրիստոնեական ազատությունն Աստծուն հնազանդությունից ազատվելը չէ:

Պողոսը դա գրեց քրիստոնյաներին Ա Կորնթացիների 9.21-ում.

> «Օրենքը չունեցողների հետ Օրենք չունեցողների պես եղա (ոչ թե Աստծո առջև առանց օրենքի էի, այլ Քրիստոսի օրենքի տակ էի), որպեսզի Օրենքը չունեցողներին շահեմ»:

Մենք ազատված ենք օրենքից՝ թե՛ մովսեսական համակարգից, թե՛ Աստծո բարոյական պահանջներից՝ որպես արդարացման միջոց, որովհետև մենք փրկված ենք շնորհով և ոչ թե Աստծո պատվիրանները կատարելով: Մենք ազատված ենք նաև օրենքի դատապարտությունից, քանի որ մեր գործած մեղքերը ներված են:

Մենք, այդուհանդերձ, ազատված չենք Աստծուն հնազանդվելու պահանջից կամ սիրելու պարտավորությունից. «Որովհետև դուք ազատության եք կանչված, եղբայրնե՛ր. միայն թե ձեր ազատությունը մարմնականի համար որպես պատրվակ մի՛ օգտագործեք, այլ սիրով միմյանց ծառայեցեք» (Գաղատացիների 5.13)։ Ինչպես Ա Կորնթացիների 9.21-ն է (վերևում) ցույց տալիս, մենք Աստծո իշխանության ներքո ենք։ Նրա կամքը մեզ համար բացահայտված է Աստվածաշնչում։

Օրինապաշտությունը (կրոնավորությունը) հատուկ եզրույթ է, որը մարդիկ երբեմն օգտագործում են, երբ քննարկում են Աստծուն հնազանդվելու հետ կապված հարցերը։ Կարևոր է հասկանալ այս բառի ճիշտ սահմանումը։ *Օրինապաշտությունը* սխալ համոզմունք է ու ասում է, որ մարդը փրկվում կամ հասնում է հոգևոր հասունության՝ կատարելով որոշակի պահանջներ ու օրենքներ՝ շնորհքի փոխարեն։ Այդուհանդերձ, օրինապաշտություն *չէ*, երբ մարդը հասկանում է, որ պետք է զգուշորեն հնազանդվի Աստծուն կյանքի բոլոր ոլորտներում, քանի որ ցանկանում է հաճեցնել Աստծուն։

«Մեղքի տիրապետությունից ազատվեցիք և արդարության ծառա դարձաք» (Հռոմեացիների 6.18)։

(4) Եթե մենք սիրում ենք Աստծուն, ուզում ենք իմանալ Նրա կամքը, ոչ թե խուսափել դրանից։

Ա Հովհաննեսի 5.2-3-ն ասում է.

> «Ուստի, եթե սիրում ենք Աստծուն և կատարում Նրա պատվիրանները, նշանակում է, որ սիրում ենք նաև Աստծո զավակներին։ Արդարև, Աստծո հանդեպ մեր սերն արտահայտում ենք Նրա պատվիրանները գործադրելով։ Իսկ Նրա պատվիրանները գործադրելը դժվար չէ»։

Երեմիայի 31.33-ն ասում է. «Այս է լինելու այն ուխտը, որ պիտի կապեմ Իսրայելի տան հետ … Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում, նրանց սրտերի վրա պիտի գրեմ այն…»։

Նա, ով սիրում է Աստծուն, առաջին հերթին չի հարցնում. «Աստված կդատապարտի՞ ինձ դա անելու համար», այլ՝ «Ի՞նչն ավելի հաճելի կլինի Աստծուն» կամ՝ «Ո՞րն է ամենից գերազանց բանը» (Փիլիպպեցների 1.10, Տիտոսի 3.8)։

(5) Աստվածաշունչը հիմք է ստեղծում՝ հաստատելու հատուկ կանոններ մեր կյանքի համար։

Աստվածաշունչը միայն ընդհանուր սկզբունքներ չի տալիս։ Այս դասի առաջադրանքներում թվարկված են որոշ սուրբգրային հատվածներ, որոնք հիմք են տալիս քրիստոնեական կյանքն իմաստությամբ ու սրբությամբ ապրելու համար։ Դրանցից որոշները հստակ ցուցումներ են տալիս քրիստոնեական ապրելակերպի վերաբերյալ։

(6) Մեր հավատքի ամենակարևոր մասն այն չէ, թե ինչ օրենքներով պետք է ապրել։

Փարիսեցիները սխալվեցին՝ գլխավորապես շեշտադրելով անկարևոր երևույթները։ Մատթեոսի 23.23-ում Հիսուսն ասաց նրանց։

> «Վա՜յ ձեզ, դպիրնե՛ր և փարիսեցինե՛ր, կեղծավորնե՛ր՝, որ անանուխի, սամիթի և չամանի տասանորդը տալիս եք, բայց թողել եք Օրենքի ամենակարևոր բաները՝ արդարադատությունը,

ողորմությունը և հավատը: Սրանք պետք է անեիք և մյուսն էլ անկատար չթողնեիք»:

Այս խոսքը չի ասում, թե որևէ ճշմարտություն անկարևոր է, այլ որ որոշ բաներ ավելի կարևոր են, քան մյուսները: Մենք առավելապես պետք է խոսենք ամենակարևոր բաների մասին:

(7) Կանոնները պահելը բավարար չէ Աստծո հանդեպ մեր հնազանդությունը կամ սերն ապացուցելու համար:

Փարիսեցիների հետ նույն զրույցի ժամանակ Հիսուսն ասաց (25-րդ խոսք).

> «Վա՜յ ձեզ, դպիրնե՛ր և փարիսեցինե՛ր, կեղծավորնե՛ր, որ մաքրում եք բաժակի և ամանի դրսի կողմը, իսկ ներսից նրանք լցված են ագահությամբ ու անիրավությամբ»:

Մարդ կարող է ապրել խիստ չափավորված ապրելակերպով, սակայն չսիրի Աստծուն կամ անգամ ամբողջությամբ չհնազանդվի Նրան: Մյուս կողմից՝ մարդը կարող է սիրել Աստծուն իր ամբողջ սրտով, սակայն չհասկանա, թե ինչու պետք է սա կամ այն անել կամ չանել : Հետևաբար, ավելի խիստ բարոյական արժեքներ ունեցող մարդը պարտադիր չի, որ ավելի շատ հոգևոր հասունություն ունենա:

(8) Այլ մարդկանց վկայության հանդեպ եղած մեր վստահությունը չպետք է կախված լինի իրենց ապրելաոճում եղած չնչին տարբերություններից:

Հռոմեացիների 14.10-ում Պողոսը հարցնում է քրիստոնյաներին.

> «Բայց դու ինչո՞ւ ես դատում քո եղբորը, կամ ինչո՞ւ ես արհամարհում նրան, քանի որ բոլորս պիտի կանգնենք Քրիստոսի ատյանի առաջ»:

Այս խոսքը մի հատվածում է, որը քննարկում է գործնական հիմնահարցերի վերաբերյալ քրիստոնյաների տարբեր տեսակետները: Կան անկեղծ տարաձայնություններ, թե քրիստոնյան ինչ պետք է անի և ինչ չպետք է անի:

Մեկ այլ հավատացյալ կարող է չհամաձայնել Սուրբ Գրքի որոշակի հատվածի մեր մեկնաբանության հետ կամ գուցե չտեսնի ինչ-որ բանի վնասակարությունը, որը մենք մերժել ենք: Հնարավոր է, որ Աստված աշխատում է նրա կյանքի տարբեր կողմերի վրա կամ Աստված նրան դրել է որևէ այլ մշակութային միջավայրում ու շրջապատում: Դա չի նշանակում, թե մարդը անկեղծ քրիստոնյա չէ:

► Ի՞նչ կարծիք ունեք այս արտահայտության վերաբերյալ. «Աստված բոլորին ցույց կտա ճշմարտությունը, թե ինչպես ապրել, հետևաբար, բոլոր քրիստոնյաները պետք է ունենան նույն սովորությունները:

Քրիստոնյաները երբեք համաձայնություն չեն եկել ապրելակերպի տարբեր գործնական հարցերի վերաբերյալ: Մարդիկ, ովքեր սիրում են Աստծուն և ապրում աստվածավախ կյանքով, ոչ միշտ են ընդունում միևնույն վարդապետական համոզմունքներն և դրանցից բխող արժեքները: Մեր կողմից սխալ է ասել, թե մյուսները քրիստոնյա չեն, քանի որ այլ կերպ են մեկնաբանում կամ կիրառում գրվածքները: Մենք կարող ենք նրանց ընդունել որպես անկեղծ քրիստոնյաների, թեև մտածում ենք,

որ նրանց կարծիքը սխալ է: Սուրբ Հոգու գործը բոլոր քրիստոնյաներին միանման ապրելակերպի մղելը չէ:

Մենք պետք է բաց ու պատրաստ լինենք նաև սովորելու այլ քրիստոնյաներից ու իրենց որդեգրած հավատալիքներից: Հպարտությունը ստիպում է մեզ մտածել, որ մենք կամ մեր եկեղեցին կամ հարանվանությունը *հիանալի կերպով* մեկնաբանում կամ կիրառում են աստվածաշնչյան գրվածքները: Խոնարհ, սովորելու ունակ, ընդունող հոգին նպաստում է քրիստոնեական միասնությանը և Քրիստոսի մարմնի կերտմանը:

(9) Տարբեր կարծիքների հանդեպ հանդուրժողականությունը չի արդարացնում կարևոր հարցերի շուրջ սեփական անհոգությունը:

«Յուրաքանչյուր ոք թող պահի իր համոզումը» (Հռոմեացիների 14.5բ):

«Եթե մեկը կասկած ունի իր կերածի անմաքրության մասին, ենթակա է Աստծո դատապարտությանը, եթե ուտի, որովհետև նրա արարքը հավատի արդյունք չէ: Եվ ամեն ինչ, որ հավատից չի գալիս, մեղք է» (Հռոմեացիների 14.23):

Աղետալի արդյունքներ են լինում, երբ մարդ դեմ է գնում իր խղճին: Եթե մարդը որոշում է անել մի բան, որը սխալ է համարում, մեղավոր է: Օրհնություններ են լինում այն դեպքում, երբ մարդը քայլում է Աստծո տված լույսի մեջ (Ա Հովհաննեսի 1.7):

Խմբային քննարկում

Այս թեմայի շուրջ քննարկումներ սկսելու դժվարություն չի լինի: Գուցե որոշ ուսանողներ բարձրաձայնեն եկեղեցիների կողմից վարքի կանոններ պահանջելու անհրաժեշտության մասին: Մյուսներն էլ, թերևս, կընդգծեն տարբերությունները հանդուրժելու կարևորությունը:

Փորձե՛ք արդարացի ուշադրություն դարձնել վերը թվարկված ինը սկզբունքներից յուրաքանչյուրին:

► Այդ սկզբունքներից ո՞րն եք կարծում, որ շատերը մոռանում ու անտեսում են:

► Այդ սկզբունքներից ո՞րն եք ամենայն հավանականությամբ մոռանալու:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Ես ուզում եմ, որ իմ սերը Քո հանդեպ անընդհատ աճի: Ուզում եմ ավելի լավ հասկանալ Քո կամքն ինձ համար:

Օգնի՛ր ինձ սովորել զանազանել, թե ինչն է Քեզ առավել հաճեցնում, որպեսզի կարողանամ ապրել անկեղծ և անբասիր կյանքով:

Օգնիր ինձ՝ տեսնելու այն սովորություններն ու դիրքորոշումները, որոնք պետք է փոխել, և ձեռք բերել սովորություններ ու դիրքորոշումներ, որոնք փառավորում են Քեզ:

Ես ուզում եմ, որ իմ հավատքը պտղաբեր լինի Աստծո փառքի համար:

Ամեն:

Դաս 2. Առաջադրանքներ

(1) Ուսումնասիրել Ա Կորնթացիների 13-րդ գլուխը: Այն նկարագրում է, թե ինչպես պետք է սեր ցուցաբերել այլոց հանդեպ: Թող Աստված ցո՛ւյց տա, թե որ ոլորտներում է Նա ցանկանում փոխել ձեզ, որպեսզի ձեր կյանքից ավելի շատ սեր բխի: Թվարկե՛ք որոշ փոփոխություններ, որոնց կատարելու հարցում Աստծո օգնության կարիքն ունեք:

(2) Ուսումնասիրե՛ք հետևյալ խոսքերը, որոնք հիմք են հանդիսանում քրիստոնեական պարկեշտ վարքագծի համար.

- Ա Կորնթացիների 6.19-20,
- Ա Կորնթացիների 10.31,
- Ա Կորնթացիների 11.14-15,
- Ա Տիմոթեոսի 2.9-10,
- Ա Պետրոսի 3.3-4,
- Սաղմոս 19.14,
- Սաղմոս 101.3:

Գրե՛ք յուրաքանչյուր հատվածի հիմնական իմաստը: Նկարագրե՛ք ապրելակերպի այն կողմերի մանրամասնությունները, որոնք, ըստ ձեզ, պետք է կիրառել այդ սուրբգրային հատվածների պատճառով:

Դաս 3
Աշխատանք

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը կարող է.
(1) Բացատրել, թե ինչ է սովորեցնում Աստվածաշունչն աշխատանքի մասին։
(2) Ցույց տալ քրիստոնեական աշխատանքային էթիկայի առանձնահատկությունները։

Աստծո գործիչ՝ Լորենս եղբայրը

Լորենս եղբայրը հասարակ վանական էր, ով ապրում էր մենաստանում 1600-ականներին։ Աստծո հանդեպ սիրուց ելնելով և երբեք թույլ չտալով, որ Աստծո ներկայությունը հեռու լինի իր մտքից՝ նա հանրաճանաչ դարձավ սովորական գործեր անելով՝ կարտոֆիլ մաքրելով, սպասք լվանալով և այլն։ Նա Աստծուն մշտապես պահում էր իր ուշադրության կենտրոնում՝ ներառյալ իր աշխատանքում։

«The Practice of Presence of God»-ը («Աստծո ներկայությունը գործնականում») բավականին հակիրճ մի գիրք է, որը կարդացել են միլիոնավոր մարդիկ։ Այն պարունակում է հարցազրույցներ և նամակներ Լորենս եղբորից։ Նա գրում է. «Մեր սրբացման գործընթացը կախված չէ մեր գործերը մեր իսկ շահի ու անվան համար փոխելուց, այլ դրանք կատարելուց՝ հանուն Աստծո»։

► Ի՞նչ է աշխատանքը։ Արդյոք աշխատանքը միայն *զբաղվածությո՞ւն է*՝ աշխատանքի ընդունվելով ինչ-որ գործ անելը։

Աշխատանքը ենթադրում է զբաղվածություն, բայց այն նաև տրված է մեզ, որ մեր և ուրիշների մասին հոգ տանենք, մեր ունեցածը կառավարենք, իրեր արտադրենք, շահույթ ստանալու նպատակով բիզնեսով զբաղվենք և ուրիշներին անշահախնդիր օգնենք։

► Արդյոք քրիստոնյան պե՞տք է աշխատի։ Ինչու՞։

Շատերը կարծում են, թե հրաշալի կլիներ այնքան գումար ունենալ, որ ստիպված չլինեին աշխատել։ Նրանք կարծում են, թե ամենահաճելի կյանքը ժամանցային, հանգիստ կյանքն է։

Աշխատանքն՝ ըստ Աստվածաշնչի

Մտածե՛ք, թե սկզբում Աստված ինչպես նախագծեց ու ստեղծեց աշխարհը։ Այն կատարյալ էր՝ Աստծո ստեղծած առաջին մարդկանց համար հարմար մի վայր էր։ Աստված առաջին մարդկանց աշխատանք տվեց։ Նա կարող էր աշխարհն այնպես նախագծել, որ մարդկային բոլոր կարիքները բավարարվեին առանց աշխատանքի, բայց՝ ոչ։ Աստված գիտեր, որ մարդկանց համար լավագույն կյանքն առանց աշխատանքի չի կարող գոյություն ունենալ։

Աստված ծրագրել է, որ մեր հարաբերությունների մեջ աշխատանքն իր ուրույն դերն ունենա: Մարդիկ պետք է սովորեն համագործակցել, կախված լինել միմյանցից, վստահելի լինել միմյանց համար, օգտագործել ուժեղ կողմերը և օգնել թույլերին, միասին հաղթահարել մարտահրավերները, հարթել տարաձայնությունները, ուղղել սխալները, սովորել միմյանցից:

Աստված մարդկանց իշխանություն ու պատասխանատվություն տվեց՝ կառավարելու երկիրը, վերահսկելու և զարգացնելու այն Իր փառքի համար: Այդ հանձնարարությունը հանգեցրեց գյուղատնտեսության զարգացմանը, կենդանիներ պահելուն, երկրի հանածոների արդյունահանմանը և տեխնոլոգիաների զարգացմանը:

Աստված մեզ ստեղծեց՝ բնությունից վեր դասելով, որովհետև մենք Նրա էությունից ինչ-որ բան ունենք մեր մեջ: Սաղմոս 8.6-8 հատվածն ասվում է.

> «Քո ձեռքերի գործերի վրա իշխանություն տվեցիր նրան, ամեն ինչ դրեցիր նրա ոտքերի տակ՝ բոլոր ոչխարներն ու արջառները, նաև՝ վայրի գազանները, երկնքի թռչուններն ու ծովի ձկները, և ինչ որ անցնում է ծովային ճանապարհներով»:

Առաջին մեղքի պատճառով աշխարհը փոխվեց՝ ընկավ իր կատարյալ վիճակից, և դրա հետևանքով աշխատանքը ներառում է բազմաթիվ դժվարություններ ու հիասթափություններ, որոնք չկային Աստծո սկզբնական նախագծում: Այնուամենայնիվ, մենք պետք է գիտակցենք, որ աշխատանք ունենալու կարիքը մեր մեջ դրված է Աստծո կողմից:

Մեր աշխատանքը նման է Աստծո արարչագործությանը: Աշխատանքը մարդու կողմից իր միջավայրը վերափոխելու ձևերից մեկն է: Ապրուստ վաստակելն աշխատանքի միակ նպատակը չէ: Մարդիկ իրենց միջավայրը փոխելու բնազդ ունեն: Նրանք վերանորոգում են իրենց տները: Նրանք փորձում են հեռացնել աղբը: Այն մարդը, ով այլևս չի ուզում աշխատել, հրաժարվել է իր միջավայրը փոխելու ցանկությունից ու կարողությունից: Նա մասնակիորեն հրաժարվում է «մարդ» լինելու կոչումից:

► Ի՞նչ եք մտածում, երբ տեսնում եք չխնամված տուն կամ բակ:

Ստեղծելու, ծրագրելու, կազմակերպելու, արտադրելու ու գործունեություն ծավալելու մարդկային հակվածությունը Աստծո պատկերի մի մասն է մարդու մեջ: Ուստի քրիստոնյայի համար *բոլոր* աշխատանքները սուրբ են: Ամեն աշխատանք երկրպագության ակտ է, երբ այն արվում է Տիրոջը հաճեցնելու համար (Կողոսացիների 3.17, 23): Հիսուսն ասաց, որ իր Հայրն աշխատում է, հետևաբար, Ինքն էլ է աշխատում (Հովհաննեսի 5.17):

Չպետք է աշխատանքի մասին մտածել որպես մի տհաճ անհրաժեշտության, ինչպես, օրինակ՝ դեղորայքի ընդունումն է հիվանդ ժամանակ: Աշխատանքը սոսկ մի բան չէ, որ անհրաժեշտ է գոյատևման համար: Դա մարդկության համար Աստծո նախագծի մի մասն է:

Բ Թեսաղոնիկեցիների 3.10-ն ասում է, որ մենք պետք է աշխատենք. «Արդարև, ձեզ մոտ եղած ժամանակ էլ շարունակ պատրաստում էինք ձեզ՝ ասելով. «Չաշխատողը թող չուտի»»:

Ի՞նչ անենք, եթե մեր աշխատանքն աննշան մի բան թվա մեզ: Մահաթմա Գանդին ասել է. «Այն, ինչ դուք անում եք, կարող է աննշան թվալ, բայց դա ամենակարևորն է, որ դուք անում եք»: Պատկերացրեք մի մարդու, ում վարձել են հատակը լվանալու համար: Դա կարող է թվալ աննշան մի գործ, բայց նա կարևոր ընտրություն է կատարում: Ամեն օր աշխատանքի գնալով՝ նա նախընտրում է այդ գործն անել, քան ժամանակն անգործության մատնել՝ չարժեվորելով ոչ ոքի: Նա ընտրում է պատասխանատվություն ստանձնել ինքն իր համար հոգալու՝ ընկերների կամ ընտանիքի հաշվին մակաբույծի պես ապրելու փոխարեն: Նա հոգում է նրանց համար, ովքեր կախված են իրենից, գուցե կնոջ ու երեխաների համար, այլ ոչ թե ստիպում է նրանց օգնություն փնտրել ուրիշ միջոցներով: Այս բոլոր օրինակներն օգնում են մեզ հասկանալ, որ թեև բուն աշխատանքը կարող է աննշան թվալ, բայց կարևոր է, որ մարդն ընտրում է ու որոշում է դա անել:

Կա՞ն արդյոք շատ մարդիկ, ովքեր իսկապես չեն կարող աշխատել: Ո՛չ: Նույնիսկ եթե մարդն ի վիճակի չէ վարձու աշխատանքի ընդունվելու, նա, հավանաբար, կարող է ինչ-որ բան անել՝ ուրիշների կարիքները հոգալու համար:

Քրիստոնյան պետք է աշխատի, քանի որ պատասխանատվություն է կրում իր և ուրիշների համար: Մարդը չպետք է ակնկալի, որ ուրիշները կապահովեն իր կարիքները, եթե ինքը չի ուզում անել այն, ինչ կարող է:

Հավատացյալն առաջին հերթին պատասխանատվություն է կրում իր ընտանիքի համար: «Իսկ եթե մեկը յուրայինների և մանավանդ իր ընտանիքի անդամների մասին չի հոգում, նա իր հավատն ուրացած մարդ է, շատ ավելի վատ, քան անհավատը» (Ա Տիմոթեոսի 5.8):

Հավատացյալին Աստվածաշունչն է պատվիրում աշխատել, որպեսզի նա կարողանա բավարարել ուրիշների կարիքները: «Ով գողությամբ էր ապրում, այլևս թող չգողանա, այլ վարժվի արդար վաստակով ոչ միայն հացը շահելու, այլև բարիք գործելու՝ օգնելով նրանց, որոնք կարիքի մեջ են» (Եփեսացիների 4.28): Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչ հակադրություն կա գողացողի, որը ինչ-որ բան վերցնում է դրա դիմաց ոչինչ չանելով, և աշխատողի միջև, որը կարողանում է տալ ուրիշներին: Քրիստոնյան ընդամենը մեկը չէ, ով չի գողանում, այլ նա է, ով աշխատում է, որպեսզի ուրիշներին էլ տա:

Դուք կարող եք գործ գտնել, նույնիսկ եթե ձեզ գործի չեն ընդունում: Գտեք եղանակներ՝ օգնելու և բավարարելու ուրիշների կարիքները: Ավելի լավ է այդպես ապրել, քան ոչինչ չանել ու բողոքել, որ ոչ ոք չի օգնում ձեզ:

Հավատացյալը պետք է աշխատի՝ իր և ընտանիքի կարիքները հոգալու, ինչպես նաև կարիքավոր մարդկանց հոգսակից լինելու համար:

Մեր կարիքները հոգալու Աստծո սովորական ճանապարհը

► Ի՞նչ կասեք այն մարդուն, ով ասում է, որ չի աշխատի, քանի որ կախված է Աստծուց՝ իր կարիքները հոգալու համար:

Պատկերացրե՛ք, որ ամառվա վերջում մտնում եք ձեր հողամաս ու տեսնում առատորեն աճած լոլիկ, եգիպտացորեն, լոբի և այլ բանջարեղեն, ինչը բավական է, որ երկար ժամանակ բավարարի ձեզ:

Արդյոք դա հրաշք կթվա՞: Այսպիսի բան պատահել է հազարավոր մարդկանց հետ անցյալ ամռանը: Նրանք մտել են իրենց հողամասերը և տեսել, որ այդ ամենն աճել է, և մի բան էլ ավելի: Բայց նրանք չեն ապշել և ո՛չ էլ զարմացել, որովհետև մի քանի ամիս առաջ հողը մշակել են, հետո սերմեր ցանել, հետո ամիսներ շարունակ հետևել՝ ջրելով ու մոլախոտերը հանելով: Իրենց բերքն իրենց աշխատանքի արդյունքն է:

Դուք կարող եք արձագանքել. «Ուրեմն դա ամենևին էլ հրաշք չէր»: Բայց Աստված միլիոնավոր բույսեր է ստեղծել, իսկ մարդը երբեք չի ստեղծել մեկն էլ: Սաղմոս 104.14-ն ասում է. «Նա անասունների համար խոտ է բուսցնում ու մարդու ծառայության համար բույս, որպեսզի կերակուր հանի երկրից»: Աստված է դա անում, բայց մարդը պատրաստվում է դրան՝ հողը նախապատրաստելով, սերմեր ցանելով և, անհրաժեշտության դեպքում, ջրելով:

Շատ մարդիկ Աստծո գործը համարում են արտասովոր, բնական օրենքից բացառություն, ինչպես, օրինակ, երբ Հիսուսը բժշկեց կամ երբ արևը կանգ առավ: Ուստի բույսերի աճն այդ առումով հրաշք չէ, քանի որ սովորական երևույթ է:

Բայց հրաշքի մասին երազելով՝ մենք հաճախ անտեսում ենք Աստծո սովորական գործելակերպերը: Միլիոնավոր մարդիկ կան, ովքեր այսօր մտել են իրենց հողամասն ու չեն գտել որևէ բերք, որ կարողանան ուտել: Նրանք չեն ներգրավվել սնունդ ստեղծելու Աստծո գործի մեջ: Սննդի աճի գործընթացն Աստծո սովորական գործելակերպի ընդամենը մեկ օրինակն է: Օրինակ՝ մարդկանց աշխատելը ևս Աստծո տված պարգև է: Առակների 14.23-ը մեզ սովորեցնում է, որ «յուրաքանչյուր աշխատանքի մեջ օգուտ կա…», մինչդեռ Առակների 19.15-ը զգուշացնում է մեզ, որ «անբանը քաղցից է տառապելու»:

Կան մարդիկ, ովքեր ուզում են Աստված ինչ-որ բան ապահովի իրենց համար, բայց մերժում են աշխատելու տարբեր հնարավորությունները, քանի որ իրենց համար այդ աշխատանքներն այն չեն, ինչ կցանկանային անել:

Իսկ եթե դուք պատրաստ եք աշխատելու, բայց չեք գտել մեկին, ով ձեզ գործի ընդունի՞: Կա աշխատանք, որը կարող եք անել ուրիշներին օգնելու համար, և այդ աշխատանքի միջոցով ձեր որոշ կարիքները կարող են բավարարվել: Եթե գործազուրկ եք, դուք ժամանակ ունեք: Ինչո՞ւ չնայել շուրջն ու տեսնել, թե ինչ կարող եք անել մեկ ուրիշին օգնելու համար:

Պատկերացրե՛ք մի մարդու, ով գործազուրկ է և ամեն օր ժամեր է անցկացնում պարապ նստած՝ ոչինչ չանելով: Իսկապե՞ս նրա համար արժեքավոր ոչինչ չկա անելու: Նրա հարևանությամբ ապրում են մարդիկ, ովքեր օգնության կարիք ունեն: Նրա բակում և փողոցում աղբ կա, որը պետք է մաքրվի: Հող կա, որը կարելի է մշակել սննդամթերք աճեցնելու համար: Հնարավոր է, որ նրա համար մատչելի գրքեր լինեն կարդալու և գիտելիքներն ավելացնելու համար: Կա մեկը, ում համար նա կարող է

աղոթել: Նստած ու ոչինչ չանող մարդը մեկ աշխատող ունի իր իշխանության ներքո՝ հենց ինքը, իսկ նա, ցավոք, չի արտադրում, չի զարգանում: Նա ինքն իր համար լավ գործատու չէ, ուստի, հավանաբար ուրիշներին կառավարելու հնարավորություն էլ չի ունենա:

Հաճախ տարբեր վայրերում մարդկանց մեծ մասը որևէ մեկի կողմից աշխատանքի չի ընդունվում: Նրանք ինչ-որ բան արտադրում են փոխանակելու համար կամ ծառայություն են առաջարկում ուրիշներին: Սրանք բոլորն այն ուղիներն են, որոնցով Աստված ապահովում է մեզ:

Աստվածաշնչյան սկզբունքներ՝ աշխատանքում կիրառելու համար

Պատասխանատվության և ազնվության սկզբունքները քրիստոնյաների համար որոշակի էթիկա են ապահովում աշխատանքում կիրառելու համար:

► Ինչպե՞ս պետք է քրիստոնյան կիրառի աստվածաշնչյան սկզբունքները, երբ աշխատում է գործատուի համար:

Նոր Կտակարանը ցուցումներ է տալիս աշխատողներին: Այն ժամանակ, երբ գրվում էին նորկտակարանյան գրքերը, շատ աշխատողներ ստրուկ էին: Աշխատողն այսօր ստրուկից տարբերվում է նրանով, որ կարող է հնարավորության դեպքում անցել մեկ այլ աշխատանքի: Այդ ազատությունը նրան հնարավորություն է տալիս աշխատանքային որոշակի պայմաններ ընդունել կամ մերժել: Այնուամենայնիվ, եթե նա համաձայնել է աշխատել որոշակի շահերից ելնելով՝ Աստվածաշունչը նրանից պահանջում է լավ աշխատող լինել այնքան ժամանակ, քանի դեռ նույն գործատուի մոտ է:

Հնարավոր է լինել այնպիսի իրավիճակում, երբ ազատ չեք՝ ընտրելու այն աշխատանքը, որը ցանկանում եք անել: Գուցե ստիպված եք աշխատել ճնշող իրավիճակներում: Դուք տակավին պետք է քրիստոնյայի վերաբերմունք ունենաք: Որոշ մարդիկ դանդաղ և վատ են աշխատում, երբ իրենց ստիպում են, որովհետև ուզում են ցույց տալ, որ չեն *ցանկանում* աշխատել: Երբ մեկն այդպես է վարվում, նա ցույց է տալիս, որ ինքն ազատ չէ: Եթե ուզում եք ազատ գործել, պետք է զվարթ սրտով աշխատեք ու գործը տեղը տեղին անեք: Երբ այդպես եք աշխատում, ուրեմն ազատորեն եք գործում, քանի որ ոչ ոք չի կարող ստիպել ձեզ դա անել:

Եթե ոչ ոք ձեզ աշխատանքի չի ընդունել, դուք ձեր սեփական ղեկավարն եք: Ինչպիսի՞ աշխատող եք եղել ինքներդ ձեզ համար:

Եփեսացիների 6.5-8 - Պատասխանատվության սկզբունքը

► Ուսանողը խմբի համար կարդում է Եփեսացիս 6.5-8 հատվածը:

► Քննարկե՛ք այս հատվածի իմաստը, այնուհետև նայեք հաջորդիվ ցանկը՝ ավելացնելու ձեր դիտարկումները:

Որոշ կիրառություններ Եփեսացիս 6.5 - 8 հատվածից.

1. Աշխատողը պետք է հնազանդվի իր գործատուին ոչ միայն այն ժամանակ, երբ նկատվում է, այլ՝ միշտ: Նաև դա նշանակում է, որ նա չպետք է անտեսի այն մանրամասնությունները, որոնք նա գիտի, որ դժվար թե ստուգվեն («...երբ հսկող աչք է լինում...»):

2. Աշխատողը պետք է պահպանի իր աշխատանքի որակն ու ջանասիրությունը, ասես Աստծո համար է աշխատում («...որպես Քրիստոսի ծառաներ, որոնք սրտանց Աստծո կամքն են կատարում...»):

3. Աշխատողն Աստծուց կօրհնվի աշխատանքում իր հավատարմության համար («Իր արած բարիքի փոխարենը Տիրոջից կստանա...»):

Տիտոսի 2.9 -10 - Ազնվության սկզբունք

► Ուսանողը խմբի համար կարդում է Տիտոսի 2.9-10 հատվածը:

► Քննարկե՛ք այս հատվածի իմաստը, այնուհետև նայեք հաջորդիվ ցանկը՝ ավելացնելու ձեր դիտարկումները:

Որոշ կիրառություններ Տիտոսի 2.9-10-ից.

1. Աշխատողը պետք է հարգանքով արձագանքի իր գործատուի կարգադրություններին («...ո՛չ առարկեն...»): Ի՞նչ հետևանքներ կարող են լինել, եթե աշխատողն անհարգալից խոսի գործատուի մասին այլ աշխատողների մոտ:

2. Աշխատողը չպետք է գողանա իր գործատուից, նույնիսկ եթե կարծում է, թե ավելի շատ վարձատրության է արժանի («...ո՛չ էլ գողանան...»):

3. Հավատարիմ աշխատանքը վկայություն է Ավետարանի համար. անհավատարմությունը նախատինք է Ավետարանին («...որպեսզի ամեն ինչում պատիվ բերեն մեր փրկչին՝ Աստծո Ավետարանին»):

► Ի՞նչ օրինակներ կհիշեք, երբ մարդիկ իրենց աշխատանքում անազնիվ են եղել: Նկարագրե՛ք, թե ինչով պետք է տարբերվի քրիստոնյան:

Տիտոսի և Եփեսացիների գրքերի սուրբգրային հատվածները խոսում են այն մասին, թե ինչպես պետք է մարդն աշխատի, եթե ինչ-որ մեկն իրեն գործի ընդունի: Նույն սկզբունքները վերաբերում են այն մարդուն, ով աշխատանքի է ընդունվել ինչ-որ բան կառուցելու կամ վերանորոգելու համար: Նա պետք է կատարի նույն որակի աշխատանք, որը կցանկանար՝ մեկ ուրիշն աներ իր համար: Մարդը, ով իրեր է պատրաստում վաճառքի համար, չպետք է թաքցնի թերությունները ու տպավորություն թողնի՝ իբր գնորդները ձեռք են բերում շատ լավ ապրանք:

Աշխատանքի ընդունվելու ցանկալի հատկանիշների բարելավում

Ի՞նչ հատկանիշներ են ուզում գործատուները տեսնել իրենց աշխատողի մեջ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործատուներն ուզում են աշխատանքի ընդունել այնպիսի մարդկանց, ովքեր դրական վերաբերմունք ունեն աշխատանքի նկատմամբ: Նրանք ուզում են տեսնել վստահելի և սովորելու պատրաստ անձանց: Մարդուն գործի ընդունելիս հաշվի է առնվում ավելի շուտ աշխատանքի նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքը, քան կրթությունը կամ տաղանդները: Աստված նույնպես ուշադրություն է դարձնում աշխատանքի նկատմամբ մեր վերաբերմունքին, ինչպես արդեն տեսանք Սուրբ Գրքում:

Զարգացրե՛ք այն հատկանիշները, որոնք ձեզ դարձնում են արժեքավոր աշխատող: Դուք պետք է պատրաստ լինեք ծառայելու. լինեք ազնիվ, վստահելի ու համբերատար: Որոշ գործազուրկներ մտածում են միայն այն մասին, թե ինչ է պետք իրենց: Գործատուն ձեզ աշխատանքի չի ընդունում՝ օգնելու ձեզ. նա վարձում է ձեզ, որպեսզի օգնեք իրեն: Դուք պետք է լինեք այնպիսի մեկը, ով արժեքավոր կլինի գործատուի համար:

Մարդը կարող է ասել. «Ես բարյացկամ, օգտակար ու ազնիվ կլինեի, եթե դրա համար վարձատրվեի», բայց գործատուները անբարյացակամ մարդուն աշխատանքի չեն ընդունում և չեն վճարում բարյացակամ լինելու համար: Անբարեխիղճ մարդուն աշխատանքի չեն ընդունում և չեն վճարում, որ ազնիվ լինի: Աշխատանքի ընդունելու համար նրանք փնտրում են անկեղծ, օգտակար և ազնիվ անձանց:

Եկեղեցում ամեն ինչ այլ է: Մենք չենք սպասում, որ մարդը նվիրաբերի կամ բարյացակամ լինի, նախքան պատրաստ կլինենք նրան օգնելու: Աստված նույնպես հասնում և օրհնում է ձեզ՝ նախքան որևէ լավ բան անելը: Բայց ձեր իսկ օգուտի համար պետք է սկսեք արձագանքել շնորհին: Սովորեք նվիրաբերել, ծառայել ու ժպտալ:

Զարգացրե՛ք ձեր որակները: Սովորե՛ք հմտություններ՝ աշխատելով այն մարդկանց հետ, ովքեր արդեն ունեն դրանք: Գուցե կարող եք ծառայություն առաջարկել ուրիշներին: Գուցե կարող եք ապրանք արտադրել վաճառքի համար: Գուցե կարող եք բերք աճեցնել: Ամենից առավել՝ մարդկանց օգտակար լինելու վերաբերմունք դրսևորեք, նույնիսկ երբ դրանից շահ չունեք: Աստված կօրհնի ձեր ծառայությունը:

Ի՞նչ է նշանակում *ծառայել*: *Ծառայել* ՝նշանակում է օգտագործել ձեր կարողությունները, ժամանակը և էներգիան՝ ի շահ մեկ ուրիշի:

Անկախ նրանից՝ դուք աշխատում եք գործատուի մոտ, թե՝ ոչ, ծառայությունը պահանջում է, որ մի կողմ դնեք ձեր որոշ իրավունքներն ու արտոնությունները: Օրինակ, եթե աշխատում եք ուրիշի մոտ, գուցե չկարողանաք առավոտյան քնել այնքան, որքան կուզենայիք, և չեք կարող աշխատանքային ժամանակը ծախսել՝ անելով այն, ինչ կցանկանայիք: Դուք ձեր կյանքի տարբեր ժամերը նվիրում եք

այն նպատակին, որի համար աշխատանքի եք ընդունվել: Աշխատանքը ազդում է անգամ ձեր հագնվելու և այլ մարդկանց հետ վարվելաձևի վրա:

Ծառայելու պատրաստակամությունը բերում է բազմաթիվ բարիքներ.

1. Դա ձևավորում է հարաբերություններ, որոնք հանգեցնում են ձեր որոշ կարիքների բավարարմանը: Հաճախ դա կատարվում է անկանխատեսելի ձևերով, այնպես որ հարցը միայն այն մարդկանց օգնելը չէ, ովքեր ձեր կարծիքով կարող են ինչ-որ բան անել ձեզ համար:
2. Դա ձեզ արժեքավոր տեղ է տալիս եկեղեցում՝ Քրիստոսի մարմնում:
3. Դա կարող է ձեզ դարձնել այնպիսի մարդ, ում ինչ-որ մեկը ցանկանում է աշխատանքի ընդունել:

Իսկ եթե սկսեք նոր մտածելակերպ ձևավորե՞լ՝ փնտրելով ուրիշներին ծառայելու ուղիներ: Հիսուսն ասում է. «Ավելի երանելի է տալը, քան ստանալը» (Գործք 20.35): Իսկապես հավատո՞ւմ եք դրան: Արդյոք այնպե՞ս եք ապրում, ասես հավատում եք դրան:

Գոյություն ունի հոգևոր մի սկզբունք՝ մտածել ուրիշների կարիքների մասին և ամբողջությամբ չկլանվել սեփական կարիքներով (Փիլիպպեցիների 2.4): Կա նաև գործնական մի սկզբունք. նրանք, ովքեր աշխատանքի են ընդունում մարդկանց, սովորաբար դա չեն անում իրենց վարձած մարդկանց օգնելու համար: Նրանք աշխատանքի են ընդունում որևէ մեկին, քանի որ կարծում են, որ այդ մարդը կարող է բավարարել իրենց պահանջը: Այսպիսով, եթե մարդը կարողանում է միայն մտածել, թե ինչ է ուզում, որ ինչ-որ մեկն անի իր համար, նա, գուցե, արժանի չլինի աշխատանքի ընդունվելու:

Տարբեր լավ բաներ են կատարվում, երբ մարդիկ աշխատելու պատրաստակամ են լինում: Այդ բարիքներն այնպիսի բաներ են, որ հրաշքներ կթվային, եթե ուղղակի պատահեին անսպասելիորեն, բայց Աստված դրանք ձեր կյանք բերելու սովորական միջոց ունի:

Հավանաբար ժամանակի վատնում է հուսալը, ցանկանալը կամ նույնիսկ աղոթելը, որ Աստված հրաշք անի, եթե չեք ուզում աշխատել, որպեսզի օգնություն ստանաք այնպես, ինչպես Աստված է կամենում:

Խմբային քննարկում

► Որևէ մեկը կարող է պատմել, թե ինչպես գործատուի համար լավ աշխատելը հնարավորություն ստեղծեց Ավետարանի համար:

► Որևէ մեկը կարող է պատմել այն մասին, թե ինչպես է իր հարևանության մեջ ապրող մարդուն օգնելը դարձել քրիստոնեական հոգատարության լավ դրսևորում:

► Խումբը պետք է միասին կիսվի գաղափարներով այն աշխատանքային հնարավորությունների մասին, որոնք հասանելի են գործազուրկին:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Շնորհակալ եմ իմ՝ Քեզ պես ստեղծագործաբար աշխատելու շնորհի համար։ Օգնի՛ր ինձ տեսնել ուրիշներին օգնելու հնարավորություններ։ Ապահով՛ր իմ կարիքները, երբ աշխատում եմ, որպեսզի պատասխանատվություն կրեմ իմ և այլոց համար։

Օրհնի՛ր ինձ միջոցներով, որպեսզի կարողանամ հոգալ ընտանիքիս համար, նվիրաբերել եկեղեցուն և օգնել կարիքավորներին։

Օգնի՛ր ինձ լինել ազնիվ ու վստահելի իմ բոլոր պարտավորություններում։ Պատրաստի՛ր ինձ ավելի մեծ հնարավորությունների և պարտականությունների համար, եթե դա Քո կամքն է։ Շնորհակալ եմ, որ միշտ հավատարիմ ես ինձ։

Ամեն։

Դաս 3. Առաջադրանքներ

(1) Ուսումնասիրե՛լ Առակների գրքի հետևյալ հատվածները.

- Առակների 6.6-11
- Առակների 10.4-5
- Առակների 12.11, 24, 27
- Առակների 13.4, 11
- Առակների 14.23
- Առակների 18.9
- Առակների 20.13
- Առակների 22.29
- Առակների 24.30-34
- Առակների 26.13-16

Այս հատվածներից աշխատանքի և ծուլության մասին կարևոր մտքեր ու կիրառություններ գրե՛ք:

(2) Աշխատե՛ք մեկ այլ դասընկերոջ հետ ստորև թվարկված թեմաներից մեկի վերաբերյալ հակիրճ ելույթ կամ քարոզ պատրաստելու համար: (Դասավանդողը թեմա կտա յուրաքանչյուր թիմին:) Ելույթով հանդես եկեք հաջորդ դասաժամի սկզբին:

- Աշխատանքը և Աստծո պատկերն ու նմանությունը մարդու մեջ,
- Աշխատանքը և պատասխանատվությունն իմ և այլոց համար,
- Ինչպես պետք է աշխատի քրիստոնյան (այս ելույթը պետք է հիմնված լինի Եփեսացիների 6.5-8 և Տիտոսի 2.9-10 հատվածների վրա),
- Այն ուղին, որով Աստված սովորաբար ապահովում է մարդկանց կարիքները,
- Աշխատանք և հարաբերություններ այլ մարդկանց հետ:

Դաս 4
Հարաբերություններ

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը կարող է.
(1) Կիրառել սիրո, խաղաղության և հարգանքի սկզբունքներն այլոց հետ իր հարաբերություններում:
(2) Ընդունել սուրբգրային ինը կանոնները, որոնք սովորեցնում են քրիստոնյային խոսքով օրհնել ուրիշներին և փառաբանել Աստծուն:

Հարաբերությունից ապշած Ռոբինզոն Կրուզոն

Ռոբինզոն Կրուզոյի մասին պատմության մեջ կարդում ենք, որ մի մարդ փրկվում է նավաբեկությունից՝ լողալով դեպի մի կղզի: Ամիսներ շարունակ նա մենակ էր այնտեղ: Նա տանիք ստեղծեց, հագուստ պատրաստեց և ուտելիք հայթայթել սովորեց: Հետո, մի օր ծովափին զբոսնելիս նա ցնցվեց՝ ավազի վրա տեսնելով մարդու ոտնահետք: Դա նշանակում էր, որ այնտեղ ուրիշ մարդ էլ կար: Նա չգիտեր՝ այդ մարդը բարեկամ կլինի, թե՝ թշնամի: Նա ոչինչ չգիտեր այդ անձի բնավորության, լեզվի, ազգության կամ այնտեղ գտնվելու պատճառի մասին: Նա չգիտեր, թե այդ մարդը ինչպես կփոխեր իր կյանքը կղզու վրա: Քանի որ հարաբերությունները մեծապես ազդում են անհատի կյանքի վրա, Ռոբինզոնը և՛ հույս, և՛ վախ զգաց՝ տեսնելով ոտնահետքը:

Հարաբերությունների կարևորությունը հոգևոր զարգացման համար

Առաջին դարի եկեղեցին ստիպված էր գործել մի շարք բախումների առկայությամբ. հրեաներ և հեթանոսներ, սոցիալական դասեր, մշակույթներ, սեռեր: Պողոս առաքյալն ասում էր նրանց. «Ընդունեցե՛ք միմյանց…» (Հռոմեացիների 15.7):

► Պատկերացրե՛ք միայնակ կղզում ապրող մի մարդու: Նա կարո՞ղ է համբերատար լինել որևէ մեկի հանդեպ: Նա կարո՞ղ է ներել որևէ մեկին:

Դուք չէիք կարող զարգացնել և ցույց տալ համբերության քրիստոնեական հատկանիշը՝ առանց այլ մարդկանց հետ հարաբերությունների: Դուք չէիք կարող ներել ուրիշներին կամ ներվել ուրիշների կողմից առանց հարաբերությունների:

► Որո՞նք են քրիստոնեական այն հատկանիշներն ու գործելաոճերը, որոնց զարգմացման համար պահանջվում են այլ մարդիկ:

Այս ամենը կատարվում է այլ մարդկանց հետ հարաբերություններում: Բնավորության գծերը կարելի է զարգացնել և դրսևորել միայն հարաբերություններում: Դա նշանակում է, որ մարդկանց հետ մեր հարաբերությունները մեծ ազդեցություն են թողնում մեր հոգևոր զարգացման վրա:

Աստվածաշունչը ցուցումներ է տալիս տարբեր տեսակի հարաբերությունների համար: Կան հատուկ ցուցումներ ամուսինների ու կանանց, ծնողների և երեխաների, գործատուների ու աշխատողների, հովիվների և եկեղեցիների, տարեցների ու երիտասարդների միջև հարաբերությունների համար:

Աստվածաշնչում կան առնվազն երեք սկզբունքներ, որոնք կիրառելի են մարդկային ցանկացած հարաբերությունների դեպքում. խաղաղության, սիրո և հարգանքի սկզբունքները:

Խաղաղության սկզբունքը

«Ձանացե՛ք բոլորի հետ ապրել խաղաղ և վարել սուրբ կյանք, առանց որի ոչ ոք չի տեսնի Տիրոջը» (Եբրայեցիների 12.14):

Այս խոսքն ազդեցիկ ձևակերպում է հարաբերությունների կարևորության մասին: Սրբությունը սերտորեն կապված է բոլորի հետ խաղաղության հասնելու ջանքերի հետ:

► Ի՞նչ քայլեր կան, որ պետք է ձեռնարկել մարդկանց հետ խաղաղության հասնելու համար:

Խաղաղության ձգտելիս առնվազն պետք է յուրաքանչյուրի հանդեպ ցուցաբերել այն վերաբերմունքը, որը պարտք եք: Նրանց, ում պարտք եք երախտագիտություն, հարգանք կամ հնազանդություն, պետք է դա դրսևորեք: Եթե դրանք չեք անում, մեղավոր եք լինում բախումներ առաջացնելու մեջ: Եթե չկատարեք ձեր պարտականությունները, չպահեք ձեր խոստումները կամ չդրսևորեք այն, ինչ պարտավոր եք ուրիշների հանդեպ, ուրեմն խաղաղության չեք ձգտում: Երբ հասկանում եք, որ չեք կարողացել տալ այն, ինչ պետք էր, հարկավոր է ներում փնտրել և կատարել պարտավորությունները, որքան հնարավոր է:

Բայց խաղաղության հետամուտ լինելու համար *ավելին* է պահանջվում, քան պարտք վճարելը: Այն ներառում է այն սեր ու բարություն տալը, որը *պարտական չեք*:

► Ուսանողը խմբի համար կարդում է Տիտոսի 3.2-3 հատվածը:

Մենք պետք է համբերատար ու ներողամիտ լինենք՝ հասկանալով, որ դարձի չեկած մարդիկ հակված են սխալ վերաբերմունքի և սխալ մղումների:

Եթե խաղաղություն եք ուզում, հաշտություն կփնտրեք բախման ժամանակ: Դուք պատրաստ կլինեք ներելու, չեք շտապի ենթադրել, որ խաղաղությունը հնարավոր չէ վերականգնել, հեշտությամբ չեք ընդունի մշտական բաժանումը:

Հիսուսն ասաց, որ պետք է գնալ այն մարդու մոտ, ով վատություն է արել ձեզ և բացատրել նրան, թե ինչ է նա արել[7]: Եթե հարցը չափազանց փոքր եք տեսնում առճակատման արժանի համարելու համար, ապա չպետք է դրա մասին պատմեք ուրիշներին կամ սխալն անողի դեմ ներքուստ վրդովմունք կրեք:

[7] Մատթեոսի 18.15

Երբեմն մարդիկ պայքարում են այլ քրիստոնյաներին չներելու դեմ, ովքեր սխալ են գործել իրենց հանդեպ: Մենք կարող ենք վատ վերաբերմունք ակնկալել դարձի չեկած մարդկանցից, բայց դժվար է հասկանալը, երբ մյուս քրիստոնյաներն են սխալ գործում մեր դեմ:

Հիսուսն ասաց, որ մենք պետք է պատրաստ լինենք ներելու 70 անգամ 7 անգամ[8]: Ընդհանուր պատճառը, որ մարդիկ լքում են եկեղեցին ու հրաժարվում հոգևոր կյանքից, քրիստոնյաների կողմից վատ վերաբերմունքի հանդեպ զայրույթն է: Հաճախ զայրույթը նախորդում է այլ տեսակի հոգևոր սխալներին:

Երբ մարդը հրաժարվում է ներել, նա վատնում է իր կյանքը՝ հակառակվելով Աստծո իշխանության դեմ, քանի որ Աստված մեզնից պահանջում է ներել: Չներելը դառնում է պատճառ, ըստ որի Սատանան կարողանում է ազդել կյանքի այլ ոլորտների վրա: Եթե մարդը հրաժարվում է ներել, շուտով չի կարողանա դիմակայել գայթակղություններին, որոնք կարծես բոլորովին կապ չունեն չներելու խնդրի հետ:

Յուրաքանչյուր անձնական վիրավորանքի հիմքը մեր իրավունքների արժեքն է: Քանի որ մենք հավատում ենք, որ արժանի ենք որոշակի վերաբերմունքի կամ հարգանքի, վիրավորվում ենք, երբ չենք ստանում դա: Մենք հավատում ենք, որ ավելի լավին ենք արժանի, քան ստանում ենք:

Ուրիշներին ներելու բանալին փրկագնումը ճիշտ հասկանալն է: Փրկագնել՝ նշանակում է հետ գնել: Քանի որ Աստված փրկագնել է մեզ, մենք Նրան ենք պատկանում, և մեր իրավունքները Նրանն են: Մենք պետք է մեր իրավունքները գիտակցաբար զիջենք Աստծուն: Դուք կարող եք աղոթել. «Տե՛ր, ես գիտեմ, որ իմ բոլոր իրավունքները պատկանում են Քեզ: Ուզում եմ, որ Քո ձեռքն առնես դրանք և տաս ինձ միայն այն, ինչ տեսնում ես, որ լավ է ինձ համար»: Այնուհետև, երբ մարդիկ լավ վերաբերվեն ձեզ, կարող եք շնորհակալություն հայտնել Աստծուն, որ Նա թույլ տվեց այդ արտոնությունը ձեզ համար: Երբ որևէ անձ վատ է վերաբերվում ձեզ, կարող եք հիշել, որ Աստծո ձեռքում են ձեր իրավունքները, և Նա գիտի, որ կարող եք ավելի լավ աճել Իր մեջ՝ առանց այդ իրավունքը տվյալ պահին ունենալու:

Ներելով ուրիշներին՝ դուք ենթարկվում եք Աստծուն և թույլ տալիս, որ Նա աճեցնի ձեզ այնպես, ինչպես կամենում է: Ձեր իրավունքներն Աստծուն հանձնելու այս սկզբունքը վերաբերում է յուրաքանչյուր մարդկային հարաբերության: (Ներման վերաբերյալ այլ հղումներ են Կողոսացիների 3.13, Մատթեոսի 6.15 և Հռոմեացիների 12.19 խոսքերը:)

Սիրո սկզբունքը

Այն մարդուն, ում ոչինչ պարտական չենք, տակավին պետք է սիրով վերաբերվենք: Քանի որ շնորհ ենք ստացել, պարտք ենք Աստծուն: Մենք չենք կարող վերադարձնել այդ պարտքը Նրան: Նա կարիքներ չունի, բայց Նա մեզ ասել է, որ ուրիշներին տանք այն չարժանացած սերը, որն ստացել ենք ինքներս:

[8] Մատթեոսի 18.21-22

«Ոչ ոքի ոչ մի բանով պարտական մի՛ մնացեք, բացի միմյանց սիրելու պարտավորությունից» (Հռոմեացիների 13:8)։

Սերն այն վկայությունն է, որ մարդն իսկական քրիստոնյա է։

«Այն մարդը, որ ասում է՝ «Ես սիրում եմ Աստծուն», բայց ատում է իր եղբորը, ստախոս է։ Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսնում»։ (Ա Հովհաննեսի 4.20)։

Քրիստոնյա հավատացյալների մեջ առանձնահատուկ սեր կա, և Հիսուսն անձնական է ընդունում մյուս հավատացյալների նկատմամբ ձեր գործողություններն ու վերաբերմունքը։ Նա դատաստանի ժամանակ կասի. «Որովհետև իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ, ինձ արա՛ծ եղաք» (Մատթեոսի 25.40)։

Սակայն քրիստոնեական սերը չպետք է միայն այլ քրիստոնյաների հանդեպ արտահայտվի։ Հիսուսն ասաց Մատթեոսի 5.44-45ա հատվածում.

> «Իսկ ես ձեզ ասում եմ. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարություն արե՛ք ձեզ ատողներին և աղոթեցե՛ք նրանց համար, ովքեր չարչարում ու հալածում են ձեզ։ Այդպիսիով դուք ձեր երկնավոր Հոր որդիները պիտի դառնաք, որովհետև Նա Իր արեգակը ծագեցնում է թե՛ չարերի և թե՛ մեղավորների վրա, և անձրև է տեղացնում թե՛ արդարների և թե՛ մեղավորների վրա»։

Ոմանք դժվարանում են բարյացակամ լինել իրենց վիրավորողների հանդեպ, բայց դա կոպիտ լինելու արդարացում երբեք չի կարող լինել։ Մենք մարդկանց հետ չպետք է վարվենք այնպես, ինչպես նրանք արժանի են։ Մենք պետք է սիրով և բարությամբ վարվենք իրենց հետ, անկախ նրանից՝ արժանի են դրան, թե՝ ոչ։ Մենք պետք է հիշենք, որ երբ մեղավոր էինք, արժանի չէինք Աստծո սիրուն, բայց միևնույնն է, Նա սիրեց մեզ[9]։

Հարգանքի սկզբունքը

► Եթե ես ձեզ անվճար առաջարկեի հարյուր դոլարանոց կեղտոտ ու պատռված թղթադրամ, կուզեի՞ք դա վերցնել։ Արդյոք կհրաժարվեի՞ք դրանից, քանի որ կեղտոտ է և պատռված։

Դուք կվերցնեիք այն, քանի որ դա ունի արժեք, որը կախված չէ տվյալ պահի վիճակից։

Յուրաքանչյուր անձ արժանի է հարգանքի, քանի որ մարդ արարածը ստեղծված է Աստծո պատկերով[10]։ Աստծո պատկերն ունենալն ամեն մարդու տալիս է արժեք՝ ի ծնե։

---

[9] Տիտոսի 3.2-3

[10] Ծննդոց 1.17

Նույնիսկ եթե մարդը չունի բարձր ինտելեկտ կամ հմտություններ, կրթություն և որևէ այլ արժանիք, ինչը նրան հաջողակ կամ կարևոր է դարձնում հասարակության մեջ տարածված չափանիշներով, նա արժեք ունի, քանի որ Աստծո պատկերով ստեղծված անձնավորություն է:

Մարդու անքակտելի արժեքը մնում է նույնիսկ այն դեպքում, երբ նա ինքն իրեն պակաս արժեքավոր է դարձրել հիմար ընտրությունների պատճառով: Հնարավոր է, որ նա թողել է ուսումը, քայքայել է առողջությունը, ձևավորել է վատ սովորություններ, բայց նա արժեքավոր է որպես անմահ հոգի ունեցող մարդ՝ Աստծո պատկերով:

Մարդկանց մեջ Աստծո պատկերի բնածին արժեքի պատճառով մարդկանց միջև յուրաքանչյուր շփման ժամանակ պետք է հարգանք դրսևորվի, առնվազն՝ քաղաքավարություն:

Մանիպուլյացիան և խաբեությունը սխալ են, քանի որ յուրաքանչյուր մարդ հավիտենական հետևանքներով ընտրություններ է անում և պետք է իմանա կայացրած որոշման իրական հետևանքների մասին: Մարդուն սխալ նպատակով ինչ-որ ճիշտ բան անելու դրդելը հաջողություն չէ, քանի որ նա դեռ ճիշտ ընտրություն չի կատարել:

Հնարավորինս հարգանքով պետք է վերաբերվենք մարդուն նույնիսկ այն դեպքում, երբ նրա վարքագիծը սխալ է: Նույնիսկ սխալների ուղղումը և սխալ արարքների համար պատիժը (նրանց կողմից, ովքեր ունեն դա անելու համապատասխան լիազորություններ) կատարվում են այն գիտակցությամբ, որ գործ ունենք անմահ էակների հետ, որոնք Աստծո էությունից ինչ-որ բան ունեն իրենց մեջ:

Խմբային քննարկում

Այս սկզբունքների կիրառման օրինակները պետք է որ շատ լինեն:

► Կիսվե՛ք և խոսե՛ք օրինակների մասին, երբ խաղաղություն պահպանելու ջանք եք գործադրել:

► Միմյանց հետ կիսվե՛ք ու միմյանց քաջալերե՛ք, որ ներեք նրանց, ում դեմ զայրույթ եք կրում:

► Խոսեք այն իրավիճակների մասին, երբ կարող էիք ինչ-որ մեկի հանդեպ ավելի շատ սեր ցուցաբերել, որին տվյալ անձը, կարծես, արժանի չէր:

►Քննարկե՛ք, թե ինչ է նշանակում հարգանքով վերաբերվել մարդուն, նույնիսկ երբ նրա վարքագիծը սխալ է:

Հաղորդակցության աստվածաշնչյան սկզբունքներ

► Կա մի հին ասացվածք, որն ասում է՝ «Գրիչն ավելի զորավոր է, քան սուրը»: Ի՞նչ է դա նշանակում:

Գաղափարի, համոզելու, հաղորդակցության մեջ ուժ կա: Կարելի է ավելիին հասնել՝ մարդկանց ոգևորելով, քան՝ ստիպելով: Գաղափարը՝ հասկացությունը, կարող է տարածվել և ազդել շատերի վրա:

Աստվածաշունչը խոսում է խոսքի ուժի մասին՝ բարիք անելու կամ չարիք պատճառելու առումով (Հակոբոսի 3)։ Փրկության ծրագիրն ավարտվում է Ավետարանի զորությամբ, որը վստահված է Աստծո մարդկանց։

Ինչպե՞ս կարող ենք օգտագործել մեր խոսքերը բարիք գործելու և չարիքից խուսափելու համար։ Աստվածաշունչը տալիս է որոշ սկզբունքներ։

(1) Չափից շատ մի՛ խոսեք։

«Հիմարը բազմացնում է խոսքերը...» (Ժողովող 10.14)։

«Շատախոսության մեջ մեղքը պակաս չի լինում, բայց իր խոսքերը զուսպ պահողը իմաստուն է» (Առակների 10.19)։

«Անգամ հիմարը, եթե լուռ մնա, իմաստուն կհամարվի, ու իր շուրթերը փակողը խելամիտի տեղ է դրվում» (Առակների 17.28)։

Ուստի, չափից շատ մի՛ խոսեք։ Շատախոսը պատշաճ կերպով չի գնահատում ո՛չ իր խոսքերը, ո՛չ ուրիշների։ Նա ասում է բաներ, որոնք իրականում նկատի չունի, և ենթադրում է, որ այլ մարդիկ նույնն են անում։ Առանց տեղեկացված լինելու՝ կարծիքներ է հայտնում։ Պետք չէ կարծիք հայտնել մի բանի մասին, որից տեղյակ չես. ամեն կարծիք չէ, որ արժեքավոր է։

(2) Մի՛ խոսեք առանց մտածելու։

Թույլ մի՛ տվեք, որ ձեր զգացմունքները ստիպեն ձեզ անելու հայտարարություններ, որոնց համար զղջալու եք։

«Ուստի, իմ սիրելի եղբայրնե՛ր, ամեն մեկը թող լսելու մեջ արագաշարժ, իսկ խոսելու կամ բարկանալու մեջ ծանրաշարժ լինի» (Հակոբոսի 1.19)։

«Հիմարն իր միտքն ամբողջությամբ հայտնում է, բայց իմաստունը դա մի ուրիշ անգամվա է թողնում» (Առակների 29.11)։

«Նա, ով համբերատար է, օժտված է մեծ խոհեմությամբ, իսկ դյուրաբորբոքը հիմարություն է անում» (Առակների 14.29)։

(3) Իրավիճակի մասին մի՛ դատեք առաջին հայացքից։

«Ով պատասխան է տալիս նախքան մի բան լսելը, դա հիմարություն ու ամոթ է իր համար» (Առակների 18.13)։

«Նա, ով իր դատը նախապես է սկսում, իրավացի է թվում, բայց դրացին գալիս ու քննում է նրան» (Առակների 18.17)։

Բախումների մեծ մասը հիմնված է թյուրըմբռնումների վրա: Սովորաբար ժամանակն ու զգուշությունը կարող են հարթել դրանք: Եթե ազնիվ համբավ ունեցող անձն ասում է մի բան, որը ձեզ սխալ է թվում, մի՛ շտապեք դատել նրան:

«Անցորդը, որ խառնվում է իրեն չվերաբերող կռվին, նման է նրան, ով շանը ականջներից է բռնում» (Առակների 26.17):

(4) Զգույշ եղե՛ք կատակներ անելիս:

Խոսքերի հնարավոր վատ ազդեցության պատճառով անզուսպ կատակը նման է խելագարի ձեռքում հայտնված զենքի:

«Ինչպես որ խելագարը կրակի կայծեր, նետեր ու մահ է ցանում, այնպես էլ այն մարդն է, ով իր բարեկամի հետ նենգորեն է վերաբերում ու հետո ասում՝ «Կատակեցի»» (Առակների 26.18-19):

Պատճառ մի՛ դարձեք, որ մարդիկ լուրջ սխալներ թույլ տան՝ հավատալով ձեր կատակին: Մի՛ ասեք նրանց, որ լուրջ եք, եթե այդպես չէ, քանի որ նրանք ձեզ այլևս չեն հավատա: Մի՛ ծաղրեք արատները, որոնց հարցում մարդիկ անզոր են: Մի՛ կատակեք ինչ-որ մեկի անհաջողությունների համար: Մի՛ պատմեք կատակներ, որոնք մեղքը չնչին են դարձնում:

► Որո՞նք են կատակների այլ սխալ կիրառությունները:

(5) Մի՛ ասեք դա սխալ անձնավորությանը:

«Բամբասկոտը հայտնում է գաղտնիքը, իսկ հավատարիմ հոգի ունեցողը, ծածկում է բանը» (Առակների 11.13):

«Առանց փայտի կրակը կհանգչի, այդպես էլ, եթե բամբասկոտ մարդ չլինի, կռիվը կդադարի» (Առակների 26.20):

Երբեմն հնարավոր է, որ ինչ-որ բան ասելու կարիք լինի, բայց դուք չլինեք դա ասելու ճիշտ անձնավորությունը: Դուք չեք կարող դա ասել իշխանություն ունեցողի փոխարեն, որն ինքը պիտի դա ասի:

Մարդկանց սխալների մասին տեղեկություն մի՛ տարածեք:

Մարդիկ անձնական տեղեկություններ չեն վստահի ձեզ, եթե մտածեն, որ կասեք ուրիշներին:

«Դատդ ի՛նքդ վարիր դրացուդ հետ ու գաղտնիքն ուրիշին մի՛ հայտնիր» (Առակների 25.9):

Մատթեոս 18.15-17 հատվածում նշված ընթացակարգին հետևելու փոխարեն երկչոտն իր խնդրի մասին խոսում է սխալ մարդկանց հետ:

(6) Զգո՛ւյշ եղեք քննադատության հարցում։

Քննադատելու ճիշտ ժամանակ ու ձև կա։

«Բացահայտ հանդիմանությունը ծածուկ սիրուց ավելի լավ է։ Բարեկամի հասցրած վերքերը հավատարմություն են...» (Առակների 27.5-6ա)։

Համոզվե՛ք, որ ձեր քննադատությունը կառուցելու, այլ ոչ թե քանդելու նպատակ ունի։ Դուք պետք է ցույց տաք, որ մտահոգվում եք նրանց համար և ուզում եք օգնել։ Սովորաբար պետք է առողջ հարաբերություններ ունենալ այն մարդու հետ, որպեսզի ձեր քննադատությունն ընդունելի լինի։

(7) Մի՛ ստեք։

«Սուտ մի՛ խոսեք միմյանց հետ։ Մոռացե՛ք ձեր հին կյանքն ու նախկին գործերը» (Կողոսացիների 3.9)։

Խաբեությունը հատուկ է մեղավորներին, ոչ թե քրիստոնյաներին։

«Սուտ շրթունքը ՏԻՐՈՋ համար զզվելի է, բայց ճշմարտությամբ վարվողներին հավանում է» (Առակների 12.22)։

(8) Մաքո՛ւր պահեք ձեր խոսքը։

«Վայել չէ, որ զբաղվեք լկտի և անվայելուչ խոսակցություններով կամ խեղկատակությամբ, այլ ձեր խոսակցությունը պետք է միշտ գոհաբանություն լինի» (Եփեսացիների 5.4)։

Մի՛ պատմեք անցյալի կամ ներկայի խայտառակ դեպքերի մասին, բացառությամբ այն առիթների, երբ տեղին է, օրինակ՝ դատավարության ժամանակ։ Մի՛ արեք այնպիսի կատակներ, որոնք պետք է ծածուկ լինեին։ Աշխարհի մարդիկ սովորաբար իրենց բացականչություններում օգտագործում են սեռական բնույթի կամ մարմնի ծածուկ մասերի վերաբերյալ արտահայտություններ, սակայն դա հարիր չէ քրիստոնյային։ Անհարգալից է Աստծուն կամ Հիսուսին վերաբերող հայհոյանքներ կամ արտահայտություններ գործածելը՝ որպես բացականչություն սթրեսի ժամանակ, եթե, իհարկե, անկեղծորեն Աստծո օգնությանը չեք դիմում։

(9) Մի՛ բաժանեք մարդկանց ձեր խոսքերով։

«Ծուռ մարդը կռիվ է սերմանում և շշնջացողը մտերիմ բարեկամներին է անջատում» (Առակների 16.28)։

«Այս վեց բաները ՏԵՐՆ ատում է, հիրավի Նրա հոգուն յոթ բան գարշելի են՝.... [յոթերորդը] եղբայրների միջև տարաձայնություն սերմանող մարդ» (Առակների 6.16, 19)։

Մի՛ փորձեք լավը ներկայանալ՝ ուրիշների հաշվին։ Բախումներ մի՛ առաջացրեք ուրիշների միջև։ Բամբասանքով մի՛ վնասեք ինչ-որ մեկի ծառայության արդյունավետությանը։

Խոսելուց առաջ ինքներդ ձեզ տվեք ոչ միայն՝ «Ճի՞շտ է դա», այլև՝ «Ինչու՞ եմ ասում դա» հարցերը։

Եզրակացություն

Քրիստոնյան պետք է պատրաստ լինի ներողություն խնդրելու, եթե գիտակցում է, որ իր խոսքերով վնաս է հասցրել: Նա պետք է պատրաստ լինի ուղղելու այն, ինչ ասել է, եթե գիտակցում է, որ ասածը ճիշտ չէր:

Ուրիշների հնչեցրած վնասակար և վիրավորական խոսքերը չեն արդարացնում ձեր կողմից ասված սխալ խոսքերը:

Խոսվածքի մեջ կան սխալներ, որոնք կարող եք աստիճանաբար բարեփոխվել: Օրինակ՝ կարող եք սովորել մտածել՝ խոսելուց առաջ: Կան այլ սխալներ, որոնք ցույց են տալիս, որ խնդիրը սրտի մեջ է, օրինակ՝ ձեր խոսքերով ինչ-որ մեկին վիրավորելու ցանկությունը: Եթե մեղավոր եք նման խոսքերի համար, ապա խնդրեք Աստծուն՝ ների ձեզ ու մաքրի ձեր սիրտն այդ հակումից:

Ձեր խոսքը շատ բան է հայտնում ձեր սրտի մասին: Մի՛ վնասեք ձեր քրիստոնեական վկայությունը՝ խոսելով քրիստոնեական արժեքներին անհարիր ձևերով:

Ձեր խոսքը կարող է օրհնել ձեզ շրջապատողներին: Ծառայության մեծ մասը կազմված է հաղորդակցությունից: Ձեր խոսքերի ազդեցությունը կարող է մեծապես աճել, եթե հետևեք աստվածաշնչյան սկզբունքներին:

Խմբային քննարկում

► Մարդկանցից շատերը տեսնում են ուրիշների կողմից ասված խոսքերի թերությունները, բայց ոչ՝ իրենցը: Առաջնորդը, թերևս, կարող է կիսվել մի օրինակով, երբ չի կարողացել հետևել այս սկզբունքներից մեկին կամ ընդունել, թե որում է թերանում ամենից շատ:

► Թող անդամներն ընտրեն մի սկզբունք, որում թերանում են և որոշեն այն լավացնելու քայլեր ձեռնարկել՝ Աստծո օգնությամբ:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Օգնի՛ր ինձ ապրել խաղաղության, սիրո ու հարգանքի սուրբգրային սկզբունքներով իմ բոլոր հարաբերություններում:

Ես ուզում եմ ներողամիտ լինել նրանց հանդեպ, ովքեր ինձ վատություն են անում: Օգնի՛ր ինձ հաշտություն գտնել նրանց հետ, ովքեր անհաշտ են ինձ հետ:

Օգնի՛ր ինձ հարգել յուրաքանչյուր անձի՝ որպես քո պատկերով ստեղծված արարածի: Օգնի՛ր ինձ հիշել իմ խոսքերի թողած ազդեցության մասին ու պատասխանատվություն կրել դրանց համար: Ես ուզում եմ, որ իմ բառերը բարիք գործեն, ոչ թե վնասեն:

Ես ուզում եմ, որ Քո մասին իմ վկայությունը հարգանքի արժանանա:

Շնորհակալություն Քո ճշմարտությունը փոխանցելու արտոնության համար:

Ամեն:

Դաս 4. Առաջադրանքներ

(1) Կարդացե՛ք Հակոբոսի 3-րդ գլուխը: Ուշադրությո՛ւն դարձրեք այստեղ նկարագրված հատվածի մեծ ներուժին, ինչպես նաև՝ 13-18-րդ խոսքերին, թե ինչպես է խոսքը բնականորեն բխում մարդու հոգևոր վիճակից: Կարդացե՛ք Եփեսացիների 4.25-32 խոսքերը: Գրեք մեկ պարբերությամբ աղոթք՝ արձագանքելով այս գրվածքներին:

(2) Ուսումնասիրե՛ք Եփեսացիների 5.22 - 6.9 հատվածը: Թվարկե՛ք և բացատրե՛ք տարբեր մարդկանց հետ հարաբերությունների համար նկարագրված վարքային դրսևորումները: Բացատրե՛ք, թե ինչպես են այդ ցուցումները առնչվում այս դասում քննարկված սիրո, խաղաղության և հարգանքի սկզբունքներին:

(3) Ընտրե՛ք հետևյալ հարցերից երեքը: Գրե՛ք մեկ պարբերություն՝ պատասխանելով դրանցից յուրաքանչյուրին.

- Աստված կանչել է մեզ խաղաղության ձգտելու մեր հարաբերություններում. ինչպե՞ս կարող ենք գործնականորեն սա կատարել:
- Որպես Աստծո փրկված զավակներ՝ ինչո՞ւ է ուրիշներին ներելը կարևոր:
- Ի՞նչ է նշանակում այն, որ մարդն իր իրավունքները տալիս է Աստծուն:
- Ո՞րը պետք է լինի ոչ այդքան «սիրելի» մարդկանց սիրելու մեր դրդապատճառը:
- Բոլոր մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով. ինչպե՞ս պետք է այս փաստն ազդի ուրիշների հետ մեր հարաբերություններում:

Դաս 5
Աստծո առաջնորդությունը

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը կարող է.
(1) Հասկանալ, թե ինչպես է Աստված օգնում մեզ որոշումներ կայացնելիս։
(2) Իմանալ, թե ինչպես զանազանել Աստծո կամքը և ճիշտ որոշումներ կայացնել։
(3) Խուսափել սխալներից՝ ճիշտ ուղղություն փնտրելիս։

Զախողված հաղորդակցություն. ցունամի Պալուում

2018 թվականի սեպտեմբերին կղզու տակ տեղի ունեցած երկրաշարժի պատճառով առաջացած ցունամին (հսկա ալիքը) շարժվեց դեպի Ինդոնեզիայի Պալու քաղաք։ Բարձր շենքի տանիքին կանգնած մի մարդ տեսավ, որ ալիքը գալիս է։ Նա բղավելով նախազգուշացումներ էր հնչեցնում ներքևի փողոցներում գտնվող մարդկանց, սակայն նրանցից շատերն անտեսեցին նրան։ Ավելի քան 4000 մարդ մահացավ, 10000-ը մարմնական վնասվածքներ ստացան։

Դեպքից տասը տարի առաջ (2008թ.) կառավարությունը օվկիանոսում տեղադրել էր 22 լողացող բույեր՝ էլեկտրոնային սենսորներով, որոնք նախատեսված էին ցունամիի դեպքում նախազգուշացում ուղարկելու համար։ Սակայն հաջորդ մի քանի տարիների ընթացքում բույերը չպահպանվեցին, և դրանք բոլորը շարքից դուրս եկան։ Դրանցից ոչ մեկը ցունամիի մասին զգուշացում չուղարկեց 2018 թվականին։

Հաղորդակցություն մեր հրամանատարի հետ

► Ի՞նչ սարք է տեղադրված յուրաքանչյուր ռազմական մեքենայի մեջ։

Բազում փոխադրամիջոցներ՝ տանկերը, ինքնաթիռները և շատ ռազմական մեքենաներ ունեն ռադիոսարքավորում։ Դա ռադիո չէ, որ զինվորները լսեն իրենց սիրելի երաժշտական կայանը, այլ ռադիոսարքավորում է հաղորդակցության համար։

Հաղորդակցությունը կամ կապը կարևոր է մարտում հաղթելու համար։ Մարտում գտնվող զինվորները չեն կարող տեսնել գործողությունների ամբողջ դաշտը։ Նրանք գուցե չիմանան, թե որտեղ են իրենց ընկերները, իսկ որտեղ՝ թշնամիները։ Եթե չլինի հրամանատարի հետ հաղորդակցությունը, նրանք չեն զանազանում, թե ո՞ր ուղղությամբ պետք է կրակել և ո՞ր ուղղությամբ՝ շարժվել։

Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ զինվորներն ընկել են «բարեկամական կրակոցից», իրենց մարտակիցների սխալ ուղղորդված գնդակներից։ Եղել են դեպքեր, երբ վատ հաղորդակցության պատճառով հրթիռներն ու ռումբերը թշնամիների փոխարեն հարվածել են բարեկամներին։

Ժամանակակից պատերազմում ընդունված ռազմավարություն կա. փորձել տապալել թշնամու հաղորդակցության կենտրոնը: Այն կողմը, որին դա կհաջողվի, հավանաբար կհաղթի ճակատամարտում:

Մենք հոգևոր պատերազմի մեջ ենք: Սատանան գայթակղում և փորձում է խաբել մեզ: Աշխարհը փորձում է մեզ քաշել իր ապրելակերպի ու արժեքների մեջ: Մեզ շրջապատող մարդիկ երբեմն խանգարում և հիասթափեցնում են, որպեսզի չապրենք հանուն Աստծո: Մենք նման ենք թշնամական երկրում ապրող զինվորների՝ ընդամենը մի քանի ընկերներով և մեծաթիվ թշնամիներով:

Աստված ուզում է, որ մենք հաղթենք հոգևոր պատերազմում: Աղոթքը մեր հրամանատարի հետ հաղորդակցվելու մեր ունեցած միջոցն է:

Պատկերացրե՛ք մարտի մեջ գտնվող զինվորին, ով որոշել է անտեսել հրամանատարի հրամանները և ինքնուրույն գնալ: Նա կարող է օգուտի փոխարեն վնաս բերել. նա դժվար թե օգնի իրենից կախված մարդկանց ու, հավանաբար, կսպանվի կամ կգերեվարվի:

«Այս բոլորի հետ մեկտեղ աղոթեցե՛ք, թախանձագին աղոթեցե՛ք տևաբար, Սուրբ Հոգու օգնությամբ: Դրա համար էլ արթուն հսկեցե՛ք, կատարյալ հարատևությամբ, և աղոթեցե՛ք բոլոր հավատացյալ եղբայրների համար» (Եփեսացիների 6.18):

Այս խոսքը գրված է մի այնպիսի հատվածի վերջում, որտեղ Պողոսը պատկերում է քրիստոնյայի հոգևոր զենքերն իր դարաշրջանի ռազմական սպառազինությամբ: Նա ասում է, որ մեր թշնամիները ֆիզիկական չեն, այլ հոգևոր:

Այդ ժամանակ եթե զինվորները ռադիոկայաններ ունենային, գուցե Պողոսը դրանք օգտագործեր հոգևոր զինվորի սարքավորումների մեկ այլ մասը՝ աղոթքը պատկերելու համար: Սպառազինությունը նկարագրելուց հետո Պողոսն ասում է, որ *աղոթքը* պետք է օգտագործվի հոգևոր սպառազինության հետ մեկտեղ:

Մինչ պայքարի մեջ կանգնած ենք հոգևոր չարիքի դեմ, պետք է աղոթենք՝ կապի մեջ մնալով մեր հրամանատարի հետ: Մենք կանչված ենք զգոն, արթուն ու տոկուն լինելու աղոթքի մեջ:

Աստված խոստացել է առաջնորդություն նրանց համար, ովքեր կլսեն:

«Քո ամբողջ սրտով ՏԻՐՈ՛ՋԸ վստահիր ու մի՛ հենվիր քո հասկացողության վրա: Քո բոլոր ճամփաների մեջ ճանաչի՛ր Նրան և Նա կուղղի քո շավիղները» (Առակների 3.5-6):

«Բարի մարդու քայլերը սահմանվում են ՏԻՐՈՋ կողմից…» (Սաղմոս 37.23):

Քրիստոնյան որոշումներ չի կայացնում այնպես, ինչպես աշխարհի մարդիկ: Ոմանք առաջնորդվում են միայն սեփական ցանկություններով ու հավակնություններով: Շատերն ասում են. «Ես պետք է անեմ այն, ինչ ճիշտ է ինձ համար»: Նրանք նկատի ունեն, որ նախ պետք է հաշվի առնեն իրենց ցանկությունները, ոչ թե թույլ տան ուրիշները կառավարեն իրենց: Նրանք կարծում են, թե

ազատություն նշանակում է՝ եսակենտրոն լինել: Քրիստոնյան տարբերվում է նրանով, որ իր կյանքով ցանկանում է հաճեցնել Աստծուն և օրհնել ուրիշներին:

Որոշ մարդիկ մեզ խորհուրդ են տալիս ամեն ինչի պատասխանը փնտրել մեր ներսում: Նրանք կարծում են, թե մեր զգացմունքներն ու բնազդները բավարար առաջնորդություն են որոշումների համար: Նրանք երիտասարդներին խրախուսում են անտեսել ավանդույթները և տարեցների խորհուրդները: Նրանք արհամարհում են կրոնական բարոյականությունը: Այս կարգի խորհուրդները տարածված են ժամանակակից հոլիվուդյան ժամանցային աշխարհում: Դրանք ներկայացնում են պատմություններ երիտասարդի մասին, ով հաջողության է հասնում՝ ըմբոստանալով հեղինակության և ավանդույթի դեմ՝ հետևելով իր երազանքին: Նրանք ցույց չեն տալիս այն ճշմարտությունը, որ նման որոշումները հանգեցնում են ցավերի ու աղետի:

Որոշ մշակույթներում անհատական որոշումներ կայացնելը սահմանափակվում է բարեկամների, ցեղի կամ կլանի կողմից: Չի ակնկալվում, որ անհատները հեռանան տարածաշրջանից, փոխեն իրենց զբաղմունքը, բարձրագույն կրթություն ստանան կամ ամուսնանան առանց խմբային հավանության: Նման միջավայրում ամենադժվար փոփոխությունն այն է, որ մարդը փոխում է կրոնը: Եթե մարդը դառնում է քրիստոնյա և առաջնորդվում իր ժողովրդին անհասկանալի սկզբունքներով, նա կարող է ենթարկվել հալածանքի: Նման իրավիճակում գտնվող քրիստոնյան պետք է աղոթի իմաստության և առաջնորդության համար:

Մենք մշտապես Աստծո առաջնորդության կարիքն ունենք, և Նա մեզ առաջնորդում է այնպիսի ուղիներով, որոնց մասին միշտ չէ, որ գիտակցում ենք: Նա երբեք չի մոռանում մեզ, նույնիսկ երբ մենք չենք մտածում Նրա մասին: Բայց պահեր են լինում, երբ մենք Նրա առաջնորդությունը փնտրելու և եղած տարբերակները զանազանելու կարիք ենք ունենում, այդ իսկ պատճառով էլ աղոթում ենք, որ Նա մեզ ցույց տա, թե ինչ պետք է անել: Գուցե Աստված կամենում է անսպասելիորեն փոխել մեր ընթացքը:

► Որո՞նք են այն դեպքերը, երբ Աստծո կողմից հատուկ առաջնորդության կարիք ենք ունենում:

Մենք պետք է ուղղություն փնտրենք Աստծուց.

1. **Կյանքը փոխող որոշումներ կայացնելիս.** ամուսնություն, աշխատանք, կրթություն, եկեղեցում նոր ծառայություն:
2. **Գործնական որոշումներ կայացնելիս.** աշխատանքի հնարավորություններ, բնակության վայր, խոշոր գնումներ:
3. **Ծառայություն պլանավորելիս և կատարելիս**[11]. անձի անհատական կոչումը, որտեղ և ում հետ ծառայել, թեմաներ քարոզի ու ուսուցման համար:

[11] Գործք 16.6-9-ը հատվածը պատմում է հատուկ ուղղորդման մասին, որ Սուրբ Հոգին տվեց Պողոսին ու Շիղային միսիոներական ճամփորդության ընթացքում:

4. **Եկեղեցական կյանքին մասնակցելիս.**[12] ինչպե՞ս երկրպագել, ի՞նչ սովորել, ի՞նչ նվիրաբերել, ինչպե՞ս լինել Քրիստոսի մարմնի մի մասը երկրի վրա:

Ինչպե՞ս կարելի է ավելի լավ զանազանել Աստծո առաջնորդությունը

(1) Աղոթքի միջոցով մտերիմ մնալով Աստծո հետ: Եթե ձեր կյանքի մեծ մասն անջատված է Աստծո հետ հաղորդակցությունից, ուրեմն հետևում եք սեփական հակումներին ու սահմանափակ ընկալումներին:

(2) Մի՛ վստահեք սեփական դատողություններին ավելի, քան հստակ սուրբգրային ճշմարտությանը: Ինչպես ասում է վերը նշված հատվածը, «...մի՛ հենվիր քո հասկացողության վրա» (Առակների 3.5):

(3) Միշտ հնազանդվե՛ք այն ամենին, ինչ հաստատ գիտեք, որ Աստծո կամքն է: Դա կբարելավի ձեր ընկալումը: Մարդը, ով չի հնազանդվում Աստծո Խոսքին, իրականում չի նախընտրում Աստծո կամքը, քանի որ Աստված Իր կամքն արտահայտում է Սուրբ Գրքի միջոցով: Եթե մասնակի հնազանդվեք Աստծո կամքին, որը ձեզ արդեն հայտնի է, ավելի շփոթված կլինեք. եղած լույսն էլ կվերածվի խավարի (Ղուկասի 11.35):

Գիտենք, որ մեզ համար Աստծո կամքն է.

- Ամեն օր վերցնել մեր խաչն ու հետևել Հիսուսին (Ղուկասի 9.23):
- Ուղիղ գործել և խոսել ճշմարտությունը մեր սրտերում (Սաղմոս 15.3):
- Հարգել հավատարիմ հոգևոր առաջնորդներին (Ա Թեսաղոնիկեցիների 5.12-13):
- Միշտ ուրախ լինել (Ա Թեսաղոնիկեցիների 5.16):
- Անդադար աղոթք անել (Ա Թեսաղոնիկեցիների 5.17):
- Գոհություն հայտնել բոլոր հանգամանքներում (Ա Թեսաղոնիկեցիների 5.18):
- Հոգին չմարել (Ա Թեսաղոնիկեցիների 5.19):
- Չարհամարհել մարգարեությունները (Ա Թեսաղոնիկեցիների 5.20):
- Քննել ամեն ինչ (Ա Թեսաղոնիկեցիների 5.21):
- Բարին ամուր բռնել (Ա Թեսաղոնիկեցիների 5.21):
- Զերծ մնալ ամեն տեսակի չարիքից (Ա Թեսաղոնիկեցիների 5.22):
- Ամբողջովին սրբանալ (Ա Թեսաղոնիկեցիների 5.23):

Եվ կան բազմաթիվ այլ պատվերներ, որոնք ամփոփված են մեկ բառով. *սեր* (Հռոմեացիների 13.8-10): Երբ մենք անենք այն, ինչ *գիտենք*, որ Աստծո կամքն է, մեր կյանքի ոչ այնքան կարևոր որոշումներից շատերը բնականորեն կբացահայտվեն:

(4) Համբերատար լինել: Գուցե անհրաժեշտ լինի սպասել, մինչ Աստված բացի դռները և պատրաստի իրավիճակներ ձեզ համար: Անհամբերության պատճառով հապճեպ որոշումներ մի՛ կայացրեք:

[12] Վաղ եկեղեցին գիտակցում էր, որ Սուրբ Հոգին ուղղորդում էր իրենց երկրպագությունը, պահպանում էր իրենց վարդապետությունը, առաջնորդում էր խնդիրների լուծման և իրենց պատգամների զորացման մեջ: Տե՛ս Գործք 15.28, 5.3-5 և 6.10:

«Հանգստատի՛ր ՏԻՐՈՋՈՎ, համբերությա՛մբ Նրան սպասիր» (Սաղմոս 37.7)։ Հրատապության զգացողությունից ելնելով երբեք մի՛ արեք ինչ-որ բան, որ գիտեք սխալ է։

(5) Լսել բարի խորհուրդները, «քանի որ իմաստուն խորհրդով ես պատերազմդ մղելու. խորհրդատուների բազմության մեջ ապահովություն կա» (Առակների 24.6) Երբ Աստված ուզում է, որ կարևոր որոշում կայացնեք, նա հաճախ ցույց կտա դա ձեր կյանքի մյուս կարևոր մարդկանց։ Եթե կան բարեպաշտ, տարիքով մարդիկ, ովքեր ճանաչում են ձեզ և հոգ են տանում ձեր մասին, դուք չպետք է հեշտությամբ որոշեք անել մի բան, որը նրանք սխալ են համարում։

Խմբային քննարկում

► Կիսվե՛ք մի որոշման օրինակով, որը վստահաբար առաջնորդված էր Աստծո կողմից։ Աստված ինչպե՞ս ցույց տվեց ձեզ, որ դա էր ճիշտ որոշումը։

► Օգտակար կլինի, եթե կարողանաք կիսվել նաև սխալ որոշման օրինակով։ Պատահե՞լ է, որ չեք կարողացել հետևել չորս սկզբունքներից մեկին Աստծո կողմից ավելի լավ առաջնորդվելու համար։

Մյուսներին նույնպես թո՛ւյլ տվեք կիսվել։

► Հնարավոր է, որ ինչ-որ մեկը ներկայումս փորձում է որոշում կայացնել, որը պատրաստ է քննարկել խմբի հետ։

Սխալներ, որոնցից պետք է խուսափել Աստծո առաջնորդությունը փնտրելիս

Պատմում են, որ Չարլզ Ստալքեր անունով մի քարոզիչ իր առավոտյան աղոթքն էր անում, երբ Աստված խոսեց իր հետ և ասաց. «Ես ուզում եմ, որ դու գնաս Չինաստան»։ Ստալքերն ապշած էր, քանի որ գնալու համար կապեր ու զումար չուներ։ Տպավորությունն այնքան ուժգին էր, որ նա հավաքեց ճամպրուկն ու գնաց կայարան, որտեղից սկիզբ էր առնելու նման ճանապարհորդությունը։ Այնտեղ անծանոթ մի մարդ մոտեցավ նրան և հարցրեց. «Դու Չարլզ Ստալքե՞րն ես,- ապա շարունակեց՝ ասելով.- ինձ ուղարկել են այստեղ տոմսով, որ քեզ Չինաստան ուղարկեմ»։

► Արդյոք պե՞տք է *սովորաբար* ակնկալեք, որ Աստված Իր կամքը հայտնի մեզ այս կերպով։ Արդյոք խնդիր կունենա՞ այն մարդը, որն ակնկալում է այսպես գտնել Աստծո կամքն իր որոշումների համար։

Ոմանք գերբնական ուղղորդումներ են ակնկալում իրենց յուրաքանչյուր որոշման կայացման համար։ Նրանք անտեսում են նորմալ դատողություններն ու հանգամանքները, քանի որ ենթադրում են, որ Աստծո կամքը կարող է հակառակ լինել բոլոր դատողություններին ու հանգամանքներին։

Սխալ է համառորեն պահանջել, որ Աստված գերբնական հայտնություն տա մեր որոշումների համար, քանի որ հաճախ Նա այդպես չի հայտնում Իր կամքը։ Եթե անձն անտեսում է ողջախոհությունն ու հանգամանքները, նա կարող է կարծել, թե Աստծուց առաջնորդություն է ստանում այն դեպքում, երբ իրականում իր զգացմունքներին կամ երևակայությանն է հետևում։

Ամեն անգամ, երբ ինչ-որ բան հստակորեն պատվիրված կամ արգելված է Սուրբ Գրքով, մենք արդեն գիտենք Աստծո կամքը: Այնուամենայնիվ, կյանքում կան բազմաթիվ որոշումներ, որոնց դեպքում այլընտրանքներ ենք ունենում, և որոնց մասին հատուկ պատվեր կամ արգելք չկա: Ինչպե՞ս կարելի է իմանալ, թե որտե՞ղ է պետք ապրել, ի՞նչ աշխատանք ունենալ, ինչպե՞ս ծախսել գումարը:

► Առանց հատուկ հայտնություն ստանալու, ինչպե՞ս կարելի է իմանալ Աստծո կամքը մի որոշման համար, որի մասին որոշակի ուղղորդում չկա Աստվածաշնչում:

Քանի որ որոշ մարդիկ ակնկալում են, որ Աստծո կամքը պետք է գերբնականորեն բացահայտվի՝ ողջամտությունից ու հանգամանքներից զատ, գտնում են անտրամաբանական մի մեթոդ, որն իրենց կարծիքով Աստված կօգտագործի իրենց ուղղություններ տալու համար, օրինակ՝ գուցե խնդրեն Աստծուն, որ որոշակի նշան տա՝ ցույց տալու Իր կամքը, գուցե բացեն Աստվածաշունչը պատահական խոսքի վրա, որը նրանք կկիրառեն իրենց իրավիճակի համար:

Գործնական այլ խորհուրդներ՝ լավագույն որոշումներ կայացնելու համար

Ջոն Ուեսլին Աստծո կամքը հասկանալու մի քանի գործնական ցուցումներ է տվել: Նա ասել է, որ մենք գիտենք Աստվածաշնչում բացահայտված Աստծո ընդհանուր կամքը մեզ համար, որը սուրբ լինելն ու բարիք գործելն է: **Հետևաբար, հատուկ որոշում կայացնելիս մենք պետք է հաշվի առնենք, թե ո՞ր տարբերակն ամենից շատ հնարավորություն կտա սուրբ լինելու և լավագույնն իրականացնելու համար:**

Մեր փորձից սովորում ենք, թե որ հանգամանքներն են մեզ համար հոգևորապես օգտակար, և որոնք՝ վտանգավոր: Որոշ հանգամանքներ հոգևորապես վտանգավոր են ցանկացած մեկի համար. մյուսները վտանգավոր են որոշ մարդկանց համար, բայց ո՛չ՝ բոլորի: Որքանով որ հնարավոր է, պետք էայնպիսի պայմաններ ստեղծել շուրջը, որոնք օգնում են լինել հոգեպես ուժեղ, ու պետք է խուսափենք այնպիսի իրավիճակներից, որոնք գայթակղություն են բերում (Ա Կորնթացիների 10.12-13):

Ողջամտությամբ և փորձառությամբ, նաև ուրիշների խորհուրդները լսելով՝ մենք կարող ենք որոշել նաև այն, թե որ տարբերակը մեզ հնարավորություն կտա իրագործել լավագույնը:

Սովորաբար Աստված Իր կամքը հատուկ հայտնությամբ չի բացահայտում: **Նա ակնկալում է, որ մենք կիրառենք սուրբգրային սկզբունքներ՝ ուշադրությամբ խորհրդածելով և ուսումնասիրելով իրավիճակները**: Սուրբ Հոգին առաջնորդում է մեզ նույնիսկ այն ժամանակ, երբ չենք գիտակցում: Որոշումների մեծ մասի համար չպետք է ակնկալենք հայտնություն, այլ աղոթենք իմաստության և հասկացողության համար:

Մարդիկ, ովքեր Աստծուց հատուկ առաջնորդություն են պահանջում, երբեմն հրաժարվում են լսել այլ մարդկանց (Առակների 12.15): Նրանք կարող են զայրանալ, երբ մարդիկ կասկածի տակ դնեն իրենց որոշումները: Նրանք ավել շուտ ցույց են տալիս հպարտություն և համառություն, քան խոնարհություն:

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Պետրոսի 5.5-6 հատվածը:Բացառությամբ արտասովոր դեպքերի, ավելի լավ է անհատը չպնդի, թե Աստված իրեն հստակ ասել է, թե ինչ անի: Երբ անհատն այդպես է ասում, դժվար է լինում նրան խորհուրդ տալը կամ կարծիք հայտնելը: Ավելի լավ կլինի նա ասի, որ Աստծո օգնությամբ փորձում է լավագույն որոշումը կայացնել:

Որոշումներ կայացնելիս կարևոր է նաև հաշվի առնել այլ կարևոր պայմաններ.

1. **Արդյոք դա համաձայնեցվո՞ւմ է սուրբգրային հստակ պատվերների հետ:** Աստված երբեք չի ուզում, որ դուք չհնազանդվեք Իր Խոսքին:
2. **Արդյոք դա համապատասխանո՞ւմ է սուրբգրային առաջնահերթություններին:** Աստվածաշունչը մեզ ցույց է տալիս, որն է Աստծո համար կարևոր: Արդյոք ձեր որոշումը առաջնային բաներն առաջին տեղո՞ւմ է պահում:
3. **Արդյոք դա ձեր տեսանկյունն ու իրականությունը համապատասխանո՞ւմ են իրար:** Դուք պիտի ունակ լինեք տեսնելու, թե ինչպես է Աստված պատրաստել ձեր իրավիճակը տվյալ որոշման համար:
4. **Արդյոք դա խելամի՞տ է:** Աստված երբեմն կարող է ձեզ առաջնորդել՝ անելու մի բան, որը խելամիտ չի թվում, բայց եթե այդպես է, Նա Իր կամքն ավելի հասկանալի կդարձնի: Երբեք մի՛ մերժեք ողջամտությունը՝ որպես միջոց, որն օգնում է հասկանալ Աստծո կամքը:
5. **Արդյոք դա քրիստոնեակա՞ն վարքագիծ է**: Մի կարծեք, թե որևէ իրավիճակ այնքան բացառիկ է, որ կարող եք անել մի բան, որը սովորաբար չէր հաճեցնի Աստծուն:
6. **Արդյոք դա համատեղելի՞ է ուրիշներին ինքներդ ձեզ պես սիրելու հետ:** Եսասիրական մղումները կխեղաթյուրեն զանազանելու կարողությունը:
7. **Դա լավ ազդեցություն կունենա՞:** Իսկ եթե ուրիշներն անեն այնպես, ինչպես դուք եք անում, լավ կլինի՞:
8. **Արդյոք դա հաստատվա՞ծ է բարեպաշտ խորհրդատուների կողմից**: Մենք բոլորս գիտենք, թե ինչպես գտնել ընկերներ, ովքեր կհամաձայնեն մեզ հետ, բայց ի՞նչ կասեին այն մարդիկ, ովքեր կարծես ամենահոգևոր ու իմաստուն ասելիքն ունեն ձեր որոշման առումով:

Երբ Աստծո կամքն իրոք շատ անսովոր մի բան է լինում, Նա, անշուշտ, ի վիճակի է դա ձեզ հայտնելու: Հրեշտակը, տեսիլքը կամ այրվող թուփը որոշ մարդկանց վստահություն է ներշնչել անցյալում: Աստված կարող է ուղղակի ներքին հավաստիացում տալ, որը կասկածից վեր լինի: Բայց երբ Աստծուց որևէ հստակ ուղերձ չի եղել, պետք է հետևեք վստահելի սկզբունքներին՝ ճիշտ որոշումն ու ընտրությունը կատարելու համար: Մի՛ սպասեք, որ յուրաքանչյուր որոշման համար հատուկ հայտնություն ստանաք: Եթե անկեղծորեն և աղոթքով խորհեք՝ ունենալով ճիշտ առաջնահերթություններ, Աստված հավատարիմ կլինի՝ ուղղորդելու ձեր որոշումը:

Հռոմեացիների 12.1-2-ում Պողոսը գրում է.

> «Ուրեմն, աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությամբ, որ ձեր մարմինները ներկայացնեք որպես կենդանի զոհ, սուրբ, Աստծուն ընդունելի, որ ձեր իմաստալից պաշտամունքն է: Եվ մի՛ կերպավորվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգմամբ, որ քննեք, թե ո՞րն է Աստծո կամքը՝ բարին, ընդունելին և կատարյալը»:

Այս խոսքը ցույց է տալիս, թե ինչպես է մարդու հոգևոր վիճակն ազդում նրա որոշումների վրա: Աստծո կամքը գտնելու համար նախ պետք է ամբողջությամբ նվիրվել Աստծուն: Քրիստոնյայի որոշումները հակադրվում են աշխարհի որոշումներին, քանի որ նա չի «կերպավորվում» այս աշխարհի նման, այլ վերափոխվում է և որոշումներ կայացնում «նորոգված» մտքով:

Աստծո առաջնորդությունը հասկանալու համար ամենակարևոր գործոնը շարժառիթն է: Նա, ով Աստծո կամքը փնտրում է միայն որոշելու, թե արդոք դա անի՞, թե՝ ոչ, ամենայն հավանականությամբ՝ սխալ ճանապարհին է: Եթե անհատը որոնում է Աստծո կամքն ըստ սուրբգրային և ողջամիտ միջոցների, և ամբողջ սրտով վճռական է տրամադրված՝ դա անելու, նա Աստծո կամքը բաց չի թողնի:

Խմբային քննարկում

► Քննարկել Ուեսլիի սկզբունքի մի քանի կիրառություններ: Որոշ օրինակներ են՝ ընկերների ընտրությունը, որոնց հետ ժամանակ կանցկացնեք, աշխատանքի տարբերակները կամ ժամադրության հարաբերությունները (եթե ամուսնացած չեք): Մտածեք, թե ո՞ր իրավիճակը կօգնի սուրբ լինել և իրականացնել լավագույնը:

► Որոշ մարդիկ կարծես չեն կարողանում պահել իրենց քրիստոնեական ինքնությունը, երբ գտնվում են որոշակի տիպի մարդկանց հետ կամ որոշակի վայրերում: Մտածե՛լ օրինակների մասին:

► Հնարավոր այլ մտքեր քննարկման համար.

- Շարժառիթների դերը որոշումների կայացման մեջ:
- Նշանի սպասելու սխալը:
- Ներքին զգացումներին չափից դուրս վստահելու վտանգը:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Շնորհակալ եմ ինձ համար բարիքներ ծրագրելու համար: Գիտեմ, որ Դու իմ քայլերն ավելի շատ ես առաջնորդում, քան ես տեսնում եմ:

Օգնի՛ր ինձ աղոթքով մտերիմ մնալ Քեզ հետ: Օգնի՛ր ինձ ուշադրություն դարձնել այն ճշմարտությանը, որը ցույց ես տալիս ինձ:

Ես ուզում եմ սուրբ լինել և հնարավորինս շատ բարի գործեր անել Քո փառքի համար:

Իմ շարժառիթները դարձրու մաքուր, որպեսզի դրանք չհեռացնեն ինձ Քո կամքից: Առաջնորդի՛ր ինձ իմաստուն խորհրդատուների միջոցով, որոնց դրել ես իմ կյանքում:

Ես ուզում եմ վստահել Քեզ յուրաքանչյուր որոշման մեջ: Ես ուզում եմ ամբողջ սրտով հնազանդվել Քո կամքին:

Շնորհակալ եմ, որ ինձ համար լավագույնն ես կամենում:

Ամեն:

Դաս 5. Առաջադրանքներ

(1) Ուսումնասիրեք Առակների 3.1-12 հատվածը: Գրե՛ք այստեղ նկարագրված առաջնահերթությունների, վերաբերմունքի և բնավորության մասին: Գրեք այն մասին, թե ինչպես կարող եք անձամբ զարգացնել այդ հատկանիշները (ընդհանուր՝ 1-2 էջ):

(2) Քննե՛լ Հակոբոսի 4.13-17 խոսքերը: Նկատե՛ք Աստծո գերիշխանությունը հանգամանքների վրա: Ո՞րն է չարիքը՝ «ամբարտավանությունը», որի մասին հիշատակվում է 16-րդ խոսքում: Գրել մեկ պարբերություն՝ բացատրելով, թե ինչ է ասում մեզ այս հատվածը ապագայի պլանավորման մասին:

(3) Գրե՛լ երկու պարբերություն՝ բացատրելով աղոթքի և որոշում կայացնելու կապը: Պատասխանե՛լ հետևյալ հարցերին.

- Ինչպե՞ս պետք է աղոթքն ազդի մեր որոշումների վրա:
- Աղոթքին և որոշումներ կայացնելուն առնչվող ի՞նչ սխալներ կան, որոնցից պետք է խուսափել:

Դաս 6
Ամուսնության աստվածաշնչյան հիմքը

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը կարող է.
(1) Ըմբռնել Աստծո նախասահմանումն ու նպատակն ամուսնության համար։
(2) Հասկանալ, թե Աստված ինչ արժեք է տալիս կնոջը։
(3) Անձնապես հնազանդվել քրիստոնեական ամուսնության համար Աստծո կողմից տրված սկզբունքներին։

Նվիրյալ անձ Հերնանդո Կորտեսը

Բնավորության և հավակնությունների առումով Հերնանդո Կորտեսը հետևելու արժանի օրինակ չէ։ Այնուամենայնիվ, նրա քայլերից մեկը նպատակներին լիակատար նվիրվածություն ցուցաբերելու մեծ օրինակ է։ 1519 թվականի գարնանը Հերնանդո Կորտեսը գլխավորեց այն արշավախումբը, որը նվաճելու էր ներկայիս Մեքսիկա կոչվող տարածքը։ Իսպանիայի նահանգապետը հովանավորեց այդ առաքելությունը տասնմեկ նավերով և յոթ հարյուր մարդուց կազմված խմբով։ Կորտեսն ու նրա խումբը ծովում մի քանի ամիս անցկացնելուց հետո վերջապես հասան Մեքսիկայի ափերին։ Հաջորդ մարտահրավերը ցամաքով դեպի մայրաքաղաք ճամփորդելն էր։ Կորտեսը գիտեր, որ ցամաքային ճամփորդությունը դժվար ու վտանգավոր է լինելու։ Նա ուզում էր, որ իր խմբի մարդիկ հասկանան, որ հետ դառնալու տարբերակ չկա, ուստի այրեց բոլոր նավերը։ Նա անհնար դարձրեց վերադարձն Իսպանիա և միաժամանակ հաջողության հասնելու հզոր շարժառիթ ստեղծեց։ Նմանապես, ամուսնացող յուրաքանչյուր անձ պետք է բացարձակապես նվիրված լինի՝ գիտակցելով, որ երբ ամուսնացած է, այլ տարբերակ չկա։

Ներածություն

Աստվածաշնչյան ամուսնությունը գեղեցիկ երևույթ է[13]։ Բայց այն զույգերը, ովքեր ցանկանում են ապրել այդ գեղեցկությունն ու ճաշակել դրա քաղցրությունը, պետք է ուսումնասիրեն, թե ինչ է *սովորեցնում* Աստվածաշունչն այդ մասին, և հետամուտ լինեն՝ *հնազանդվելու* իրենց սովորածին։ Բավականություն պատճառող ամուսնությունը ջանք ու զոհաբերություն է պահանջում։

Ամուսնությունը հասկանալու համար հարկավոր է վերադառնալ դրա ծագմանը՝ Ծննդոցին։ Արարչագործության պատմությունը սովորեցնում է մեզ ամուսնության մասին։

[13] Այս դասը գրել է Թիմ Քիփը։

► Ինչ-որ մեկը կցանկանա՞ պատմել, թե ինչպես է ամուսնացել՝ ակնկալելով օգուտներ՝ առանց չգիտակցելու պահանջվող նվիրվածության չափը:

Աստվածաշնչյան ամուսնություն

Աստվածաշնչյան ամուսնությունն ընկերակցության համար է:

«Եվ ՏԵՐ Աստված ասաց. «Լավ չէ, որ մարդը մենակ լինի, մի օգնական շինեմ նրա համար»» (Ծննդոց 2.18)։

Ճիշտ այնպես, ինչպես Աստված Հայր, Որդի և Սուրբ Հոգի եռամիությունը ընկերակցություն է, այնպես էլ Աստված մեզ ստեղծել է սոցիալական լինելու համար: Մենք ստեղծված ենք հաղորդակցության համար: Մենք ստեղծված ենք մտերմության և ընկերակցության համար: Աստված ասաց, որ միայնակ լինելը լավ չէ։

Ծննդոցի իրադարձությունների նկարագրության յուրաքանչյուր հատված արժանապատվություն է տալիս ամուսնությանը: Աստված տղամարդուց վերցրեց կողոսկրը՝ այն դարձնելով գեղեցիկ լրացում, և «որպես Արարչի վերջին ու կատարյալ գործ, առանձնահատուկ պատվով բերեց նրան տղամարդու մոտ: Այս նկարագրության յուրաքանչյուր քայլի ու փուլի նպատակն ամուսնության ազնվացման համար է[14]»: «Բառը («բերեց») ենթադրում է նրա հանդիսավոր շնորհումը ամուսնության ուխտի կապի մեջ, որն այսուհետև կոչվում է Աստծո ուխտ (Առակների 2.17)[15]:

Ամուսնությունը պետք է լինի ուրախ միություն:

Երբ Ադամն ասաց. «Սա հիմա ոսկոր է իմ ոսկորից…» (2.23), նա արտահայտում էր հարգանք և ուրախություն: Ադամը չասաց. «Վերջապես, ահա մի ստրուկ. հիմա ես ունեմ մեկին, ով լվացքս կանի, կերակուրս կպատրաստի, մեջքս կմերսի և իմ տան գործերը կանի»: Ո՛չ, Ադամն ասաց. «Վերջապե՛ս, *ինձ նման մի գործընկերը*»:

Ամուսնությունը պետք է լինի հավասար անձանց միություն:

«Մի օգնական (կատարյալ գործընկեր) շինեմ նրա հարմար» (2.18)։

Մեթյու Հենրին մեզ հիշեցնում է. «Կինը պատրաստվեց կողոսկրից՝ վերցված Ադամի կողից, ո՛չ թե նրա գլխից, որ իշխի նրա վրա, ո՛չ էլ նրա ոտքերից, որպեսզի ոտնահարվի նրա կողմից, այլ նրա կողքից, որպեսզի նրա հետ հավասար լինի, նրա թևի տակ պաշտպանված լինի, և նրա սրտին մոտ՝ սիրելին լինելու համար»[16]: Ադամ Քլարկն ասում է. «Նա պետք է լիներ կատարելապես տղամարդու

[14] https://biblehub.com/genesis/2-22.htm, Դեկտեմբերի 29, 2020.

[15] *Փալփիթ,* https://biblehub.com/genesis/2-22.htm, Դեկտեմբերի 29, 2020.

[16] *Մեթյու Հենրի «Ամբողջ Աստվածաշնչի Մեկնություն» (Matthew Henry's Commentary on the Whole Bible)*

նմանությամբ՝ չունենալով ո՛չ թերարժեքություն, ո՛չ էլ գերազանցություն, այլ լինելով ամեն ինչում նրա նման և հավասար»[17]:

Ամուսնությունը պետք է լինի ուխտի միություն:

«Սրա համար մարդ *կթողնի* իր հորն ու մորը և *կհարի (կմիանա)* իր կնոջը, և *մեկ մարմին կլինեն*» (2.24): Կայուն ամուսնական կյանքը կախված չէ սիրավեպից (ռոմանտիկ զգացմունքները գալիս ու գնում են), կամ հաճույքից (չնայած առողջ ամուսնությունը բերկրանք է պատճառում), կամ անձնական երջանկությունից (չնայած կայուն ամուսնությունն իսկապես լիարժեք բավարարություն է պատճառում): Ամուսնության բերած հրաշալի օգուտները չեն հանգեցնում կայուն ամուսնական կյանքի. դրանք կայուն ամուսնության արդյունքն են լինում: Ամուսնությունը հաստատվում է ուխտի անսասան հիմքի վրա. մեկ տղամարդ և մեկ կին բացառիկ կերպով ու ցկյանս նվիրվում են միմյանց:

Ամուսնական կյանքը պետք է լինի թափանցիկ, վստահելի և ընդունելի հարաբերությունների վրա կառուցված. «Եվ նրանք երկուսով մերկ էին՝ մարդը և իր կինը, և չէին ամաչում» (2.25): Քանի որ մեղքը դեռ չէր ապականել առաջին զույգի անմեղությունը, դատաստան, ամոթ ու վախ չկար նրանց ամուսնական կյանքում: Նոր Կտակարանը մեզ ասում է. «Ամուսնությունն ըստ ամենայնի պատվական է, և անկողինը՝ անարատ…» (Եբրայեցիների 13.4):

Կայուն ամուսնություն չի կարող լինել այնտեղ, որտեղ կա անապահովություն, անվստահություն, կասկածներ կամ վախ, որտեղ զույգը վստահ չէ ամուսնության մեջ միմյանց նվիրվածությանը: Կայուն ամուսնությունը պահանջում է աներեր խոստում՝ «մինչև մահը մեզ չբաժանի»:

Անգլերեն պատկերավոր մի արտահայտություն կա՝ «այրել ետդարձի կամուրջները», ինչը նշանակում է, որ ձեր նվիրման քայլն անհնար է դարձնում հետ դառնալը:

Հաջողակ ամուսնություններն այրում են յուրաքանչյուր կամուրջ և նավ: Ամուսնալուծությունը կամ առանձնանալը տարբերակ չէ, բացառությամբ բռնության դրսևորումների և անհավատարմության: Նույնիսկ այնտեղ, որտեղ դրանք տեղի են ունենում, մենք պետք է հիշենք, որ Աստված հաճախ կարող է փրկագնել:

Ուխտի սերը անձնատուր է, հարգանքով լի և գեղեցկացնող, նույնիսկ երբ հարաբերությունները բարդ են (Ա Կորնթացիների 13): Թույլ նվիրումը առաջ է բերում ժամանակավոր ջանքեր, զգացմունքային անջատվածություն, մեկուսացում և գայթակղություն:

Ամուսինն ապրում է ուխտի սիրով, երբ *ոչ մի դեպքում չի հրաժարվում* իր հարսնացուից, նույնիսկ երբ վերջինս չարձագանքող է, անհարգալից կամ հիվանդ: Ուխտի սիրով ապրող կինը նա է, ով ընտրում է հարգել և հնազանդվել իր ամուսնուն՝ հանուն Քրիստոսի, նույնիսկ երբ ամուսինը չի սիրում իրեն:

[17] Ադամ Քլարկ (Adam Clark), *Աստվածաշնչի մեկնություն (Adam Clarke's Commentary on the Bible)*

Ամուսնու սերը շահում է կնոջ հարգանքը, իսկ կնոջ հարգանքը՝ ամուսնու սերը: Եվ նրանք շարունակում են աճել հոգեպես:

► Ի՞նչ խնդիրներ են առաջանում, եթե մարդիկ ամուսնանում են՝ մտածելով, որ հետագայում կարող են փոխել իրենց որոշումը, եթե դժգոհ լինեն ամուսնությունից: Ի՞նչ տարբերություն է բերում կատարյալ նվիրումը, երբ մարդը հավատում է, որ իր ամուսնությունը մշտական է:

Աստվածաշնչյան ամուսնությունը արարման վայրն *է. վերարտադրություն:*

«Ահա՛, երեխաները ՏԻՐՈՋ ժառանգությունն են, որովայնի պտուղը Նրա պարգևն է» (Սաղմոս 127.3):

Երեխաները պարգև են Աստծուց, բայց ինչ-որ իմաստով նրանք նաև ծնողների *նվերն են* Աստծուն: «Չէ՞ որ ՏԵՐԸ ձեզ մեկ մարմին և հոգի արեց նրա հետ: **Եվ ասացե՛ք, թե ուրիշ ի՞նչ է խնդրում Աստված, եթե ոչ՝ զավակ**: Զգո՛ւյշ վարվեցեք ձեր հոգու հետ, քո երիտասարդության օրերի կնոջը մի՛ թող» (Մաղաքիա 2.15):

Որոշ մարդիկ նախընտրում են հետևել այնպիսի ապրելակերպի, որը չի ներառում երեխաներ, սակայն Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված գոհանում է, երբ ծնողները աստվածապաշտ երեխաներ են ունենում:

Կարևոր է նշել, որ Աստված միայն վերարտադրություն չէ, որ ուզում է, այլև աստվածավախ զավակներ: Ծնողները կանչված են Աստծո կողմից, որպեսզի իրենց զավակներին սովորեցնեն հետևել Քրիստոսին:

Աստվածաշնչյան ամուսնությունը Քրիստոսի համար է:

Եփեսացիների 5.30-32 հատվածում Սուրբ Հոգին հայտնում է ամուսնության ավելի խորը իմաստի մասին, որը քողարկված էր մինչև Հիսուսի գալը: Ամուսնությունը Հիսուս Քրիստոսի և նրա եկեղեցու փոխհարաբերությունների երկրային պատկերն է՝ արտացոլանքը:

Պողոսը սկսում է այս բաժինը՝ հորդորելով քրիստոնյաներին «լցվել Հոգով» (Եփեսացիների 5.18): Հենց այս համատեքստում է, որ նա ներկայացնում է ամուսնության վերաբերյալ հետևյալ ցուցումները:

Հոգով լցված հարսնացուն *կհնազանդվի* իր փեսային (իր «գլխին»), «Տիրոջում», ինչպես որ քրիստոնյաները հնազանդվում են Հիսուսին (Եփեսացիների 5.24, 32, տե՛ս նաև Ա Պետրոսի 3.1), այդպիսով՝ դրսևորելով ակնածանք *(հարգանք)* Հիսուսի և ամուսնու հանդեպ:

Կարևոր է, որ յուրաքանչյուր կին իր հնազանդության համար մտքում «Տիրոջն» ունենա: Նրան և Նրա համար է, որ կինը հնազանդվում է, ոչ թե միայն իր ամուսնու համար: Նրա աչքը Հիսուսի վրա է, որ միակ անսխալն է: Կնոջ պատրաստակամ հնազանդությունն իր ամուսնուն՝ երկրպագության ակտ է Հիսուսին:

Աստվածաշնչյան հնազանդությունը, ինչպես սերը, չի կարելի պարտադրել: Աստվածաշնչյան հնազանդությունը *պարգև է*, որը կանայք ներկայացնում են իրենց ամուսիններին՝ *Քրիստոսի հանդեպ*

ակնածանքից դրդված (Եփեսացիների 5.33): «Ամեն ինչում» հնազանդվելը (բացառությամբ այն դեպքերի, երբ սպառնալիք կա նրա առողջությանը կամ վտանգված է նրա հարաբերությունը Հիսուսի հետ) Հիսուսին ուղղված երկրպագություն է:

Կնոջ հնազանդվելն իր ամուսնուն *հարգանքի ակտ է* (33-րդ խոսք) տղամարդու նկատմամբ՝ որպես Հոգով լցված կյանքի մի մաս (5.18-21): «Հեզ և խոնարհ» հոգուց բխող այս հարգանքը պատվական է Աստծո առաջ (Ա Պետրոսի 3.4):

Հոգով լցված փեսան *կսիրի* իր հարսնացուին այնպես, ինչպես Հիսուսն է սիրում իր եկեղեցուն (Եփեսացիների 5.25): Փեսան պետք է սիրի նրան այնպես, ինչպես սիրում է իր մարմինը (28-29 խոսքեր): Նա պետք է դրսևորի նույն Հոգով լցված անձնազոհությունը, ինչ Հիսուսը դրսևորեց իր եկեղեցու հանդեպ, երբ «Իր անձը տվեց նրա համար»: Սա նրա «հնազանդության» գործողությունն է (Եփեսացիների 5.21): Մեկնաբաններից մեկն այսպես է արտահայտել դա.

> «Ինչպես Նա (Հիսուսը) տվեց Իրեն՝ տառապելու խաչի վրա՝ եկեղեցուն փրկելու համար, այնպես էլ մենք ենք պատրաստ ուրանալ ինքներս մեզ և դիմանալ չարչարանքներին ու փորձություններին, որպեսզի նպաստենք կնոջ երջանկությանը: Աշխատելը ամուսնու պարտավորություններից մեկն է՝ կնոջն աջակցելու, նրա կարիքներն հոգալու, անհրաժեշտության դեպքում իր հանգստությունից ու հարմարավետությունից հրաժարվելու՝ հիվանդության ժամանակ կնոջը խնամելու համար, գնալու նրա առջից վտանգի պահերին, պաշտպանելու նրան, եթե նա վտանգի տակ է, համբերելու նրան, երբ նա դյուրագրգիռ վիճակում է, կառչելու կնոջը, երբ վերջինս վանում է նրան, աղոթելու նրա հետ, երբ նա հոգևոր դժվարությունների մեջ է և պատրաստ լինելու մեռնելու՝ նրան փրկելու համար: Ինչո՞ւ չպիտի դա լինի: Եթե նրանք նավաբեկության են ենթարկվել, և կա մեկ տախտակ, որի վրա կարելի է ապահովել անվտանգությունը, նա չպե՞տք է ցանկանա կնոջը դնել դրա վրա ու համոզվել, որ նա ապահով է բոլոր վտանգներից: Բայց կա ավելին… ամուսինը պետք է զգա, որ իր կյանքի միակ մեծ նպատակը պետք է լինի իր կնոջ փրկությունը փնտրելը: Նա պետք է նրան տրամադրի այն ամենը, ինչ նրան պետք է իր անձի համար… Եվ նա պետք է օրինակ ծառայի. խորհուրդ տա նրան, եթե նա խորհրդի կարիք ունի և հնարավորինս հեշտացնի փրկության ճանապարհը նրա համար: Եթե ամուսինն ունի Փրկչի Հոգին և ինքնաուրացումը, նա ոչ մի զոհաբերություն չափազանց մեծ չի համարի, եթե կարողանա նպաստել իր ընտանիքի փրկությանը[18]»:

Փեսան պետք է փնտրի իր հարսնացուի մաքրությունը, ինչպես Քրիստոսը մաքրում է իր հարսնացուին՝ եկեղեցուն, «…որ նրան սրբի և մաքրի… որպեսզի այն Իր առջև ներկայացնի որպես փառավոր եկեղեցի՝ առանց արատի, խորշոմի կամ այլ թերության» (Եփեսացիների 5.26-27):

---

[18] Ալբերտ Բարնես (Albert Barnes), *Եփեսացիների մեկնություն (Commentary on Ephesians)*, (Գլուխ 5)

Հին ժամանակներում միապետների հարսնացուները ֆիզիկապես մաքրվում էին գեղեցկության թանկարժեք միջոցներով՝ «վեց ամիս զմռսի յուղով և վեց ամիս անուշահոտ խնկերով և կանանց մաքրության համար այլ բաներով» (տե՛ս Եսթերի 2.12): Այսպես էր կույսը պատրաստվում իր ամուսնու համար:

Հոգևոր իմաստով ամուսինը պետք է ապահովի իր կնոջ ծաղկման համար անհրաժեշտ բոլոր միջոցները՝ հավատարմություն, անվերապահ սեր, հասկացողություն, աղոթք, խորհուրդ, ուսուցում և բարություն:

Երբ ամուսինը նման սիրով է վերաբերվում կնոջը, նա փոխհատուցում կստանա երջանկությամբ: Պողոսն ասում է. «Ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում» (Եփեսացիների 5.28): Ամուսինը, ով սիրում է իր կնոջն այս անձնազոհաբար, ավելիով կհատուցվի Տիրոջ կողմից և, ամենայն հավանականությամբ, կվայելի իր կնոջ հարգանքը, ջերմությունը և հավատարմություն:

► Ի՞նչ որոշակի քայլեր պետք է անի ամուսինը՝ իր կնոջը հոգևոր աջակցություն ցուցաբերելու համար:

Ինչպե՞ս կարող են զույգերը ամրապնդել իրենց ամուսնական կյանքը

(1) Նրանք պետք է զոհանան Աստծո հիմնական նախասահմանության համար և գնահատեն իրենց յուրահատուկ դերերն ամուսնության մեջ:

Ամուսինները պետք է հիշեն, որ իրենց կանայք Աստծո պարգևն են ու «կատարյալ գործընկեր», և իրենց կյանքը դնեն կնոջ ապահովության ու հոգևոր, զգացմունքային և ֆիզիկական բարեկեցության համար: Տղամարդը պետք է որոշի երախտապարտ լինելը կնոջ համար և սիրի նրան նույնիսկ այն ժամանակ, երբ նա ամենաքիչն է արժանի սիրո՝ գիտակցելով, որ միայն Աստված կարող է փոխել այն, ինչ պետք է փոխվի կնոջ մեջ: Աստված պատվի կարժանացնի ամուսնու հնազանդությունն ու հավատը:

Կինը պետք է հարգի Աստծո այն ընտրությունը, որ Նա ամուսնուն դրել է որպես գլուխ, հարգանք ցուցաբերի նրա հանդեպ ամեն պարագայում և հարգի նրա առաջնորդությունը: Նա պետք է որոշի հնազանդվել ու հարգել, նույնիսկ երբ վերջինս սխալներ է գործում և ամենաքիչն է արժանի դրան՝ աղոթելով, որ Աստված փոխի այն, ինչ պետք է փոխվի ամուսնու մեջ: Աստված կպատվի կնոջ հնազանդությունն ու հավատը:

(2) Ամուսնացած զույգերը պետք է ձևավորեն իրական հոգևոր և ֆիզիկական մտերմություն:

Նրանք պետք է ձգտեն *ճանաչել* միմյանց առանց վախի, քննադատության, ուրիշների հետ համեմատման, բռնության, ցանկասիրության, ինքնագոհացման կամ նվաստացման: Նրանք Աստծո և միմյանց առջև պետք է ապրեն թափանցիկ ու անարատ կյանքով:

(3) Ամուսնացած զույգերը պետք է հետևեն Աստծո շնորհքի օրինակին, երբ չեն կարողանում համապատասխանել Աստծո չափանիշներին:

Երբ Ադամն ու Եվան մեղանչեցին և ամոթ ու ափսոսանք զգացին, Աստված հայտնեց իր զորությունը՝ փրկագնելու նրանց իրենց սխալներից: Աստված զոհաբերեց մի կենդանի՝ ծածկոցներ պատրաստելու համար՝ նրանց մերկությունը քողարկելու նպատակով (Ծննդոց 3.21): Աստծո այս սիրառատ ակտը պատկերում է փրկության Աստծո խոստումը՝ շնորհքի և Քրիստոսի միջոցով: Քրիստոսի միջոցով մեզ տրված Աստծո հանդերձը ներվելու և վերականգնվելու հնարավորություն տվեց նրանց և մեզ: Քրիստոսի շնորհիվ՝ ամուսնացած զույգերը կարող են առանց ամաչելու վերադառնալ մտերմության՝ նույնիսկ ձախողումներից հետո:

Կանանց հանդեպ հարգանքի Հիսուսի օրինակը

Առաջին դարի հռոմեական աշխարհում և հուդայականության մեջ կանայք համարվում էին տղամարդկանցից ցածր էակներ: Կանանց ավելի ցածր տեսնելը դեռևս տարածված է աշխարհի շատ մշակույթներում և շատ ընտանիքներում: Կանանց անարգում են, օգտագործում են՝ որպես սեռական օբյեկտների և բռնության ենթարկում: Բայց կանանց հանդեպ Հիսուսի մեծ հարգանքը պետք է օրինակ լինի մեզ համար:

Քրիստոսի համար կանայք ունեն անքակտելի արժանապատվություն և տղամարդկանց հավասար արժեք: Հիսուսն ասաց. «Նա, որ նրանց սկզբից ստեղծեց, արու և էգ ստեղծեց նրանց» (Մատթեոսի 19.4, Ծննդոց 1.27): Կանայք, ճիշտ ինչպես տղամարդիկ, ստեղծված են Աստծո պատկերով: Ինչպես տղամարդիկ, նրանք էլ ունեն ինքնագիտակցություն, անձնական ազատություն, ինքորոշման իրավունք և անձնական պատասխանատվություն սեփական արարքների համար:

Հիսուսը կանանց ընդունեց որպես ընկերակից անձանց: Հիսուսի աշակերտների մեջ երկու սեռն էլ՝ արական և իգական, ընդգրկված էին: Կանայք Հիսուսի կողմից դիտվում են որպես անկեղծ անձնավորություններ, ոչ թե պարզապես տղամարդու ցանկությունների օբյեկտներ: Նա կանանց դիտում էր որպես իրական անձանց, ում համար Ինքն աշխարհ էր եկել:

Ջեյմս Բորլանդը, Ջոն Փայփերի և Վեյն Գրուդեմի հետ միասին, ներկայացնում է Հիսուսի՝ կանանց հանդեպ ունեցած բարձր կարծիքի և կանանց հանդեպ հարգանքի հետևյալ պարզ օրինակները, որ գտնում ենք չորս Ավետարաններում.

(1) Հիսուսը հասարակության մեջ լինելով՝ պարբերաբար ուղղակիորեն դիմում էր կանանց:

Հիսուսի օրերում դա արտասովոր մի բան էր տղամարդու համար (Հովհաննեսի 4.27): Աշակերտները զարմացան՝ տեսնելով, որ Հիսուսը խոսում է սամարացի կնոջ հետ Սյուքարի ջրհորի մոտ (Հովհաննեսի 4.7-26): Նա նաև հանգիստ խոսեց շնության մեջ բռնված կնոջ հետ (Հովհաննեսի 8.10-11): Ղուկասը նշում է, որ Հիսուսը հրապարակավ խոսեց Նայինի քաղաքում հանդիպած որբևայրու հետ (Ղուկաս 7.12-13), արյունահոսության խանգարում ունեցող կնոջ հետ (Ղուկասի 8.48, Մատթեոսի 9.22, Մարկոսի 5.34) և մի կնոջ հետ, ով կանչեց իրեն ամբոխից (Ղուկասի 11.27-28): Հիսուսը դիմեց մի կնոջ,

որը կծկված էր եղել տասնութ տարի (Ղուկասի 13.12), և մի խումբ կանանց՝ խաչի ճամփին (Ղուկասի 23.27-31):

(2) Հիսուսը կանանց հանդեպ ունեցած իր հարգանքն ու մեծ ուշադրությունը ցույց տվեց նրանով, թե *ինչպես* խոսեց նրանց հետ:

Նա կանանց հետ խոսում էր հոգատարությամբ ու ուշադրությամբ: Մատթեոսը, Մարկոսը և Ղուկասը նշում են, որ Հիսուսը արյունահոսություն ունեցող կնոջը դիմեց որպես «դուստր», իսկ կծկված կնոջն անվանեց՝ «Աբրահամի դուստր» (Ղուկասի 13.16): Նրանց անվանելով «Աբրահամի դուստրեր»՝ Հիսուսը նրանց դնում է «Աբրահամի որդիների» հետ հավասար հոգևոր կարգավիճակում:

(3) Հիսուսը ցույց տվեց կանանց ի ծնե ունեցած արժեքը՝ նրանց անձնապես պատասխանատու համարելով իրենց մեղքերի համար:

Դա կարելի է տեսնել ջրհորի մոտ գտնվող կնոջ (Հովհաննեսի 4.16-18), շնացող կնոջ (Հովհաննես 8.10-11) և մեղավոր կնոջ (ով օծեց նրա ոտքերը) դեպքերում (Ղուկասի 7.44-50): Նրանց մեղքը ոչ թե անտեսվեց, այլ առերեսվեց: Նրա մոտեցումը ցույց տվեց, որ յուրաքանչյուր կին ունի անձնական ազատություն, պատասխանատու է իր կատարած ընտրությունների համար և պետք է անձամբ զբաղվի մեղքի, ապաշխարության ու ներման հարցերով:

Հիսուսի կողմից կանանց տրված արժեքն ինչպե՞ս պետք է դրսևորվի եկեղեցում

Կանանց իդեալական աստվածաշնչյան *դերը* ծառայության մեջ և տանն այսօր քննարկվում է բազմաթիվ եկեղեցիներում և հարանվանություններում, ինչպես էլ պետք է լինի, սակայն կնոջ *արժեքը և հավասարությունը*՝ որպես Աստծո պատկերով ստեղծված անձանց, *երբեք* չպետք է կասկածի տակ դրվի: Հիսուսը շարունակ ցույց էր տալիս կանանց արժեքն ու նրանց կարևորությունը: Հիսուսը կանանց ստանձնեց Իր հարության առաջին ավետաբերների դերը (Հովհաննեսի 20.17): Նա արժևորեց նրանց ընկերակցությունը, աղոթքները, քրիստոնեական ծառայությունը, ֆինանսական աջակցությունը, վկայությունն ու վկա լինելը: Հիսուսը պատվում էր կանանց, ուսուցանում էր կանանց և ծառայում էր կանանց ամենայն լրջությամբ:

Կանանց հանդեպ հարգանքը՝ ցուցադրված Նոր Կտակարանում

Կանանց հանդեպ հարգանքի Հիսուսի օրինակը երևում է Սուրբ Հոգու կյանքում: Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգին հեղվեց և՛ «որդիների և դուստրերի», և՛ «ծառաների ու աղախինների» վրա (Գործք Առաքելոց 2.17): Սուրբ Հոգին կողմնակալություն չցուցաբերեց:

Հռոմեացիների 16-րդ գլխում Պողոսը գովում է Ֆիբե անունով մի կնոջ՝ որպես «եկեղեցու սպասավորի» (1-ին խոսք), թե՛ Պրիսկիղային և թե՛ Ակյուղասին՝ որպես «Հիսուս Քրիստոսով իմ գործակիցներին, որոնք իմ կյանքը փրկելու համար վտանգի ենթարկեցին իրենց սեփական կյանքը» (3-4 խոսքեր), Մարիամին, որը «շատ աշխատեց ձեզ համար» (6-րդ խոսք), Հունիային՝ որպես «առաքյալների մեջ երևելիներից» մեկին (7-րդ խոսք), ինչպես նաև այլ կանանց:

Ա Թեսաղոնիկեցիների թղթում Պողոսը գովաբանում է կանանց մեջ Աստծուց տրված մեղմությունն ու մայրական սերը, երբ գրում է. «Ինչպես մի մայր, որ սնում է իր զավակներին, այնպես էլ մենք գորովանքով վերաբերվեցինք ձեզ» (Ա Թեսաղոնիկեցիների 2.7): Եփեսացիների թղթում նա ամուսիններին պատվիրում է սիրել իրենց կանանց, «ինչպես Քրիստոսը սիրեց եկեղեցին և Իր կյանքը տվեց նրա համար», և «իբրև իրենց մարմինը» (Եփեսացիներ 5.25, 28): Պետրոսը կոչ է անում ամուսիններին՝ «իմաստությա՛մբ ապրեք ձեր կանանց հետ՝ պատվելով նրանց…» (Ա Պետրոսի 3.7):

Ակնհայտ է, որ վաղ եկեղեցում կանայք արժեքավոր էին համարվում, իսկ տղամարդկանց սովորեցնում էին հարգալից լինել նրանց հանդեպ: Ժամանակն է, որ ամենուրեք ու բոլոր մշակույթներում հոգևոր առաջնորդները կանգնեն հանուն կանանց և թույլ չտան կանանց ուղղված վատ վերաբերմունք: Ժամանակն է, որ մենք գանձի պես փայփայենք կանանց՝ որպես անձանց, որոնք եզակիորեն նախագծված են իրենց Արարչի կողմից՝ Նրա պատկերով: Եկեղեցում կամ տանը տղամարդու և կնոջ դերերի տարբերության վերաբերյալ ցանկացած ուսուցում պետք է սկսվի այս հիմքից, այլապես մեր ուսմունքը դառնում է չարաշահման ուղի:

Եզրակացություն

Ամուսնությունը Աստծո ստեղծագործությունն ու գաղափարն է, ոչ թե՝ մարդու: Հետևաբար, ցուցումներ ստանալու համար մենք պետք է դիմենք Աստծուն, ոչ թե՝ աշխարհին կամ մշակույթին: Միայն նա գիտի, թե մեր ամուսնական կյանքն ինչպես կդարձնի ամուր, հարատև ու բերկրանք պատճառող: Մենք, սակայն, առանց Սուրբ Հոգու երբեք չենք լինի այն կողակիցները, որ պետք է լինենք:

Խմբային քննարկում

►Բացատրե՛լ այն սկզբունքները, որոնք եկեղեցին պետք է ուսուցանի ամուսնական կյանքը ամրապնդելու համար: Ո՞ր հասկացողությունն է հատկապես պակասում ձեր միջավայրում:

►Ի՞նչ տարբերություն է դնում ձեր մշակույթը կանանց ու տղամարդկանց միջև:

►Ինչպե՞ս են ձեր երկրի եկեղեցիները տարբերություն դնում կանանց ու տղամարդկանց վերբերվելու հարցրում: Եկեղեցիների և մշակույթի միջև կա՞ տարբերություն այդ առումով:

►Ըստ Հիսուսի օրինակի՝ ո՞ր սովորույթները պետք է փոխվեն:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Շնորհակալություն ամուսնության հրաշալի նվերը մեզ տալու համար: Օգնի՛ր մեզ ամուսնական կյանքն ապրենք Քո կամեցած ձևով:

Օգնի՛ր մեզ դրսևորել այնպիսի սեր, որը նման է Քրիստոսի և եկեղեցու սիրուն:

Օգնի՛ր միմյանց հանդեպ դրսևորած մեր հարգանքով դուրս գալ մեր մշակութային սահմաններից:

Շնորհակալությո՛ւն Սուրբ Հոգու գործի համար, որ հնարավոր է դարձնում ուրախ, ամուր ու կայուն հարաբերությունները:

Ամեն:

Դաս 6. Առաջադրանքներ

(1) Գրավոր նկարագրե՛ք տղամարդկանց և կանանց միջև արված տարբերակումները, որոնք կիրառվում են ձեր մշակույթում: Ինչպե՞ս կբարեփոխվեին այդ տարբերությունները աստվածաշնչյան ճշմարտությունների ճշգրիտ կիրառմամբ:

(2) Ընտրե՛ք երկու սկզբունք այս դասից, որ նոր էին ձեզ համար: Գրե՛ք մեկ պարբերություն՝ ձեր իսկ բառերով բացատրելով դրանցից յուրաքանչյուրը:

(3) Պատրաստե՛ք հակիրճ ելույթ ստորև թվարկված թեմաներից մեկի վերաբերյալ: (Դասավանդողը յուրաքանչյուր ուսանողի կհանձնարարի մեկ թեմա): Ելույթը ներկայացրե՛ք հաջորդ դասաժամի սկզբին:

- Աստծո նախագիծը ամուսնական միության համար:
- Ամուսնության աստվածաշնչյան նպատակները:
- Ամուսնական կյանքն ամրապնդելու ուղիները:
- Կանանց մասին աստվածաշնչյան տեսակետը:
- Ամուսնության մեջ Աստծո կողմից տրված դերերը և Հոգով լցվելու կարևորությունը դրանք կատարելու համար:

Դաս 7
Ամուսնական սրբություն

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը կարող է.
(1) Հասկանալ Աստծո ծրագիրն ամուսնության համար, ամուսնական կյանքի օրենքները, որոնք պաշտպանում են խնդիրներից և օրհնություններ բերում:
(2) Հասկանալ Աստծո ծրագիրն ամուսնության համար, ամուսնական կյանքի օրենքները, Բացատրել ընտանիքների համար գրված սուրբգրային ցուցումները:

Խոստում պահող Ռոբերթսոն Մաքքուիլքինը

Դր. Ռոբերթսոն Մաքքուիլքինը տասներկու տարի ծառայել է Ճապոնիայում՝ որպես միսիոներ: Հետագայում նա դարձավ Կոլումբիայի միջազգային համալսարանի նախագահը: Նա հայտնի էր որպես գրող, բանախոս և մանկավարժ: Նրա կինը՝ Մյուրիելը, տառապում էր Ալցհեյմերի հիվանդությամբ: Երբ հիվանդությունը հասավ այն վիճակին, որ Մյուրիելը մշտական խնամքի կարիք ուներ, դր. Մաքքուիլքինը հրաժարվեց համալսարանի նախագահի պաշտոնից՝ իր կնոջը խնամելու համար: Նա ասաց, որ կատարում է այն խոստումը, որն ամուսնանալիս տվել է կնոջը: Նա հավատում էր, որ կնոջ մասին հոգալն ավելի կարևոր է, քան համալսարանի նախագահի պաշտոնում մնալը:

Ամուսնության հաստատումը Աստծո կողմից

Ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից Իր ստեղծած առաջին տղամարդու և կնոջ համար:

► Ուսանողը խմբի համար կարդում է Ծննդոց 2.21–24 հատվածը: Ի՞նչ են մեզ ասում այս հատվածներն ամուսնության մասին:

Ամուսնությունը ստեղծվել է Աստծո կողմից, որպեսզի լինի ճիշտ այն, ինչ անհրաժեշտ էր մարդկանց: Այն նախատեսված էր հենց մարդկային էության համար: Այն ամենը, ինչ Աստված նախագծում է, և այն ամենն, ինչ պահանջում է, լավագույնն է մեզ համար[19]: Աստված գիտի, որ ամուսնության Իր ծրագիրը յուրաքանչյուր կողակցի համար լավագույնս կապահովի զգացմունքային, հաղորդակցական ու հոգևոր բարօրություն:

Ամուսնությունը նախատեսված է նաև լինելու Աստծո բնավորության և հարաբերությունների արտացոլանքը: Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված միշտ եղել են և կլինեն միմյանց հետ հարաբերությունների մեջ: Յուրաքանչյուրը եզակի է Իր դերում, բայց Երրորդության բոլոր Անձերը մշտապես Մեկ են և Մեկ էություն ունեն: Երրորդության Անձերի հարաբերություններում մենք տեսնում ենք միասնություն, մտերմություն, հավատարմություն և ամուր սեր: Աստվածաշնչյան

[19] Բ Օրինաց 6.24

ամուսնությունն այս զարմանահրաշ հարաբերություններն է ընդօրինակել: Աստծո ծրագիրն այն է, որ ամեն ամուսին ու կին մաքուր լինի իր սիրո մեջ ու հավատարիմ ամբողջ կյանքի ընթացքում:

Աստված ասաց, որ ամուսնության մեջ տղամարդն ու կինը թողնում են իրենց ծնողներին և միանում իրար: Ամուսնությունը երկու անձի դնում է այնպիսի ընկերակցության և գործունեության մեջ, որն ավելի ամուր ու մտերիմ է, քան ցանկացած մարդկային հարաբերություն:

Ամուսնությունն ընդամենը երկու անձի սահմանափակ գործընկերության մեջ միասին լինելը չէ: Նրանց կյանքերն այնպես են միաձուլվում, որ ինչ-որ առումով նրանք նման են լինում մեկ մարդու: Դա ոչ թե նրանց եզակի անհատականությունների վերացում է, այլ յուրահատուկ միասնություն:

Ամուսնության մշտականությունը

Աստված նախատեսել է, որ ամուսնությունը լինի հարատև: Ամուսնության մեջ տղամարդն ու կինը խոստանում են հավատարիմ լինել միմյանց այնքան ժամանակ, քանի դեռ երկուսն էլ ողջ են:

Աստվածաշունչն արձանագրում է Հիսուսի խոսքերը ամուսնության մասին փարիսեցիների հետ զրույցում:

► Ուսանողը խմբի համար կարդում է Մատթեոսի 19.3-8 հատվածը:

Հիսուսն ասաց, որ Աստված նախատեսել էր ամուսնության մշտական լինելը: Նա ասաց, որ ապահարզանը հաստատվել է այն մարդկանց համար, ովքեր չեն հետևում Աստծուն:

Կան բազմաթիվ պատճառներ, թե ինչու է Աստված նախատեսել, որ ամուսնությունը մշտական լինի, որոնցից մի քանիսի մասին խոսեցինք նախորդ բաժնում: Ամուսնությունը հարատև լինելու մեկ այլ պատճառն էլ երեխաներն են: Ամուսնության վերաբերյալ Աստծո ծրագրին հնազանդվելը ստեղծում է երեխաներին մեծացնելու լավագույն միջավայրը: Երբ ծնողները պատվում են Աստծուն՝ հնազանդվելով ամուսնության և ընտանիքի Նրա սկզբունքներին, նրանք կարողանում են աստվածավախ զավակներ դաստիարակել[20]:

Աստված մարդկային կյանքն այնպես է նախագծել, որ մի քանի տարի է պահանջվում երեխաների հասունացման համար: Այդ ընթացքում երեխաները կախված են լինում ծնողներից՝ իրենց պաշտպանության, ապահովման և ուսման առումով: Կենդանիների մոտ այդպես չէ, նրանք հասունանում են մեկ կամ երկու տարում: Մարդկանց ավելի շատ ժամանակ է պետք հասուն բնավորություն ձևավորելու համար: Աստված ընտանիքն ստեղծել է որպես երեխաների դաստիարակության միջոց: Հասարակության խնդիրներից շատերը գալիս են ընտանիքներում հավատարիմ ծնողների բացակայությունից:

Ամուսնությունը մարդկանցից պահանջում է իրենց ամբողջ կյանքը միմյանց նվիրելու խոստում տալ: Յուրաքանչյուր մշակույթ ունի ձևեր ու արարողություններ, որոնց միջոցով ցույց է տրվում

[20] Մաղաքիայի 2.15

ամուսնության լրջությունն ու կարևորությունը: Արարողությունը տղամարդու և կնոջ համար հրապարակայնորեն հայտարարելու միջոց է, որ իրենք ստանձնում են այդ նվիրվել միմյանց մինչև կյանքի վերջ:

Պետությունների մեծ մասը պահում է ամուսնությունների գրանցման արձանագրությունները: Ամուսնության մասին օրենքներն ազդում են սեփականության, երեխաների խնամակալության և ժառանգության վրա:

Ահա հարսանեկան երդումների բազում օրինակներից մեկը.

> «Ես ընտրում եմ քեզ՝ որպես իմ կողակից [ամուսին կամ կին] լինելու ու պահելու քեզ այս օրվանից ի վեր. լավ, վատ, ավելի հարուստ, ավելի աղքատ, հիվանդության և առողջության մեջ սիրելու և փայփայելու, մինչև մահը կբաժանիր մեզ՝ ըստ Աստծո սուրբ որոշման. և դրա համար ես ուխտի մեջ եմ մտնում քեզ հետ»:

Ռոմանտիկ հույզերը մշտական չեն: Ամուսնությունը չի կարող հիմնված լինել անձնական զգացմունքների վրա, որոնք փոփոխական են: Ամուսնական երդման միջոցով տղամարդն ու կինը խոստանում են միմյանց հավատարիմ լինել, քանի դեռ երկուսն էլ կենդանի են, և այդ խոստումը կախված չէ որևէ պայմանից:

Ամուսնությունը որպես քրիստոնեական համագործակցություն

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Կորնթացիների 6.14-18 հատվածը:

Այս խոսքերը մեզ ասում են, որ քրիստոնյայի նվիրումը վնասվում է, եթե նա չափազանց սերտ կապեր է ունենում անհավատների հետ: Ինչպես քրիստոնյան չի կարող երկրպագել Սատանային պաշտող մեկի հետ, նա չի կարող հետևել անհավատների ապրելակերպին ու առաջնահերթություններին: Նախազգուշացումը կարող է վերաբերել տարբեր տեսակի հարաբերություններին՝ ներառյալ գործարար ընկերակցությանը:

Ամուսնությունը մարդկային ամենամտերիմ համագործակցությունն է: Քրիստոնյան նույնիսկ չպետք է մտածի մեկի հետ ամուսնանալու մասին, ով նվիրյալ քրիստոնյա չէ (Ա Կորնթացիների 7.39): Անհավատի հետ ամուսնացած քրիստոնյան ցավեր ու բազում խոչընդոտներ կունենա երեխաներ մեծացնելու և ապրելակերպի որոշումներ կայացնելու հարցերում:

Եթե ամուսինն ու կինը երկուսն էլ քրիստոնյա հավատացյալ են, բայց տարբեր եկեղեցիներից են եկել, նրանք պետք է համոզվեն, որ հոգևոր կարևոր հարցերի շուրջ միակարծիք են: Նրանք պետք է պլանավորեն, որ նույն տեղական եկեղեցու մի մասն են կազմելու ամուսնանալուց հետո:

► Ինչո՞ւ է ամուսնությունն սկսվում ոչ միայն սիրո հայտարարությամբ, այլև՝ երդումներով:

Բարոյականության չափանիշն՝ ըստ Աստծո

► Ուսանողը խմբի համար կարդում է Եբրայեցիների 13.4 խոսքը:

Այս խոսքը մեզ ասում է, որ ամուսնությունը պետք է արժանանա պատվի ու հարգանքի: Սեռական մեղքն ամուսնության նկատմամբ անհարգալից վերաբերմունք է: Աստված կդատի սեռական անբարոյականությունը:

Սեռական մեղքերը ներառում են՝ պոռնկությունը, շնությունը, համասեռամոլությունը և պոռնոգրաֆիայի գործածումը: Անառակությունը սեռական հարաբերություն է այն մարդկանց միջև, ովքեր ամուսնացած չեն: Շնությունը սեռական գործողություն է ուրիշի հետ ամուսնացած անձի հետ: Համասեռամոլությունը կամ միասեռականությունը նույն սեռի անձանց միջև սեռական ակտիվությունն է: Պոռնոգրաֆիան ներառում է տպագրված նյութեր, նկարներ և տեսանյութեր, որոնք նախատեսված են սեռական կրքեր առաջ բերելու՝ մերկության կամ սեռական գործողության ցուցադրությամբ: Այս ամենն ամուսնական հարաբերությունների սկզբունքների խախտումներ են:

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Կորնթացիների 6.9-10 հատվածը:

Յուրաքանչյուր հասարակություն ունի մշակութային հայացքներ տղամարդկանց և կանանց փոխհարաբերությունների վերաբերյալ: Մշակութային այդ հայացքներն ավելի ցածր չափանիշներ ունեն, քան աստվածաշնչյան բարոյականության չափանիշները: Շատ մշակույթներ ունեն միայն կանոնակարգված հասարակություն պահելու համար անհրաժեշտ օրենքներ: Նրանք հանդուրժում են սեռական մեղքը, եթե այն կառավարվում է բավականին զգուշորեն՝ վատ հետևանքներից կամ խայտառակությունից խուսափելու համար: Բարոյականության աստվածաշնչյան չափանիշն այլ է:

Ցավոք սրտի, որոշ եկեղեցիներ աստվածաշնչյան բարոյականության փոխարեն հետևում են իրենց մշակույթի բարոյականությանը: Նրանք պատժում են մարդկանց, ում մեղքերն ակնհայտ ու անփույթ են դարձել, բայց նույն մեղքերը հանդուրժում են ավելի զգուշորեն վարվողներին:

Այս սուրբգրային խոսքերը մեզ ասում են, որ մարդիկ, ովքեր գործում են այդ մեղքերը, քրիստոնյա չեն և երկինք չեն գնա: Կորնթացի հավատացյալներից ոմանք նախկինում գործել էին այդ մեղքերը, բայց փրկվել էին դրանցից:

Ցանկացած վարդապետություն, որն արդարացնում է այս մեղքերից որևէ մեկը քրիստոնյա համարվող անձի համար, կեղծ է: Եթե մարդն իրեն քրիստոնյա է անվանում, սակայն սեռական մեղք է գործում, ապա ըստ Սուրբ Գրքի՝ եկեղեցու ավագներից պահանջվում է հեռացնել նրան համայնքից և քրիստոնյա չհամարել (Ա Կորնթացիների 5.11-13):

Եկեղեցու առաջնորդները պետք է վարքի լավ օրինակ ծառայեն: Երբ եկեղեցին թույլ է տալիս, որ փառաբանության առաջնորդները անհամեստ հագնվեն կամ եկեղեցում թույլատրում է պարի զգայացունց ձևեր, ուրեմն նրանք ենթադրում են, որ կրքեր արթնացնելը նորմալ է: Նրանք ենթադրում են, որ սեռական մեղքը լուրջ չէ, այլ սովորական մի երևույթ է:

Ինչ-որ հասարակության հագուստի ոճերը կարող են ակնարկել, որ կինը լավ չի հագնված, եթե նրա հագուկապը սեքսուալ առումով գրավիչ չէ, նրա մարմնի մեծ մասը մերկացված չէ: Եկեղեցու անդամները երբեմն ընկնում են այս սխալի մեջ, հատկապես հատուկ առիթների ժամանակ: Նրանք կարծում են, թե լավ չեն հագնված, քանի դեռ չեն հետևում իրենց հասարակության նորաձևությանը: Եկեղեցին պետք է սովորեցնի, որ դա սխալ է: Քրիստոնյան չպետք է ուզենա սխալ ցանկություններ առաջացնել ուրիշների մեջ: Ա Տիմոթեոսի 2.9-10-ն ասում է մեզ, որ քրիստոնյաները պետք է հագնվեն և վարվեն այնպես, որ նրանց տեսնող ամեն մեկն իմանա, որ նրանք ապրում են զգույշ, մաքուր կյանքով և չեն ցանկանում մեղք գործել կամ ուրիշներին ստիպել մեղք գործել: Հարկ է, որ քրիստոնյա «...կանայք իրենք իրենց զարդարեն խոնարհության զարդերով, ամոթխածությանբ և պարկեշտությամբ…»:

Օգնություն մեղավորին

Գաղատացիների 6.1-ն ասում է, որ եկեղեցին պարտավոր է փորձել վերականգնել մի անդամի, ով մեղք է գործել: Դա չի նշանակում, թե տվյալ անձը կմնա ծառայության իր պաշտոնում կամ մեղանչելուց հետո արագ կվերադառնա ծառայության: Վերականգնում նշանակում է՝ վերադառնալ եկեղեցու ծածկոցի, հաղորդակցության և հոգածության մեջ: Եթե անդամն իսկապես զղջում է, նա ներվում է Աստծո և եկեղեցու կողմից: Եկեղեցին պետք է հոգևոր առումով հաշվետու լինի անձի համար, որպեսզի օգնի նրան մնալ հաղթական ու աճել հոգևորապես :

Եթե չամուսնացած աղջիկը հղիանում է, եկեղեցին չպետք է նրան զրկի եկեղեցու ընկերակցությունից և հոգատարությունից՝ առանց հոգևոր վերականգնման փորձեր ձեռնարկելու: Եթե նա զղջում է և իր հոգևոր կյանքի համար սկսում է հաշվետու լինել, նա ներվում է: Նրա մեղքն ավելի վատը չէ, քան այն տղամարդու մեղքը, ով մեղսակից է եղել: Երբեմն աղջկա նկատմամբ դաժան են վերաբերվում միայն այն պատճառով, որ նրա մեղքի արդյունքը տեսանելի է լինում:

Եկեղեցին հավատի ընտանիք է: Եկեղեցու համար բավարար չէ մեղքերը դատապարտելը: Եկեղեցին պետք է հոգ տանի իր անդամների մասին: Օրինակ, եթե մի կին իր ֆինանսները հայայթում է մեղավոր գործունեությամբ, եկեղեցին ոչ միայն պետք է ասի նրան, որ գործունեությունը սխալ է, այլև պատրաստ լինի՝ օգնելու նրա կարիքները հոգալուն, եթե վերջինս ապաշխարի:

Իրական դեպք…

Մի քանի աղջիկ հաճախում էին մի մեծ եկեղեցի և երգում երգչախմբում: Նրանք աղքատ ընտանիքներից էին: Աղջիկներն անբարոյական կապերի մեջ էին մտել տղամարդկանց հետ, որպեսզի գումար վաստակեին իրենց ընտանիքներին օգնելու համար: Ի՞նչ պետք է անի եկեղեցին այս իրավիճակում:

► Ի՞նչ պետք է անի ձեր եկեղեցին, որպեսզի օգնի մարդկանց՝ թողնելու մեղավոր ապրելակերպը:

Պոռնոգրաֆիա

Պոռնոգրաֆիան տպագրված նյութեր, նկարներ և տեսանյութեր են, որոնք նախատեսված են՝ առաջ բերելու սեռական բուռն ռեակցիաներ՝ մերկության կամ սեռական գործողության ցուցադրությամբ:

Համացանցը ամբողջ աշխարհում հեշտությամբ հասանելի է դարձնում պոռնոգրաֆիան: Տեխնոլոգիաների համատարած գործածությունը պոռնոգրաֆիան գայթակղություն է դարձնում այն մարդկանց համար, ում չեն սովորեցրել քրիստոնեական սկզբունքները կիրառել այդ հարցում: Բազմաթիվ հասուն հովիվներ և առաջնորդներ երբեք չեն հանդիպել այդ գայթակղություններին, քանի որ համացանցը հասանելի չէր իրենց, երբ երիտասարդ էին: Նրանք հազիվ թե հասկանան, թե ինչի է առերեսվում երիտասարդ սերունդը:

Պոռնոգրաֆիան սխալ է, քանի որ այն նախատեսում է հաճույք պատճառել մարդուն՝ պոռնկության, շնության և սեռական այլասերվածության բազմաթիվ տեսակների բացահայտ ցուցադրությամբ: Այն գրավիչ է մեղավոր ցանկություններ ունեցողի համար: Պոռնոգրաֆիան հրավիրում և հնարավորություն է տալիս մարդուն հաճույք ստանալ անբարոյական արարքներից, որոնք դատապարտված են Աստծո կողմից:

Պոռնոգրաֆիան առաջացնում է կախվածություն: Պոռնոգրաֆիա օգտագործող մարդը ուժգին ձևով զգում է դրա կարիքը: Նա դժվար է պատկերացնում առանց դրա ապրելը: Նրան թվում է, թե կյանքը դատարկ ու անհետաքրքիր կլինի առանց պոռնոգրաֆիայից ստացած երևակայությունների: Ինչպես ցանկացած այլ կախվածություն, ցանկությունը դառնում է կլանող, և գործածողը սկսում է զոհաբերել իր կյանքի լավագույն բաները:

Պոռնոգրաֆիան աստիճանաբար ավելի է կլանում: Գործածողին պետք են նյութեր, որոնք գնալով ավելի անպատկառ ու այլասերված են լինում: Նա սկսում է հիանալ երևակայություններով, որոնք նախկինում զզվանք կամ սարսափ կպատճառեին իրեն:

Պոռնոգրաֆիան կործանարար է: Այն շարունակաբար դիտելով՝ մարդ կորցնում է նորմալ հարաբերությունները վայելելու ընդունակությունը: Նրա ցանկություններն այնքան անբնական են դառնում, որ երբեք չեն կարող բավարարվել: Նա անտարբեր է դառնում ուրիշների նկատմամբ բռնության հանդեպ:

Հովիվներն ու ծնողները պետք է երիտասարդներին զգուշացնեն կախվածության վտանգի մասին: Ծնողները պետք է թույլ չտան, որ իրենց երեխաներն անսահմանափակ մուտք ունենան դեպի համացանց, երբ նրանք գայթակղությանը դիմակայելու հասունություն չունեն: Յուրաքանչյուր ոք, ով պայքարում է պոռնոգրաֆիա գործածելու գայթակղության դեմ, պետք է իրեն հաշվետու պահի իր խնամակալին և պարբերաբար զեկուցի այդ անձին իր վիճակի մասին:

► Ի՞նչ գործնական քայլեր պետք է խորհուրդ տալ մարդկանց՝ օգնելու նրանց պաշտպանվել պոռնոգրաֆիայի կախվածությունից: Ինչպե՞ս կարող է եկեղեցին օգնել:

Միասեռականություն

Որոշ ժամանակակից հասարակություններ, որոնք մերժում են Աստվածաշնչի հեղինակությունը, մերժում են նաև ամուսնության աստվածաշնչյան բնութագիրը: Նրանք ասում են, որ մարդիկ ազատ են՝ ընտրելու նույն սեռի հետ հարաբերություններ:

Աստվածաշունչը դատապարտում է միասեռականությունը:

► Խումբը միասին դիտարկում է Հռոմեացիների 1.26–27, Ա Տիմոթեոսի 1.10 և Ա Կորնթացիների 6.9 խոսքերը:

Աստվածաշնչի այս երեք հատվածները միասեռական վարքագիծը ներառում են մեղքերի վատագույն տեսակների ցանկում: Այդ մեղքերին հետևող մարդիկ մերժում են Աստծո իշխանությունը:

Ոմանք պնդում են, թե իրենք բնականորեն միասեռական հակումներ ունեն: Նրանք ասում են, որ իրենց չպետք է մեղադրել տվյալ վարքագծի համար, քանի որ իրենք չեն ընտրել այդ ցանկությունները:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ յուրաքանչյուր մարդ հետևել է մեղք գործելու բնական հակմանը (Եսայիայի 53.6): Աստված կոչ է անում մեզ ապաշխարել մեր սեփական կամավոր մեղքերից (Եսայիայի 55.7): Քանի որ մենք ծնվել ենք մեղսալի բնությամբ, չենք կարող վստահել մեր բնական ցանկություններին, որ առաջնորդեն մեզ: Մարդը կարող է զգալ պոռնկության, բռնություն գործադրելու կամ գողանալու ուժգին բնական հակում, բայց բնական մղումը չի նշանակում, թե ցանկությունը ճիշտ է:

Նախքան ամուսնությունը բարոյական մաքրությամբ Աստծուն պատվելու սկզբունքներ

Երիտասարդները նախքան ամուսնանալը բախվում են ուժեղ գայթակղությունների: Նրանց համար կարևոր է հիշելը, որ այնպիսի կյանքի ընկերոջ կարիք ունեն, ով կարող է հավատարիմ լինել[21]: Նրանք չպետք է մտերման այն մարդու հետ, ով ցանկանում է կարճատև հաճույք ստանալ՝ առանց ամուսնության: Նրանք չպետք է մտածեն հարաբերությունների մասին մեկի հետ, ով նվիրյալ քրիստոնյա չէ (Ա Կորնթացիների 7.39): Նրանք պետք է մտածեն միայն այն մեկի մասին, ով կլինի հավատարիմ կողակից և լավ ծնող:

Երիտասարդը, ով ցանկանում է լավ ամուսնական կյանք ունենալ, պետք է լինի հավատարիմ, նվիրված քրիստոնյա, որպեսզի գրավի ճիշտ կողակցի[22]: Մարդը լավ բնավորություն է ցուցաբերում համապատասխան վարքով և համեստ հագուստով (Ա Տիմոթեոսի 2.9-10): Հակառակ սեռի մարդկանց հետ անզգույշ վարվող մարդիկ ցույց են տալիս, որ պատրաստ են հարաբերություններ հաստատել

[21] Տե՛ս Առակների 31.11-12, Ա Տիմոթեոսի 3.12, Մաղաքիայի 2.14-16, Առակների 2.16-17
[22] Առակների 3.4-8

սխալ ցանկությունների հիմքի վրա[23]: Մարդը, ով հագնվում է այնպես, որ սխալ ցանկություններ է առաջացնում, գրավում է սխալ տեսակի մարդկանց[24]:

Աստված երիտասարդներին տվել է ծնողներ, հովիվներ և այլ քրիստոնյա առաջնորդներ՝ նրանց ուղղորդելու վարքագծի, հագուստի ու հարաբերությունների ընտրության հարցում: Երբ երիտասարդները հնազանդվում են այդ առաջնորդներին՝ հնազանդվելով Աստծուն, ստանում են Աստծո մեծագույն օրհնությունները և պաշտպանված են լինում տարբեր վնասներից ու գայթակղություններից:

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Պետրոսի 5.5 և Եբրայեցիների 13.17 հատվածները:

Երեխաների ու երիտասարդների պարտականությունն է՝ ենթարկվել իրենց ծնողների և հոգևոր հեղինակությունների իմաստությանն ու առաջնորդությանը: Այդ առաջնորդները պարտավորություն են կրում՝ օգնելու երիտասարդներին, որպեսզի ապրեն գայթակղությունները հաղթանակած կյանք:

► Միասին կարդալ Հռոմեացիների 13.14 և Ա Կորնթացիների 10.13 հատվածները:

Աստված թույլ չի տալիս, որ քրիստոնյաները լինեն գայթակղության այնպիսի իրավիճակներում, որին չեն կարողանա դիմակայել կամ շրջանցել, **եթե** կամենան: Երիտասարդները պատասխանատու են գայթակղությունից փախչելու համար (Բ Տիմոթեոսի 2.22): Այնուամենայնիվ, ծնողները պետք է հնարավորինս կանխեն իրենց երիտասարդների՝ անհարկի գայթակղությունների ենթարկվելը: Առնվազն երեք եղանակով են ծնողներն անում դա.

(1) Հատուկ ցուցումներ տալով այն մասին, թե երեխաները ինչ պետք է անեն և ինչ չպետք է անեն, ում հետ պետք է լինեն և ուր գնան (Եփեսացիների 6.1-4): Ծնողները չպետք է թույլ տան իրենց երեխաները հայտնվեն այնպիսի իրավիճակներում, որում նրանց հասունությունը բավարար չի լինի՝ պաշտպանելու գայթակղությունից: Օրինակ, եթե երիտասարդ տղան ու աղջիկը մենակ են լինում մի առանձին վայրում, նրանք, ամենայն հավանականությամբ, կգայթակղվեն ու սխալ վարքագիծ կդրսևորեն:

(2) Գայթակղության ոլորտներում իրենց երիտասարդներին հաշվետու պահելով:

(3) Երիտասարդներին աստվածաշնչյան խորհուրդներ տալով:

Ծնողները պետք է սովորեցնեն իրենց երիտասարդ զավակներին մտածել՝ հաշվի առնելով աստվածաշնչյան սկզբունքները (Առակների 4.1–9, 7.1, 4-5): Նրանք պետք է զրուցեն այն վտանգների մասին, որ տեսնում ու նկատում են: Նրանք պետք է օգնեն իրենց երիտասարդներին խորհել տարբեր ընտրությունների մասին, որոնք պետք է կատարեն: Նրանք կարող են օգնել իրենց զավակներին, որ

[23] Ա Թեսաղոնիկեցիների 4.1-7
[24] Առակների 7

ժամանակից շուտ մտածեն, թե ինչպես խուսափել գայթակղություններից և ինչ անել, երբ գայթակղություններ ունենան:

Եկեղեցին պետք է տարբերվի իր երկրի մշակույթից, երբ պաշտպանում է աստվածաշնչյան բարոյականությունը: Շատ մշակույթներ լուրջ չեն վերաբերվում սեռական մեղքին: Նրանք ակնկալում են, որ չամուսնացած երիտասարդները սեռական հարաբերություններ ունենան մինչև ամուսնությունը: Եկեղեցին չպետք է փոխզիջման գնա այդ մեղքի հետ: Եկեղեցին չպետք է ենթադրի, որ երիտասարդների շրջանում սեռական մեղքը նորմալ է: Աստված ասում է, որ նրանք, ովքեր անբարոյական են, քրիստոնյա չեն (Եփեսացիների 5.3-7, Եբրայեցիների 13.4):

Մինչև ամուսնությունը շփումների շրջանը սեռական կապի մեջ մտնելու ժամանակը չէ: Դրա փոխարեն տղամարդն ու կինն այդ ժամանակն օգտագործում են՝ համոզվելու, որ ունեն նույն հոգևոր և աստվածաշնչյան առաջնահերթությունները: Դա այն շրջանն է, երբ նրանք ավելի լավ են հասկանում միմյանց, ինչն էլ նրանց հնարավորություն է տալիս բավականաչափ վստահել միմյանց՝ փոխադարձ մշտական պարտավորություն ստանձնելու համար: Եթե նրանք չեն կարողանում հասնել միմյանց բնավորության այդ վստահությանը, պետք է դադարեցնեն շփումներն ու չամուսնանան:

Որոշ հասարակություններում մարդիկ հետաձգում են ամուսնությունը, քանի որ նրանց մշակույթն ակնկալում է, որ ամուսնությունը բարդ, թանկ արարողություն լինի: Հաճախ զույգերը տարիներ շարունակ ապրում են միասին և երեխաներ ունենում՝ միաժամանակ ձգձգելով ամուսնությունը: Որոշ զույգերի հարսանիքի ծախսերը երկարաժամկետ ֆինանսական վնաս են հասցնում, քանի որ իրենց ունեցածը ծախսում են հարսանեկան միջոցառման համար կամ պարտքով են գումար վերցնում: Եկեղեցին պետք է լինի հավատի համայնք, որն առաջարկում է ամուսնության այլ օրինակ: Քրիստոնեական ամուսնությունն այն տղամարդու և կնոջ համար է, ովքեր նվիրված են միմյանց ու Աստծուն, և այն չպետք է պահանջի մեծ ծախսեր, որոնք հետաձգեն հարսանիքը կամ վնասեն զույգի ապագան:

► Որո՞նք են այն ձևերը, որոնցով քրիստոնեական ամուսնությունը պետք է տարբերվի հասարակության ամուսնական սովորույթներից:

Մարդիկ, ովքեր երբեք չեն ամուսնանում

Ամուսնությունը Աստծո ծրագիրն է մարդկանց մեծամասնության համար: Այնուամենայնիվ, Պողոս առաքյալը նկարագրում է որոշ պատճառներ, որ մարդիկ կարող են չամուսնանալ: Ա Կորնթացիների 7.26-ում նա նշում է «վերահաս նեղությունը»՝ կյանքի դժվար պայմանները, որոնք կարող էին հալածանք ենթադրել: Նա ասում է, որ ավելի լավ է նման պայմաններում չամուսնանալ:

Նույն հատվածն (Ա Կորնթացիների 7.32-35) ասում է, որ չամուսնացած անձը հատուկ առավելություն ունի: Չամուսնացած անձը կարող է կենտրոնանալ Աստծուն ծառայելու վրա՝ առանց կողակցի մասին հոգալու: Երբ անհատը կանչվում է Աստծո կողմից՝ կենտրոնանալու ծառայության վրա՝ առանց ամուսնանալու, նա կարող է նշանակալիորեն արդյունավետ և օրհնված լինել իր ծառայության մեջ:

Կարող են լինել նաև այլ պատճառներ, որ Աստված ընտրի տվյալ անձի չամուսնանալը (Մատթեոսի 19.10-11)։ Պետք չէ ենթադրել, թե դա անբնական վիճակ է։ Պետք չէ ենթադրել, թե յուրաքանչյուր չամուսնացած անձ պետք է ինչ-որ մեկի հետ համադրվի։ Մենք չպետք է ենթադրենք, թե երջանկությունն ու բավարարված լինելը կախված են ամուսնությունից[25]։

Չամուսնացած անձը պետք է զգույշ լինի, որպեսզի խուսափի սխալ կապեր հաստատելուց՝ հուզական և ֆիզիկական կարիքներից ելնելով։ Աստված ուրախություն ու բավարարվածություն է տալիս նրան, ով լիովին նվիրված է Իրեն։

Աստվածաշնչյան ցուցումներ ամուսնության համար

► Միասին կարդալ Ա Պետրոսի 3.1-7 և Եփեսացիների 5.22-33 հատվածները։ Խումբը պետք է դիտարկման համար այս հատվածները բաց պահի քննարկման ընթացքում։

Տղամարդուն ասվում է, որ սիրի իր կնոջը, ինչպես Քրիստոսը սիրեց եկեղեցուն: Հիսուսն իրեն որպես զոհ մատուցեց հանուն եկեղեցու։ Ամուսինը պետք է զոհաբերի իր սեփական շահերը, հարմարավետությունն ու ցանկությունները, որպեսզի բավարարի կնոջ կարիքները։ Խոսքը տղամարդկանց ասում է. «Իմաստությա՛մբ ապրեք ձեր կանանց հետ», ինչը նշանակում է, որ նա պետք է ձեռքից եկածն անի կնոջը հասկանալու համար։ Նա պետք է ուսումնասիրի նրան, որպեսզի հասկանա կնոջ կարիքները։

Այս հատվածում կինը կոչվում է «տկար անոթ»։ Կինն իր ամուսնուց ակնկալում է մտածված ուշադրություն։ Ամուսինը պետք է պաշտպանի նրան ոչ միայն ֆիզիկական վնասներից, այլև անհանգստությունից ու հուզական սթրեսից։

Կնոջն ասվում է, որ հնազանդվի ամուսնուն և հարգի նրան: Ենթադրվում է, որ կինը պետք է ընդունի իր ամուսնու առաջնորդությունը, նույնիսկ եթե վերջինս հավատացյալ չէ։ Եթե նա այդպես վարվի, նրա չփրկված ամուսինն ավելի հավանական է, որ հավատացյալ կդառնա։

Կարևոր է հիշել, թե ինչպես են տրված այս հատվածների պատվերները։ Ամուսնուն չի ասվում, որ իր իշխանությունը պարտադրի կնոջը։ Կնոջն ասվում է, որ հնազանդվի ամուսնուն, բայց ամուսնուն չի ասվում, որ կնոջն իրեն ենթարկի։ Նրան ասվում է, որ պետք է սիրի իր կնոջը և անհրաժեշտության դեպքում զոհաբերության գնա ու հոգա կնոջ համար։ Նմանապես կնոջը չի ասվում, որ ամուսնուց հոգածություն պահանջի. նրան ասվում է, որ հարգի ամուսնուն։

Ամուսնու առաջնահերթությունը պետք է լինի ոչ թե իր իշխանությունը պահպանելը, այլ սիրալիր հոգատարություն ցուցաբերելը։ Կնոջ առաջնահերթությունը պետք է լինի ոչ թե իր մասին հոգատարություն պահանջելը, այլ ամուսնուն հարգելը։

[25] Սաղմոս 107.9

Առաքյալը նախազգուշացնում է ամուսնուն, որ նրա աղոթքները կխոչընդոտվեն, եթե նա պատշաճորեն չհոգա իր կնոջ համար: Դա մեզ ասում է, որ **ամուսնական կյանքում մեր վարքագիծը ազդում է Աստծո հետ մեր հարաբերությունների վրա:**

Հովհաննես առաքյալն ասում է, որ եթե մարդ չի սիրում իր եղբորը, չի սիրում նաև Աստծուն (Ա Հովհաննեսի 4.20): Նմանապես, Պողոսի և Պետրոսի խոսքերից կարող ենք տեսնել, որ տղամարդը, ով չի հոգում իր կնոջ համար, ինչպես պետք է, չի սիրում Աստծուն այնպես, ինչպես պետք է: Այն կինը, ով չի հարգում իր ամուսնուն, չի հարգում Աստծուն այնպես, ինչպես պետք է:

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Կորնթացիների 7.1-5 հատվածը:

Այս խոսքերը մեզ ասում են, որ ամուսնության նպատակներից մեկը սեռական ցանկությունները բավարարելն է: Ամուսինն ու կինը հանձնվել են միմյանց և հրաժարվել իրենց մարմնի նկատմամբ սեփականության իրավունքից: Դա նշանակում է, որ ամուսնացած անձը չպետք է ակնկալի, որ սեռական հարաբերություն կունենա միայն այն ժամանակ, երբ կամենա, այլ պետք է նաև արձագանքի կողակցի ցանկություններին: Այս խոսքերը մեզ չեն ասում, թե անձը կարող է բավարարում պահանջել կողակցի կամքին հակառակ: Փոխարենը, այս խոսքերը ասում են, որ յուրաքանչյուրը պետք է արձագանքի մյուսի կարիքներին:

Այս հատվածը ասում է մեզ, որ ամուսնացած մարդիկ չպետք է միմյանց զրկեն այդ արտոնությունից: Ծոմապահության մեջ սեռականորեն ձեռնպահ մնալու կարճ ժամանակահատվածն ընդունելի է, սակայն երկարատև բաժանումը գայթակղություն կառաջացնի՝ չբավարարված ցանկությունների պատճառով: Երբեմն զույգերը նախընտրում են բաժանվել մի քանի ամսով կամ ավելի երկար, քանի որ մեկը գնում է աշխատանքի կամ սովորելու հեռավոր մի երկրում: Նման որոշում կայացնելուց առաջ նրանք պետք է մտածեն՝ արդյոք նման ծրագիրը համապատասխանում է Աստծո ծրագրին, թե՝ ոչ: Նրանք կարող են խնդիրներ ունենալ երկարատև բաժանման պատճառով:

Ամուսնության նպատակներից մեկը ընտանիքների ստեղծումն է, որոնք ապահովում են իրենց անդամների կարիքները:

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Տիմոթեոսի 5.8 խոսքը:

Այս խոսքը մի հատվածի կոնտեքստում է, որը նկարագրում է եկեղեցու անդամների՝ միմյանց համար հոգալու պատասխանատվությունը: Մարդն առաջին հերթին պատասխանատու է իր ընտանիքի համար: Ծնողը պետք է ապահովի իր երեխայի կարիքները, ինչպիսիք են՝ կացարանը, սնունդը, հագուստը և կրթությունը: Ծնողը պետք է անի այն ամենն, ինչ կարող է իր երեխաների ապահովության համար՝ չթողնելով այդ պատասխանատվությունն ուրիշների վրա:

Խմբային քննարկում

Այս դասի թեմաները շատ քննարկումներ կառաջացնեն:

Ուսանողները պետք է փորձեն կիրառել այս դասի սուրբգրային սկզբունքներն իրենց իրավիճակներում:

►Ո՞րն է ամուսնության մասին այն ճշմարտությունը, որն, ասես, մոռանում են շատերը:

►Ինչպե՞ս կարող է եկեղեցին օգնել երիտասարդներին, ովքեր պայքարում են աշխարհի գայթակղությունների դեմ:

►Ինչպե՞ս կարող են եկեղեցու անդամները միասին աշխատել (կիրակնօրյա դպրոց ունենալուց բացի), որպեսզի օգնեն երեխաներին հետևել Քրիստոսին:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Շնորհակալություն ամուսնության Քո հիանալի նախագծի համար: Օգնի՛ր ինձ հավատարիմ մնալ Քո կամքին իմ կյանքի յուրաքանչյուր փուլում: Օգնի՛ր ինձ քրիստոնեական հավատարմության լավ օրինակ լինել: Օգնի՛ր ինձ խրախուսել ուրիշներին՝ հետևելու Քո կամքին:

Օգնի՛ր ինձ համագործակցել եկեղեցում, որպեսզի օգնեմ ընտանիքներին, երիտասարդներին ու երեխաներին՝ ուժեղ լինելու հավատի և հնազանդության մեջ:

Շնորհակալ ենք այն արտոնության համար, որ տալիս ես մեզ՝ ունենալու հարաբերություններ, որոնք օրհնում ես:

Ամեն:

Դաս 7. Առաջադրանքներ

(1) Եթե ամուսնացած չեք, գրեք երկու պարբերություն ձեր նախաամուսնական հարաբերությունների և ձեր ապագա ամուսնության մեջ Աստծո սկզբունքներին հնազանդվելու պարտականության մասին: Եթե ամուսնացած եք, գրեք երկու պարբերություն ձեր ամուսնության մեջ Աստծո սկզբունքներին հնազանդվելու պարտավորության մասին:

(2) Ընտրե՛ք մեկ կամ մի քանի թեմա այս դասից և մեկ էջ ծավալով գրե՛ք այն մասին, թե ինչպես է ձեր հասարակության մեջ անձը կիրառում սուրբգրային սկզբունքները:

Օրինակներ.

- Նկարագրե՛ք ձեր հասարակության մեջ քրիստոնեական հարաբերությունները տղամարդու և կնոջ միջև, ովքեր պլանավորում են ամուսնանալ:
- Նկարագրե՛ք ձեր հասարակության մեջ տղամարդու կամ կնոջ վարքագիծը, ով ուզում է հավատարիմ լինել ամուսնական կյանքում:

Դաս 8
Քրիստոնեական էկոլոգիա

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը կարող է.
(1) Հասկանալ, թե որն է Աստվծո ստեղծագործության նպատակն ու մարդու առանձնահատուկ դերն արարչագործության մեջ:
(2) Հասկանալ, որ Աստված մարդուն կարգել է որպես տնտեսավար ողջ արարչության վրա:
(3) Ճանաչել մի քանի եղանակներ, որոնցով կարող է արդարությամբ ղեկավարել Աստծո ստեղծագործությունը:

Գյուղտնտեսագետ Ջորջ Վաշինգտոն Քարվեր

Ջորջ Վաշինգտոն Քարվերը ծնվել էր ստրկության մեջ՝ Ամերիկայում՝ հավանաբար 1860 թ.: Ստրկության վերացումից հետո նա ցանկանում էր կրթվել: Այդ ժամանակ սևամորթ երեխաների համար կրթություն ստանալը հեշտ ու մատչելի չէր, բայց մի բարի կին նրան մի օր ասում է. «Դու պետք է սովորես այն, ինչ կարող ես, իսկ հետո՝ քո գիտելիքները վերադարձնես մարդկանց»: Ջորջն աղոթում է այսպես. «Տե՛ր, ցույց տուր ինձ տիեզերքի գաղտնիքները», և ըստ նրա՝ Աստված պատասխանում է՝ ասելով. «Դու չափազանց փոքր ես տիեզերքի գաղտնիքները հասկանալու համար»: Այդ ժամանակ Ջորջն աղոթեց. «Ուրեմն, Տե՛ր, ցո՛ւյց տուր ինձ գետնանուշի գաղտնիքները», որից հետո հասկանում է, որ պետք է ուսումնասիրի գետնանուշն ամենայն մանրամասնությամբ: Գետնանուշը կարևոր մշակաբույս էր, քանի որ այն հիմնական բերքն էր, որն ստանում էին ծայրահեղ աղքատ գյուղացիները: Ջորջը գիտեր, որ գետնանուշից ավելի շատ ուտելիքներ հայտնագործելը կբարձրացնի մշակաբույսի արժեքը: Ջորջը հայտնաբերել է 300 տեսակի հնարավոր արտադրություն գետնանուշից, իսկ քաղցր կարտոֆիլի օգտագործման՝ 100 տեսակ: Նա 47 տարի գյուղատնտեսություն է դասավանդել Թասքիգիի ինստիտուտում և գտել է ուղիներ՝ ֆերմերներին նոր մեթոդներ սովորեցնելու՝ նրանց օգնելով բարելավել իրենց հողն ու առատ բերք ստանալ: Ջորջ Վաշինգտոն Քարվերը մեծ օրհնություն էր՝ շնորհիվ Աստծո հանդեպ իր հավատի ու այն վստահության, որ Աստծո ստեղծագործությունը ճիշտ կառավարելու դեպքում կարելի է մեծ օգուտներ տալ մարդկությանը:

Սահմանում. Էկոլոգիան ուսումնասիրում է կենդանի էակների փոխհարաբերությունը միմյանց և շրջակա միջավայրի հետ:

Մարդու իշխանությունը բնության վրա

► Ուսանողը խմբի համար կարդում է Ծննդոց 1.1 և 1.26–28 հատվածները:

Երկրի համար մարդու պատասխանատվությունը հիմնված է այն փաստի վրա, որ Աստված երկիրն ստեղծեց Իր փառքի համար (Սաղմոս 148), և մարդկանց դրեց որպես կառավարիչներ: Լինելով Աստծո

պատկերով արարված մարդիկ՝ մենք ստեղծված ենք՝ կառավարելու այնպես, ինչպես Աստված Ինքը կկառավարեր, այսինքն՝ «իշխենք» Աստծո էությանը հարիր ձևով: Սաղմոսերգուն ասում է. «Քանի որ նրան (մարդուն) փոքր ինչ ցած արիր, քան հրեշտակներին, և փառքով ու պատվով պսակեցիր նրան: Քո ձեռքերի գործերի վրա իշխանություն տվեցիր նրան, ամեն ինչ դրեցիր նրա ոտքերի տակ» (Սաղմոս 8.5-6): Մարդիկ առանձնահատուկ դեր ունեն աշխարհում: Նրանք սոսկ մեկ այլ կենդանու տեսակ չեն: Աստված մարդկանց շնորհել է երկրի և նրանում բնակվող արարածների վրա իշխելու դերը:

Աստված Ադամին ու Եվային ասաց, որ բազմանան ու լցնեն երկիրը. նրանց ասաց, որ տիրեն երկրի վրա: Երկրի վրա տիրելու գործընթացը շարունակվելու էր նրանց հետնորդների կողմից: Երկիրի վրա տիրելը ենթադրում է՝ հետախուզումը, նոր տարածքների բնակեցումը սովորելը, օգտակար հանածոների հայտնաբերումն ու շահագործումը, կենդանիների ընտելացումը և տեխնոլոգիաների զարգացումը:

Ամեն ինչ լավ էր, երբ Աստված ստեղծեց այն: Եդեմական պարտեզը խնամելու մարդու գործը (Ծննդոց 2.15) բնության հետ ներդաշնակ ու հաճելի աշխատանք էր: Մեղքի ի հայտ գալուց հետո անեծքն ազդեց բնության վրա, ու մարդու գործը բարդացավ (Ծննդոց 3.17-19): Երկիրը չունի իր սկզբնական կատարելությունը[26], բայց դեռևս ցույց է տալիս Աստծո փառքն իր զարմանալի նախագծի մեջ:

Ջրհեղեղից հետո Աստված ասաց, որ մարդիկ կարող են կենդանիներ ուտել (Ծննդոց 9.3): Աստծո կողմից Մովսեսին տրված օրենքը մարդկանց արգելում էր ուտել որոշ կենդանիներ, բայց Նոր Կտակարանը մեզ ասում է, որ այժմ թույլատրվում է ուտել ցանկացած արարածի, որը սննդարար է (Մարկոսի 7.19, Ա Տիմոթեոսի 4.4): Կենդանիները չունեն այնպիսի իրավունքներ, որոնք նրանց կդնեն մարդկանց հետ համեմատելի կամ հավասար մակարդակի վրա:

Ռեսուրսների կառավարման մարդու պատասխանատվությունը

Թեև մարդն իշխանություն ունի երկրագնդի մյուս արարածների վրա, բայց նա չէ գերագույն իշխանությունը: Մարդը հաշվետու է Աստծուն: Երկիրն ու նրա լիությունը դեռևս Աստծուն են պատկանում:

► Ուսանողները խմբի համար կարդում են 24.1 և Սաղմոս 50.10 - 11 հատվածները:

Երկիրն Աստծուն է պատկանում: Աստված նախագծեց երկիրը, որպեսզի այն հայտնի Իր փառքը (Սաղմոս 19.1), հոգա մարդկանց կարիքները (Ծննդոց 1.29) և հաճելի վայր լինի նրանց ապրելու համար: Նա նախատեսում է, որ մենք վայելենք երկիրն ու նրա տված բարիքները: Մենք չպետք է երկրպագենք երկիրը, քանի որ դա Աստծո ձեռքի գործն է (Հռոմեացիների 1.25): Մենք նաև չպետք է շահագործենք երկիրը կործանարար ձևերով:

Երբեմն մարդիկ հողից օգուտներ են ստանում՝ միաժամանակ ոչնչացնելով այն: Մարդիկ կարող են հանքանյութերն արդյունահանել, բայց գետինն անպետք ու տգեղ վիճակում թողնել: Մարդիկ երբեմն

[26] Հռոմեացիների 8.18-23

կտրում են տարածքի բոլոր ծառերը՝ դրանով իսկ նպաստելով անձրևներից ամբողջ բերրի հողերի քշվել-տարվելուն: Հաճախ մարդիկ սննդի համար անքան շատ են որսացել վայրի կենդանիներին, որ դրանք անհետացել են տարածքից: Մարդիկ աղբն այնպես են լցնում գետերը, որ ջուրն այլևս անվտանգ չի լինում շահագործման համար:

Աստված ստեղծեց երկիրը, որպեսզի այն արդյունավետ ու բերքատու լինի: Սխալ է, երբ մարդիկ հողն օգտագործում են չարաբաստիկ մեթոդներով Աստծո դեմ անարգանք է հողի՝ կործանարար ու անփույթ շահագործումը:

Աստված ստեղծեց երկիրը, որպեսզի այն հազարավոր տարիներ ծառայի մարդկանց անթիվ-անհամար սերունդներին: Մենք պետք է պատասխանատվություն ստանձնենք՝ կառավարելու և բարելավելու շրջակա միջավայրը հաջորդ սերնդի համար: Մարդը, ով կործանում է հողն արագ շահույթի համար, չի սիրում իր մերձավորին ու հաջորդ սերնդին:

Կցանկանայի՞ք մտածել, որ քսան տարի անց ինչ-որ մեկը կթալանի ձեր երեխաներին: Իհարկե՝ ոչ: Այնուամենայնիվ, մարդիկ թալանում են իրենց զավակներին՝ ոչնչացնելով այն միջավայրը, որտեղ ապրելու են իրենց սերունդները: Եթե դուք երեխաներ չունեք, միևնույնն է, դուք էլ պիտի հոգ տանեք ուրիշների երեխաների համար, ովքեր մի օր ժառանգելու են երկիրը:

Շատերը զգույշ են իրենց սեփական հողի նկատմամբ, բայց բոլորովին չեն հոգում հանրային հողի համար: Քրիստոնյաները պետք է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարության օրինակ ծառայեն՝ գիտենալով, որ այն պատկանում է Աստծուն, և որ մենք հոգում ենք մերձավորի ու հաջորդ սերնդի համար:

Երբեմն մարդիկ մտածում են. «Այս հողն իմը չէ, ուստի կարող եմ իմ աղբը թողնել այստեղ» կամ՝ «Ես կարող եմ կտրել բոլոր ծառերը, նույնիսկ՝ մատղաշները»:

► Ուսանողը խմբի համար կարդում է Երկրորդ Օրինաց 22.6 խոսքը:

Աշխարհի այն մասում, որտեղ գրվել է Երկրորդ Օրինաց գիրքը, կային թռչուններ, որոնց կարելի էր հեշտությամբ որսալ բնի վրա նստած վիճակում: Եթե մարդիկ մշտապես վերցնեին մորն ու ձվերը կամ ճուտիկներին, այդ թռչունները կարճ ժամանակից կանհետանային: Աստված նրանց ասաց, որ բաց թողնեն մորը, որպեսզի տեսակը չոչնչանա: Այսօր մեր օրենքները նույնը չեն տարբեր վայրերում, բայց խոսքն ասում է մեզ, որ զգոն լինենք հանրային հողային ռեսուրսները պահպանելու համար:

Բնության գեղեցկության գնահատում

Երբ Աստված ստեղծեց բույսերը, Նա չստեղծեց միայն բանջարեղեն ու մրգեր, Նա ստեղծեց ծաղիկներ ու շատ այլ գեղեցիկ բաներ: Դա մեզ ասում է, որ Աստծուն միայն հողի գործնական շահագործումը չի հետաքրքրում. Նա հոգում է նաև գեղեցկության մասին (Ղուկասի 12.27): Աստված ստեղծել է բնության գեղեցկությունը, որպեսզի գեղեցիկ միջավայր ապահովի մարդկանց բնակության համար:

Լեռները, անապատները, գետերը, հարթավայրերն ու անտառները բնական գեղեցկություն ունեն: Երբեմն մարդիկ, ովքեր ծնվել են որոշակի վայրում, իրականում չեն նկատում այդտեղ եղած գեղեցկությունը, քանի որ դա սովորական է դառնում իրենց աչքին:

► Պատկերացրե՛ք, որ նկարիչ եք: Երևակայե՛ք, որ երկար ժամանակ եք ծախսում մի գեղեցիկ կտավ ստեղծելու վրա, այնուհետև այն նվիրում եք ձեր ընկերոջը: Հետո մի օր, երբ այցելում եք նրան, տեսնում եք, որ նկարն ընկած է հատակին ու վնասված՝ մարդկանց ոտնահետքերից: Ի՞նչ կզգաք:

Կան բազմաթիվ համայնքներ, որտեղ մարդիկ իրենց ամբողջ աղբը նետում են գետնին: Նրանք մաքրում են իրենց բակերը, բայց աղբը թողնում են ամենուրեք: Նրանց թաղամասի փողոցները լի են աղբով:

► Ի՞նչ է պետք այդ մարդիկ գիտակցեն:

Մենք պետք է հոգ տանենք այն տարածքների մասին, որոնք կիսում ենք ուրիշների հետ՝ հանուն նրանց և հանուն մեզ:

► Ի՞նչ կարող է անել եկեղեցին իր թաղամասը վերափոխելու համար:

Կենդանիներից օգտվելը

Կենդանիները տարբերվում են մարդկանցից: Նրանք ստեղծված չեն Աստծո պատկերով, ուստի չունեն անմահ հոգիներ (Ժողովողի 3.21) և չունեն անքակտելի իրավունքներ:

Աստված մարդկանց թույլատրել է սննդի համար օգտագործել կենդանիներ, այսինքն՝ այդ նպատակով կարելի է վայրի կենդանիներ որսալ ու ընտանի կենդանիներ պահել:

Մարդկության պատմության մեջ սովորական երևույթ է եղել նաև այն, որ մարդիկ տանը կամ որոշակի գործերի կատարման համար կենդանիներ են պահել:

► Արդյոք Աստծուն հետաքրքրո՞ւմ է, թե ինչպես են մարդիկ վերաբերում կենդանիներին:

► Ուսանողը խմբի համար կարդում է Առակների 12.10 խոսքը:

Այս խոսքը մեզ ասում է, որ արդար մարդուն բնորոշ է իր կենդանիներին լավ խնամելը: Դաժանությունը չար մարդու հատկանիշ է:

Կենդանի ունեցող անձը պետք է հոգ տանի անհրաժեշտ սննդի, ջրի ու ապաստանի համար: Ինչ-որ բան սխալ է այն մարդու մեջ, ով չի հոգում իր կենդանիների կարիքները:

Հիշեք, որ բոլոր կենդանիները պատկանում են Աստծուն (Սաղմոս 50.10-11): Նրանք բոլորը նախագծված ու ստեղծված են Աստծո կողմից: Նա ստեղծեց կենդանիներին մեծ բազմազանությամբ: Նա կարող էր միայն մի քանի տեսակ ստեղծել սննդի ու աշխատանքի համար, բայց Նա ստեղծեց կենդանիների հազարավոր պարզագույն ու բարձրագույն տեսակներ: Աստծո զարմանալի ստեղծարարությունը դրսևորվում է կենդանիների բազմազանության մեջ:

Որոշ կենդանիներ ունակ են հավատարմություն և գնահատանք ցուցաբերելու իրենց տերերի նկատմամբ: Նրանք վայելում են մարդկանց ուշադրությունն ու սովորում դրան արձագանքել: Նրանք բավականաչափ խելացի են և շատ բաներ են հասկանում ու սովորում: Ակնհայտ է, որ Աստված նրանց ստեղծել է մարդկանց հետ շփվելու համար: Աստված կենդանիների մեջ հատուկ հարգանք է դրել մարդկանց հանդեպ (Ծննդոց 9.2):

Աստված կենդանիներին ստեղծել է խելացի և տվել է հատկանիշներ, որոնցով արձագանքում են մարդկանց: Նրանց նկատմամբ բռնությունը նշանակում է անհարգալից վերաբերմունք Աստծո ծրագրերի նկատմամբ: Բացի այդ փաստից, ինչ-որ սխալ և այլասերված բան կա այն մարդու մեջ, ով հաճույք է ստանում կենդանիներին ցավ պատճառելուց:

Սուրբ Գիրքը բազմիցս օգտագործում է հովվի օրինակը: Դավիթը մինչ Իսրայելի թագավոր դառնալը հովիվ էր: Դավիթը գրել է 23-րդ Սաղմոսը՝ Աստծուն համեմատելով հովվի հետ: Նա հասկացել էր, որ Աստված հոգ է տանում իր ժողովրդի համար այնպես, ինչպես հովիվն է խնամում իր ոչխարներին: Նոր Կտակարանում հովիվները համեմատվում են խաշնարածների հետ (Ա Պետրոսի 5.2 և շատ ուրիշներ): Այս համեմատությունը իմաստ չէր ունենա, եթե Աստված չակնկալեր, որ մարդիկ պետք է հոգան իրենց կենդանիների համար:

Դավթի՝ ոչխարների հանդեպ հոգատարությունը մարդկանց մասին հոգալու նրա վերապատրաստման մի մասն էր: Նույն կերպ, մեր հոգատարությունը հողի և կենդանիների նկատմամբ, որոնց Աստված վստահել է մեզ, կպատրաստի մեզ մարդկանց մասին հոգ տանելուն:

Կանաչապատման արժեքը

Կանաչը բնության մեջ ամենատարածված գույնն է, բացառությամբ այն վայրերի, որտեղ ջուր կամ բերրի հող չկա: Մեր աչքերն ամենահանգստացնող գույնը կանաչն է:

Շատ մարդիկ, ովքեր ապրում են քաղաքներում, թարմանում են, երբ քաղաքից դուրս են գալիս ավելի բնական միջավայր:

Քաղաքային բազմաթիվ միջավայրեր գրեթե չունեն բուսածածկույթ: Հողի մեծ մասը ծածկված է բետոնով կամ սև ծածկով: Որոշ հասարակություններ սկսել են ջանքեր գործադրել քաղաքներում այգիներ և այլ կանաչապատ տարածքներ ապահովելու համար: Յուրաքանչյուր համայնքում մարդիկ պետք է միասին աշխատեն՝ ծառերի և այլ բույսերի աճեցման վայրեր ապահովելու նպատակով: Նրանք պետք է կանաչ տարածքները պահեն մարդկանց վայելքի և հատկապես երեխաների խաղալու համար: Ընտանիքները կարող են իրենց բակերում ու տներում ստեղծել իրենց կանաչ տա ածքները՝ աճեցնելով բույսեր ու ծառեր:

Քրիստոնեական էկոլոգիայի տարբերակումներ

Այս դասի սկզբում տրված է էկոլոգիայի սահմանումը:

► Ինչո՞ւ պիտի քրիստոնյաները հոգ տանեն շրջակա միջվայրի մասին:

Ոմանք կարծում են, թե մենք կարող ենք փրկել երկիրը՝ կանխելով աղտոտումը: Մենք՝ մարդկությունը, չենք կարող փրկել այն, թեև պետք է մեր բաժինն անենք, որպեսզի որքան կարող ենք՝ պահպանենք այն: Քրիստոնյաները գիտեն, որ մենք չենք կարող ի վերջո հետընթաց տալ տիեզերքի անկմանը: Աստված վերջնականապես կնորոգի երկիրը (Հայտնության 21.1), ուստի մենք գիտենք, որ չենք կարող փրկել այն:

Շատերը կարծում են, թե մարդիկ ավելի կարևոր չեն, քան մյուս արարածները, և որ մենք պետք է հարգենք կենդանիներին, քանի որ նրանք ունեն մեզ հավասար իրավունքներ: Քրիստոնյաները գիտեն, որ Աստված մարդկանց իշխանություն է տվել երկրի վրա: Մենք գիտենք, որ մարդիկ տարբերվում են կենդանիներից, քանի որ մենք առանձնահատուկ կերպով ստեղծված ենք Աստծո պատկերով և ունենք հավիտենական հոգիներ: Ուստի կենդանիները չունեն մարդու իրավունքների հետ համեմատելի իրավունքներ:

Քրիստոնյաները հոգ են տանում երկրի մասին, քանի որ.

1. Այն պատկանում է Աստծուն,
2. մարդիկ Աստծուց տրված պատասխանատվություն ունեն՝ հոգալու երկրի մասին, և
3. մենք մտածում ենք եկող սերունդների մասին:

► Ձեր ազգի մեջ կամ համայնքում տարածված ո՞ր գործելակերպերն են ցույց տալիս, որ մարդիկ չունեն հետևողական քրիստոնեական ընկալում էկոլոգիայի մասին:

► Դասի հնարավոր քննարկում: Խնդրե՛ք մեկին, որ փակի աչքերն ու նկարագրի, թե ինչ է տեսնում ամեն անգամ, երբ հեռանում է իր եկեղեցու բակից: Ի՞նչ տեսք ունի եկեղեցու դիմաց գտնվող տարածքը: Աղբ կա՞ գետնին: Արդյոք տարածքի տեսքը հուշո՞ւմ է, որ ինչ-որ մեկը խնամում է այն: Ո՞վ պետք է հոգ տանի այդ տարածքի մասին: Նկարագրե՛ք, թե ինչպես կարող են եկեղեցու մարդիկ փոխել այն: Ինչո՞ւ պետք է նրանք մտածեն տարածքի խնամքի մասին: Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ նրանց հոգատարությունը ուրիշների վրա: Ուսանողները կարող են նույն ձևով մտածել իրենց տների շրջակա տարածքների մասին:

Խմբային քննարկում

Մտածե՛ք հետևյալ հարցերի շուրջ.

► Ի՞նչ սովորություններ պետք է փոխեք:

► Ինչպե՞ս կարող է ձեր եկեղեցին փոխոխություն բերել համայնքում իր օրինակով և ուսուցմամբ:

► Ինչպե՞ս կարող է ձեր համայնքը բարելավել իր միջավայրը, եթե համայնքի մարդիկ համագործակցեն:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Շնորհակալություն գեղեցկությամբ ու ռեսուրսներով հարուստ աշխարհ ստեղծելու համար: Շնորհակալ ենք, որ վստահում ես մեզ Քո ստեղծած աշխարհի մասին հոգալու պատասխանատվությունը:

Օգնի՛ր մեզ ապրել՝ գնահատելով Քո հրաշալի ստեղծագործությունը: Օգնի՛ր մեզ աշխատել միասին՝ պաշտպանելու երկրի ռեսուրսներն ու գեղեցկությունը:

Ամեն

Դաս 8. Առաջադրանքներ

(1) Գրե՛ք մի պարբերություն, որում կնկարագրեք, թե այս դասում սովորած ճշմարտության հետևանքով ինչ նոր սովորություններ եք զարգացնելու:

(2) Մեկ էջով ներկայացրե՛ք ձեր հասարակության մեջ տարածված սխալ գործելակերպերը: Այնուհետև շարունակե՛ք նկարագրել, թե ինչպես կբացատրեք որևէ մեկին, թե *ինչու* պետք է փոխվեն այդ սխալ սովորությունները: Ձեր պնդումները հիմնավորե՛ք որոշակի սուրբգրային խոսքերով և աստվածաշնչյան աշխարհայացքով:

Դաս 9
Փող

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը պետք է կարողանա.
(1) Պարտավորություն ստանձնել, որ հնազանդվելու է փողի և ռեսուրսների պատշաճ օգտագործման ու կառավարման Աստծո սկզբունքներին
(2) Հասկանալ հոգևոր վտանգները, որոնք կապված են փողի ու դրա գործածման ոչ պատշաճ համոզմունքների հետ և՝ ինչպես խուսափել դրանցից:

Ջոն Ուեսլի. առատաձեռնությամբ ընծայող

Ջոն Ուեսլին ապրել է Անգլիայում 1703-1791 թվականներին: Նա քարոզում էր Ավետարանը եկեղեցուց դուրս տարբեր միջավայրերում՝ աղքատ մարդկանց, որոնց չէին ընդունի եկեղեցիներում: Նա ապրում էր ամենայն զգուշությամբ՝ ձգտելով պատվել Աստծուն կյանքի բոլոր մանրուքներում՝ ներառյալ փողի տնօրինման հարցում: Նա սովորեցնում էր, որ քրիստոնյաները, զումար վաստակելով, պետք է խնայեն այն ամենը, ինչ կարող են և ընծայեն այն ամենը, ինչ կարող են: Նա հավատարիմ օրինակ էր նրա, թե ինչպես էր հարկավոր կարգուկանոնով ու ճիշտ տնօրինել ստացած եկամուտը: Ավելի շատ զումար նվիրաբերելու նպատակով նա կրճատեց իր տարեկան ծախսերը: Հետագայում, երբ նրա եկամուտն ավելացավ, նա իր ծախսերը նույնը պահեց, իսկ մնացածն ընծայեց: Թեև նա իր կյանքի ընթացքում վաստակել էր 30 000 ֆունտ ստերլինգ, մահից հետո նրա մոտ գտան ընդամենը մի քանի մետաղադրամ: Ուեսլին գիտեր, որ Աստված մարդկանց վստահում է, որ փողը տնօրինեն Իր փոխարեն, և սովորեցնում էր, որ քրիստոնյաները պետք է հետևեն Աստծո սկզբունքներին՝ նաև փողի հետ գործ ունենալիս:

Ներածություն

Նոր Կտակարանը փողի մասին ավելի շատ է հիշատակումներ անում, քան շատ այլ թեմաների, ոչ թե այն պատճառով, որ փողն այդքան կարևոր է Աստծո համար, այլ որ մարդիկ փողի հետ կապված տարբեր խնդիրներ են ունենում:

Աստված, որպես Արարիչ, բոլոր մարդկանց և նրանց հարստության սեփականատերն է: Լինելով քրիստոնյաներ՝ մենք յուրահատուկ ձևով պատկանում ենք Աստծուն, քանի որ Նա փրկագնել է մեզ: Մենք պետք է համարենք մեզ ունեցվածքի կառավարիչներ, որը պետք է օգտագործվի Աստծո փառքի համար:

Բարիքներից հաճույք ստանալը սխալ չէ: Աստված ուրախությամբ է օրհնում մեզ, եթե ամեն ինչ ընդունում ենք երախտագիտությամբ ու խոնարհությամբ:

Փողը, սակայն, հոգևոր վտանգ է ներկայացնում մարդկանց մեծամասնության համար:

Զգուշացումներ և ցուցումներ հարուստներին

► Ի՞նչ է նշանակում հարուստ լինել:

Մարդը հարուստ է համարվում՝ ըստ տարբեր չափանիշների:

Եթե դուք ունեք գումար՝ գնելու ավելին, քան ձեր առաջին անհրաժեշտության ապրանքներն են, դուք ավելի հարուստ եք, քան աշխարհի մարդկանց առնվազն կեսը: Շատ մարդիկ ե խանգարի նրանց աշխատանքին, նրանք սնունդ չեն ունենա:

Մարդիկ սովորաբար հարուստ են համարում նրան, ով ավելի մեծ հարստություն ունի, քան տվյալ հասարակության մարդկանց մեծ մասը: Նրա ապրելակերպը ցույց է տալիս, որ նա ավելի շատ գումար է ծախսում, քան շատերը: Մարդիկ նրան համարում են ավելի բարձր սոցիալական խավի անձ: Նա կարող է վայելել շքեղ բաներ, որ շատերը չեն կարող իրենց թույլ տալ: Նա ազդեցություն է ունենում հեղինակավոր մարդկանց վրա: Մարդիկ պատրաստ են ծառայել նրան իր ունեցվածքի պատճառով:

Աստվածաշունչը հատուկ ցուցումներ և զգուշացումներ է տալիս հարուստ մարդկանց:

Շատ լուրջ նախազգուշացում է Հիսուսի հայտարարությունն այն մասին, որ հարուստ մարդուն շատ դժվար է երկինք մտնելը (Մատթեոսի 19.24):

Հարստության վտանգի մասին կարելի է որոշակիորն հասկանալ Պողոս առաքյալի՝ հարուստ մարդկանց հղած ուղերձից:

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Տիմոթեոսի 6.17-19 հատվածը:

Պողոսը զգուշացնում է հարուստներին, որ իրենց ավելի բարձր դասի մարդիկ չհամարեն, քան մյուսներն են: Հարուստ մարդկանց համար մի գայթակղություն կա, որ իրենց ավելի բարձր են դասում, քան՝ մյուսներին: Հակոբոսը զգուշացնում է եկեղեցուն, որ նույն սխալը չգործեն՝ մարդկանց պատիվ տալով իրենց հարստության կամ սոցիալական կարգավիճակի պատճառով (Հակոբոսի 2.1-4):

Հարուստը չպետք է ապահով զգա իր հարստության պատճառով, այլ կախված լինի Աստծուց: Հարուստ մարդու համար ավելի դժվար է Աստծո ապահովման կարիքն զգալը, երբ նա ֆինանսական պաշարներ ունի: Անհոգ կյանքով ապրելը հոգևորապես գայթակղիչ է, քանի որ Աստծո օգնության կարիքն այլևս չի զգացվում (Բ Օրինաց 8.6-18):

Հարուստ մարդիկ պետք է առատաձեռն լինեն և իրենց փողերով բարիքներ գործեն:

Աշխարհիկ հարուստներին դատապարտելու կետերից մեկը Հակոբոսի 5.5-ում այն է, որ նրանք ապրում էին հաճույքների մեջ, մինչդեռ մյուսները՝ տառապանքի: Բազում բարիքներ կարելի է գործել խելամիտ նվիրատվությամբ: Փողով չի կարելի երջանկություն գնել, բայց այն կարող է ազատել մեծ

թշվառությունից: Սխալ է, երբ մարդն, ապրելով շքեղության մեջ, անտեսում է ուրիշների տառապանքը:

Ամովս մարգարեի միջոցով Աստված արտահայտում է Իր սիրտը մարդկային արդարության համար (ողորմություն ու կարեկցանք աղքատների և ճնշվածների հանդեպ) այս խոսքերով. «Այլ թող իրավունքը հորդի ջրի պես, արդարությունը՝ վարար գետի պես» (5.24): Աստված դատապարտում է բարգավաճմանը, երբ այն հանգեցնում է թեթևամիտ, ինքնաբավ կյանքի և աղքատների ծանր վիճակի հանդեպ անտարբերության (Ամոսի 6.1, 3-6, 8.4-7, 11-12):

Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է նվիրաբերություն տա աղքատներին ու ճնշվածներին, պետք է տասանորդ տա՝ իր տեղական եկեղեցուն աջակցելու նպատակով և պետք է ընծայի՝ աջակցելու միսիոներական աշխատանքին՝ Ավետարանի տարածման համար: Ջոն Ուեսլին ասում էր, որ երեք պատճառ կա, թե ինչու իր ժամանակի եկեղեցին այդքան թույլ ազդեցություն ուներ աշխարհում.

1. առողջ վարդապետության բացակայություն,
2. հաշվետվության ու կարգապահության բացակայություն և
3. անձնական զոհաբերության բացակայություն:

Փողասիրությունը

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Տիմոթեոսի 6.8-10 հատվածը:

Փողի մասին զգուշացումներն ուղղված չեն միայն մեծահարուստներին: Շատ չքավոր մարդիկ մտածում են, որ երբեք չեն կարողանա երջանիկ լինել, քանի որ աղքատ են: Աստվածաշունչն ասում է մեզ, որ փողասիրությունն առաջ է բերում ամեն տեսակի չարիք: Այդ զգուշացումը վերաբերում է բոլորին:

Փողի հանդեպ սերը երբեք չի բավարարվում: Փող սիրող մարդը դրա ոչ մի չափով չի գոհանում (Ժողովողի 5.10): Աստվածաշունչն ասում է մեզ, որ պետք է խուսափենք փողի նկատմամբ սիրուց և գոհ լինենք՝ մեր հիմնական կարիքների բավարարված վիճակով (Եբրայեցիների 13.5):

Մարդը, ով շտապում է հարստանալ, շատ մեծ ջանքերով է փոխզիջման գնում իր իսկ բնավորության հետ: Ջանալով հարստանալ՝ մարդը կարող է թողնել իր հավատն ու ստանալ բազմաթիվ ցավեր՝ իր ակնկալած ուրախության փոխարեն:

Կրոնական առաջնորդները երբեմն գրավում են հետևորդներին՝ նրանց հարստություն խոստանալով: Ասում են՝ հավատ ունեցողը հարստություն կունենա: Աղքատ հասարակություններում շատերին են գրավում այդ խոստումները, քանի որ չքավորության կյանքը ծանր է: Այդ առաջնորդներն անընդհատ խոսում և քարոզում են փողի մասին ու հպարտանում, որ կարող են ցույց տալ ֆինանսական հաջողության նույն նշանները, որ ունեն աշխարհիկ մարդիկ:

Աստվածաշունչն ասում է, որ գոհունակությամբ աստվածապաշտությունը մեծ արժեք է: Այն մարդուն, ով հարստության հետևից է գնում կրոնական միջոցներով, սպասում են նույն վտանգները, ինչ

աշխարհի ցանկացած մարդու, ով հետամուտ է հարստության: Եկեղեցիները, որոնք հարստություն են խոստանում, գրավում են այնպիսի մարդկանց, ովքեր այդպես էլ սրտով դարձի չեն գալիս ու շարունակում են մղվել իրենց անձնական ցանկասիրություններով: Այդ եկեղեցիները լցված են հուսացող մարդկանցով, ովքեր երբեք չեն ստանում այն, ինչ իրենց խոստացվել էր: Միակ մարդիկ, ովքեր հարստանում են հարստության ավետարանով, քարոզիչներն են, ովքեր ընծաներ են հավաքում իրենց հավատացող մարդկանցից:

► Ուսանողը խմբի համար կարդում է Փիլիպպեցիների 4.10-13 հատվածը:

Պողոսը երախտապարտ էր, որ փիլիպպեցի հավատացյալները ընծա էին ուղարկել՝ ի աջակցության իրեն: Նա ասում է նրանց, որ սովորել է գոհ լինել ցանկացած վիճակում, նույնիսկ՝ սովի պայմաններում: Այս հայտարարությունը ցույց է տալիս, որ Պողոսը միշտ չէ, որ առատ գումարներ է ունեցել: Նա ասում էր, որ Աստծո օգնությամբ կարող է անել ամեն ինչ: Այդ պնդման ենթատեքստը ցույց է տալիս, որ նա նկատի ուներ, որ ցանկացած վիճակում կարողանում է գոհ ու հավատարիմ լինել Աստծուն:

Ազնվություն

► Ուսանողը խմբի համար կարդում է Առակների 11.1 խոսքը:

Այս խոսքը կշեռքի մասին է, որն օգտագործվում է կշռելով ինչ-որ բան վաճառելու համար, օրինակ՝ միրգ, բանջարեղեն կամ միս: Երբեմն մարդիկ ունենում են կշեռքներ, որոնք նախատեսված են կեղծ կշիռ ցույց տալու համար՝ լրացուցիչ գումար վերցնելու նպատակով: Այս խոսքն ասում է, որ Աստված ատում է անազնվությունը:

Շատերն են անազնիվ քայլերի դիմում հանուն փողի: Այս դասընթացի հաջորդ դասը նվիրված է ազնվությանը:

Վստահել Աստծուն

Պողոս առաքյալը փիլիպպեցի քրիստոնյաներին գրում է և խոստանում, որ Աստված կապահովի նրանց կարիքները: Սա հրաշալի խոստում է: Մենք պետք է նայենք այն հատվածին, որտեղ դա կատարվում է, որպեսզի տեսնենք իրավիճակը:

► Ուսանողը խմբի համար կարդում է Փիլիպպեցիների 4.15-19 հատվածը:

Եկեղեցին ֆինանսական աջակցություն է ուղարկել Պողոսին: Նա ասում է, որ դա զոհաբերություն է Աստծուն: Նա խոստանում է, որ Աստված կհոգա նրանց կարիքները, բայց փողի մեծ բազմապատկում չի խոստանում:

Այս խոստումն այն մարդկանց համար չէր, ովքեր անպատասխանատու կամ վատնող էին, այլ նրանց համար, ովքեր տնօրինել էին իրենց գումարներն ըստ հոգևոր առաջնահերթությունների:

► Ուսանողը խմբի համար կարդում է Մատթեոսի 6.25-33 հատվածը:

Հիսուսը խոսեց այն մասին, թե ինչպես է Աստված կերակրում թռչուններին ու գեղեցկացնում ծաղիկները, և խոստացավ, որ հոգ կտանի մեր մասին: Նա մեզ ասում է, որ չանհանգստանանք մեր գոյատևման համար: Նա խոստանում է, որ եթե առաջին տեղում դնենք Աստծո արքայությունը, մեր կարիքները ապահովված կլինեն:

Մարդիկ սովորաբար անհանգստանում են ոչ թե *այսօրվա*, այլ *ապագայի* համար: Աստված չի խոստացել ամեն ինչ ապահովել ժամանակից շուտ: Հիշե՛ք՝ Հին Կտակարանում, երբ մանանան իջնում էր, այն գալիս էր ամեն օր (Ելքի 16): Նմանապես, Հիսուսն ասաց, որ պետք է աղոթենք մեր «ամենօրյա հացի» համար (Մատթեոսի 6.11): Աստված ուզում է, որ ամեն օր վստահենք Իրեն:

Հակոբոսն ասում է, որ Աստված այնպես է անում, որ աղքատները «հավատով են հարուստ» լինում (Հակոբոսի 2.5): Աղքատ մարդիկ ավելի լավ հնարավորություն ունեն վստահելու Աստծուն, քան այն մարդիկ, ովքեր ֆինանսապես ապահով են:

Աստծուն վստահել՝ չի նշանակում, որ պետք է անպատասխանատու լինել: Աստված սովորաբար մեզ ապահովում է աշխատանքի միջոցով (Եփեսացիների 4.28): Եթե մարդը պատրաստ չէ աշխատելու, նա չպետք է ակնկալի, որ Աստված կապահովի իրեն, իսկ այլ մարդիկ չպետք է նրան օգնելու պատասխանատվություն ստանձնեն (Բ Թեսաղոնիկեցիների 3.10):

Մենք չպետք է ակնկալենք, որ Աստծո ապահովումը մեզ կհարստացնի: Աստված փոքրաթիվ մարդկանց օրհնում է հարստությամբ, բայց հարստությունը Աստծո ծրագիրը չէ բոլորի համար: Հարստության հասնելու մեծ փափագներ ունեցող մարդը հոգևոր խնդիրների կունենա:

Ակտիվ ռեսուրսներ

Ակտիվ ռեսուրսներն այն միջոցներն են, որ մարդիկ ունեն, և որոնք նրանց օգնում են ինչ-որ բաներ արտադրել: Օրինակ՝ հողը, գործիքների հավաքածուն կամ համակարգիչը: Մարդը կարող է նմանատիպ աշխատանքային, ակտիվ ռեսուրսներն օգտագործել շահույթ ստանալու համար, բայց եթե այդ ռեսուրսը վաճառվի, ապա արտադրությունը կվերանա: Եկամուտ բերող ակտիվ ռեսուրսի մասին աստվածաշնչյան մեջբերում է Առակների 14.4-ը. «Որտեղ որ արջառ չկա, մսուրը մաքուր է մնում, սակայն արդյունքի առատությունը եզան զորությունից է կախված»:

Աղքատ մարդը կարող է չհասկանալ «ակտիվ ռեսուրսներ» հասկացությունը: Օրինակ՝ նա կարող է ենթադրել, որ իր ընկերը շատ փող ունի, քանի որ ունի թանկարժեք գործիքներ, համակարգիչ կամ մեքենա: Նա կարծում է՝ ընկերը կամ բարեկամը, ով նման բաներ ունի, պետք է կարողանա իրեն գումար տալ, երբ դրա կարիքը լինի: Սակայն թվարկվածներից յուրաքանչյուրը կարող է լինել «ակտիվ ռեսուրս», որը չի կարող գումարի վերածվել, այլապես անձը, ով ունի այդ ռեսուրսը, կկորցնի իր եկամտի աղբյուրը:

► Ի՞նչ այլ ակտիվ ռեսուրսների օրինակներ կան ձեր միջավայրում:

Եթե մարդը չի հասկանում, թե ինչպես են գործում եկամտաբեր ակտիվ ռեսուրսներն ուրիշների համար, հավանաբար չի իմանա, թե նույն ձևով ինչ ռեսուրսներ կաշխատեն իր համար: Հնարավոր է, որ նա չկարողանա հստակ ասել, թե ինչի կարիք ունի կամ ինչպիսի օգնությունը կփոխի իր վիճակը: Նա կարող է նկարագրել օգնությունն իր ամենօրյա ջանքերի անմիջական, կարճատև խթանման, այլ ոչ թե կյանքի իրական փոփոխության տեսանկյունից:

Աղքատության ասպեկտներից մեկը ակտիվ ռեսուրսների բացակայությունն է: Քանի դեռ աղքատության մեջ գտնվող մարդը չի կարողանում սովորել եկամտաբեր ակտիվ ռեսուրսներ ձեռք բերելու, պահպանելու և պահելու անհրաժեշտությունը, նա չի կարող դուրս գալ կախվածությունից:

Որոշ մշակույթներում մարդու համար դժվար

է գումար խնայել և ձեռք բերել ակտիվ ռեսուրսներ, քանի որ շրջապատի մարդիկ ակնկալում են, որ նա կիսի ամեն ինչ: Նրանք չեն հասկանում, թե ինչու է նա փող կուտակում, երբ ուրիշին փող է պետք: Նրանք ակնկալում են մաս ունենալ նրա ունեցածից, նույնիսկ եթե իրենք անպատասխանատու են եղել:

Քրիստոնյան պետք է հարգի իր մշակույթի ակնկալիքները, բայց նաև կիրառի աստվածաշնչյան սկզբունքները: Սուրբ Գիրքն ասում է, որ մենք պարտավոր չենք օգնելու այն մարդուն, ով չի անում այն, ինչ կարող է (Բ Թեսաղոնիկեցիների 3.10): Եթե մարդն իր աշխատանքային ռեսուրսները տա անպատասխանատու մարդուն օգնելու նպատակով, երկուսն էլ աղքատ կմնան:

Աստվածաշունչը ակնարկում է, որ Աստծո տված բարգավաճման տեսակն այն է, որ մարդիկ իրենց ակտիվ ռեսուրսներն ունենան: Միքիա մարգարեն ասում է, որ օրհնված հասարակության մեջ յուրաքանչյուր մարդ ապահովությամբ կբնակվի «իր որթատունկի ու թզենու տակ» (Միքիայի 4.4): Դա վերաբերում է մասնավոր սեփականությանը և ինչ-որ բան արտադրելու միջոցներին: Որոշ վայրերում արտադրության լավագույն ձևը հողագործությունը չի, բայց սկզբունքն այն է, որ օրհնված մարդիկ կունենան այն, ինչ անհրաժեշտ է ռեսուրսներ ստեղծելու համար:

Հաճախ քրիստոնյա դարձած աղքատ մարդիկ սկսում են ավելի բարգավաճել ոչ միայն Աստծո անմիջական օրհնության, այլև առավել ճիշտ ապրելակերպի պատճառով: Նրանք դադարում են գումար վատնել այնպիսի բաների վրա, ինչպիսիք են՝ ոգելից խմիչքները, մոլախաղերը և զվարճանքի սխալ ձևերը: Նրանք դառնում են ավելի բարեխիղճ աշխատողներ և ձեռք բերում ավելի լավ համբավ: Աստված օրհնում է իրենց նվիրաբերությունները: Հաճախ քրիստոնյա ընտանիքի երկրորդ սերունդը շատ ավելի լավ վիճակում է ապրում, քան առաջինը:

► Որո՞նք են ձեր շրջապատի մարդկանց աշխատելու և խնայելու եղանակներն իրենց ֆինանսական վիճակը բարելավելու համար:

Դրամախաղ

Դրամախաղը փողը վտանգի տակ դնելն է՝ փորձելով ձրի գումար վաստակել: Յուրաքանչյուր շահող անձ փող է վերցնում պարտվողից՝ փոխարենը ոչինչ չտալով: Շատ մարդիկ դառնում են խաղամոլ, վատնում են իրենց գումարները և չեն կարողանում հոգ տանել իրենց ընտանիքի համար: Շատերը դրամախաղում օգտագործում են ուրիշին պատկանող փողերը՝ հույս ունենալով շահել ու վերադարձնել այն: Բազմաթիվ մարդիկ կան բանտերում, որոնք գողության են դիմել, որպեսզի խաղան: Աղքատության մեջ գտնվող շատ մարդիկ մոլախաղի զոհ են դառնում, քանի որ մտածում են, որ իրենց վիճակը փոխելու հույս չկա՝ բացառությամբ բախտ ունենալու և փող շահելու:

Դրամախաղը հակասում է քրիստոնեական շատ սկզբունքների՝

1. աշխատանքի միջոցով հարստություն ձեռք բերելու,
2. բավարարվածության և
3. ցանելու ու հնձելու (Գաղատացիների 6.7):

Բացի այդ, Աստված ցանկանում է, որ մենք եկամուտ ունենանք ծառայություններ մատուցելով կամ ապրանք արտադրելով, այլ ոչ թե բախտի բերումով ուրիշից փող վերցնենք: Դրամախաղը վնասակար է, քանի որ կախվածություն է առաջացնում և մեծացնում հանցանքներ գործելու հավանականությունը:

Դրամախաղը Աստծուց կախվածության փոխարեն իրենից է կախվածություն առաջացնում: Մարդը պետք է ինքն իրեն հարցնի. «Հավատո՞ւմ եմ, որ Աստված հոգ է տանում իմ մասին»: «Կարո՞ղ եմ աղոթել, որ Աստված ապահովի ինձ»: «Արդյոք ես հավատո՞ւմ եմ, որ այն ձևը, որով Աստված ուզում է ապահովել ինձ, փողը դրամախաղով վտանգի տակ դնելն է՝ հույս ունենալով շատ փող վերցնել ուրիշից»: «Կարծո՞ւմ եմ, որ Աստված կպարգևատրի ինձ մոլախաղի համար՝ ինձ մեծ գումար շահել տալով»: Մարդը, ով դրամախաղի է դիմում, չի վստահում Աստծուն իր ֆինանսական դժվարության մեջ: Երբ մենք իսկապես վստահում ենք Աստծուն, հնազանդվում ենք նրա հստակ հրահանգներին՝ իմանալով, որ նա հավատարմորեն ապահովում է մեր կարիքները, երբ հնազանդվում ենք:

Պարտք

Երբ մարդը պարտքով գումար է վերցնում, նա ենթադրում է, որ ապագայում կարող է այն վերադարձնել իր ստացած գումարից: Հետևաբար, պարտք վերցնել նշանակում է՝ ծախսել ապագայի փողը, թեև ապագան նոր կարիքներ կբերի իր հետ:

Աստվածաշունչն ասում է, որ պարտք վերցնողը պարտք տվողի ծառան է (Առակների 22.7): Պարտսի տերը ստեղծում է պարտավորություններ, որոնք սահմանափակում են պարտք ունեցողի ազատությունը:

Փոխառությունների որոշ տեսակներ ավելի վատն են, քան մյուսները: Երբ մարդը պարտքով գումար է վերցնում հիմնական կարիքների համար, ինչպիսին է՝ սնունդը, նա ավելի վատ իրավիճակի մեջ է ընկնում: Սնունդը կսպառվի, իսկ պարտքը կմնա, և նա ավելի աղքատ կլինի, քան նախկինում էր:

Երբ մարդը պարտքով գումար է վերցնում ոչ անհրաժեշտ բաների համար, օրինակ՝ անձնական զարդարանքի, անհարկի հագուստի, զվարճանքի կամ տան ձևավորման համար, նա ծախսում է իր ապագա փողը: Նա սահմանափակում է իր ապագա ազատությունը. ապագայում նա չի կարողանա իրեր գնել իր ընտրությամբ, քանի որ գումարն արդեն ծախսված է:

Որոշ ձեռնարկություններ վարկ են տալիս բարձր տոկոսադրույքով: Մարդիկ, ովքեր վարկ են վերցնում, շուտով պարտք են լինում շատ ավելի, քան վերցրել էին: Որոշ խանութներ ապառիկ իրեր են վաճառում բարձր տոկոսադրույքով: Մարդիկ, ի վերջո, շատ ավելի բարձր գներ են վճարում այն իրերի համար, որոնք գնում են ապառիկով, որովհետև պատրաստ չեն՝ սպասելու մինչև բավարար գումար կունենան սովորական գինը վճարելու համար:

Երբեմն մարդիկ պարտքով գումար են վերցնում իրենց մշակույթի կողմից ակնկալվող թանկարժեք հարսանեկան միջոցառումն ապահովելու համար: Նրանք սկսում են իրենց ամուսնական կյանքը մեծ պարտքերով: Եկեղեցին, որպես հավատքի ընտանիք, պետք է օգնի իր անդամներին՝ զարգացնելով նոր ավանդույթներ կամ ուղիներ գտնի հարսանիքը գեղեցիկ դարձնելու համար՝ առանց չափազանց թանկ ծախսերի:

► Ուսանողը խմբի համար կարդում է Հռոմեացիների 13.7-8 հատվածը:

Այս խոսքերը մեզ ասում են, որ տանք այն, ինչ պարտավոր ենք տալ ուրիշներին: Մենք իշխանություններին պարտական ենք հարգանք և հնազանդություն: Մենք հարկեր ենք պարտք կառավարությանը: 8-րդ խոսքի առաջին նախադասությունն ամփոփում է 7-րդ խոսքի պնդումները: Մենք չպետք է թերանանք որևէ մեկին տալ այն, ինչ պետք է տանք: Սա չի նշանակում, թե երբեք չպետք է պարտք վերցնենք, քանի որ եթե մենք վերադարձնենք այնպես, ինչպես պայմանավորվել ենք փոխատուի հետ, մենք չենք թերանում տալ այն, ինչ պետք է տանք:

Գողություն է այն, որ մարդը պարտք է վերցնում առանց վերադարձնելու մտադրության կամ պարտք է վերցնում և հետո որոշում՝ չվերադարձնել (Սաղմոս 37.21):

Հին Կտակարանի օրենքները հիմնականում ուղղված են Իսրայելի ժողովրդին՝ որպես գյուղատնտեսական պարզունակ հասարակության: Մարդկանց մեծ մասն ապրում էր հողագործությամբ՝ արտադրելով այն, ինչ իրենց անհրաժեշտ էր տնային տնտեսություններում: Ընտանիքները միևնույն հողի սեփականատերն էին եղել սերունդներ շարունակ: Ուստի հազվադեպ էր պատահում, որ ինչ-որ մեկը պարտքով գումար վերցներ հող գնելու կամ գործ սկսելու համար: Եթե մարդը պարտքով գումար էր վերցրել, դա այն պատճառով էր, որ նա վատ վիճակում էր եղել և գումարը պետք էր տարրական կարիքների համար: Աստված ուզում էր, որ Իսրայելը դառնա հավատի ընտանիք, որը հոգ է տանում իր անդամների համար: Աստված նրանց ասաց, որ փոխ տան

կարիքավոր մարդկանց՝ առանց տոկոսադրույք գանձելու (Ելքի 22.25)։ Սաղմոս 15-ում նկարագրված արդար մարդու առանձնահատկություններից մեկն այն է, որ նա տոկոսադրույքով փող չի տալիս[27]։

Սխալ չէ, որ ներդրողը տոկոսադրույք է գանձում, երբ ինչ-որ մեկին փող է տալիս, որպեսզի օգնի նրան գործ սկսել[28]։ Տոկոսադրույքը ներդրողի պարգևն է՝ գործը հնարավոր դարձնելու դիմաց։

Մարդիկ, ովքեր գործ են անում աղքատների հետ, չպետք է միայն շահույթ ստանալու մասին մտածեն (Առակների 22.16ա)։ Անորակ ապրանք վաճառելը կամ անարդար գներ պիտակելը սխալ է, քանի որ աղքատներն այլ տարբերակներ չունեն։ Սխալ է մեծ շահույթ ստանալու նպատակով վարկեր տալը կամ պարտքով իրեր վաճառելը դժվար իրավիճակների մեջ հայտնված և պարտք վերցնող մարդկանց։ Գործարարը պետք է ուղիներ փնտրի իր հաճախորդների վիճակը բարելավելու համար։

Եզեկիել մարգարեն ասաց, որ Սոդոմի մեղքը ոչ միայն սեռական անբարոյականություն էր, այլև այն փաստը, որ մարդիկ ապրում էին շքեղության մեջ, բայց «աղքատի ու կարիքավորի ձեռքը չզորացրին» (Եզեկիել 16.49)։ Աստված կոչ է անում մեզ ոչ միայն տալ աղքատներին, այլ օգնել *ռազմավարական ճանապարհով*, որպեսզի նրանք ավելի ուժեղանան։

Աստծո օրենքները հին Իսրայելի համար ցույց են տալիս Նրա առաջնայնությունները։ Այսօր մեր երկրի օրենքները նույնը չեն, ինչ Աստված տվել էր Իսրայելին, բայց Աստծո մտահոգություններն ու սկզբունքները նույնն են։ Եկեղեցին պետք է ուղիներ գտնի աղքատներին զորացնելու համար՝ նախ հոգալով հավատի ընտանիքի մասին, ապա վերափոխելով համայնքը։

Բյուջետավորում

Ոմանք իրենց ամբողջ գումարը ստանալուն պես ծախսում են։ Նրանք հաճախ տառապում են կարիքներից՝ նախքան նորից գումար ունենալը։ Նրանք չեն կարողանում պատասխանատվություն կրել ուրիշների համար։

Բյուջետավորումը սովորական ծախսերը կառավարելու ծրագիր է։ Մարդկանց մեծամասնությունն ունի ծախսեր, որոնք սպասելի են որոշակի ժամանակում, և նրանք պետք է ժամանակից շուտ գումար պահեն այդ կարիքների համար։ Օրինակ՝ մարդը տուն է վարձակալում։ Նա կարող է վճարել ամսական կամ տարեկան։ Նա պետք է հետևողականորեն խնայի իր եկամտի մի մասը, որպեսզի կարողանա վարձավճարը տալ, երբ ժամանակը գա։ Եթե վարձավճարը տարեկան է, նա երկար ժամանակ պետք է գումար խնայի, ու թեև այն ընթացքում օգտագործելու գայթակղություն կարող է լինել, բայց պետք է այդ գումարը պահել ու արդեն ծախսված համարել։

Պահելու առաջին գումարը պետք է լինի տասանորդը (Առակների 3.9-10)։ Դուք պետք է պարտավորվեք ձեր եկամտի 10%-ը հատկացնել ծառայության աջակցությանը։ Մի՛ սպասեք՝

[27] Եզեկիելի 18.5-9-ը նման է Սաղմոս 15-ին
[28] Մատթեոսի 25.27

տեսնելու, թե ծախսելուց հետո լրացուցիչ գումար ունե՞ք տասանորդի համար: Աստված կօրհնի ձեր հավատարմությունը[29]:

Այն բանից հետո, երբ իր մնացած եկամուտով ապահովում է հիմնական կարիքները, մարդը պետք է գումար պահի արտակարգ իրավիճակների համար: Նա պետք է որոշակի գումար խնայի իր վիճակը բարելավելու համար, օրինակ՝ գումար հավաքել սեփական տունը գնելու համար: Նա նաև պետք է փորձի որոշակի գումար ներդնել իր եկամուտն ավելացնելու համար: Փոքր ներդրումների օրինակ կարող է լինել գործիքներ գնելը, որոնք թույլ են տալիս նրան ավելի շատ վարձատրվել աշխատանքի դիմաց:

Անձը, ով ունի եկամտաբեր ակտիվ ռեսուրս (ինչ-որ բան, որն օգնում է նրան արտադրել), ինչպիսին է՝ մեքենան կամ շենքը, պետք է գումար հատկացնի ռեսուրսը պահպանելու համար: Եթե մարդն իր մեքենայով շարունակ շահույթ է ստանում, բայց լրացուցիչ գումար չի խնայում, նա հետագայում չի կարողանա վճարել մեքենայի ընդհանուր վերանորոգման համար կամ գնել մեկ ուրիշը, և նրա շահույթն ի վերջո կսպառվի:

Մարդը, ով չի բյուջետավորում ու չի պլանավորում իր ծախսերը, հաճախ գուցե չկարողանա կատարել իր պարտականությունները: Նա կարող է կախված լինել ուրիշներից և ի վիճակի չլինել՝ ուրիշներին օգնելու: Նրա վիճակը երբեք չի բարելավվում, քանի որ ոչ մի կերպ ներդրումներ չի անում:

Հիսուսը պատմեց բարի սամարացու մասին, ով օգնեց վիրավոր անձին[30]: Ուշադրություն դարձրեք, որ սամարացին որոշակի գումար ու ավանակ ուներ վիրավորին տեղափոխելու համար: Իսկ եթե սամարացին արդեն վաճառած լիներ իր ավանակն ու ծախսած լիներ ամբողջ փո՞ղը: Եթե նույնիսկ օգնելու բարի ցանկություն ունենար, նա այդ իրավիճակում սահմանափակ կարողություն կունենար:

Բյուջետավորումը մարդուն հնարավորություն է տալիս պատրաստվել իր կարիքների համար, պատասխանատվություն ստանձնել իրենից կախյալների համար, ներդրումներ կատարել իր ապագայի համար, արձագանքել արտակարգ իրավիճակներին և աջակցել ծառայությանը:

Հավատի ընտանիքը

Եկեղեցու վաղ շրջանում՝ Պենտեկոստեից անմիջապես հետո, հավատացյալներն այնքան նվիրված էին հավատի ընտանիքին, որ հետևում էին բոլորի կարիքները բավարարելուն: Նրանք կիսում էին իրենց ունեցվածքը, և ոչ ոք չէր ասում, թե որևէ բան իրենն է: Նրանցից շատերը վաճառեցին իրենց ունեցվածքը և գումարը տվեցին եկեղեցուն (Գործք Առաքելոցի 2.44-45): Թեև չենք կարող ակնկալել, որ եկեղեցում կյանքը միշտ հենց այդպիսին լինի, այնուամենայնիվ տեսնում ենք, որ եկեղեցին իր

[29] Տասանորդի մասին հիմնավորումներ կան Shepherds Global Classroom-ի (Հովվի Գլոբալ Դասարանի) *Doctrine and Practice of the Church (Եկեղեցու վարդապետություն և պրակտիկա)* դասընթացում՝ ըստ հետևյալ հղման՝ https://www.shepherdsglobal.org/courses

[30] Ղուկասի 10.25-37

լավագույն վիճակում լինելու դեպքում առատաձեռնություն և ընտանիքների մասին հոգալու պարտավորություն է ստանձնում:

Թեսաղոնիկեցի հավատացյալները հոգ էին տանում, որ բոլոր անդամները կերակրված լինեն, սակայն ոմանք չէին աշխատում: Նրանք պարապ կյանք էին ապրում՝ կախված լինելով եկեղեցու առատաձեռնությունից: Պողոսը եկեղեցուն չասաց, որ նրանք սխալ էին, երբ հոգում էին ընտանիքի անդամների համար, բայց ասաց, որ մարդուն չպետք է սնունդ տրվի, եթե նա չի ցանկանում աշխատել (Բ Թեսաղոնիկեցիների 3.10): Ոմանց համար աշխատանքը կարող է լինել ոչ թե աշխատավորձով գործը, այլ անհրաժեշտության դեպքում այլ հավատացյալներին օգնելը: Ոմանք չեն կարողանում աշխատանքի ընդունվել, բայց գրեթե բոլորը կարող են օգնելու համար ինչ-որ բան անել:

Այլ նամակներում Պողոսը հրահանգներ է տվել որբևայրիներին օգնելու և հովիվներին աջակցելու համար (Ա Տիմոթեոսի 5.3-18, Գաղատացիների 6.6):

Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է տեղական հավատի ընտանիքի մաս կազմի, պարտավորվի օգնել անդամների կարիքներին և աջակցի ծառայությանը:

Խմբային քննարկում

► Ինչպե՞ս կարող են եկեղեցու անդամները միասին աշխատել եկեղեցու կարիքները հոգալու համար՝ միաժամանակ մարդկանցից պահանջելով պատասխանատվության ստանձնում:

► Ի՞նչ հնարավորություններ կան ձեր միջավայրում, որպեսզի եկեղեցու մարդիկ միասին աշխատեն՝ զարգացնելու աշխատանքային ռեսուրսները:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Շնորհակալ եմ իմ կարիքները բավարարելու Քո խոստման համար: Օգնի՛ր ինձ հավատարիմ լինել իմ պարտավորությունների մեջ՝ ապահովելու ինքս ինձ և ուրիշներին, ովքեր կախված են ինձանից: Օգնի՛ր ինձ առատաձեռն լինել իմ ունեցածով: Օգնի՛ր ինձ խելամտորեն բավարարել ուրիշների կարիքները:

Ես խնդրում եմ Քո ֆինանսական օրհնությունները, բայց ամենից շատ ուզում եմ պահպանել հոգևոր առաջնահերթություններն ու զոհանալ Քեզ հետ իմ հարաբերությունների համար:

Ամեն

Դաս 9. Առաջադրանքներ

(1) Աղոթքով քննե՛լ այս դասում տրված սուրբգրային սկզբունքները: Գրավոր պատասխանել հետևյալ հարցերից յուրաքանչյուրին.

- Ի՞նչ գայթակղությունների եմ հանդիպել, երբ խոսքը գնում է փողի և ռեսուրսների մասին:
- Ինչպե՞ս կարող եմ ներկայումս գումար կամ ռեսուրսներ ձեռք բերել:
- Ինչպե՞ս եմ օգտագործում և կառավարում գումարս կամ ռեսուրսներս:
- Ի՞նչ է նշանակում Աստծուն վստահել փողով կամ ռեսուրսներով:
- Ի՞նչ ակտիվ ռեսուրսներ ունեմ ես:
- Կա՞ն արդյոք եկամտաբեր ակտիվ ռեսուրսներ, որոնք պետք է պլանավորեմ ձեռք բերել ապագայում: Եթե այո, ապա ինչպե՞ս եմ դա անելու:
- Ի՞նչ ձևերով եմ ես չարաշահել փողը կամ ռեսուրսները:
- Ինչպե՞ս շտկեմ վերը թվարկված փողի կամ ռեսուրսների ցանկացած չարաշահում:

(2) Գրե՛ք այս դասի սկզբունքների մասին մեկ էջանոց ելույթ՝ նշելով ձեր միջավայրին հատուկ կետեր, որոնց գործնականում կիրառելի են: Ի՞նչ պետք է հասկանան ձեր շրջապատի մարդիկ փողի վերաբերյալ՝ ըստ քրիստոնեության տեսանկյան:

(3) Անգի՛ր սովորել Առակների 3.13-17 հատվածը և մեկ պարբերությամբ դրա շուրջ մտքեր գրել: Հաջորդ դասաժամի սկզբին հիշելով գրել մտապահված հատվածը և պարբերության հետ միասին հանձնել դասավանդողին:

Դաս 10
Ազնվություն

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը պետք է միշտ և բոլոր իրավիճակներում ամբողջությամբ ազնիվ լինելու որոշմանը հանգի։

Ազնիվ մարդ Աբրահամ Լինքոլնը

Աբրահամն աշխատում էր խանութում։ Մի օր նա նկատում է, որ հաճախորդին ճիշտ մանրը չի վերադարձրել, իսկ այդ կինն արդեն հեռացել էր խանութից։ Նա ապրում էր մի քանի մղոն հեռավորությամբ գյուղական մի վայրում, և Աբրահամը գիտեր, որ մոտ ժամանակներում այդ կնեջը հաստատ չէր տեսնելու։ Թեև գումարը փոքր էր, նրան մտահոգվում էր այն, որ դա, միգուցե, անհրաժեշտ էր այդ կնոջը։ Նա նաև ցանկանում էր համոզվել, որ այդ կնոջ մոտ չի թողնի այնպիսի տպավորություն՝ իբր ինքը միտումնավոր է պահել նրա գումարը։ Երբ օրվա վերջում խանութը փակվեց, Աբրահամը մի քանի մղոն քայլեց՝ գումարը վերադարձնելու համար։ Այդ իրավիճակում և այլ ժամանակներում իր ուշադիր լինելու պատճառով ընկերները նրան կոչում էին՝ «ազնիվ Աբի»։ Հետագայում նա դարձավ իրավաբան, ապա ներգրավվեց պետական կառավարման ոլորտում։ Նրա ազնվությունը հարգանքի արժանացավ, և ի վերջո՝ նա զբաղեցրեց Միացյալ Նահանգների նախագահի պաշտոնը։

Աստծո Էությունը

Աստվածաշունչն ասում է մեզ, որ Աստված չի կարող ստել (Տիտոսի 1.2, Եբրայեցիների 6.18)։ Նրա էությունը միշտ հետևողական է և անփոփոխ (Հակոբոսի 1.17)։ Աստված ճշմարտությունը չի ասում միայն այն ժամանակ, երբ այն առավելություն է տալիս։ Նա չի ստում լավ արդյունքների հասնելու համար։ Մենք կարող ենք վստահ լինել, որ Աստծո Խոսքը բացարձակապես ճշմարիտ է ու վստահելի։ Նրա ճշմարտությունը մեզ ապահովություն է տալիս (Սաղմոս 40.11, 91.4)։

► Եթե չվստահեինք, որ Աստված միշտ ճշմարտությունն է ասում, ինչպե՞ս կազդեր դա Աստծո հետ ձեր հարաբերությունների վրա։

Մտածե՛ք, թե որքանով է ճշմարտությունը կարևոր Աստծո հետ մեր հարաբերությունների ճիշտ կառուցման համար։ Աստված կոչ է անում մեզ ամբողջությամբ նվիրվել Իրեն։ Մենք չէինք կարող դա անել, եթե լիովին չվստահեինք Նրան։

Աստծո չափանիշը ճշմարտության համար

Աստված ցանկանում է, որ մենք միշտ խոսենք ճշմարտությունը։ Սուտ խոսող մարդը Աստծո աչքին արդար չէ (Առակների 12.17)։

Երբեմն մարդիկ ստեր են օգտագործում դատական գործերը շահելու համար: Փող ունեցող մարդիկ կարող են վճարել դատավորին՝ ստերն ընդունելու համար, որպեսզի ուրիշներից գույք խլեն (Հակոբոսի 2.6): Հարուստ մարդիկ խուսափում են արդարադատությունից և դատապարտում անմեղ մարդկանց՝ կաշառք տալով ստի հաստատման համար (Հակոբոս 5.1, 6):

Կեղծ վկայություն տալը մեղք է, նույնիսկ եթե կարծում եք, թե ձեր փաստարկումը ճիշտ է: Աստվածաշունչը դատապարտում է կեղծ վկաներին և թույլ չի տալիս բացառություններ[31]: Շատերը կարծում են, թե կարող են ստել, եթե սուտը օգուտ կբերի ու վնաս չի պատճառի, բայց Աստվածաշունչը նման տարբերակ չի տալիս: Սուրբ Գրքում մեզ երբեք չի ասվում, որ լինում են դեպքեր, երբ պետք է ստենք:

Քրիստոնյաներն առանց բացառության պետք է ասեն ճշմարտությունը: Ճշմարտությունը հիմնարար նշանակություն ունի մեր հարաբերությունների համար:

Եփեսացիների 4.15-ում ասվում է, որ ճշմարտությունը խոսելն անհրաժեշտ է հոգևոր հասունության հասնելու համար:

Կողոսացիների 3.9-ն ասում է, որ սուտը մեղավոր կյանքի մի մասն է, որը մի կողմ ենք դրել:

Աստված կդատի և կդատապարտի ստախոսներին: Ստախոսներն ընդգրկված են Աստծո օրենքով դատապարտված սարսափելի մեղավորների ցանկում (Ա Տիմոթեոսի 1.10, Հայտնության 22.15): Բոլոր ստախոսները կնետվեն կրակի լիճը (Հայտնության 21.8): Ստախոսները չեն մտնի Աստծո քաղաքը (Հայտնության 21.27):

Ճշմարտության կիրառություն բիզնեսում և հարաբերություններում

► Ուսանողը խմբի համար կարդում է Առակների 11.1 խոսքը:

Այս խոսքը կշեռքի մասին է, որն օգտագործվում է քաշով ինչ-որ բան վաճառելու համար, օրինակ՝ միրգ, բանջարեղեն կամ միս: Երբեմն մարդիկ ունենում են կշեռքներ, որոնք նախատեսված են կեղծ կշիռ ցույց տալու՝ լրացուցիչ գումար վերցնելու նպատակով: Այս խոսքն ասում է, որ Աստված ատում է անազնվությունը:

Սխալ է, որ մարդն ինչ-որ բան է վաճառում՝ ստելով դրա օգտագործելիության վիճակի մասին կամ թաքցնելով թերությունները: Սխալ է ստել, երբ ինչ-որ մեկին ասում եք, թե որքան եք վճարել ինչ-որ բանի համար, որպեսզի այն վաճառեք ավելի թանկ գնով:

Ճիշտ չէ, որ մարդն իր անունով ստորագրի մի բանի տակ, որը սխալ է, որպեսզի խուսափի գումար վճարելուց: Ճիշտ չէ, երբ մարդիկ օգնում են իրենք գործատուներին խաբել մարդկանց՝ շահույթի համար:

[31] Ելից 20.16, Առակների 6.16-19, 14.25, 19.5, 9

► Անազնվության ի՞նչ տարբեր ձևեր եք նկատել:

Աստվածաշունչն ասում է, որ չար մարդիկ պարտք են վերցնում և չեն վերադարձնում (Սաղմոս 37.21, Առակների 3.28)։ Ոմանք պարտք են վերցնում, այնուհետև իրենց պարտքը վճարելու պարտավորություն չեն զգում: Աստվածաշունչն ասում է, որ մենք պետք է համոզվենք, որ չենք թերանում ուրիշներին տալ այն, ինչ նրանց պարտք ենք (Հռոմեացիների 13.7-8):

Ազնվություն նշանակում է՝ դուք կատարում եք ձեր խոստումները և պարտավորությունները: Սաղմոս 15-ը նկարագրում է այն մարդուն, ով լավ հարաբերությունների մեջ է Աստծո հետ։ Հատկանիշներից մեկն այն է, որ նա խոստում է տալիս և պահում այն, նույնիսկ եթե դա թանկ է նստում իր վրա (Սաղմոս 15.4)։

Անազնվություն է, երբ մարդն իրեն վարձած անձի համար այնպես չի աշխատում, ինչպես պետք է (Եփեսացիների 6.5-6):

Սխալ է, որ աշխատողն իր գործատուից իրեր գողանա (Տիտոսի 2.9-10):

Սխալ է կեղծ անդորրագրեր տալը, իբր ինչ-որ բան ավելին է արժեցել, քան իրական գինն է: Սխալ է, երբ աշխատողը կամ գործակալը ստում է ինչ-որ բանի գնի մասին, որպեսզի կարողանա գումարի մի մասն իրեն պահել:

Սխալ է, որ գործատուն աշխատողին չի վճարում խոստացված աշխատավարձը (Հակոբոսի 5.4):

Սխալ է պահել մի բան, որը մեկ ուրիշը պատահաբար սխալ տեղ է դրել: Դուք պետք է այն վերադարձնեք տիրոջը, եթե կարող եք (Բ Օրինաց 22.1):

Եթե կառավարում եք ուրիշի ռեսուրսները (օրինակ՝ գործատուի կամ ծառայության), ապա սխալ է ձեզ համար գումար կամ իրեր օգտագործելը, եթե ձեզ թույլտվություն չի տրվել:

Ազնվության մշակութային մարտահրավերների օրինակներ

Որոշ համայնքներում մարդիկ ապրում են առաջնորդի հոգածության ներքո: Ժողովուրդը հավատարիմ է առաջնորդին, իսկ նրանից ակնկալվում է, որ օգնի մարդկանց ամեն կարիքի դեպքում: Նման համայնքներում մարդկանց գերակշիռ մասն անձնական մեծ ունեցվածք չունի: Ամենակարևոր ռեսուրսները, օրինակ՝ հողերը, պատկանում են համայնքին: Ենթադրվում է, որ առաջնորդները պետք է կառավարեն ռեսուրսները՝ ի շահ բոլորի: Երբ մարդը կարիք է ունենում, նա մտածում է, որ իրավունք ունի վերցնելու այն, ինչ պետք է իրեն համայնքի ռեսուրսներից:

Ջերալդը ծնվել է ջունգլիների մի գյուղում: Նրա և մյուս ընտանիքները գյուղին պատկանող հողատարածքում ցանք են անում պարենի համար: Նրանք ռեսուրսներ էին գտել ջունգլիներում: Նրանցից ոչ ոք սեփական հողատարածք չուներ, նույնիսկ այնտեղ, որտեղ իրենց տներն էին: Ընտանիքներն օգնում էին միմյանց, երբ խնդիրներ էին ծագում: Առաջնորդը հոր նման մեկն էր գյուղի համար: Մարդիկ սպասում էին, որ նա հոգա իրենց կարիքները:

Երբ Զերալդը դարձավ չափահաս, աշխատանք գտավ մի ընկերությունում, որը փայտանյութի համար գերաններ էր հատում: Նա հեռացավ գյուղից՝ բնակվելու աշխատավայրին մոտիկ: Նրան ամեն ամիս աշխատավարձ էին տալիս: Երբեմն նա բավականաչափ սնունդ չէր ունենում, քանի որ սովոր չէր աշխատավարձը պլանավորված ձևով ծախսելուն: Նա ակնկալում էր, որ տնօրենը սնունդ կտրամադրի իրեն, և զարմացավ, երբ վերջինս ասաց, որ Զերալդը պարտավոր է իր աշխատավարձով գնել ամեն ինչ: Երբ Զերալդի քույրը բժշկի կարիք ուներ, Զերալդը տնօրենից փող խնդրեց նրա համար: Զերալդը բարկացավ, երբ տնօրենը չօգնեց՝ կարծելով, թե վերջինս պետք է օգներ իրեն խնդիրների դեպքում: Տնօրենը, սակայն, ասաց, որ Զերալդին աշխատավարձ տալն է իր միակ պարտականությունը: Երբ Զերալդը թողեց աշխատանքը, նա գողացավ գործիքներից մի քանիսը, որպեսզի տաներ գյուղ, քանի որ մտածում էր, որ տնօրենը բավականաչափ չի օգնել իրեն:

Հետագայում Զերալդը կնոջ և երեխայի հետ տեղափոխվեց քաղաք ու աշխատանք գտավ մի մեծ մթերային խանութում: Զերալդը խնդրեց տնօրերին վճարել իր երեխայի դպրոցի վարձը, բայց նա մերժեց: Երբեմն Զերալդը բավականաչափ գումար չէր ունենում՝ գնելու այն ամենը, ինչ անհրաժեշտ էր իր ընտանիքին: Քանի որ նա աշխատում էր մի խանութում, որտեղ մթերք էր վաճառվում, նա մտածեց, որ իրեն պետք է թույլ տան խանութից սնունդ տանել իր ընտանիքի համար: Նա գիտեր, որ տնօրենը չի համաձայնի, ուստի գաղտնի վերցնում էր որոշակի սնունդ:

Որոշ աշխատողներ չեն հասկանում իրենց գործատուի ու իրեն պարտավորությունների սահմանները: Նրանք կարծում են, թե գործատուն պատասխանատու է իրենց բոլոր կարիքների համար: Բացի իրենց աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունից, նրանք տարբեր տեսակի օգնություն են խնդրում: Եթե նա չի տալիս նրանց այն, ինչ իրենց պետք է, նրանք իրենց գողությունն արդարացված են համարում, քանի որ մտածում են, թե գործատուն պարտական է իրենց՝ տրամադրելու անհրաժեշտ օգնությունը:

► Ուսանողը խմբի համար կարդում է Տիտոսի 2.9-14 հատվածը:

Այս խոսքերը մեզ ասում են, որ աշխատողը չպետք է գողանա իր գործատուից: 10-րդ խոսքն ասում է, որ ազնվությունը գեղեցկացնում է Քրիստոսի վարդապետությունը: Հետագա խոսքերը նկարագրում են այն կյանքը, որն ապրում է մարդը, եթե վերափոխվում է շնորհով:

Վստահելիություն

Ազնվությունը միայն փողի և ունեցվածքի պարագայում չէ կարևոր:

Կառլոսը խոստացել էր գործընկերոջը, որ կհանդիպի նրա հետ առավոտյան ժամը 8:00-ին: Սակայն նա ուշ էր քնել, ուշ վեր կացել ու դանդաղ նախաճաշել, այդ իսկ պատճառով ուշացավ ավելի քան մեկ ժամ: Նա գործընկերոջն ասաց, որ վարորդն ուշ էր եկել իրեն բերելու: Գործընկերը չզարմացավ: Կառլոսի բոլոր ընկերները գիտեն, որ նա երբեք չի կատարում իր հանձնառությունները:

Կառլոսն անազնիվ էր երկու ձևով.

1. Նա չպահեց իր խոստումը։
2. Նա ստեց՝ ուշանալու համար վերաբերյալ այլ պատճառ բերելով։

Մարդիկ հավատու՞մ են ձեզ, երբ ասում եք, որ գործը կանեք կամ տեղում կլինեք։ Դուք ինքներդ հավատու՞մ եք ձեզ, երբ ասում եք դա։ Երբ ինչ-որ բան եք խոստանում, դուք նաև խոստանո՞ւմ եք ջանքեր գործադրել այն իրականացնելու համար։ Սխալ է ինչ-որ բան խոստանալ, իսկ հետո այդ խոստումը կատարելու համար ջանք չգործադրել։

Եթե խոստումը չեք կատարել, պետք է ներողություն խնդրեք։ Դուք չպե՛տք է ստեք, թե ինչու եք ձախողվել ձեր պարտականությունը կատարելու մեջ։

Սխալ է ձեր կազմակերպության մեջ սեփական սխալների համար ուրիշներին մեղադրելը։ Ձեր թիմը չի վստահի ձեզ, եթե նրանք իմանան, որ ստեր եք հնարելու սխալներն արդարացնելու համար։

Վստահելի ղեկավարը չի ստիպում մարդկանց հետևել իր գաղափարին՝ նրանց ասելով բաներ, որ ճիշտ չեն։ Սթիվեն Քովին գրել է, որ «Առաջնորդության արդյունավետությունն իր ներշնչած վստահության մեջ է»[32]։

Փոխհարաբերության գործոնը

Շատերը կարծում են, թե սխալ է ստել ընկերներին կամ հարազատներին, բայց նորմալ է ստել այլ մարդկանց։ Ոմանք գումար կամ նյութեր են գողանում իրենց գործատուներից, քանի որ կարծում են, թե արժանի են ավելի բարձր վարձատրության։ Ոմանք գողանում են հարուստներից, հատկապես հարուստ օտարերկրացիներից։ Որոշ մարդիկ անազնիվ գործարքներ են կատարում այլ ազգային խմբի կամ սոցիալական դասի մարդկանց հետ։

Հիսուսն ասաց, որ պետք է սիրենք մեր դրացուն, ինչպես ինքներս մեզ։ Հիշո՞ւմ եք այն հարցը, որ օրենսգետը տվեց Հիսուսին։ «Իսկ ո՞վ է իմ դրացին»[33]։ Օրենսգետն ուզում էր, որ Հիսուսը նշի մարդկանց այն կատեգորիան, որին պետք է սիրենք։ Հիսուսը պատմեց «Բարի սամարացու» առակը։ Պատմությունը տարբեր ազգությունների երկու մարդկանց մասին է, ովքեր առաջին անգամ են հանդիպում։ Նրանք նախկինում հարաբերություններ չեն ունեցել, և նրանց ազգային խմբերի միջև բախում կա։ Սամարացին օգնեց կարիքավորին, թեև նրանց մեջ չկար որևէ հարաբերություն, որ պարտավորեցներ օգնություն ցուցաբերել։ Այս պատմության մեջ Հիսուսն ասաց, որ ոչ մի մարդ չպետք մեր սիրո ազդեցության գոտուց դուրս մղվի։

---

[32] Ստիվեն Մ. Ռ. Քովի (Stephen M. R. Covey). *Վստահության արագությունը. մեկ բան որ փոխում է ամեն բան (The Speed of Trust: The One Thing That Changes Everything).* (Նյու Յորք, 2006)
[33] Ղուկասի 10.29

Մենք չպետք է որոշենք, թե ով է արժանի մեր ազնիվ վերաբերմունքին: Չի կարելի ազնիվ լինել միայն ընտրյալ մարդկանց հետ: Նույնիսկ եթե կարծում ենք, թե մեր անազնվությունը չի վնասի մարդուն, մենք ցանկանում ենք հաճեցնել Աստծուն՝ ազնիվ լինելով (Գործք 24.16) [34]:

Ինչպիսի՞ անձնավորություն եք ուզում լինել: Ինչպիսի՞ն է Աստված ուզում, որ լինեք:

Ինչ-որ մեկը գուցե արժանի չէ ձեր քաղաքավարի վերբերմունքին, բայց Աստված ցանկանում է, որ քաղաքավարի մարդ լինեք: Ինչ-որ մեկը գուցե արժանի չլինի ձեր ազնվությանը, բայց Աստված ցանկանում է, որ ազնիվ մարդ լինեք: Ինչ-որ մեկը գուցե արժանի չլինի ձեր սիրուն, բայց Աստված սիրեց ձեզ, երբ արժանի չէիք դրան, և Աստված ցանկանում է, որ սիրող անձնավորություն լինեք:

► Ուսանողները խմբի համար կարդում են Ա Պետրոսի 2.21-23 և 3.8-12 հատվածները:

Թույլ մի՛ տվեք, որ ուրիշների բնավորությունն ազդի ձեր բնավորության վրա: Մարդը կարող է ստել ձեզ, բայց դուք չպետք է ստախոս դառնաք: Մարդը կարող է գողանալ ձեզանից, բայց դուք չպետք է գող դառնաք: Մարդը կարող է կոպիտ լինել ձեր հանդեպ, բայց դուք պետք է հարգող մարդ լինեք:

Օրինակներ կյանքից

Այս բաժնի օրինակները հիմնված են իրական դեպքերի վրա, սակայն անուններն ու մանրամասները փոխված են: Դրանք գողության կամ ստելու օրինակներ են:

Համոզվե՛ք, որ ուսանողները հասկանում են, թե ինչ է տեղի ունեցել յուրաքանչյուր օրինակում: Դիմե՛ք ուսանողներին, որ բացատրեն, թե ինչու է բերված օրինակում նկարագրված գործողությունը սխալ:

1. Ջորջն աշխատում էր գործարանում: Նա հաճախ տուն էր տանում մաքրող պարագաներ, գործիքներ և մանր իրեր, քանի որ գիտեր, որ գործարանը կարող է փոխարինել դրանք:

2. Պեդրոն խոշոր ընկերության բեռնատարի վարորդ էր: Հաճախ, երբ նա վարում էր ընկերության բեռնատարը, ճանապարհի կողքին ցուցանակ էր տեսնում, որտեղ գրված էր՝ «Մենք գնում ենք դիզել»: Նա երբեմն կանգնեցնում էր մեքենան և բեռնատարի բաքից վաճառում փոքր քանակությամբ դիզվառելիք՝ իմանալով, որ ընկերությունը չի իմանա, որ փոքր քանակություն է հանվել:

3. Թամարային վստահեցին համակարգչային սարքավորումներ գնել այն գրասենյակի համար, որտեղ նա աշխատում էր: Նա կաշառք տվեց խանութի վաճառողին, որպեսզի դուրս գրի անդորրագրեր, որոնք ցույց էին տալիս գնման ավելի բարձր գներ, որպեսզի նա կարողանար գումարի մի մասն իրեն պահել:

[34] Նաև՝ Փիլիպպեցիների 1.10, Բ Կորնթացիների 5.9

4. Մեծ քաղաքի այգում մի մարդ վաճառում է այրված լամպեր: Գնողները գիտեին, որ դրանք չեն աշխատում, բայց գնում էին դրանք իրենց գրասենյակներ տանելու համար, որտեղ լավ լամպերը գողանում էին՝ փոխարինելով դրանք հին լամպերով:

5. Ալեքսը դպրոցի տնօրեն էր: Մի օր նրա մոտ եկավ մի աշակերտի հայր և պահանջեց, որ իր որդին լավ գնահատական ստանա հանրահաշվից: Նա Ալեքսին փող տվեց: Ալեքսը կարգադրեց հանրահաշվի ուսուցչին, որ լավ գնահատական դնի աշակերտին:

6. Անջելոն համալսարանի դասախոս էր: Նրա աշխատավարձը ցածր էր: Նա իր կուրսին ասաց, որ քննությունը շատ դժվար է լինելու, և որ ոչ մի ուսանող չի ստանա արժանի գնահատական՝ առանց պատասխաններն իրենից գումարով գնելու:

7. Ալեքսը պետական դպրոցի տնօրենն էր: Մի օր Վանյան՝ ընկերը, ով աշխատում էր միսիոներական կազմակերպությունում, հարցրեց, թե արդյոք կարող են որոշ սենյակներ վարձակալել դպրոցի շենքում: Ալեքսը գինն ասաց, և Վանյան ամեն ամիս գումարը տալիս էր Ալեքսին: Ալեքսն այդ գումարը պահեց իրեն և երբեք չհայտնեց այդ եկամուտների մասին:

8. Վանյան աշխատում էր մի միսիոներական կազմակերպության մեջ, որը պետք է որոշ տարածք վարձեր դասասենյակների համար: Վանյան գնաց իր ընկերոջ՝ դպրոցի տնօրեն Ալեքսի մոտ: Նրանք պայմանավորվեցին վարձակալության գնի շուրջ, այնուհետև Վանյան ավելի բարձր գումար ասաց կազմակերպությանը: Ամեն ամիս Վանյան գումարը տալիս էր Ալեքսին, բայց իրեն էր պահում հավելյալ գումարը:

9. Սերգեյն աշխատում էր մի ծառայության համար, որը նոր շենքի կարիք ուներ: Ծառայությունը Սերգեյին ասել էր, որ իրենց համար շինարարական կազմակերպություն գտնի: Սերգեյը զրուցել էր մի քանի շինարարական ընկերությունների հետ: Լավագույն գին տվող ընկերություն ընտրելու փոխարեն նա ընտրեց մեկին, ով խոստացավ իրեն տալ ծառայությունից ստացած գումարի մի մասը:

10. Ալբերտոն պետք է արտոնագրեր իր մեքենան, բայց նա գիտեր, որ այն չի անցնի տեխզննումը, քանի որ որոշ լույսեր չէին աշխատում: Նա իր մեքենան տարավ արտոնագրման բաժին և տեսավ մարդկանց երկար հերթը, որ սպասում էին իրենց մեքենաների զննությանն ու արտոնագրմանը: Մուտքի մոտ գտնվող մի տղամարդ նրան ասաց, որ որոշակի գնով կարող է իր համար կարճ ժամանակում արտոնագիր ստանալ՝ առանց ստուգման: Ալբերտոն վճարեց գինը և շուտով, արտոնագիրն ստացած, տուն գնաց:

11. Սիմոնը եկավ իր մեքենան ավտոկայանատեղից վերցնելու: Ավտոկայանատեղին սպասարկողը նրան ասաց կայանման գինը: Սիմոնը նրան ավելի քիչ գումար տվեց, բայց թույլ տվեց նրան պահել կայանման տոմսը մեկ այլ հաճախորդի տալու համար, որպեսզի սպասարկողը կարողանար իրեն վերցնել Սիմոնի վճարած գումարը:

12. Աննան բավականաչափ չէր պարապել քննության համար: Երբ նա եկավ դասի, նստեց ընկերոջ մոտ, որը լավ սովորող էր, որպեսզի կարողանար արտագրել ընկերոջ պատասխանները:

13. Իգորը վարում էր տրակտոր, որը գութան էր քաշում մեծ կառավարական ագարակի համար: Նա ցանկանում էր ավելի վաղ ավարտել գործը: Նա բարձրացրեց գութանը, որպեսզի այն խորը չփորի՝ դրանով իսկ կարողանալով ավելի արագ քշել տրակտորը: Դաշտը կարծես պատրաստ էր, բայց լավ բերք չտվեց, քանի որ այն ճիշտ չէր հերկվել:

14. Հովիվ Պիեռը որպես միսիոներ է մեկնել՝ հովվելու մի եկեղեցի: Իրեն ուղարկող կազմակերպությունը նրան ամսական աշխատավարձ էր ուղարկում: Քանի որ հովիվ Պիեռը ցանկանում էր, որ եկեղեցին նույնպես վճարի իրեն, նա իր եկեղեցու ժողովրդին ասաց, որ իր կազմակերպությունն իրեն ֆինանսապես չի աջակցում:

15. Գողը մտավ Էլլայի տուն և փող գողացավ: Երբ Էլլան ընկերներին պատմեց այդ մասին, ասաց, որ գողը վերցրել է նաև այլ իրեր, չնայած դա այդպես չէր: Նրա ընկերները կարեկցեցին և գումար տվեցին նրան՝ փոխարինելու այն իրերը, որոնք կարծում էին, թե գողացվել են:

16. Գուլովոն մի փոքրիկ գյուղի ղեկավար էր: Նա նաև գյուղի եկեղեցու առաջնորդն էր: Նրա ժողովուրդը պարզունակ էր, անկիրթ և աղքատ, բայց գյուղը շատ հող ուներ: Քաղաքի գործարարները գյուղատնտեսական ծրագրերի համար դիմեցին հող գնելու հարցով: Գուլովոն վաճառեց գյուղի ամբողջ հողատարածքը և այդ գումարով իր համար քաղաքում տուն կառուցեց:

17. Ամեն տարի Ֆեյրֆիլդի համայնքային եկեղեցին ընտրում էր մի մայրիկի, որը պետք է պատվի արժանանար՝ որպես «Տարվա մայր»: Նրանք ընտրեցին Վիլմային ոչ թե այն պատճառով, որ նա լավ մոր օրինակ էր, այլ որովհետև գիտեին, որ նա նվիրատվություն կանի եկեղեցուն: Այն բանից հետո, երբ նրանք պատվեցին նրան, Վիլման գումար նվիրաբերեց եկեղեցուն՝ նոր դարպասներ գնելու համար: Հաջորդ տարի եկեղեցին որոշեց կրկին ընտրել Վիլմային՝ որպես «Տարվա մայր», թեև նա տեղափոխվել էր մեկ այլ քաղաք:

18. Բարնին եկեղեցու ծառայության վարորդն էր: Ամեն երեկո նա ծառայության մեքենան տանում էր ապահով մի վայրում կայանելու: Երբեմն մեքենան կայանելուց առաջ նա ուղևորներ կամ բեռներ էր տեղափոխում սեփական շահի համար:

Անազնվության ազգային ողբերգությունը

Այս պատմությունը հորինված է, բայց նկարագրում է այն, ինչ տեղի է ունեցել շատ վայրերում:

Բորոլ քաղաքի քրիստոնյաները պարզեցին, որ կողքի մարզում մարդկանց մի մեծ համայնք կա, որ ապրում է աղքատության մեջ: Այդ մարզի մարդիկ իբանացի կոչվող ազգային խմբից էին: Սերունդներ շարունակ իբանացիներն ապրել էին պարզունակ տներում՝ առանց բժշկական ծավալուն օգնության

կամ կրթության հասանելիության: Շատերը բավարար սնունդ չունեին, իսկ ոմանք սովամահ էին լինում:

Բորոլի քրիստոնյաները սկսեցին գումար տալ իբանացիներին օգնելու համար: Նրանք ներկայացուցիչներ ուղարկեցին այլ շրջանների եկեղեցիներ՝ ներդրումների խնդրանքով:

Բորոլի քրիստոնյաները սկսեցին բեռնատարներով սնունդ ուղարկել իբանացիներին: Նրանք վստահում էին իբանացիների եկեղեցու առաջնորդներին՝ սնունդը բաշխելու առումով:

Իբանացիների առաջնորդները շուկաներ հիմնեցին՝ մթերքը իրենց ժողովրդին վաճառելու համար: Միայն փող ունեցողները կարող էին գնել այն, ուստի դրանից ոչինչ չհասավ սովատանջ մարդկանց: Եկեղեցու առաջնորդներն ու նրանց ընկերները շահույթը վերցնում էին իրենց: Սննդի մի մասն ուղարկվեց՝ վաճառելու մեկ այլ մարզում, որտեղ մարդիկ ի վիճակի էին ավելի շատ վճարելու:

Բորոլի քրիստոնյաները պնդեցին, որ սնունդը անվճար տրվի այն մարդկանց, ովքեր դրա կարիքն ավելի շատ ունեն: Իբանացիների եկեղեցու առաջնորդները բաշխման համար բյուջե մշակեցին, որը ներառում էր վարորդներով բեռնատարներ վարձելն ու օգնող մարդկանց վճարելը: Նրանք սովորականից ավելի բարձր գներ սահմանեցին, իսկ հավելյալ գումարը պահեցին իրենց: Երբ Բորոլի քրիստոնյաները պահանջեցին ծախսերի մասին հաշվետվություններ, իբանացիները կեղծ զեկույցներ գրեցին:

Ամեն անգամ, երբ Բորոլի քրիստոնյաները անազնիվ արարքներ էին հայտնաբերում, նրանք հիասթափվում էին և հուսահատվում: Նրանք փորձեցին գտնել այլ իբանացի առաջնորդների՝ օգնելու իրենց, բայց նույն խնդիրներն ունեցան: Բորոլի շատ քրիստոնյաներ դադարեցին այդ նպատակով ընծաներ տալուց: Ոմանք շարունակեցին նվիրատվությունները: Մի քանի իբանացի հովիվներ շուտով ունեցան մեքենաներ և լավ տներ Բորոլի աջակցության շնորհիվ: Մյուս հովիվները նախանձում էին նրանց և ցանկանում կապեր հաստատել Բորոլի նվիրատուների հետ: Հեռավոր մարզերում սովալլուկ մարդկանց մեծ մասն այդպես էլ օգնություն չստացավ:

Մեկ այլ պատկերավոր օրինակ

Ուորեն Բաֆեթը «Berkshire Hathaway» կոչվող ընկերության գործադիր տնօրենն էր: Նա ցանկանում էր գնել «McLane Distribution» անունով մի ընկերություն, որը պատկանում էր «Walmart»-ին: Գնումը կազմել էր 23 միլիարդ դոլար: Սովորաբար այսպիսի գնումը պահանջում է ամիսներ տևող ստուգումներ, որպեսզի գնորդը կարողանա ստուգել ամեն ինչ: Բաֆեթը հանդիպեց Walmart-ի ղեկավարների հետ և պայմանավորվեց մեկ հանդիպման ընթացքում: Նա ոչ ոքի չուղարկեց՝ համոզվելու, որ գույքն ու այլ ակտիվները կարգին են: Նա ավելի ուշ հայտնեց բոլորին. «Մենք գիտեինք,

որ ամեն ինչ լինելու է հենց այնպես, ինչպես ասում էր Walmart-ը, և դա այդպես էր»: Այս հսկայական գործարքն արագ ավարտվեց, քանի որ առաջնորդները վստահում էին միմյանց[35]:

Հիմա մտածե՛ք նախորդ օրինակներում նկարագրված մարդկանց մասին: Նրանցից ոչ մեկին չէր հաջողվի այսպես պայմանավորվել, քանի որ վստահելի չէին: Ամեն ինչ պետք է ստուգվեր, ինչը մեծ ծախսեր ու ժամանակ կպահանջեր:

Խմբային քննարկում

► Որո՞նք են որոշ անազնիվ գործելակերպեր, որոնցից դժվարությամբ կհրաժարվեն ձեր մշակույթի մարդիկ:

► Ո՞րն է այն գործելակերպը, որը պետք է փոխեք ձեր կյանքում:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Մենք գովաբանում ենք Քեզ արդարության և ճշմարտության Աստված լինելու համար: Մենք շնորհակալ ենք Քեզ, որ միշտ ազնիվ ես մեզ հետ գործերում:

Օգնի՛ր մեզ հետևել ազնվության այն չափանիշներին, որոնք Դու ունես մեզ համար: Օգնի՛ր մեզ կիրառել ազնվության սկզբունքները մեր խոսքերում ու գործերում:

Շնորհակալություն մեր Հայրը լինելու համար, որ ապահովությամբ ես մեզ առաջնորդում: Մենք ուզում ենք վստահել Քեզ, որ հոգ տանաս մեզ համար:

Ամեն:

---

[35] Ստիվեն Մ. Ռ. Քովի (Stephen M. R. Covey). *Վստահության արագությունը. մեկ բան որ փոխում է ամեն բան (The Speed of Trust: The One Thing That Changes Everything)* (Նյու Յորք, 2006), 15

Դաս 10. Առաջադրանքներ

(1) Գրե՛ք մեկ պարբերություն հետևյալ կետերից յուրաքանչյուրի վերաբերյալ.

- Բացատրել մեզ համար Աստծո էության (ճշմարտության) և Աստծո չափանիշների (ազնվության) միջև կապը: Բացատրե՛լ, թե ինչու է Աստված մեզանից պահանջում ազնիվ լինել մեր խոսքով և մեր բոլոր գործերով:
- Ամփոփե՛լ, թե ինչ է ասում Աստվածաշունչն ազնվության մասին՝ օգտագործելով առնվազն երեք սուրբգրային խոսք:
- Բացատրե՛լ առնվազն չորս եղանակ, թե ինչպես է անազնվությունը կամ ազնվությունը ազդում ուրիշների հետ մեր հարաբերությունների վրա:

(2) Պատրաստե՛ք աստվածաշնչյան մի փոքրիկ քարոզ ազնվության մասին, որով կարող եք կիսվել ձեր մշակույթի մի խումբ մարդկանց հետ: Տվե՛ք աստվածաշնչյան հիմնավորում Աստծո չափանիշների համար, ապա կիրառե՛ք այն որոշակի իրավիճակներում:

Դաս 11
Մարդու արժեքը

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը պետք է.

(1) Հավատա, որ ամեն մարդ արժեքավոր է և արժանի է հարգանքի, քանի որ ստեղծված է Աստծո պատկերով:

(2) Պատասխանատվություն ստանձնի՝ արդարության և ողորմության քայլեր կատարելու նրանց համար, ովքեր վատ վերաբերմունքի են արժանանում իրենց շրջապատում:

(3) Արժանապատվորեն վերաբերվի բոլոր մարդկանց՝ անկախ իրավիճակից:

Դեյլ Քարնեգի. մարդ, ով գնահատում էր մարդկանց

Դեյլ Քարնեգին հայտնի էր իր՝ *«Ինչպես ձեռք բերել ընկերներ և ազդել մարդկանց վրա»* գրքով: Նա հավատում էր, որ բոլոր մարդիկ արժանի են ուշադրության և հարգանքի, քանի որ նրանք ի սկզբանե արժեքավոր են՝ որպես մարդիկ: Դեյլ Քարնեգիի ինստիտուտը ստեղծվել է նրա սկզբունքները ուսուցանելու նպատակով:

Մի անգամ Դեյլ Քարնեգիի ինստիտուտը երեկոյան դասեր էր անցկացնում բիզնես մասնագետների համար՝ սովորեցնելով նրանց լինել ընկերասեր և կապեր հաստատել մարդկանց հետ: Երբ ուսանողները հանձնում էին թեստը, նրանց մեկ հարց անսպասելիորեն ապշեցրեց: Անսպասելի հարցը սա էր. «Ի՞նչ է այն կնոջ անունը, ով միշտ մաքրում է նախասրահը, երբ դասից դուրս եք գալիս»: Ուսանողները բազմիցս անցել էին նրա կողքով, երբ տուն էին գնում դասի ավարտից հետո, բայց նրանց մտքով չէր էլ անցել ուշադրություն դարձնել այդ կնոջ վրա, թեև դասի ընթացքում սովորում էին, թե ինչպես պետք է ընկերական լինել և կապեր հաստատել: Նրանք ենթադրել էին, թե իրենց նոր հմտությունները պետք է օգտագործեն միայն կարևոր մարդկանց հետ կապեր հաստատելու համար:

Մարդու արժեքն՝ ըստ քրիստոնեության

Բոլոր մարդիկ, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին, մեկ մարմնի՝ Քրիստոսի մարմնի անդամներ են. «Այսուհետև ո՛չ հրեա կա և ո՛չ էլ հույն, ո՛չ ծառա կա և ո՛չ էլ ազատ, ո՛չ արու կա և ո՛չ էլ էգ, որովհետև բոլորդ էլ մեկ եք Քրիստոս Հիսուսի մեջ» (Գաղատացիների 3.28):

Ղուկասի Ավետարանը պատմում է մի զրույցի մասին, երբ Հիսուսը մեջբերում է. «Սիրի՛ր դրացուդ քո անձի պես» պատվիրանը: Օրենսգետը հարցնում է Նրան. «Իսկ ո՞վ է իմ դրացին» (Ղուկասի 10.29): Հարցը նշանակալից էր, քանի որ օրենսգետը ենթադրում էր, որ պետք չէ բոլորին սիրել: Նա կարծում էր, որ պատվիրանն իրենից պահանջում էր սիրել միայն որոշակի խմբի մարդկանց:

Բոլոր մշակույթների մարդիկ շատ նման բարոյականության չափանիշներ ունեն: Նրանք գիտեն, որ գողությունը, սպանությունն ու ճնշելը սխալ են: Սակայն նրանք չեն մտածում, որ բոլորն արժանի են արդար վերաբերմունքի: Գուցե ընկերոջից չգողանան, բայց անծանոթից գողանան: Գուցե սեփական ազգից մարդ չսպանեն, բայց օտարին սպանեն: Գուցե նրանք չճնշեն իրենց հարազատներին, բայց ճնշեն իրենց կողմից արհամարհված ազգային պատկանելության մարդկանց:

Քրիստոնյաները հավատում են, որ յուրաքանչյուր մարդ Աստծո պատկերով է՝ անչափելի արժեքով:

Ամեն անգամ, երբ հրեշտակը հայտնվում էր մարդկանց, ինչպես գրված է Սուրբ Գրքում, նրա առաջին խոսքերն էին. «Մի՛ վախեցիր», որովհետև նրա ներկայությունը աննկարագրելի էր ու զարմանահրաշ: Երբեմն մարդիկ ընկնում էին հրեշտակների առաջ՝ երկրպագելու մղումով[36]: Բայց մարդիկ ավելի կարևոր են, քան հրեշտակները[37]:

Գուցե հանդիպեք մի մարդու, ով ցածր խավի մուրացկան է, անկիրթ, անխելք, վատ բնավորությամբ, հմտություններից զուրկ, առանց ազդեցության, զզվելի արտաքինով և վանող անհատականությամբ, սակայն նա նույնպես որոշումներ է կայացնում, որոնք կարող են ունենալ հավիտենական արժեք: Եթե նա փրկագնվի Աստծո կողմից, կդառնա ավելի մեծ մեկը, քան շատ այլ մարդիկ[38]: Ուստի նա արժանի է հարգանքի:

► Ուսանողը խմբի համար կարդում է Գաղատացիների 3.28 խոսքը:

Այս խոսքը նշում է երեք եղանակ, որոնցով հաճախ դասակարգում են մարդկանց՝ ազգությունը, սոցիալական դասն ու սեռը: Սոցիալական դասը ներառում է տնտեսական մակարդակը: Մենք կարող ենք ավելացնել այլ դասակարգումներ, ինչպիսիք են՝ տարիքը, կրթական մակարդակը և հմտությունները: Այս դասակարգումներից ոչ մեկը չի ազդում Աստծո կողմից մարդուն տրված արժեքի վրա:

► Կարո՞ղ է ինչ-որ մեկը լինել ավելի արժեքավոր, քան մյուսները: Բացատրե՛լ:

Բարձր ինտելեկտով, կրթությամբ, հմտություններով, ֆիզիկական ուժով, առաջնորդական փորձով կամ փող ունեցող անձն ավելի արժեքավոր է *որոշակի բաների հասնելու համար:* Սակայն այդ հատկանիշների պատճառով մարդուն որպես *մարդ* ավելի արժեքավոր դասելը սխալ է: Այդ հատկանիշները գործնական արժեք ունեն, բայց Աստծո պատկերով ստեղծված մարդկության հիմնական էությունն անչափելի և հավերժական արժեք ունի:

---

36 Օրինակ՝ Հայտնության 22.8-9. «Եվ ես՝ Հովհաննես, այս բաները լսողն ու տեսնողը, երբ լսեցի ու տեսա, ընկա, որ երկրպագեմ այն հրեշտակի ոտքերի առաջ, որ այս բաները ցույց էր տալիս ինձ: Եվ նա ինձ ասաց. «Զգուշացի՛ր, մի՛ արա այս, որովհետև ես ծառայակից եմ քեզ, քո եղբայր մարգարեներին և այս գրքի մարգարեության խոսքերը պահողներին. Աստծո՛ւն երկրպագիր»:

37 Ա Կորնթացիների 6.3:

38 Ա Կորնթացիների 15-րդ խոսքը բացատրում է քրիստոնյաների մարմինների հրաշալի վերափոխումը, որը տեղի կունենա հարության ժամանակ:

Նախապաշարմունք

Մարդիկ հակված են կարծելու, որ որոշակի ազգային խմբի պատկանող մարդկանց ներկայացուցիչներից բոլորն ունեն հատուկ առանձնահատկություններ: Երբեմն այս պնդումներն արվում են՝ կապված մաշկի գույնի հետ, օրինակ՝ «Սպիտակամորթ մարդիկ միշտ _____» կամ «Սևամորթները բոլորը _____ են»:

Երբեմն պնդումները վերաբերում են ազգությանը, օրինակ՝ հաիթիացիները կամ գերմանացիները, ճապոնացիները: Երբեմն դա ավելի որոշակի է, ինչպես, օրինակ, ցեղային անվանումը կամ ազգի ներսում գտնվող էթնիկ խումբը:

Այն պնդումները, որոնք արվում են մարդկանց կատեգորիաների մասին, երբեմն հաճոյախոսական են լինում, բայց ավելի հաճախ քննադատական են: Նման պնդումներով մեջ հիմնականում հասկացնում ենք, որ այդ խմբի բոլոր անդամները որոշակի թերություններ ունեն:

Ահա մարդկանց քննադատական հայտարարությունների օրինակներ էթնիկ խմբերի կամ ազգությունների վերաբերյալ: Տարբեր էթնիկ խմբերի անուններ կարող էին լինել դատարկ տեղերում:

- _____ ծույլ են:
- _____ հաճախ են հարբում:
- _____ հնարավորության դեպքում գողություն կանեն:
- _____ հաճախ են կռվում:
- _____ գործը երբեք լավ չեն ավարտում:
- _____ բավականաչափ խելացի չեն դպրոցում լավ սովորելու համար:
- _____ արագ են բարկանում:
- _____ մշտապես ստում են:

Ակնհայտ է, որ ազգամիջյան տարբերություններ կան, և դրանք ավելին են, քան ֆիզիկական արտաքինը: Մի էթնիկ խումբը կարող է գերազանցել որոշակի սպորտաձևերով կամ աշխատանքի տեսակներով՝ իրենց ֆիզիկական և մտավոր կարողությունների շնորհիվ:

Ազգային խումբն ունի մշակութային առանձնահատկություններ: Մշակույթը մարդկանց սովորեցնում է որոշակի իրավիճակներին արձագանքել որոշակի ձևերով, ուստի մենք սովորում ենք որոշակի գործողություններ ակնկալել որոշակի մշակույթների մարդկանցից:

Խմբի ֆիզիկական և մշակութային առանձնահատկությունները նկատելը սխալ չէ: Այնուամենայնիվ, սխալ է դատել մարդու բնավորությունը նրա ազգային պատկանելության կամ մշակույթի պատճառով: Ցանկացած ազգության ներկայացուցիչ կարող է լինել աստվածահաճ, ազնիվ ու բարի: Սխալ կլինի նրան վերաբերվել իբր վատ բնավորություն ունեցողի, երբ նրան որպես անհատ չեք ճանաչում:

Մեր անձնական փորձառությունները ազդում են այլ մարդկանց նկատմամբ մեր վերաբերմունքի վրա: Եթե մեկ այլ էթնիկ խմբի մարդիկ վատ են վերաբերվում ինչ-որ մեկի հետ, այդ անձը կարող է սկսել

մտածել, թե այդ խմբի բոլոր անդամները նույնն են: Այդ տպավորությունն ավելի է ուժեղանում, եթե տվյալ էթնիկ խմբի կողմից անհատը բազմիցս արժանանում է վատ վերաբերմունքի կամ եթե վատ փորձը տեղի է ունենում երիտասարդության տարիներին:

Երկու էթնիկ խմբերի միջև երկարատև հակամարտությունները կարող են առաջ բերել մարդկանց սերունդներ, որոնք նախապաշարմունքներ են ունենում միմյանց նկատմամբ:

Երբ երեխան լսում է իր ծնողների և այլ մեծահասակների խոսակցությունները որևէ էթնիկ խմբի մարդկանց մասին, վաղ տարիքից ձևավորվում է այդ էթնիկ խմբի վերաբերյալ նրա սխալ կարծիքը:

Քրիստոնյան պետք է ուսումնասիրի էթնիկ խմբերի հանդեպ իր վերաբերմունքը և աղոթի, որ Աստված օգնի իրեն դրսևորել արդարություն ու սեր: Մենք պետք է հիշենք, որ Աստված հոգ է տանում ուրիշների համար այնպես, ինչպես հոգում է մեզ համար և չի գոհանում, եթե անարդարացիորեն ենք վերաբերվում նրանց:

Նախապաշարմունքներ ծառայության մեջ

Հին Կտակարանի Հովնանի պատմությունը մեծ դաս է մեզ համար: Հովնանը պատմում է, թե ինչու է փախել Աստծուց.

> «Աղոթք արեց Տիրոջն ու ասաց.«Օ՜, Տե՛ր, սա չէ՞ր, ինչ որ ասում էի, քանի դեռ իմ երկրում էի: Դրա համար չշտապեցի փախչել Թարսիս, որովհետև գիտեի, որ Դու ողորմած, գթած, երկայնամիտ ու բազմողորմ Աստված ես, և կզղջաս չարիքի համար: Եվ հիմա, ո՜վ Տեր, աղաչում եմ, ա՛ռ ինձնից իմ հոգին, որովհետև մեռնելս ապրելուցս լավ է» (Հովնանի 4.2-3):

Հովնանն Աստծուց փախավ ասորիների հանդեպ իր խորապես արմատացած ատելության պատճառով, և որովհետև գիտեր, որ Նինվեի բնակչության շրջանում գործելու համար իրեն ուղղված Աստծո կոչը նշանակում էր, որ հավանականությունը մեծ էր, որ Աստված բարի ու ողորմած կգտնվեր նրանց հանդեպ:

Ռասայի սոցիալական հայեցակարգը աստվածաշնչյան հասկացություն չէ: Աստվածաշունչն ուսուցանում է, որ բոլոր մարդիկ *մեկ ռասա են՝ մարդկային ցեղ*: «Նա է, որ մեկ մարդուց առաջացրեց ամբողջ մարդկությունը, որպեսզի բնակվեն աշխարհի բոլոր կողմերում: Հատուկ ժամանակաշրջաններ սահմանեց և ճշտեց նրանց բնակության սահմանները…» (Գործք Առաքելոցի 17.26):

Աստված կոչ է անում եկեղեցուն, որ Ավետարանը հասցնի երկրի վրա գտնվող յուրաքանչյուր էթնիկ խմբի (Գործք Առաքելոց 1.8): Մարդկային հոգու արժեքը նույնն է՝ անկախ ազգային պատկանելությունից:

Անհարգալից վերաբերմունք մարդկանց կատեգորիաների հանդեպ

Քանի որ մարդիկ հակված են կառչելու իրենց երկրային, աշխարհիկ առաջնահերթություններից, նրանք մարդկանց արժեքը սխալ սահմանելու միտում ունեն: Բազմաթիվ հասարակություններ որոշ մարդկանց դասակարգում են որպես պակաս կարևոր և նրանց վերաբերվում են այնպես, կարծես նրանք մարդուց ցածր կարգավիճակ ունեն:

Ստորև բերված է տարբեր հասարակությունների կողմից անհարգալից վերաբերմունքի օրինակներ: Այս գործելակերպերից մի քանիսը պատմական են, մյուսները դեռևս կիրառվում են:

Մարդկանց կատեգորիաների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի իրական օրինակներ.

- Տարեցներն այլևս պիտանի չեն, ուստի նրանց թողնում են մեկուսացված վայրերում՝ մահանալու:
- Մարդիկ գնում են տարբեր էթնիկ խմբերի անձանց՝ որպես ստրուկների, և կարող են վաճառել կամ նրանց հետ վարվել այնպես, ինչպես որ կամենան:
- Ձեռնարկությունները գրություններով ցուցանակներ են փակցնում, որ աշխատանքի չեն ընդունի որոշակի ազգային պատկանելության մարդկանց:
- Կանայք համարվում են իրենց ամուսինների սեփականությունը, որոնց հետ պետք է վարվել այնպես, ինչպես ամուսինն է որոշում:
- Նորածին աղջիկներին թողնում են մահանալ, քանի որ ընտանիքները տղաներ են ուզում ունենալ:
- Երկրի իշխանությունը զինվորներ է ուղարկում որոշակի շրջան՝ սպանելու որոշակի ազգության բոլոր մարդկանց:
- Երեխաները լքված են, քանի որ ունեն մտավոր կամ ֆիզիկական արատներ:
- Մի երկիր օրենքներ ունի, որոնք արգելում են կնոջը մեքենա վարել կամ բարձրագույն կրթություն ստանալ:
- Մարդիկ, ովքեր խոսում են ընդհանուր ազգային լեզվով, բայց որը դպրոցում ուսուցանվող լեզու չէ, իրավունք չունեն իրենց անունից խոսել պետական գրասենյակներում:
- Մարդկանց աշխատանքի են ընդունում անգլիական, ոչ թե աֆրիկյան անուններ ունենալու պատճառով:
- Հայրերը կարող են աղջիկներին վաճառել ստրկության կամ մարմնավաճառության:
- Երեխաներին սպանում են ծնվելուց առաջ, քանի որ մայրերը պատրաստ չեն զավակներ ունենալու:

Որոշ փիլիսոփայություններ և կրոններ նպաստում են մարդկանց որոշակի կատեգորիաների նկատմամբ վատ վերաբերմունքի տարածմանը:

Աթեիստ էվոլյուցիոնիստները չեն հավատում, որ մարդիկ հատուկ ստեղծված են Աստծո պատկերով: Նրանք կարծում են, թե ժամանակակից մարդիկ զարգացել են մրցակցության և մարդկության ավելի թույլ ու ոչ խելացի տարատեսակների ոչնչացման ճանապարհով: Նրանք հավատում են, որ «ուժեղների գոյատևումն» է մեր տեսակին պատկանող մարդուն ստեղծել: Եթե դա ճիշտ լիներ, ապա տեղին կլիներ, որ մարդիկ շարունակեին ոչնչացնել մարդկության ավելի թույլ տեսակներին: Բայց մենք գիտենք, որ բոլոր մարդիկ ստեղծվել են Աստծո պատկերով, հետևաբար, յուրահատուկ են Աստծո համար:

Աշխարհի շատ երկրներ բժիշկներին թույլատրում են սպանել երեխաներին մինչև ծնվելը: Որոշ իշխանություններ նույնիսկ պահանջել են սպանել երեխաներին չափից ավելի մեծ թվով բնակչության պատճառով: Շատ երկրներում մայրերը բժիշկներին խնդրում են սպանել իրենց երեխաներին մինչև ծնվելը, քանի որ իրենք լավ իրավիճակում չեն երեխա ունենալու համար: Սա այն տեսակի մարդու արժեքի և իրավունքների անտեսումն է, ով չի կարող խոսել կամ պաշտպանել իրեն:

Կրոնները, ինչպիսիք են՝ հինդուիզմը և բուդիզմը, կարծում են, թե մարդիկ տառապում են նախորդ կյանքում իրենց կատարած սխալ արարքների պատճառով: Նրանք հավատում են, որ ճնշված մարդիկ արժանի են իրենց ունեցած կարգավիճակին: Նրանք մտածում են, որ եթե մարդը տառապանքներին ու ճնշումներին լավ դիմանա, հաջորդ անգամ կարող է ավելի լավ կյանք ունենալ: Այդ կրոնները փոքր տեղ են տալիս ճնշված մարդուն օգնելուն, քանի որ կարծում են, թե մարդն անցնում է անհրաժեշտ գործընթացով:

Սխալ փիլիսոփայություններն ու կրոնները մարդկանց դրդում են հանդուրժել մարդկային խավերի նկատմամբ սարսափելի վատ վերաբերմունքներ: Հասարակությունները նորմալ են համարում սոցիալական ծայրահեղ անարդարության պայմանները: Քրիստոնյաները տարբերվում են նրանցից: Քրիստոնեական վարդապետությունն, ըստ որի մարդ հատուկ արարվել է Աստծո պատկերով, ապահովում է մարդկային արժեքի միակ ճիշտ հիմքը:

► Որևէ կատեգորիայի մարդկանց նկատմամբ ո՞ր անհարգալից վերաբերմունքն է սովորական ձեր հասարակության մեջ:

Բարի դրացին

Ինչպես Հիսուսի առակներից շատերը, այնպես էլ «Բարի սամարացու» պատմությունը (Ղուկասի 10.29–37) ցնցող էր ունկնդիրների համար: Երբ Նա պատմեց, թե ինչպես քահանան ու ղևտացին առանց օգնելու անցան վիրավորի կողքով, ոչ ոք չզարմացավ: Քահանաներն ու ղևտացիները կրոնական կառույցի մի մասն էին, բայց մարդիկ մտածում էին, որ նրանք ապականված են փողի և իշխանության պատճառով:

Լսողներն սպասում էին, որ երրորդ անձն է լինելու պատմության հերոսը, բայց նրանք ապշած ու հիասթափված էին, որ դա սամարացի է: Սամարացիները էթնիկապես խառնուրդ ազգ էին, և իրենց կրոնում խառնիխուռն հավատալիքներ ունեին: Հրեաները նրանց արհամարհում էին այդ երկու հատկանիշների համար:

Հիշո՞ւմ եք, որ մի հրեա օրենսգետ Հիսուսին հարցրեց. «Ո՞վ է իմ դրացին»: Նա ցանկանում էր, որ Հիսուսը մատնանշեր մարդկանց, ում պետք է սիրեր՝ սահմանելով մի նեղ կատեգորիա: Ինչպես աշխարհի շատ մարդիկ, նա կարծում էր, թե իր բարոյական պարտավորությունները միայն ընտրյալ կատեգորիայի մարդկանց համար են, և որ ինքը չպետք է հոգ տանի ուրիշների մասին:

Հիսուսը պատասխանեց հարցին՝ ցույց տալով, որ մենք պետք է հոգանք ամեն մարդու համար, ում հանդիպում ենք: Ցանկացած մարդ, ում հանդիպում ենք, մեր դրացին է: Բայց Հիսուսը պատասխանեց նաև մի հարցի, որը ոչ ոք չէր տվել. *«Ո՞վ է բարի դրացին»* կամ *«Ինչպիսի՞ մարդը կարող է նման սեր դրսևորել»*: Նա ցույց տվեց, որ հասարակության կողմից չհարգված մարդը կարող է լինել մեկը, ով հաճեցնում է Աստծուն, և ցուցաբերում է այն սերը, որն Աստված ուզում է տեսնել:

Հակոբոս առաքյալը զգուշացնում է եկեղեցուն, որ մարդկանց պատիվ տալը չարվի ըստ աշխարհի չափանիշների:

► Ուսանողը խմբի համար կարդում է Հակոբոսի 2.1-9 հատվածը:

Այս պատմության նման ի՞նչ եք տեսել, որ անում են եկեղեցիները:

Շատ մարդիկ, ովքեր կարևոր են համարվում երկրի վրա, Աստծո կողմից պատվի արժանացած մարդիկ չեն: Շատ մարդիկ, ովքեր հաճեցնում են Աստծուն, պատվի չեն արժանանում երկրի վրա: Հիսուսն ասաց, որ հավիտենության մեջ շատերի կարգավիճակները կփոխվեն (Մատթեոսի 19.30):

Երբ քրիստոնյա եղբայրները հավաքվում են, աղքատը ձեռք է բերում այնպիսի կարգավիճակ, որը չունի աշխարհում, քանի որ նրան հարգում են որպես քրիստոնյա եղբայր: Հարուստը կորցնում է այն կարգավիճակը, որն ունի աշխարհում, որովհետև նրա փողը նրան վեր չի դասում եկեղեցու մյուս անդամներից (Հակոբոսի 1.9-10):

Ստրկություն

Ստրկությունն այն վիճակն է, երբ մեկ անձը մեկ այլ անձի սեփականությունն է համարվում: Շատ երկրներում, որտեղ ստրկությունը թույլատրվում է, ստրուկը զրկված է մարդկային տարրական իրավունքներից: Սեփականատերը կարող է ստրուկի հետ անել այն, ինչ ուզում է, կարծես՝ ստրուկը կենդանի է կամ մեքենա: Ստրուկի սեփական ցանկություններն ու հավակնությունները ենթարկվում են տիրոջ կամքին: Ամուսինն ու կինը կարող են բաժանվել իրենց տիրոջ կողմից, իսկ երեխաներին կարող են խլել ծնողներից:

Հին Կտակարանում Աստված սահմանափակել է ստրկությունը և պաշտպանել ստրուկի որոշակի իրավունքներ: Այն ժամանակներում ստրուկի իրավունքների պաշտպանությունն անսովոր մի

երևույթ էր։ Նոր Կտակարանում Աստված ասաց, որ ինքը բոլոր մարդկանց տերն է, ոչ մեկին չի բարեհաճում կարգավիճակի պատճառով, և որ ստրուկների տերը պետք է լինի բարի և արդար (Եփեսացիների 6.9)։ Այն սկզբունքը, ըստ որի ստրուկին պետք է վերաբերվել այնպես, ինչպես արժան է յուրաքանչյուր անհատի, ի վերջո հանգեցրեց ստրկության վերացմանն այն ազգերի մեջ, որոնց վրա մեծ ազդեցություն է ունեցել Աստվածաշունչը։

Ստրկությունը տարբեր ձևերով դեռևս գոյություն ունի շատ վայրերում։ Օրինակ՝ որոշ վայրերում ծնողները երեխաներին վաճառում են աշխատանքի կամ սեռական շահագործման համար։ Երբեմն երեխաները հանձնվում են հեթանոսական տաճարներին՝ որպես հիվանդություններից կամ անեծքներից ազատվելու դիմաց փոխհատուցում։ Երբեմն կանանց իրենց կամքին հակառակ պահում են մարմնավաճառության մեջ։ Երբեմն մարդկանց մաքսանենգորեն տեղափոխում են այլ երկիր՝ ստրկացնելու նպատակով։

Տնտեսական ճնշում

Տնտեսական ազատությունից զուրկ վայրում պայմանները մասամբ կարող են նմանվել ստրկության։ Մարդիկ չունեն իրենց սեփական գործը սկսելու ու զարգացնելու ազատություն։ Հնարավորությունները քիչ են, որ մարդն իր գործը փոխի մեկ այլ՝ ավելի լավ գործով։ Որոշ տղամարդիկ աշխատում են այնպիսի աշխատավարձով, որը հազիվ է կերակրում իրենց ընտանիքին։ Նրանք հազվադեպ են տարրական սննդից բացի այլ բան գնում։ Նրանք չեն կարող իրենց թույլ տալ բժշկական օգնություն։ Ինչքան էլ քրտնաջան աշխատեն, երբեք չեն կարողանա ավելի լավ տան մեջ ապրել, քանի որ փողը երբեք չի բավականացնում նրանց կարիքներին։ Նրանց գործատուները ավելի շատ չեն վճարում, քանի որ միշտ կարող են գործի համար գտնել ցածր վարձատրությանը համաձայնող մարդկանց։

Տնտեսական ճնշումը բարդ երևույթ է և միայն գործատուների մեղքով չի լինում։ Որոշ երկրներում կան մեծ թվով մատչելի աշխատողներ, բայց քիչ են գործարաններն ու խոշոր բիզնեսները։ Եթե կառավարությունը կաշառակեր է, դա կարող է խանգարել խոշոր բիզնեսի մեկնարկին՝ պահանջելով բարձր հարկեր ու կաշառքներ։ Եթե շատ բիզնեսներ թույլատրվեին, աշխատողների աշխատավարձն ավելի բարձր կլիներ, քանի որ աշխատողները կարող էին ընտրել, թե որտեղ աշխատեն, և ձեռնարկությունները ստիպված կլինեին գրավել նրանց ավելի լավ աշխատավարձով ու պայմաններով։ Քանի որ քիչ բիզնեսներ են թույլատրվում, և աշխատողները աշխատանքի տեղավորման քիչ տարբերակներ ունեն, գործատուներն իրենց աշխատողներին վճարում են ցածր աշխատավարձ։ Աշխատողները բավականաչափ չեն վաստակում իրենց ֆինանսական կարիքները հոգալու համար։

Երկրի իշխանությունների իմաստը ժողովրդին ծառայելն է՝ պաշտպանելով նրան հարձակումներից և ամրապնդելով նրա ազատությունները։ Մարդու հիմնական ազատություններն են՝ կարծիք արտահայտելու, կրոնական դավանանքի, շահույթ ստանալու համար աշխատելու ու

սեփականություն ունենալու իրավունքը: Այն մարդուն, ում չի թույլատրվում անել դրանք, չեն վերաբերվում որպես լիարժեք մարդու:

Երբեմն մի ինչ-որ երկրի քրիստոնյաները նման պայմաններն ընդունում են որպես սովորական և չեն փորձում օգնել տնտեսապես ճնշված մարդկանց:

Ջամիլան ապրում էր մի փոքրիկ գյուղում, որտեղ աշխատանք չկար: Նա իր երեք երեխաներին թողեց տատիկի մոտ և գնաց քաղաք՝ ամսական 50 դոլարով հովվի տանը որպես աղախին աշխատելու: Նա հազվադեպ էր տեսնում իր երեխաներին: Շատերը ճիշտ չէին համարի, որ մայրն այդպես բաժանվի իր երեխաներից, բայց նույնիսկ քրիստոնյաները վարձում են Ջամիլայի իրավիճակում գտնվող մեկին: Նրանք զարմանում են, թե ինչու պետք է ավելի շատ վճարեն, երբ ինչ-որ մեկը պատրաստ է աշխատել այդ գումարի դիմաց: Ինչո՞ւ պետք է անհանգստանան նրա՝ երեխաներից բաժանված լինելու պատճառով, եթե նա է ընտրություն կատարում՝ թողնելու նրանց և աշխատելու:

► Քրիստոնյաները պարտավորություն ունե՞ն միջամտելու Ջամիլայի իրավիճակին: Ինչպե՞ս:

Ամովսի գրքում մի քանի անգամ խոսվում է տնտեսական ճնշումների մասին: Ամովսի 5.11-12-ում մարգարեն խոսում է կաշառքների մասին, որոնք դատավորներին ստիպում են բռնել փողով մարդու կողմը, և արդարությունը անհասանելի է դառնում աղքատներին: Ամովսի 8.4-6-ում մարգարեն դատապարտում է այն մարդկանց, ովքեր կեղծ չափումներ են օգտագործում աղքատ մարդկանց խաբելու համար: Ամովսի 4.1-ում նա ասում է, որ կանայք նույնպես մեղավոր են, եթե նրանք ապրում են շքեղության մեջ, որն իրենց ամուսինները ձեռք են բերել աղքատներին ճնշելու միջոցով: Մարգարեն ասում է, որ արդարությունը պետք է հորդի վարար գետի պես (Ամովսի 5.24), այսինքն՝ պետք է լինի առատ և հասանելի բոլորին:

Մարդու արժեքը և իշխանության դերերը

Այն, որ յուրաքանչյուր մարդ անսահմանորեն արժեքավոր է, չի նշանակում, որ մարդկանց մեջ չպետք է լինի իշխանության կառույց: Հավասար արժեք չի նշանակում՝ հավասար իշխանություն: Օրինակ, թեև Երրորդության յուրաքանչյուր անձ լիովին և հավասարապես Աստված է, Որդին ենթարկվում էր Հորը (Հովհաննեսի 6.38): Աստված պատվիրել է կնոջը հնազանդվել ամուսնուն. դա չի նշանակում, որ նա ամուսնուց ցածր է (Եփեսացիների 5.22): Աստված երեխաներին ասել է, որ հնազանդվեն իրենց ծնողներին. դա չի նշանակում, որ նրանք ստորադաս են իրենց ծնողներից, պարզապես իրենց զարգացման փուլն է այլ (Եփեսացիների 6.1):

Աստված հաստատել է իշխանություն (Հռոմեացիների 13.1-5): Նա նաև իշխանություն է հաստատել եկեղեցում (Եբրայեցիների 13.17):

Բոլոր առաջնորդները պետք է հիշեն, որ իրենք ծառաներ են (Մատթեոսի 20.25-28): Առաջնորդելով ծառայել՝ նշանակում է առաջնորդել ի շահ նրանց, ովքեր հետևում են: Առաջնորդը չի առաջնորդում իր շահի համար, այլ զոհաբերում է իր շահը՝ իրեն հետևողներին ծառայելու համար:

► Ինչպե՞ս կբացատրեք այն փաստը, որ ինչ-որ իմաստով որոշ մարդիկ ավելի կարևոր դերեր ունեն, քան մյուսները, մինչդեռ մեկ այլ առումով բոլոր մարդիկ հավասար կարևորություն ունեն:

Կիրառություններ քրիստոնյաների համար

Համոզվե՛ք, որ եկեղեցին հոգ տանի բոլոր մարդկանց մասին:

- Արդյոք տարեցներին հիշում և օգնո՞ւմ են այնպես, ինչպես պետք է:
- Արդյոք երեխաներին գնահատում և ուսուցո՞ւմ են, խրախուսո՞ւմ են իրենց հասունության մակարդակի համեմատ:
- Ձեր եկեղեցում ընդունված ու պատշաճ վերաբերմունքի արժանացա՞ծ են աղքատները:
- Դուք խուսափո՞ւմ եք եկեղեցում մարդկանց պատվելուց՝ իրենց հարստության կամ հասարակության մեջ ունեցած կարգավիճակի պատճառով:
- Արդյոք բոլոր ազգային խմբերի մարդիկ ընդունվա՞ծ են՝ մասնակցելու եկեղեցու ընկերակցությանը, կյանքին և ծառայությանը:
- Ձեր տարածքում կա՞ ազգային մի խումբ, որին պետք է ավետարանել:
- Կա՞ն մարդիկ, ովքեր ճնշված են ձեր հարևանության մեջ, ովքեր կարիք ունեն ինչ-որ մեկի, ով պաշտպանի իրենց:

Քրիստոնյա ընտանիքը պետք է ցույց տա բոլոր մարդկանց արժեքը: Պետք է հարգել և՛ ամուսնուն, և՛ կնոջը: Պետք է հաշվի առնել նրանց կարիքները: Երեխաներին չպետք է անտեսել կամ չկարևորել: Երեխաներին պետք է պատշաճ կերպով խրատել: Դուք իրավունք չունեք բռնություն գործադրելու ձեր երեխայի կամ կնոջ նկատմամբ, ինչպես որ իրավունք չունեք ձեր հարևանի հետ այդպես վարվելու:

Մենք պետք է օգնենք աղքատներին այնպես, որ ամրապնդենք նրանց արժանապատվությունը: Մի՛ տրվեք հասարակության այն սովորություններին, որ ինքներդ հարգանքի եք արժանի, մինչդեռ նվաստացնում եք աղքատներին: Եթե աղքատ մարդուն առաջարկում եք արդար ճանապարհ՝ վաստակելու այն, ինչ իրեն պետք է, նրա արժանապատվությունը պաշտպանված է լինում, քանի որ նա ընտրություն ունի, և կարող է աշխատել շահույթի դիմաց: Լավագույն օգնությունն աղքատներին իրենց վիճակը փոխելու հնարավորություն տալն է:

Հին Կտակարանի մարգարեներն ընդգծել են, որ Աստված ցանկանում է, որ իր ժողովուրդը ազատի ճնշվածներին (Եսայիայի 58.6):

Նոր Կտակարանը շեշտում է այն փաստը, որ Հիսուսը եկավ աղքատների մեջ: Նա ծնվել է մի վայրում, որտեղ կենդանիներ էին պահում: Նրա ընկերների և հետևորդների մեծ մասը աշխատավոր ու աղքատ մարդիկ էին: Հիսուսը հոգատարություն դրսևորեց իր հասարակության աննշան մարդկանց՝ աղքատներին, բորոտներին, որբևայրիներին, օտարերկրացիներին և երեխաներին: Նա ասաց, որ եկել է աղքատներին բարի լուր բերելու: Նա ասաց, որ Ավետարանը կազատի ճնշվածներին:

Եկեղեցու վաղ օրերից ի վեր քրիստոնյաները ակտիվ գործունեություն են ծավալել իրենց հասարակություններում: Նրանք լքված երեխաներին տարել են իրենց տները, ստրուկների են ազատել և օգնել հիվանդներին: Նրանք հոգ են տարել այն մարդկանց համար, որոնց հասարակությունները անարժեք են համարել:

Հիսուսն ասաց, որ մենք պետք է աղոթենք, որ Աստծո թագավորությունը գա, և որ Նրա կամքը կատարվի երկրի վրա, ինչպես որ երկնքում է (Մատթեոսի 6.10): Մենք գիտենք, որ բոլոր ճնշումները կվերջանան, երբ Աստծո Թագավորությունը լիովին գա երկրի վրա: Միևնույն ժամանակ, պետք է խնդրենք Աստծո միջամտությունը աշխարհի տարբեր անկյուններում ապրող ճնշված մարդկանց համար:

Սուրբննդյան երգ

Սուրբննդյան «Օ՜, սուրբ գիշեր[39]» երգը խոսում է այն մասին, թե ինչպես է Ավետարանը արժեք տալիս մարդկությանը՝ բերելով ազատություն: Ստորև ներկայացնում ենք երգի երկու տունը.

1. Օ՜, սուրբ գիշեր, աստղերը պայծառ փայլում են,
   Օ՜, այս գիշեր մեր Փրկիչ Տերը ծնվեց:
   Ողջ մարդկությունն անհույս, մեղքի ճահճում էր,
   Երբ հայտնվեց Նա, **մարդն իր արժեքն զգաց**:
   Հույսի հուզմունք, տքնած աշխարհին է ցնծում,
   Քանզի բացվում է փառահեղ մի լուսաբաց:

2. Նա մեզ սրտանց սիրել սովորեցրեց,
   Իր օրենքը սերն է, Բարի Լուրը՝ խաղաղություն:
   Ստրուկը մեր եղբայրն է. Նա շղթաները քանդեց,
   Նրա անունով պիտ վերանա ամեն ճնշում :
   Գոհությամբ ու խնդությամբ եկե՛ք երգենք,
   Նրա սուրբ անունը փառաբանե՛նք:

[39] «Օ՜, սուրբ գիշեր» երգի խոսքերը սկզբնապես գրվել են ֆրանսերեն 1843թ, հեղինակը Պլասիդ Կապոն է:

Խմբային քննարկում

Խմբերի մեծ մասի համար այս թեման շատ քննարկումներ կառաջացնի: Որոշ ուսանողներ կարող են ուժգին վերապրումներ ունենալ այն ամենի վերաբերյալ, ինչ նրանք զգացին կամ նկատեցին:

► Ինչպե՞ս կփոխվի ձեր վերաբերմունքն այլ էթնիկ խմբերի հանդեպ, եթե հիշեք, որ յուրաքանչյուր մարդ արժեքավոր է Աստծո համար:

► Ի՞նչը կցանկանայիք նախկինում այլ կերպ արած լինել, քանի որ այժմ գիտեք մարդկային արժեքի ճշմարտության մասին: Խրախուսե՛ք ուսանողներին ավելի շատ արտահայտվել իրենց նոր որոշումների, քան ուրիշների արածների հանդեպ իրենց վրդովմունքի մասին:

► Ինչպե՞ս պետք է մարդու արժեքավոր լինելն ազդի եկեղեցական ծառայության վրա:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Շնորհակալություն մեզ Քո կերպարով ու յուրահատուկ ստեղծելու համար: Օգն՛իր ինձ հարգել բոլոր մարդկանց: Օգնի՛ր ինձ ապաշխարել ցանկացած նախապաշարմունքից և վրդովմունքից, որ ունեմ մարդկանց հանդեպ:

Ես աղոթում եմ, որ Դու արդարություն հաստատես ամբողջ աշխարհում նրանց համար, ովքեր սխալ վերաբերմունքի են արժանանում իրենց ազգային պատկանելության, սեռի, տարիքի կամ այլ հատկանիշների պատճառով:

Օգնի՛ր ինձ՝ պաշտպանելու ճնշված մարդկանց և ներգործելու իմ հասարակության վրա, որպեսզի քո արդարությունը հաստատեմ բոլորի համար: Օգնի՛ր մեր եկեղեցուն և յուրաքանչյուր անհատ քրիստոնյայի՝ հատուկ ձևերով ցույց տալու Քո սերն աշխարհի հանդեպ:

Ամեն:

Դաս 11. Առաջադրանքներ

(1) Գրե՛լ եկեղեցու՝ հասարակության մեջ մարդկանց նկատմամբ վերաբերմունքը փոխելու իր աստվածատուր պատասխանատվության մասին:

- Ի՞նչ պետք է անի ձեր եկեղեցին:
- Ի՞նչ պետք է անեն անհատ քրիստոնյաները:
- Ի՞նչ եք անելու դուք:

(2) Ուսումնասիրե՛ք Երկրորդ Օրինաց 24.10-22 հատվածը: Թվարկե՛ք այն հրամանները, որոնք վեր են հանում մարդու արժեքը: Բացատրե՛լ յուրաքանչյուր հրամանի դիտավորությունը:

Դաս 12
Իշխանություններ

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը պետք է.
(1) Հասկանա, թե Աստված ինչ պարտականություններ և սահմանափակումներ է դրել իշխանությունների վրա:
(2) Հնազանդվի սուրբգրային ցուցումներին և սկզբունքներին՝ կապված իշխանությունների հետ:
(3) Նպաստի իր հասարակության մեջ արդարության տարածվելուն:

Մարդկության պաշտպան Ուիլյամ Ուիլբերֆորսը

Ուիլյամ Ուիլբերֆորսը (1759-1833) բրիտանական խորհրդարանի պատգավոր էր, ով դարձավ քրիստոնյա և սկսեց ընդդիմանալ ստրկությանը, երեխաների աշխատանքին և աղքատների հանդեպ վատ վերաբերմունքին: Նա 20 տարի աշխատեց մի օրենքի ընդունման վրա, որը վերջ կդներ ստրկավաճառությանը, որը գերիներ էր բերում Աֆրիկայից՝ վաճառելու ամբողջ Բրիտանական կայսրությունում: Նա հաճախ հիասթափվում էր, որ կարծես ուրիշներին չէր հետաքրքրում այդ հիմնախնդիրը: Մի անգամ նրան հաջողվեց ստանալ խորհրդարանի պատգավորների մեծամասնության համաձայնությունն առ այն, որ կսատարեին օրենքի ընդունմանը, սակայն ընդդիմախոսներին հաջողվեց պատգամավորներից մի քանիսին թատրոնի տոմսեր տալ ու ապահովել նրանց բացակայությունը խորհրդարանի նիստից, և օրենքը չընդունվեց: Օրենքը վերջ դրեց ստրկավաճառությանը 1807 թվականին, սակայն ստրկությունը դեռևս անօրինական չէր համարվում: Ուիլբերֆորսը շարունակեց քարոզարշավը՝ հանուն ստրկության լիակատար վերացման: Բրիտանական կայսրության մեծ մասում ստրկությանը վերջ դրվեց 1833 թվականին: Ուիլբերֆորսը մահացավ օրենքի ընդունման մասին լուրն ստանալուց ընդամենը երեք օր անց:

Ներածություն

Իշխանությունների հետ քրիստոնյաների հարաբերությունները շատ տարբեր են եղել: Պատմության որոշակի շրջանում և վայրերում գոյություն է ունեցել ազգային եկեղեցի, որը դաշնակցել է իշխանությանը: Այլ ժամանակներում և վայրերում իշխանությունն անօրինական է համարել եկեղեցու գործունեությունն և անցել հալածանքների: Կան երկրներ, որոնք մարդկանց թույլ են տալիս ազատորեն դավանել ցանկացած կրոն, և նրանց իշխանությունները պնդում են, որ մարդկանց չեն ուղղորդում որևէ կրոնի դավանմանը:

Քրիստոնյաների և իշխանությունների հարաբերությունը առաջացնում է բազմաթիվ բարդ հարցեր: Երբեմն եկեղեցին այնպիսի հարաբերություններ է ձևավորում իշխանության հետ մի վայրում, որը չի կարող գոյություն ունենալ աշխարհի այլ երկրներում, որտեղ իշխանությունը բոլորովին տարբեր է:

Այս դասը չի պատասխանի ամեն մի հարցի, ո՛չ էլ կբացատրի, թե ինչ պետք է անի քրիստոնյան յուրաքանչյուր պարագայում, բայց մենք կդիտարկենք աստվածաշնչյան որոշ սկզբունքներ քրիստոնյայի և իշխանության միջև եղած հարաբերությունների վերաբերյալ:

► Ուսանողը խմբի համար կարդում է Հռոմեացիների 13.1-7 հատվածը:Իշխանության մասին ի՞նչ դրույթներ եք տեսնում այս հատվածում:

Աստվածաշունչն ասում է մեզ, որ Աստված է հիմնել մարդկային իշխանությունը: Աստված ուզում է, որ լինի իշխանություն, և այն մարդը, ով հրաժարվում է հնազանդվել մարդկային իշխանություններին, ապստամբում է Աստծո դեմ (Հռոմեացիների 13.2):

► Ո՞րն է իշխանության նպատակը՝ ըստ այս խոսքերի:

Իշխանության նպատակներից մեկը մարդկանց վատ արարքներն արգելելն ու պատժելն է՝ օրենքի գործադրմամբ (Հռոմեացիների 13.3):

Իշխանություն ունեցողը ծառայում է Աստծուն և իրագործում Նրա նպատակները, երբ պատժում է օրինախախտներին (Հռոմեացիների 13.4):

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Տիմոթեոսի 2.1-2 հատվածը:

Մենք պետք է աղոթենք պետական իշխանության մեջ ընդգրկված մարդկանց համար, որպեսզի հանգիստ և խաղաղ կյանքով ապրենք: Դա մեզ հուշում է, որ երկրի իշխանությունը պաշտպանում է հասարակությանն ու ապահովում իր ժողովրդի խաղաղությունը, երբ գործում է՝ ինչպես հարկն է:

Քրիստոնեական ազդեցություն

► Հիսուսն ասաց, որ աղի և լույսի պես լինենք (Մատթեոսի 5.13-16): Նա ի՞նչ նկատի ուներ:

Ոմանք կարծում են, թե քրիստոնյաները չպետք է մասնակցեն քվեարկություններին կամ պետական պաշտոններ զբաղեցնեն, քանի որ աշխարհի իշխանությունները քրիստոնեական սկզբունքներով չեն կառավարում: Որոշ քրիստոնյաներ մտածում են, որ եկեղեցին պետք է լինի առանձին համայնք, որը չպետք է ներգրավվի հասարակության մեջ, քանի որ հասարակությունը չափազանց ապականված է:

Երեմիա մարգարեն գրեց հրեաներին, ովքեր տեղահանվել էին իրենց երկրից՝ ապրելու հեթանոսական հասարակության մեջ: Նրանք հոժարակամ չէին գնացել այնտեղ: Եթե երբևէ Աստծուն հավատացողները պատճառ են ունեցել ձեռնպահ մնալու հասարակական կյանքին մասնակցելուց, անշուշտ, այս հրեաները պետք է լինեին: Նրանք այնտեղ էին իրենց կամքին հակառակ, հասարակության կրոնը հեթանոսական էր, իշխանությունը ճնշող էր և կործանել էր իրենց ազգին, ու հրեաներն սպասում էին այն օրվան, երբ կկարողանային հեռանալ այդ վայրից:

Բայց լսե՛ք այն պատգամը, որ Աստված տվեց մարգարեին այդ մարդկանց համար.

«Եվ այդ քաղաքի խաղաղությո՛ւնն ուզեցեք, ուր ձեզ գերի տանել տվեցի, ու դրա համար ՏԻՐՈՋՆ աղոթք արեք, քանի որ նրա խաղաղությամբ դուք էլ խաղաղություն կունենաք» (Երեմիա 29.7)։

Շալոմ եբրայերեն բառը, որ սովորաբար թարգմանվում է «խաղաղություն», վերաբերում է ոչ միայն բուն խաղաղությանը, այլև խաղաղությանն ուղեկցող օրհնություններին։ Խոսքն Աստծո օրհնությունների մասին է։ Աստծուն երկրպագողները Աստծո օրհնությունները կգտնեին, եթե փորձեին այդ օրհնությունները բերել մի մեղսալի հասարակության մեջ, որը Նրա մասին ոչինչ չգիտեր և որը հալածում էր Նրա սեփական ժողովրդին։

Մարդիկ, ովքեր ծառայում են Աստծուն, պետք է ազդեն իրենց հասարակության վրա, որպեսզի նրանք հարգեն Աստծո կամքը, որպեսզի իրենց հասարակությունն օրհնվի։ Նրանք ոչ միայն պետք է հայտնեն Ավետարանի մասին, այլև կիրառեն Աստծո սկզբունքներն ամեն իրավիճակի և որոշման համար։

Իշխանությունն ու հասարակությունը պետք է ձևավորվեն Աստծո Խոսքով։ Աստծո բացահայտված ճշմարտությունից պետք է առաջ գա էթիկան (վարվելակերպի ու արարքների բարոյական ու ճիշտ հիմքերը, կանոնները), էթիկայից էլ պիտի առաջ գա քաղաքականությունը (իշխանություն՝ հանուն արդարության և ազատության), այնուհետև՝ տնտեսությունը (ռեսուրսների կառավարում)։ Այսպիսով, ճիշտ հերթականությունը հետևյալն է՝ ճշմարտություն, ապա էթիկա, ապա քաղաքականություն, ապա տնտեսություն.

1. Աստվածաշունչ
2. Էթիկա
3. Քաղաքականություն
4. Տնտեսություն

Մարդկային հասարակությունը, ցավոք, ձգտում է այս կարգին հակառակ գործել։ Մարդիկ իրենց անձնական տնտեսությունը դարձնում են առաջնահերթություն, այնուհետև աջակցում են առաջնորդներին և օրենքներին, որոնք նրանց կտան այն, ինչ իրենք են ուզում՝ նույնիսկ արդարության ու ազատության հաշվին, այնուհետև ձևավորում են իրենց էթիկան, որպեսզի այն համապատասխանեցնեն իրենց գործերին, ապա ստեղծում են կրոն՝ հիմնավորելու իրենց վարքագծերը։ Այսպիսով, սովորական հերթականությունը լինում է՝ տնտեսություն, ապա քաղաքականություն, ապա էթիկա ու կրոն։

1. Տնտեսություն
2. Քաղաքականություն
3. Էթիկա
4. Կրոն

Այդ տեսակի կրոնը կազմվում է այնպիսի սխալ սկզբունքներով, որ ճշմարտության նշույլ իսկ չի պարունակում իր հայեցակարգում։

Եկեղեցին պետք է կանգնի հանուն աստվածաշնչյան ճշմարտության՝ ոչ միայն մերժելով հասարակության մեղքերը, այլև բացատրելով ու ցույց տալով, թե ինչպիսին պետք է լինի հասարակությունը: Եթե քրիստոնյաները չեն կարողանում բացատրել և ցույց տալ, թե ինչ պետք է անի հասարակությունը, պետք է ակնկալենք, որ մարդիկ, ովքեր անտեղյակ են աստվածաշնչյան ճշմարտություններին, չեն կարողանա կիրառել դրանք:

Քրիստոնյաները չպետք է միայն քննադատեն իրենց հասարակությանը, այլև հասարակության մի մասը պետք է կազմեն: Քրիստոնյաները պետք է ակտիվորեն ներգրավվեն իրենց համայնքներում և լինեն արդարության ջատագովներ: Քրիստոնյաները միշտ պետք է բարոյական բարձր արժեքներ դրսևորեն իրենց բոլոր գործերում և այդպիսով ազդեն ուրիշների վրա՝ հանուն արդարության: Նրանք պետք է մասնակցեն երկրի կառավարմանն ու հասարակական կազմակերպությունների գործունեությանն այնքան ժամանակ, քանի դեռ նրանք կարող են դա անել՝ չխախտելով քրիստոնեական սկզբունքները: Եթե թույլատրվում է, նրանք պետք է մասնակցեն քվեարկություններին և որևէ պաշտոնի համար սատարեն այն թեկնածուներին, ովքեր ամենաշատն ունեն քրիստոնեական բնավորություն ու արժեքներ:

► Եկեղեցու վրա հասարակական ճնշման ի՞նչ օրինակ գիտեք, երբ եկեղեցին կայացնում է ոչ թե սուրբգրային ճշմարտության վրա հիմնված որոշումներ, այլ՝ հանուն տնտեսական բարեկեցության:

Քրիստոնյաները և մարդկային իշխանությունների օրենքները

Քրիստոնյաները պատմության ընթացքում մաքառել են՝ իմանալու, թե ինչպես հետևեն քրիստոնեական սկզբունքներին, երբ իրենց իշխանությունները հետևում են այլ սկզբունքների: Երբեմն հակառակությունը դաժան է լինում, իսկ քրիստոնյաները հալածվում ու չարչարվում են իրենց համոզմունքների համար, քանի որ չեն կարող անել այն, ինչ պահանջում է իշխանությունը:

Աստվածաշունչն ասում է մեզ վճարել հարկերը, որոնք պահանջվում են պետության կողմից (Հռոմեացիների 13.7, Մատթեոսի 22.21):

Աստվածաշունչը մեզ պատվիրում է հնազանդվել մեր երկրի օրենքներին (Տիտոսի 3.1): Այնուամենայնիվ, Աստվածաշունչը նաև պատվիրում է, որ մենք պետք է հնազանդվենք Աստծուն, երբ Աստծո պատվիրանները հակասում են մարդկանց օրենքներին (Գործք 5.29):

Իշխանությունը կարող է ժողովրդից պահանջել, որ պատերազմեն ինչ-որ անարդար ու անազնիվ պատճառներով: Իշխանությունը կարող է պահանջել նորածինների մահը՝ բնակչության գերաճը նվազեցնելու նպատակով: Իշխանությունը կարող է պահանջել, որ բնակչությունը մասնակցի որևէ էթնիկ խմբի ստրկացմանը կամ ոչնչացմանը:

Երբեմն խնդիրները վերաբերում են կրոնական երկրպագությանը: Քրիստոնյաները կարող են հալածվել, երբ չեն երկրպագում իրենց ընտանիքի կամ ցեղի աստվածներին: Քրիստոնյաները կարող են հալածանք կրել, երբ նրանց իշխանությունը հավանություն է տալիս այլ կրոնի:

Որոշ երկրներ օրենքներ ունեն ավետարանչության և Աստվածաշնչի ուսուցման դեմ: Քրիստոնյաները հալածվում են, երբ Ավետարանն են քարոզում: Որոշ երկրներ պատժում են ծնողներին, ովքեր իրենց երեխաներին սովորեցնում են Աստծո մասին:

Մենք Աստվածաշնչում ունենք հավատի մարդկանց օրինակներ, ովքեր չեն ենթարկվել թագավորներին անիրավ հրամաններին: Դանիելը շարունակեց աղոթել նույնիսկ այն ժամանակ, երբ աղոթքն անօրինական համարվեց: Դանիելի երեք ընկերները հրաժարվեցին երկրպագել թագավորի կուռքին: Իսրայելացի մանկաբարձները չհնազանդվեցին փարավոնին, երբ նա հրամայեց սպանել իսրայելացի նորածիններին:

Պատմության ընթացքում քրիստոնյաները ավետարանել են նույնիսկ այն ժամանակ, երբ դա անօրինական է համարվել: Քրիստոնյաներն անօրինական ճանապարհով Աստվածաշունչ են տարել որոշ երկրների սահմաններից ներս: Քրիստոնյաները հավաքվել են ծածուկ երկրպագության ու աղոթքի: Քրիստոնյաները, առանց բռնության, արգելափակել են արհեստական վիժեցում իրականացնող կլինիկաները: Քրիստոնյաներն օգնել են փախուստի մեջ գտնվող ստրուկներին:

Քրիստոնյաներից շատերը նախընտրում են իրենց կյանքը խաղաղ ապրել և նման որոշումների չբախվել: Այնուամենայնիվ, եթե քրիստոնյան կանգնած է բարոյական երկընտրանքի առաջ, նա պետք է անի այն, ինչ ճիշտ է, նույնիսկ եթե դա պահանջում է զոհաբերություն: Եթե նա հնարավորություն ունի՝ կանխելու անարդարությունը կամ Բարի Լուրը հայտնելու, նա լուրջ որոշում է կայացնում, երբ վճռում է գործել, թե՝ ոչ:

► Կարո՞ղ եք նկարագրել ձեր երկրի մի օրենք, որ իրավական երկընտրանք կարող է առաջացնել քրիստոնյաների համար:

Կաշառակերություն

Մի հովիվ ճանապարհորդում էր օտար երկրում: Նա ուներ համապատասխան փաստաթղթեր, սակայն մի քանի անգամ ոստիկանները կանգնեցրին նրան և մի փոքր գումար ուզեցին: Նրանց գումար չտալու դեպքում նրանք կձգձգեին նրա ուղևորության ընթացքն ու անախորժություն կառաջացնեին:

► Ի՞նչ պետք է անի հոգևոր հովիվն այս իրավիճակում:

Կաշառքը փող է, որը տրվում է պաշտոնատար անձի վրա ազդելու համար, որպեսզի նա ինչ-որ թույլտվություն տա: Սխալ է մարդուն կաշառելը, որպեսզի նա անի մի բան, որը չպետք է անել: Օրինակ, եթե շենքը կամ մեքենան չի բավարարում պատշաճ պահանջներին, սխալ է տեսուչին կաշառելը, որպեսզի ստորագրի մի բան, որը չի համապատասխանում ճշմարտությանը: Անարդար դատելու համար դատավորին կամ ոստիկանին կաշառելը սխալ է:

Երբեմն պաշտոնատար անձը կաշառք է պահանջում, որպեսզի անի այն, ինչ պարտավոր է անել: Այդ դեպքում վճարողը նրան գումարը չի տալիս, որպեսզի ինչ-որ անօրինական բան անի: Սխալը պաշտոնյայի կողմից դա պահանջելն է (Ղուկասի 3.4), բայց վճարողը կարող է այլընտրանք չունենալ:

Օրինակներ կարող են լինել թույլտվություն ստանալը մի բանի համար, որ պետք է թույլատրվեր, կամ ստանալ անմեղ մարդու ազատությունը: Երբեմն կաշառքը նման է կողոպուտի: Կողոպուտը սխալ է, բայց զոհին չենք մեղադրում:

Աստվածաշնչյան գրվածքներն ուշադիր քննելը ցույց է տալիս, որ Աստված դատապարտում է նրանց, ովքեր կաշառք են վերցնում, բայց ողորմած է նրանց հանդեպ, ովքեր ստիպված են վճարել այն (Ելքի 1821, 23.8, Բ Օրինաց 10.17, 16.19, 27.25): Քրիստոնյաները երբեք չպետք է կաշառք տան հարմարավետության համար, բայց նրանք մեղավոր չեն, երբ նրանց ստիպում են կաշառակեր պաշտոնյաները:

►Ո՞րն է սխալ կաշառքի օրինակ:

Զինվորական ծառայություն

Շատ քրիստոնյաներ կարծում են, թե սխալ է իրենց երկրի համար որպես զինվոր ծառայելը: Նրանք իրենց համոզմունքը հիմնում են սուրբգրային որոշակի դրույթների վրա: Հիսուսն ասաց, որ պետք է շրջենք մյուս այտը, երբ ինչ-որ մեկը հարվածում է մեզ (Մատթեոսի 5.39): Հիսուսն ասաց, որ իր ծառաները չեն կռվում, քանի որ Նրա թագավորությունն այս աշխարհից չէ (Հովհաննեսի 18.36): Պողոս առաքյալն ասում է, որ մեր զենքերը ֆիզիկական չեն (Բ Կորնթացիների 10.4): Այդ քրիստոնյաները հավատում են, որ ցանկացած բռնություն այլ մարդկանց նկատմամբ սխալ է: Այդ քրիստոնյաներից շատերն ապրում են այն երկրներում, որտեղ պետությունը սահմանափակում է քրիստոնյաների ազատությունն ու հալածում է իրենց:

Այլ քրիստոնյաները հավատում են, որ մենք պետք է պատրաստ լինենք պաշտպանելու մեր երկիրը՝ որպես զինվորներ: Սուրբ Գիրքն ասում է, որ Աստված է կարգել իշխանությունները, և որ նրանք կարող է զենք գործածել չարագործներին պատժելու համար (Հռոմեացիների 13.4): Կարծես ակնհայտ է, որ Աստված նախատեսել է, որ տղամարդը պաշտպանի իր ընտանիքը, և, հետևաբար, բնական է թվում, որ տղամարդիկ պետք է կազմակերպված լինեն՝ պաշտպանելու իրենց ընտանիքները զինված հարձակումներից: Երբ մի զինվորական հարցրեց Հովհաննես Մկրտչին, թե ինչպես ապաշխարել, Հովհաննեսը նրան ասաց, որ կաշառք չվերցնի և անձնական բռնություն չկիրառի, բայց չասաց, որ թողնի բանակը (Ղուկասի 3.14): Երբ Հիսուսն ասաց մյուս այտը շրջել, նա չէր ասում չպաշտպանվել հարձակումից, այլ որ մենք չպետք է վրեժխնդիր լինենք այնպիսի վիրավորական գործողության համար, ինչպիսին ապտակն է: Նա ասաց, որ իր ծառաները չեն պայքարում Իր համար երկրային թագավորություն հաստատելու համար, քանի որ Նա այդպես չի հաստատելու Իր թագավորությունը: Եթե երկրի պետական իշխանությունն Աստծո գաղափարն է, և եթե վերջինս պետք է պաշտպանի իր ժողովրդին, ապա ճիշտ է, որ քրիստոնյաները ծառայեն իրենց իշխանությանը՝ օգնելու վերջինիս կատարելու իր պարտականությունները:

Եկեղեցու դարավոր պատմության ընթացքում շատ ազգերի շատ քրիստոնյաներ ծառայել են բանակում, նույնիսկ մարտերի են մասնակցել, քանի որ հավատում էին, որ պետք է իրենց ազգը չար հարձակումից պաշտպանելու սուրբ պարտքը կատարեն:

Աշխարհի տարբեր երկրներում գտնվող քրիստոնեական եկեղեցիները համաձայնության չեն գալիս զինվորական ծառայության հարցում: Կարևոր է, որ անձն աղոթքով քննի սուրբգրային խոսքերն ու ողջամտություն դրսևորի, ապա հավատարմորեն հետևի իր համոզմունքին:

► Ինչպե՞ս են ձեր երկրի եկեղեցիները պատասխանում զինվորական ծառայության անհրաժեշտության հարցին:

Խմբային քննարկում

Քրիստոնյաների գերակշռող մասը հիմնավորված կարծիք ունի այս հիմնահարցերի վերաբերյալ: Կարևոր է հասկանալ, որ տարբեր ժամանակներում և վայրերում քրիստոնյաներից շատերը համաձայնության չեն եկել այս հարցերի շուրջ: Մենք պետք է չդատենք ուրիշների դրդապատճառները՝ հիմնվելով նրանց կարծիքների վրա:

► Ինչպե՞ս պետք է գնահատենք մեր երկրում եկեղեցիների և իշխանությունների հարաբերությունները: Ինչ-որ բան պե՞տք է փոխվի:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Շնորհակալություն, որ իշխանություններ ես կարգել պաշտպանություն և ազատություն ապահովելու համար: Օգնի՛ր ինձ հավատարիմ մնալ Քեզ՝ չնայելով մարդկային իշխանությունների անկատարությանը:

Օգնի՛ր ինձ պաշտպանել նրանց, ովքեր ունեն դրա կարիքը, և օգնի՛ր, որ իմ սեփական հասարակության վրա ազդելու պարտականությունս ճիշտ կատարեմ:

Մենք սպասում ենք, որ այս երկրի վրա ամբողջությամբ հաստատես Քո թագավորությունը:

Ամեն:

Դաս 12. Առաջադրանքներ

(1) Աստվածաշունչը հիշատակում է բազմաթիվ պատմություններ այն մասին, որ Աստված գործում է պետական պաշտոնյաների միջոցով՝ իրականացնելու Իր նպատակներն Իր ժողովրդի կյանքում: Առակների 21.1-ն ասում է. «Թագավորի սիրտը Տիրոջ ձեռքում է, ինչպես ջրի վտակները. Նա ո՛ր կողմը կամենա, այն կողմն էլ կշրջի այն»: Ուսումնասիրելու նպատակով ընտրել այս դեպքերից մեկը.

- Ծննդոց 41.14-49, 42.1-3, 45.4-7,
- Եսթերի 4. 7-8,
- Նեեմիայի 1-2:

Գրե՛ք ձեր դիտարկումների մասին.

- Ի՞նչ պիտի կատարվեր Աստծո ժողովրդի կյանքում:
- Աստված ինչպե՞ս օգտագործեց ամբարիշտ տիրակալին Իր նպատակն իրագործելու համար:
- Աստված ինչպե՞ս օգտագործեց աստվածապաշտ մարդուն Իր նպատակն իրագործելու համար:

(2) Ընտրե՛լ թեմաներից մեկը.

- Քրիստոնեական ազդեցիկություն,
- Քրիստոնեական և մարդկային օրենքներ,
- Կաշառակերություն,
- Զինվորական ծառայություն:

Նայե՛լ այս դասի սուրբգրային հատվածները, որոնք վերաբերում են ձեր թեմային: Մեկ էջ ծավալով գրե՛ք ձեր կարծիքը՝ հիմնվելով սուրբգրային մոտեցումների վրա:

Դաս 13
Քրիստոնյայի մարմինը

Դասի նպատակները

Այս դասի ավարտին ուսանողը կարող է.
(1) Հասկանալ, թե ինչպես են ֆիզիկական խնդիրներն ազդում հոգևոր առողջության վրա։
(2) Իր մարմինը նվիրել Աստծուն և ձեռք բերել նոր սովորություններ, որոնք պատվում են Տիրոջը։

Աստծո ծառա Մարտին Լյութերը

Մարտին Լյութերը դարձավ վանական, քանի որ մտածում էր՝ Աստծուն ծառայելու և ընծայվելու լավագույն միջոցը դա է։ Վանականի ապրելակերպի կարգուկանոնի մեջ ներառվում էին սննդակարգի սահմանափակումներ, ծոմապահություն, պարզ հագուստ, սահմանափակ ունեցվածք և ամուրիություն։ Մարտինի՝ իր մարմինն Աստծուն ընծայելու նախանձավորությունը վերջինիս ստիպեց նաև մտրակահարությամբ պատժել սեփական մարմինը։ Այն բանից հետո, երբ Մարտինը հասկացավ Ավետարանը, ըստ որի փրկվում ենք շնորհքով ու հավատքի միջոցով, նա գիտակցեց, որ չի կարող շնորհ վաստակել՝ չարչարելով իր մարմինը։ Նա հրաժարվեց վանականության երդումներից՝ համարելով դրանք ոչ սուրբգրային։ Նա ամուսնացավ նախկին միանձնուհի Կատերինայի հետ և ունեցավ վեց երեխա։

Ներածություն. խառնաշփոթ Կորնթոսում

Կորնթոսում ոմանք չէին հավատում, որ քրիստոնյաները հարություն են առնելու։ Նրանք կարծում էին, թե մահից հետո մարմինը դեն է նետվելու, և որ միայն քրիստոնյայի հոգին է երկինք գնալու։

Ոմանք ասում էին. «Քանի որ մարմինը մեռնելու և մի կողմ է գցվելու, կարևոր չէ, թե հիմա ինչ ենք անում դրա հետ։ Մարմնի մեղսալի գործածումը նշանակություն չունի, քանի որ մարմինը հավիտենական արժեք չունի»։

Մյուսները, ովքեր ժխտում էին հարությունը, ասում էին. «Մարմինը պիտի դեն նետվի, քանի որ նրա ցանկությունները չար են։ Երկնքում ֆիզիկական ցանկություններ չենք ունենալու։ Քանի որ ֆիզիկական ցանկությունները վատն են, մենք հիմա չպետք է հետևենք դրանց։ Մենք չպետք է լավ կերակուր ուտենք, հարմարավետ հագուստ կրենք կամ նույնիսկ սեռական հարաբերություններ ունենանք։ Մենք պետք է ամեն կերպ ճնշենք մարմինը, մինչև որ կլքենք այն»։

Այդ երկու տեսակետն էլ սխալ էին։ Նրանք երկուսն էլ հիմնված էին սխալի վրա։ Ա Կորնթացիների 15-ում Պողոսը բացատրում է, թե ինչու է հարության վարդապետությունը կարևոր։

Թեև ճիշտ է, որ ավելի շատ խոսենք հոգևոր կյանքի մասին, քան՝ ֆիզիկական խնդիրների, մեր մարմինն ազդում է հոգևոր խնդիրների վրա։ Աստված մեզ ստեղծել է ոչ թե սոսկ հոգիներ, այլ որպես

ֆիզիկական մարմիններով հոգիներ: Մենք ընդամենը կենդանիներ չենք, բայցև միայն հոգիներ չենք՝ մարմնի մեջ ժամանակավորապես բնակվող:

Ընծայում Աստծուն

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Կորնթացիների 6.19-20 հատվածը:

Այս հատվածները մեզ ասում են, որ մեր մարմինը պատկանում է Աստծուն, քանի որ Նա փրկագնել է մեզ: Մեր մարմինը Սուրբ Հոգու տաճարն է և չպետք է օգտագործվի մեղքի համար:

Աստվածաշունչն ասում է մեզ, որ ֆիզիկական մարմինը պետք է ամբողջությամբ հանձնվի Աստծուն:

► Ուսանողը խմբի համար կարդում է Հռոմեացիների 12.1 խոսքը:

Այս խոսքն ասում է, որ մեր մարմինը պետք է սուրբ լինի, և որ այն պատկանում է Աստծուն: Այն երկրպագությունը, որն Աստված ուզում է մեզնից, լիակատար հնազանդությունն է:

Մենք չենք կարող հետևողականորեն ծառայել Աստծուն, եթե մեզ վերահսկում են մեր մարմնի ցանկությունները: Մեղքի ցանկացած սովորություն նման է կախվածության:

Պատկերացրե՛ք մի կենդանու, որն ունի երկու տեր: Մի տերը հրաման է տալիս, բայց կենդանին չի կարող հնազանդվել, քանի որ մյուս տերը շղթայով պահում է նրան: Շղթայով տերը կենդանուն քաշում է այնտեղ, որտեղ ուզում է: Կենդանին գուցե ավելի շատ սիրում է մյուս տիրոջը, բայց չի կարող հնազանդվել նրան: Ահա՛ թե ինչպիսին է լինում կախվածությունը: Մարդը կարող է Աստծուն ծառայելու ցանկություն ունենալ, բայց կախվածությունը շղթա է, որին նա չի կարողանում դիմակայել:

Մոլուցքներն ու մեղքի տեսակներից շատերը վնասում են մարդու մարմինն ու միտքը: Քանի որ մեր մարմինը պատկանում է Աստծուն և Նրան ծառայելու համար ենք ընծայել այն, սխալ է դրան վնասելը: Հռոմեացիների գրքից մեր ընթերցած խոսքն ասում է, որ մեր մարմինը որպես զոհ մատուցենք Աստծուն, բայց չենք կարող դա անել, եթե չենք կարող ինքներս մեզ վերահսկել:

► Ուսանողը խմբի համար կարդում է Ա Կորնթացիների 9.24-27 հատվածը:

Ձեր մարմինը ձեր ծառան է, բայց դուք պետք է այն վերահսկեք: Այն շատ լավն է որպես ծառա: Եթե այն դուրս է գալիս վերահսկողությունից, դառնում է ձեր տերը, իսկ մարմինը սարսափելի տեր է: Պողոսն ասում է, որ հրաժարվում է որևէ ցանկության թույլ տալ իր վրա տիրել (Ա Կորնթացիների 6.12):

► Ուսանողը խմբի համար կարդում է Հռոմեացիների 6.13 խոսքը:

Մարմինը նման է գործիքների հավաքածուի, որը պատկանում է ձեզ: Գործիքները ձեր վերահսկողության տակ են: Դուք այլևս չպետք է օգտագործեք դրանք մեղքի համար, այլ՝ Աստծո:

Բնական պահանջմունքներ

Ոմանք կարծում են, թե մենք չենք կարող խուսափել մեղքից մեր բնական պահանջմունքների պատճառով: Ճշմարիտ է, որ մենք ծնվել ենք մեղսալի բնույթով, որը մեզ տանում է մեղքի: Այդ բնույթի մեջ են ոչ միայն ֆիզիկական պահանջմունքերը, այլև մտքի ցանկությունները և կամքը, որը դեպի մեղք հակում ունի: Մարդը, որը չի վերածնվել Աստծո Հոգով, չի կարող զերծ մնալ մեղք գործելուց, թեև կարող է հաջողությամբ դիմակայել որոշ մեղքերի: Մեղավորը, ով չի զգացել Աստծո շնորհքը, միգուցե չհավատա, որ երբևէ կապրի հաղթության մեջ:

Խնդիրը բնական պահանջմունքները չեն: Աստված է դրանք ստեղծել: Ադամն ուներ բնական պահանջմունքներ, բայց դրանք մեղսալի չէին մինչև այն պահը, երբ որոշեց չհնազանդվել Աստծուն: Այդ պահանջմունքները Աստծո նախագծով են դրված մարդու մեջ: Դրանք ինքնին մեղսալի չեն, բայց գայթակղության պատճառ կարող են լինել:

► Բնական պահանջմունքների ի՞նչ օրինակներ կան:

Հետևյալ աղյուսակը ամբողջական չէ, բայց ներկայացնում է բնական պահանջմունքների ու ցանկությունների օրինակներ, այդ ցանկությունների սովորական և պատշաճ արտահայտման ձևերը և այն ուղիները, որոնցով դրանք գայթակղության տեղիք կարող են տալ:

Ուշադրությո՛ւն դարձրեք, որ բնական պահանջմունքները պարտադիր կերպով մարմնի ցանկություններ չեն: Դրանք բնական են, քանի որ առաջ են գալիս մարդկային բնությունից, բայց դրանք բոլորը չէ, որ ֆիզիկական ցանկություններ են:

Բնական պահանջմունքների կատեգորիաները	Բնական պահանջմունքների պատշաճ դրսևորման օրինակներ	Հնարավոր մեղքեր
Ինքնապաշտպանությունը	Անվտանգության միջոցներ ձեռնարկելը	Վախկոտությունը
Մարդկանց հավանությանն արժանանալը	Պարկեշտ հագնվելը, քաղաքավարություն դրսևորելը	Հպարտությունը, նախանձը
Ֆիզիկական բավարարվածությունը	Ուտելը, քնելը և ամուսնական սեռական հարաբերություններ ունենալը	Մեղսալի բավարարվածությունը
Սոցիալական վայելքները	Այլ մարդկանց հետ շփումներ	Բամբասանքը, ինքնահավանությունը
Ֆիզիկական հարմարավետությունը	Հեշտ ուղիներ գտնելը	Ծուլությունը, նյութապաշտությունը
Ֆինանսական ապահովությունը	Տնտեսող լինելը, ներդրումներ անելը	Ագահությունը, անազնվությունը

► Կա՞ որևէ բնական ցանկություն, որին միշտ կարող եք հնազանդվել:

Չի՛ կարելի թույլ տալ, որ որևէ բնական ցանկություն իշխի մեզ վրա՝ առանց հարցի տակ այն դնելու: Չկա որևէ բնական պահանջմունք, որին հանգիստ ու առանց վախենալու կարող եք հետևել, քանի որ ցանկությունները չեն սահմանափակվում այն բաներով, որոնք ճիշտ են ձեզ համար: Օրինակ՝ քաղցի զգացումը չի տարբերում սեփական ուտելիքը ուրիշի սննդից, քաղցի համար միևնույն է, որը մարդը չի կարող իրեն թույլ տալ որոշակի ուտեիքներ:

Լինում են պահեր, երբ պետք է ճնշել նույնիսկ ցանկության պատշաճ արտահայտությունները: Միայն մարդու քաղցած լինելը չի նշանակում, որ նա կարող է վերցնել ուրիշի սնունդը: Հանգստի պահանջմունքը բնական է, բայց երբեմն մարդ ստիպված է լինում աշխատել նույնիսկ հոգնած

ժամանակ: Բնական է, որ մենք ցանկանում ենք խուսափել վտանգից, բայց մարդը պետք է դիմադրի վտանգից փախչելու ցանկությանը, երբ ինքն է պատասխանատու ուրիշի պաշտպանության համար:

Բնական ցանկությունները կամ պահանջմունքները կարող են դառնալ այնքան աղավաղված և սխալ ուղղորդված, որ անբնական ու անմարդկային ձև ստանան: Ահա՛ թե ինչու են որոշ մարդիկ չափազանց այլասերված են ու հակված դաժան գործողությունների: Բնական ցանկությունները խեղաթյուրվում կամ սխալ են ուղղորդվում. 1) սխալ ուսուցում կամ դաստիարակություն ստանալու հետևանքով, 2) վատ մտածողության ձևերի զարգացմամբ, 3) մեղավոր միջավայրում գտնվելով, կամ՝ 4) սեփական մեղսալի արարքներով:

Յուրաքանչյուր հավատացյալ պետք է ակնկալի, որ գայթակղություններ կգան բնական ցանկությունների պատճառով: Շնորհքը սովորաբար չի հեռացնում բնական պահանջմունքները, բայց այն մարդուն տալիս է իր գործողությունները կառավարելու և իր ցանկություններին պատշաճ լուծումներ տալու ուժ:

Հոգևոր կարգապահություն է անհրաժեշտ բնական ցանկությունների պարագայում հոգևոր հաղթանակ ապահովելու համար: Շնորհքը մարդուն չի ազատում Սուրբ Գրքի պատվերներին հնազանդվելու, պաշտամունքի հաճախելու, մարմինը հնազանդության մեջ պահելու և աղոթքով ու Աստվածաշնչի սերտողությամբ զբաղվելու անհրաժեշտությունից: Այն հավատացյալը, ով լրջորեն ձգտում է պահպանել հոգևոր հաղթանակներ, կարող է նաև անձնական սահմանափակումներ դնել՝ պաշտպանելու իր թույլ կողմերը:

Գայթակղությունը գրավիչ է թվում, բայց եթե սիրտը հաստատված է Աստծո կամքը փափագելու ու կատարելու վրա, մարդն իսկապես կարող է ի սրտե մերժել գայթակղությունը (Ա Հովհաննեսի 5.3): Նա չի համարում, որ իբր հրաժարվում է այն ամենից, ինչը նրան իսկապես կուրախացներ: Հավատով նա գիտի, որ Աստված չի արգելում որևէ անվնաս բան, նույնիսկ եթե նա չի տեսնում արգելվածի վնասակարությունը (Բ Օրինաց 6.24): Հավատով նա գիտի, որ Աստծո կամքին հակառակ ոչինչ չի բավարարի իրեն, քանի որ նրա բավարարվածությունն Աստծո մեջ է (Սաղմոս 16.2, Սաղմոս 84.11):

Սննդակարգ և մարզանք

► Ի՞նչ է ասում Աստվածաշունչը սննդի մասին:

Աստվածաշունչը սննդի համար հատուկ ձևով ոչինչ չի արգելում: Հին Կտակարանի սննդային սահմանափակումները Նոր Կտակարանի քրիստոնյաներին չեն վերաբերում (Ա Տիմոթեոսի 4.4, Մարկոսի 7.19): Կուռքերին մատուցված կերակուրի խնդիր կար, բայց դա ոչ թե այն պատճառով էր, որ սնունդն էր սխալ, այլ որոշ մարդիկ ուտում էին այն որպես կուռքի երկրպագության մի մաս (Ա Կորնթացիների 8):

Սննդակարգը կարևոր է ֆիզիկական առողջության և ուժի համար: Քանի որ մենք Աստծո ծառաներն ենք, պետք է հասկանանք ֆիզիկական լավ վիճակում լինելու կարևորությունը: Պետք է աշխատենք չվնասել մեր օրգանիզմը և չկրճատել մեր կյանքը վատ սննդակարգով: Շատ մարդիկ սննդակարգի

լայն ընտրություն չունեն, քանի որ ստիպված են ուտել այն, ինչ կա և ինչը հասանելի է իրենց, բայց նրանք պետք է կատարեն հնարավորինս լավագույն ընտրությունը: Նրանք պետք է նաև իրենց երեխաներին սովորեցնեն ճիշտ սնվելու մասին:

Մարդիկ, ովքեր ուտելու համար ծախսելու փող ունեն, երբեմն չափից շատ սնունդ են ընդունում իրենց նախընտրած համի պատճառով, փոխանակ ընտրեն այն սնունդը, որն իրենց լավագույն սնուցումն է ապահովում: Մարդիկ հաճախ գայթակղվում են՝ չափազանց մեծ գումար ծախսելով անառողջ սննդի վրա: Ոմանց թվում է, իրենք չեն կարող գումար շռայլել հոգևոր գրքեր գնելու վրա, բայց ամեն շաբաթ բավական գումար են ծախսում կոնֆետի և կոկա-կոլայի վրա:

Ֆիզիկական վարժությունները անհրաժեշտ են, որպեսզի մարդը լավ ֆիզիկական վիճակում մնա: Մարդը չպետք է թույլ տա, որ ֆիզիկական մարզումների բացակայությունը հանգեցնի ուժերի պակասի կամ մարմնի ավելցուկային քաշի, որը խանգարում է լավագույնն անել Աստծո համար: Եթե անձի աշխատանքը պահանջում է ֆիզիկական աշխատանք, նա կարող է լրացուցիչ ֆիզիկական վարժությունների կարիք չունենալ. հակառակ դեպքում նա պետք է իր մարմինը մարզի և լավ վիճակում պահի:

Քրիստոնյան պետք է մտածի սննդակարգի և ֆիզիկական վարժությունների մասին, քանի որ պատկանում է Աստծուն: Այնուամենայնիվ, սննդակարգի և մարզվելու վերաբերյալ հատուկ պատվերներ չկան Աստվածաշնչում: Մենք պետք է ուղիներ գտնենք՝ մեր ապրելու պայմաններում Աստծուն նվիրվելու սկզբունքը ըստ արժանվույնի կիրառելու համար: Մենք պետք է խուսափենք ուրիշներին դատելուց և քննադատելուց: Այս խորհուրդները չպետք է դառնան հոգևոր կյանքի կանոններ, եթե, իհարկե, ոմանք կարծում են, որ այս որոշումները կարևոր են ու անհրաժեշտ իրենց համար:

► Ուսանողը խմբի համար կարդում է Հռոմեացիների 14.4 խոսքը:

Բոլորս պետք է սուրբգրային սկզբունքները կիրառենք որոշակի ձևերով, բայց չպետք է դատենք այն մարդկանց, ովքեր դրանք կիրառում են այլ կերպերով, երբ Սուրբ Գիրքը հստակ կարգադրումներ չի տալիս այդ հարցերի վերաբերյալ:

Հրաշագործ ֆիզիկական բժշկություն

► Ուսանողը խմբի համար կարդում է Հռոմեացիների 8.18-23 հատվածը:

Հիվանդությունն այն անեծքի հետևանքն է, որը եկավ ամբողջ արարչության վրա, երբ առաջին մարդիկ մեղանչեցին: Աստծո փրկության ծրագրի մի մասն այն է, որ առընդմիշտ վերականգնի ստեղծագործությունը և վերջ կտա բոլոր տառապանքներին: Այնուամենայնիվ, այս հատվածները մեզ ասում են, որ վերականգնումն ամբողջությամբ ու անմիջապես չի կատարվում: Թեև մենք արդեն փրկված ենք, մեր մարմինները կշարունակեն տառապել ծերությունից և հիվանդություններից, մինչև Աստծո փրկության ծրագիրն ամբողջությամ կատարվի:

Աստված արդեն իսկ հրաշքներ է գործում աշխարհում: Բժշկության բազմաթիվ հրաշքներ արձանագրված են Աստվածաշնչում: Աստված խոստանում է բժշկել՝ ի պատասխան եկեղեցու հավատի աղոթքների (Հակոբոսի 5.14-15): Պարտադիր չէ, որ հիվանդը հավատ ունենա իր ապաքինման համար. եկեղեցին կարող է հավատ ունենալ նրա համար: Ուստի հիվանդ մարդուն չպետք է մեղադրել հավատի պակասի մեջ[40]:

Մենք չենք կարող ակնկալել, որ հավատ ունեցող մարդը երբեք չի տառապի հիվանդությունից: Աստված թույլ տվեց, որ Հոբը ֆիզիկապես տառապի որոշ ժամանակ, չնայած Հոբը հավատարիմ էր եղել Աստծուն (Հոբի 2.8):

Պողոսն ասում է, որ Աստված թույլ տվեց, որ «մարմնի խայթոցն» իրեն պահի խոնարհ ու Աստծուց կախյալ վիճակում: Պողոսը երեք անգամ աղոթեց դրանից ազատվելու համար, բայց վերջապես հասկացավ, որ Աստված ցանկանում է իրեն ուժ տալ ավելի տոկուն լինելու համար, քան՝ բժշկելու (Բ Կորնթացիների 12.7-9): Հավանական է, որ «մարմնի խայթոցը» ֆիզիկական ցավ է եղել, թեև միանգամայն համոզված լինել չեն կարող:

Պողոսը ֆիզիկական տառապանքով էր անցնում մինչ ավետարանում էր գաղատացիներին (Գաղատացիների 4.13-15): Ըստ երևույթին՝ նա աչքերի խնդիր ուներ, քանի որ ասում էր, որ գաղատացիներն այնքան էին սիրում իրեն, որ պատրաստ էին իրենց աչքերը տալ Պողոսին: Մենք չգիտենք, թե արդյոք Պողոսը բժշկվեց այդ խնդրից, թե՝ ոչ, բայց պարզ է, որ նա անմիջապես չապաքինվեց: Ակնհայտ է, որ Պողոսը չի սովորեցնում, որ յուրաքանչյուր հավատացյալ պետք է միշտ զերծ լինի հիվանդությունից, և գաղատացիները չէին կարծում, թե նրա հիվանդությունը հակասում է իր քարոզած Ավետարանին:

► Ուսանողը խմբի համար կարդում է Փիլիպպեցիների 2.25-30 հատվածը:

Եպափրոդիտոսը հիվանդ էր և մահվան վտանգի առաջ էր կանգնել: Նա հիվանդացել էր, քանի որ շատ էր գործում Պողոսին օգնելու համար: Պողոսն ասում է, որ Եպափրոդիտոսն արժանի է պատվի, քանի որ իր կյանքը վտանգեց հանուն Քրիստոսի գործի:

Հոբի, Պողոսի և Եպափրոդիտոսի օրինակները ցույց են տալիս, որ մարդկանց չպետք է մեղադրել հավատի պակասի մեջ, երբ նրանք հիվանդ են: Չպետք է ենթադրել, թե նրանք պատժվում են մեղքի համար: Միայն Աստված գիտի, թե որևէ մեկի տառապանքը հոգևոր պատճառ ունի, թե՝ ոչ: Պատմության մեծագույն քրիստոնյաներից ոմանք, որ մեծ հավատի տեր մարդիկ են եղել, երկար ժամանակ տառապել են հիվանդությունից:

Աստվածաշունչը չի արգելում մեզ դիմել բժիշկներին և դեղամիջոցներին: Թեև աղոթում ենք առողջության և ապաքինման համար, բայց հասանելի օգնությունից օգտվելը սխալ չէ:

---

[40] Հիսուսը բժշկեց անդամալույծ մարդուն նրա ընկերների հավատի շնորհիվ (Մարկոսի 2.5):

Սխալ է բժշկություն փնտրել այն մարդկանցից, ովքեր պնդում են իրենց կախարդական զորության կամ հոգիների ծառայության մասին, որոնք Աստծուց չեն: Մենք չենք ծառայում Սատանային և նրանից բարիքներ չպետք է սպասենք: Մենք հավատարիմ ենք Աստծուն, նրան ենք նվիրվել և պետք է զոհ լինենք Նրա օրհնություններից: Եթե Նա նախընտրում է չբուժել, մենք պետք է խնդրենք շնորհ և ուժ՝ հավատարիմ մնալու համար:

Վնասակար նյութեր

Որոշ մարդիկ օգտագործում են այնպիսի նյութեր, որոնք իրենց մարմնին հաճույք են պատճառում, բայց վատ հետևանքներ են թողնում:

Թմրամիջոցները վնասում են մարմինը, միտքը, առաջացնում են կախվածություն և շատ վայրերում անօրինական են:

Ալկոհոլը, բացառությամբ շատ փոքր քանակությամբ ընդունելու դեպքերի, ազդում է մարդու ընկալումների վրա և ստիպում նրան վարվել այնպես, ինչպես չէր վարվի, եթե չխմեր: Ալկոհոլը նաև կախվածություն է առաջացնում: Մեծ քանակությամբ օգտագործելու դեպքում այն վնասում է առողջությունը: Այն չափից շատ օգտագործվում է աշխարհիկ, անբարոյական ժամանցի վայրերում: Աստվածաշունչն ուղղակիորեն չի արգելում ոգելից խմիչքները, բայց շատ եկեղեցիներ արգելում են այն, քանի որ դա ազդում է վարքի ու դատողության վրա, կախվածություն է առաջացնում և հաճախ ուղեկցում է անբարոյական վարքագծին: Շատ քրիստոնյաներ անհանգստանում են, որ եթե մարդն իրոք զգուշությամբ է օգտագործում ալկոհոլը՝ խուսափելով վտանգներից, նա, միևնույնն է, կարող է վնասակար ազդեցություն թողնել ուրիշների վրա, հատկապես երիտասարդների:

► Ուսանողը խմբի համար կարդում է Առակների 20.1 և 31.4-5 հատվածները:

Պարբերաբար ծխելը կախվածություն է առաջացնում և մի քանի տարով կրճատում կյանքը: Օգտագործողի մոտ առկա է քաղցկեղի բարձր վտանգը:

Աստվածաշունչը հատուկ չի արգելում թմրամիջոցները, ալկոհոլը կամ ծխախոտը: Այնուամենայնիվ, մարդկանց մեծ մասը, ովքեր հասկանում են դրանց վնասակարությունը, մտածում են, որ քրիստոնյան չպետք է օգտագործի դրանք: Եղել են ժամանակներ, երբ մարդիկ չեն իմացել այդ նյութերի վտանգավոր ազդեցության մասին ու օգտագործել են դրանք:

Այդ նյութերի ամենամեծ վտանգն այն է, որ դրանք օգտագործողին կախվածության մեջ գցելու հակում ունեն: Կախվածությունը վերահսկում է մարդու կյանքը: Այն սպառում է վերացնել մարդուն պատկանող ռեսուրսները: Ալկոհոլը, թմրադեղը ազդում են ուղեղի ընկալումների վրա՝ ստիպելով մարդուն անմտորեն արդարացնել դրանց գործածումը: Կախվածություն ունեցող մարդը զոհաբերությունների է գնում, որոնք վնասում են իր ընտանիքին և աշխատանքին: Կախվածությունը կրոնի նման պահանջում է հավատարմություն և հակասում է Աստծո նկատմամբ ունեցած հավատարմությանը:

Կոկիկություն և արտաքին տեսք

Քրիստոնյան պետք է ունենա ֆիզիկական մաքրության այնպիսի սովորություններ, որոնք նաև ընդունված են իր սեփական մշակույթում: Նա չպետք է աչքի ընկնի տհաճ հոտի, անխնամ մազերի, կեղտոտ կամ վատ վիճակում գտնվող հագուստի պատճառով: Աղքատության մեջ ապրող մարդը կարող է որոշակի դժվարություններ ունենալ լավ արտաքին պահպանելու համար, բայց նա պետք է անի այն, ինչ կարող է:

Դուք պետք է լսեք ձեր ընկերներին, եթե նրանք քննադատում են ձեր արտաքին տեսքը կամ հիգիենան: Ծնողները պետք է լավ սովորություններ փոխանցեն իրենց զավակներին:

Քրիստոնյաները չպետք է հետևեն աշխարհի օրինակին՝ օգտագործելով այնպիսի հագուստ ու զարդարանք, որով ցույց տան, իբր գերազանցում են մյուսներին: Այնուամենայնիվ, անփույթ արտաքինն էլ կարող է տպավորություն ստեղծել, թե մարդը քիչ է հարգում այն մարդկանց, ում հանդիպում է: Օրինակ, եթե հանդիպման գնալիս անփույթ եք արտաքին տեսքի նկատմամբ, կարող է թվալ, թե հանդիպումը և մարդիկ արժանի չեն հարգանքի: Քրիստոնյաներն իրենց խնամված արտաքինով պետք է ցույց տան, թե ինչպես պատվել Աստծուն և հարգանք դրսևորել ուրիշների նկատմամբ:

Մարդիկ, ովքեր չունեն հոգևոր և հավիտենական առաջնահերթություններ, հաճախ ընդգծում են մարմինը՝ հագնվելով այնպես, որ ուշադրություն գրավեն: Տղամարդը գուցե կամենա ցուցադրել իր մկանները, կինը միգուցե ցանկանա ցուցադրել իր ֆիզիկապես գրավիչ լինելը տղամարդկանց: Սակայն քրիստոնյան չպետք է ձգտի ինքնահավան վարքի կամ փորձի սխալ ուշադրության արժանանալ իր հագուստով:

Խմբային քննարկում

Ուսանողներին հորդորե՛ք մտածել այն մասին, թե Աստծուն ընծայվելն ինչպես պետք է փոփոխություններ բերի իրենց ապրելակերպում:

► Ձեր սովորություններն ինչպե՞ս են ցույց տալիս, որ ձեր մարմինը պատկանում է Աստծուն:

Խուսափե՛ք երկարատև քննարկումներից, որոնց նպատակը սննդակարգի կանոններ կամ նմանատիպ այլ սահմանափակումներ առաջադրելն է ու դրանք որպես քրիստոնեական պահանջներ ներկայացնելը:

► Ինչպե՞ս կբացատրեք մեկին, թե ինչու չեք օգտագործում որոշակի նյութեր:

Աղոթք

Երկնայի՛ն Հայր,

Շնորհակալություն հրաշալի հնարավորության համար, որ մեզ տվել ես ապրելու նախ՝ երկրի վրա, իսկ հետո՝ երկնքում:

Օգնի՛ր ինձ ամբողջությամբ նվիրվել Քեզ՝ իմանալով, որ Դու ես ստեղծել ու փրկագնել ինձ:

Օգնի՛ր ինձ ապրել ազատ այն ամենից, ինչը կխանգարի Քեզ ծառայելուն ու երկրպագելուն:

Շնորհակալ եմ այն մեծ արտոնության համար, որ Քո Սուրբ Հոգու տաճարն եմ: Ուզում եմ այնպես ապրել, որ պատիվ կբերի Քեզ:

Ամեն:

Դաս 13. Առաջադրանքներ

(1) Հետևյալ հարցերից յուրաքանչյուրի պատասխանը գրե՛ք ձեր անձնական նոթատետրի սկզբում (դա չպետք է հանձնեք դասավանդողին):

- Ամբողջությամբ ընծայվե՞լ ես Աստծուն: Ի՞նչ է դա նշանակում քեզ համար:
- Ո՞ր բնական ցանկություններն են ամենից հաճախ գայթակղություն բերում քո կյանքում:
- Ի՞նչ երկու կամ երեք սուրբգրային խոսքեր պետք է անգիր սովորես, որպեսզի դրանք օգնեն քեզ հետևողականորեն հաղթահարելու այդ գայթակղությունները:
- Ի՞նչ փոփոխություններ կատարելու մասին է Աստված խոսել քեզ հետ, երբ ուսումնասիրում էիր այս դասը:

(2) Սերտե՛ք Ա Կորնթացիների 15-ը: Նախ, բաժանե՛ք այն մասերի, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է ավելի փոքր թեմա: Յուրաքանչյուր մասի համար գրեք մեկ պարբերություն՝ բացատրելով այդ հատվածի ուղերձը: Այս գլխի վրա հիմնված ինչպիսի՞ գործնական քայլեր կարելի է դուրս գրել ու կատարել:

Առաջադրված աղբյուրներ

Սույն դասընթացում ուսումնասիրած թեմաների մասին ավելին իմանալու նպատակով կարող եք օգտվել հետևյալ աղբյուրներից:

Դաս 1 - Քրիստոնեական շիտակություն

McDowell, Josh, and Bob Hostetler. Right from Wrong. Nashville: W Publishing Group, 1994.

Sider, Ron. The Scandal of the Evangelical Conscience. Grand Rapids: Baker Books, 2005.

Դաս 2 - Գործնական հնազանդություն

Keep, Tim and Becky. It՛s All about Obedience. Shoals: Whispering Pines Publishing, 2016.

Spiritual Formation (course from Shepherds Global Classroom). Available online or in print at: https://www.shepherdsglobal.org

Դաս 3 - Աշխատանք

McQuilkin, Robertson. An Introduction to Biblical Ethics. (Second Edition). Wheaton: Tyndale House Publishers, Inc., 1995.

Դաս 4 - Հարաբերություններ

Chapman, Gary. *The Five Love Languages.* Chicago: Northfield Publishing, 2015.

Carnegie, Dale. How to Win Friends and Influence People. New York: Pocket Books, 1936.

Դաս 5 - Աստծո առաջնորդությունը

Duewel, Wesley. Let God Guide You Daily. Greenwood, IN: One Mission Society, 1988.

Դաս 6-7 - Ամուսնություն

Drescher, John. *For Better, For Worse.* Morgantown, PA: Masthof Press, 2012.

Eggerichs, Emerson. *Love and Respect.* Nashville: Thomas Nelson, 2004.

Thomas, Gary. Sacred *Marriage.* Grand Rapids: Zondervan, 2000.

Դաս 8 - Քրիստոնեական էկոլոգիա

Schaeffer, Francis, Udo W. Middelmann, Lynn White Jr., and Richard Means. Pollution and the Death of Man. Wheaton: Tyndale House, 1970.

Դաս 9 - Փող

Ramsey Dave. *The Financial Peace Planner*. New York: Penguin Books, 1998.

Wesley, John. "The Use of Money" (a sermon). Available online at https://www.whdl.org/use-money-sermon-50 (as of January 14, 2021).

Դաս 10 - Ազնվություն

Covey, Stephen M. R. The Speed of Trust: The One Thing that Changes Everything. New York: Free Press, 2006.

Դաս 11 - Մարդու արժեքը

Lewis, C. S. *The Abolition of Man*.

Colson, Charles and Nancy Pearcey. How Shall We Now Live? Wheaton: Tyndale House Publishers, 1999.

Դաս 12 - Իշխանություններ

Schaeffer, Francis. *A Christian Manifesto*. Wheaton: Crossway Books, 1981.

Դաս 13 - Քրիստոնյայի մարմինը

Foster, Richard. *Celebration of Discipline*. New York: HarperCollins Publishers, 1978.

Առաջադրանքների արձանագրում

Ուսանողի անունը՝ _____

Նախապես լրացվում է յուրաքանչյուր առաջադրանքն ավարտելուց հետո: Բոլոր առաջադրանքները պետք է հաջողությամբ կատարված լինեն Shepherds Global Classroom-ի կողմից վկայական ստանալու համար:

Դաս	Առաջադրանք 1	Առաջադրանք 2	A Առաջադրանք 3
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			
11			
12			
13			

Shepherds Global Classroom-ի ավարտական վկայական ստանալու դիմումը կարելի է լրացնել մեր վեբ կայքում՝ www.shepherdsglobal.org: Վկայականները SGC-ի նախագահի կողմից թվային տարբերակով կփոխանցվեն դասավանդողներին ու օժանդակողներին, ովքեր լրացնում են դիմումն իրենց ուսանողի կամ ուսանողների անունից:

Shepherds Global Classroom դասընթացների նկարագրությունը

Վարդապետական հիմունքների դասընթացներ

Քրիստոնեական հավատալիքներ

Համակարգված աստվածաբանության դասընթաց է, որը ներկայացնում է քրիստոնեական վարդապետական դրույթներ Աստվածաշնչի, Աստծո, մարդու, մեղքի, Քրիստոսի, փրկության, Սուրբ Հոգու, եկեղեցու և վերջին օրերի մասին:

Հռոմեացիներ

Սույն դասընթացը սովորեցնում է փրկության և միսիաների աստվածաբանությունն ըստ Հռոմեացիների գրքի՝ քննարկելով որոշ հիմնահարցեր, որոնք վիճահարույց են եղել եկեղեցում:

Վախճանաբանություն

Սույն դասընթացն ուսուցանում է Դանիելի և Հայտնության գրքերը՝ մարգարեական գրվածքների այլ բաժինների հետ միասին, շեշտադրում է այնպիսի կարևոր վարդապետություններ, ինչպիսիք են՝ Քրիստոսի վերադարձը, Վերջին դատաստանը և Աստծո հավիտենական թագավորությունը:

Սուրբ Կյանքի ուսմունք և պրակտիկա

Սույն դասընթացը տալիս է սուրբ կյանքի նկարագրությունը, որ Աստված ակնկալում է և արտոնում քրիստոնյային:

Եկեղեցու վարդապետություն և պրակտիկա

Սույն դասընթացը բացատրում է Աստծո նախագիծն ու ծրագիրը եկեղեցու և աստվածաշնչյան այնպիսի թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են՝ եկեղեցու անդամությունը, մկրտությունը, հաղորդությունը, տասանորդը և հոգևոր առաջնորդությունը:

Աստվածաշնչի ուսումնասիրության դասընթացներ

Հին կտակարանի ուսումնասիրություն

Սույն դասընթացն ուսուցանում է Հին Կտակարանի 39 գրքերի հիմնական բովանդակությունը և ուսմունքը:

Նոր կտակարանի ուսումնասիրություն

Սույն դասընթացն ուսուցանում է Նոր Կտակարանի 27 գրքերի հիմնական բովանդակությունը և ուսմունքը:

Աստվածաշնչյան մեկնաբանության սկզբունքները

Սույն դասընթացն ուսուցանում է Աստվածաշունչը ճիշտ մեկնաբանելու սկզբունքներն ու մեթոդները, որպեսզի այն մեր կյանքում և Աստծո հետ հարաբերություններում մշտական ուղեցույց լինի:

Ավետարանչության և աշակերտության դասընթացներ

Ապոլոգետիկայի ներածություն

Սույն դասընթացը սովորեցնում է քրիստոնեական աշխարհայացքի գիտական, պատմական և փիլիսոփայական հիմքերն ու ցույց տալիս, թե ինչպես է քրիստոնեական հավատը համահունչ բանականությանը և իրականությանը:

Աշխարհի կրոններն ու կուլտերը

Սույն դասընթացն ավետարանական հավատացյալին տալիս է կրոնական տասնութ խմբերի ուսմունքների մասին ուսուցում և դրանց սխալների պատշաճ արձագանք:

Աստվածաշնչյան ավետարանչություն և աշակերտություն

Սույն դասընթացը ներկայացնում է աստվածաշնչյան այն սկզբունքները, որոնք ուղղորդում են ավետարանչության մեթոդները: Այն նկարագրում է ավետարանչության ձևերը և տրամադրում դասեր նորադարձներին աշակերտելու համար:

Հոգևոր կյանքի ձևավորում ու զարգացում

Սույն դասընթացից ուսանողները սովորում են ունենալ Հիսուսի վերաբերմունքը, Աստծուն վերաբերվել այնպես, ինչպես Հիսուսն էր վերաբերվում Իր Հորը, խոնարհվել Հիսուսի նման, կիրառել Հիսուսի հոգևոր ու անձնական խրատները, Հիսուսի նման համբերել տառապանքին և ընդգրկվել Հիսուսի կողմից ձևավորված քրիստոնեական համայնքի մեջ (եկեղեցում):

Գործնական Քրիստոնեական Կյանք

Սույն դասընթացը սուրբգրային սկզբունքները կիրառում է փողի օգտագործման, հարաբերությունների, շրջակա միջավայրի, իշխանության հետ հարաբերությունների, մարդու իրավունքների և իրական կյանքի այլ ոլորտներում:

Քրիստոնեական առաջնորդության դասընթացներ

Ծառայության առաջնորդություն

Սույն դասընթացը շեշտադրում է քրիստոնեական բնավորությունը՝ միաժամանակ առաջնորդներին սովորեցնելով կազմակերպություններն առաջնորդել արժեքների հայտնաբերման, նպատակի գիտակցման, տեսիլքի փոխանցման, նպատակադրման, ռազմավարության պլանավորման, գործողությունների ձեռնարկման և ձեռքբերումների հասնելու միջոցով:

Հիսուսի կյանքն ու ծառայությունը

Սույն դասընթացն ուսումնասիրում է Հիսուսի կյանքը՝ որպես 21-րդ դարի ծառայության և առաջնորդության օրինակ:

Հաղորդակցության սկզբունքներ

Սույն դասընթացը սովորեցնում է հաղորդակցության աստվածաբանությունը, ազդեցիկ խոսքի մեթոդները և աստվածաշնչյան քարոզների պատրաստման ու ներկայացման մեթոդները:

Քրիստոնեական երկրպագության ներածություն

Սույն դասընթացը սովորեցնում է, թե ինչպես է երկրպագությունն ազդում հավատացյալի կյանքի բոլոր ոլորտների վրա և տալիս է սկզբունքներ, որոնք պետք է ուղղորդեն անհատական ու եկեղեցական երկրպագության կերպերը:

Եկեղեցու պատմության դասընթացներ

Եկեղեցու պատմության ուսումնասիրություն 1

Սույն դասընթացը նկարագրում է, թե ինչպես է եկեղեցին կատարել իր առաքելությունը և պաշտպանել հիմնարար վարդապետությունը վաղ եկեղեցու ժամանակաշրջանից մինչև Ռեֆորմացիա:

Եկեղեցու պատմության ուսումնասիրություն 2

Սույն դասընթացը նկարագրում է, թե ինչպես է եկեղեցին ընդարձակվել և դիմակայել մարտահրավերներին Ռեֆորմացիայից մինչև մեր օրերը: